Սարգիս Խաչատրյան

# Մարկ Լևի
# Ինչքան բան ունեինք իրար ասելու

Անտարես

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ



Մարկ Լևի

# ինչքան բան ունեինք իրար ասելու

Վնտարես
Երևան

Marc Levy
**TOUTES CES CHOSES QU'ON NE S'EST PAS DITES**

Ֆրանսերենից թարգմանեց
**ՀՌԻՓՍԻՄԵ ՄԱԴՈՅԱՆԸ**

Խմբագիր՝
**ՇՈՂԵՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**Լևի Մարկ**
Ինչքան բան ունեինք իրար ասելու: Վեպ/Մարկ Լևի.– Ֆրանս. թարգմ. Հռիփսիմե Մադոյանը: Եր.: Անտարես, 2022.– 344 էջ:

Հայրերին և որդիներին երբեմն տարիներ են պետք, որ կարողանան հանդիպել դեմ առ դեմ...

Մարկ Լևիի այս վեպը հենց այդ մասին է: Հարսանիքից մի քանի օր առաջ Ջուլիային զանգահարում է հոր օգնականը. ինչպես և աղջիկը ենթադրում էր՝ հայրը չէր կարողանալու մասնակցել հարսանիքին, բայց այս անգամ, պետք է խոստովանել, պատճառը հարգելի էր. հայրը մահացել էր: Թաղման հաջորդ օրը Ջուլիան իմանում է, որ հայրը մի անակնկալ էլ ունի՝ իր կյանքի ամենաարտասովոր ճամփորդությունը: Վերջապես նրանք հնարավորություն կունենան ասելու իրար այն ամենը, ինչ չէին հասցրել ասել...

Սա վեպ է լուսավոր թախծի և անվերջանալի սիրո մասին:

ISBN 978-9939-76-937-0

Անտարես

© Editions Robert Laffont/
Susanna Lea Associates, 2008
www.marclevy.info
© Անտարես, 2022

# 1

– Հը՞: Ինչ կասես:

– Շրջվիր տեսնեմ:

– Սթենլի, արդեն կես ժամ է՝ նայում ես: Էլ ի վիճակի չեմ հարթակի վրա մնալ:

– Մի քիչ էլ կկարճացնեի... Սրբապղծություն կլիներ էս ոտքերը թաքցնելը...

– Սթեն...

– Քեզ իմ կարծիքն է պետք. հա՞, թե՞ չէ: Շրջվիր՝ մի հատ էլ դիմացից նայեմ: Հա, ճիշտ էի գուշակել: Կրծքի ու մեջքի բացվածքներն իրարից ոչ մի բանով չեն տարբերվում. թե վրադ բան թափես, շորը թարս կհագնես ու վերջ... Դեմ, հետև՝ նույն բանն է:

– Սթե՛նլի, լավ էլի...

– Հարսանեկան շորը զեղչի ժամանակ առնելու գաղափարից սարսափում եմ: Ինտերնետով առնեիր, էլի... Կարծիքս էիր, չէ՞, ուզում. ըհը, ասացի:

– Կներես, որ դիզայների իմ աշխատավարձով ավելին չկարողացա:

– Նկարչուհու, արևս: Աստված վկա, ճաքում եմ էս քսաներորդ դարի բառապաշարից:

– Ես համակարգչով եմ աշխատում, Սթենլի, ոչ թե գունավոր մատիտներով:

– Սիրունս, դու նկարում-ջնջում, չքնաղ կերպարներ ես ստեղծում, ձեռքով թե համակարգչով՝ նկարչուհի ես, ոչ թե դիզայներ: Իրոք որ պետք է աշխատես քեզ վրա:

– Կարծացնո՞ւմ ենք, թե՞ էսպես էլ թողնում...

– Հինգ սանտիմետր: Հետո պետք է մի քիչ ուսը ուղղել, մի քիչ էլ մեջքը ձգել:

– Լավ, հասկացա, շորը հեչ դուրդ չի գալիս:

– Էդպիսի բան չասացի:

– Բայց մտածում ես:

– Կլինի՞՝ մի քիչ փող էլ ես ավելացնեմ, ու թռնենք Աննա Մայերի մոտ: Մի անգամ գոնե լսիր ինձ:

– Հազարդոլարանոց շո՞ր: Դու լրիվ գժվել ես: Դա քո հնարավորություններից էլ է վեր: Համ էլ սա ընդամենը հարսանիք է, Սթենլի:

– Քո հարսանիքը, սիրելիս:

– Գիտեմ,– հոգոց հանեց Ջուլիան:

– Միլիոնատեր պապադ կարող էր...

– Վերջին անգամ, երբ հորս տեսա, ես կանգնած էի կարմիր լույսի տակ, իսկ նա մեքենայով իջնում էր Հինգերորդ պողոտայով: Վեց ամիս առաջ: Թեման փակեցինք:

Ջուլիան թոթվեց ուսերն ու իջավ հարթակից: Սթենլին նրա ձեռքից քաշեց ու ամուր գրկեց:

– Թագուհիս, աշխարհի բոլոր շորերը վրադ հրաշալի կնստեն: Ուղղակի ուզում եմ, որ քոնն անթերի լինի: Ինչո՞ւ չխնդրել ապագա ամուսնուդ, որ առնի:

– Որովհետև Ադամի ծնողներն արդեն վճարել են հարսանիքի համար: Ու ես ինձ ավելի լավ կզգայի, եթե ամբողջ ընտանիքը չիմանար, որ նա Կոզետի[1] հետ է ամուսնանում:

Սթենլին կոկետ քայլվածքով կտրեց-անցավ խանութն ու մոտեցավ ցուցափեղկի մոտի կախիչներին: Դրամարկղի սեղանին կռթնած, խոսակցությամբ

[1] Վիկտոր Հյուգոյի «Թշվառները» վեպի գլխավոր հերոսներից:

տարված վաճառող-վաճառողուհիները ուշադրություն անգամ չդարձրին: Նա ատլասե մի զգեստ վերցրեց ու հետ դարձավ:

– Իմ խաթեր, էս էլ փորձիր ու էլ բառ չես լսի:

– Սթենլի, 36-ի մեջ ես չեմ մտնի:

– Նոր ի՞նչ ասացի...

Ջուլիան աչքերը վեր հառեց ու գնաց Սթենլիի մատնացույց արած հանդերձարանը:

– 36 չափսն է, Սթենլի,– կրկնեց նա հեռանալով:

Մի քանի րոպե անց վարագույրը բացվեց. նույնքան արագ, ինչպես և փակվել էր:

– Ահա վերջապես մի բան, որ նման է Ջուլիայի հարսանեկան շորին,– բացականչեց Սթենլին:– Արագ հարթակ բարձրացիր:

– Ինձ բարձրացնելու հնար ունե՞ս: Եթե ծունկս ծալեմ...

– Շատ է սազում...

– Եթե բերանս մի բան գցեմ, կարերը կքանդվեն:

– Հարսանիքի օրը չեն ուտում: Մի կտոր բան ուտես՝ հերիք է, փոխարենը թագուհու տեսք կունենաս: Ի՞նչ ես կարծում, էս խանութում վաճառող կա՞: Անհավատալի է...

– Ե՛ս պետք է լարվեմ, ոչ թե դու:

– Չեմ լարվում, ուղղակի հավատս չի գալիս, որ հարսանիքից չորս օր առաջ ե՛ս եմ քեզ ստիպում գալ շոր փորձելու:

– Ամբողջ օրը գործի էի, Սթեն: Հա, ու Ադամին ոչ մի բառ. դեռ մի ամիս առաջ եմ երդվել, որ ամեն ինչ պատրաստ է:

Սթենլին վերցրեց բազկաթոռի թիակին խրած քորոցն ու ծնկի իջավ Ջուլիայի առաջ:

– Ամուսինդ չգիտի՝ բախտը ոնց է բերել: Շքեղ տեսք ունես, արևս:

– Հերիք է կպնես Ադամին: Վերջապես, ի՞նչ ունես նրա դեմ:

– Հորդ է նման...

– Հիմարություն: Ոչ մի ընդհանուր բան, համ էլ նա նրան ատում է:

– Ադամն ատո՞ւմ է հորդ: Մի միավոր էլ նրա օգտին:

– Չէ՛: Հայրս է ատում Ադամին:

– Հայրդ միշտ ատել է էն ամենը, ինչ թանկ է քեզ համար: Եթե շուն ունենայիր՝ կկծեր նրան:

– Հա՛, եթե շուն ունենայի, հաստատ հորս կկծեր,– ծիծաղելով պատասխանեց Ջուլիան:

– Հայրդ կկծեր շանը:

Սթենլին ոտքի կանգնեց ու մի քանի քայլ հետ գնաց՝ իր արածով հիանալու: Գլխով հավանություն տվեց ու խոր հոգոց հանեց:

– Է՞լ ինչ կա,– հարցրեց Ջուլիան:

– Հիասքանչ է: Բայց չէ՛, դու՛ ես հիասքանչ: Գոտին էլ ավելացնեմ, ու կարող ես ինձ տանել լանչի:

– Քո ուզած ռեստորանը, իմ Սթենլի:

– Էս շոգ-կրակին ինչ էլ լինի՝ լավ է, կարևորը՝ լինի ստվերում, ու դու հիմա դադարես շարժվել, որ շորը վերջացնեմ... Համարյա անթերի է:

– Համարյա՞:

– Այն զեղչի տակ է, գանձ:

Մի վաճառողուհի մոտեցավ ու հարցրեց՝ արդյոք օգնության կարիք կա՞: Սթենլին ձեռքի շարժումով նրան հետ ուղարկեց:

– Կարծում ես՝ կգա՞:

– Ո՞վ,– հարցրեց Ջուլիան:

– Հա՛յրդ, հիմար:

– Հերիք է նրա մասին խոսես: Ասեցի, որ երկար ժամանակ է՝ լուր չունեմ:

– Էդ ոչինչ չի ասում...

– Նա չի գա:

– Տեղեկացրե՞լ ես:

– Արդեն վաղուց դադարել եմ կյանքս պատմել հորս օգնականին, որովհետև պարոն Ուելշը հանդիպման է կամ ճամփորդում է և աղջկա հետ խոսելու ժամանակ չունի:

– Հրավիրատոմսն ուղարկե՞լ ես:

– Վերջացնո՞ւմ ես:

– Համարյա, սիրելիս: Ոնց որ ծեր զույգ լինեք: Նա խանդում է: Բոլոր հայրերն էլ խանդում են: Կանցնի:

– Առաջին անգամ եմ տեսնում, որ պաշտպանես: Ու եթե ծեր զույգ ենք, ուրեմն՝ տարիներ առաջ բաժանված:

Ջուլիայի պայուսակից լսվեց I will survive-ը:

– Տա՞մ հեռախոսդ,– հայացքով հարցրեց Սթենլին:

– Հաստատ Ադամն է, կամ էլ գրասենյակից...

– Չշարժվես՝ գործս չփչացնես, հիմա կտամ:

Սթենլին ձեռքը մտցրեց Ջուլիայի պայուսակը, հանեց բջջայինն ու մեկնեց նրան: Գլորիա Գեյնորը[1] ձայնը կտրեց:

– Արդեն ուշ է,– հառաչեց Ջուլիան՝ աչքը գցելով համարին:

– Ադա՞մն էր, թե՞ գործի տեղից:

– Ոչ մեկը, ոչ մյուսը,– պատասխանեց նա մռայլ դեմքով:

Սթենլին հայացքը գամեց նրան:

– «Գուշակիր մեղեդի՞ն» ենք խաղում:

– Հորս մոտից էր:

– Հետ զանգիր:

– Բացառված է: Ինքը թող զանգի:

---

[1] Դիսկո ոճի ամերիկացի երգչուհի, որն առավել հայտնի է իր «I Will Survive» և «Never Can Say Goodbye» հիթերով:

– Հենց նոր զանգեց:

– Օգնականն էր:

– Երեխայություն մի արա, հրավերն ուղարկելու օրվանից սպասում ես զանգին: Հարսանիքից չորս օր առաջ միացնում ենք սթրեսի էկոնոմ ռեժի՞մը: Ուզում ես՝ պռո՞շդ դուրս տա, թե՞ վրադ ցան լինի: Հենց հիմա հետ զանգիր:

– Որ Ուոլեսը բացատրի, թե հայրս արտասահման պետք է գնա ու շատ է ցավում, որ ոչ մի կերպ չի կարող չեղարկել ամիսներ առաջ պլանավորած ճամփորդությո՞ւնը: Կամ որ, ցավոք, այդ օրը խառն է մի շատ կարևոր գործով կամ մեկ այլ պատճառո՞վ:

– Կամ որ շատ ուրախ կլինի մասնակցել իր աղջկա հարսանիքին և ուզում է վստահ լինել, որ, չնայած տարաձայնություններին, կնստի պատվո սեղանին:

– Հայրս թքած ունի: Նա կգերադասի նստել հանդերձարանի մոտ, եթե ջահել հանդերձապահուհին սիրունիկ լինի:

– Հերիք ատես նրան, Ջուլիա: Օք, արա ոնց կուզես, բայց հարսանիքը վայելելու փոխարեն աչքդ ճամփին է մնալու:

– Թող էդպես լինի: Դա ինձ կստիպի մոռանալ, որ չեմ կարող դիպչել պտիֆուրերին[1], որ ընտրածդ շորը չպայթի:

– Ոնց կասես, սիրելիս,– ֆշշացրեց Սթենլին և ուղղվեց դեպի դուռը,– անցած լինի, կճաշենք ուրիշ անգամ, երբ նորմալ տրամադրություն ունենաս:

Ջուլիան կիսագլոր ցատկեց հարթակից ու վազեց նրա հետևից: Հիմա էլ նա քաշեց Սթենլիի ուսից ու գրկեց նրան:

---

[1] Բազմաթիվ հավելումներով փոքրիկ բլիթներ:

– Կներե՛ս, Սթեն, մի նեղվի, կներես:

– Հորդ համա՞ր, թե՞ իմ վատ ընտրած շորի: Ասեմ, որ ո՛չ աղետալի վայրէջքդ, ո՛չ էլ վարգդ ոչ մի կար չքանդեցին:

– Շորն անթերի է, Սթեն, դու իմ ամենահարազատ մարդն ես, չեմ էլ պատկերացնում, որ առանց քեզ կարող եմ մտնել եկեղեցի:

Սթենլին նայեց Ջուլիային, գրպանից հանեց մետաքսյա թաշկինակն ու սրբեց նրա թաց աչքերը:

– Դու իրո՞ք ուզում ես մտնել եկեղեցի իմ նման գժի թևը մտած, թե՞ քո վերջին մեղքը կլինի ինձ հորդ տեղն անցկացնելը:

– Քիչ երևակայիր քեզ, էդքան կնճիռ չունես, որ հորս տեղն անցնես:

– Քո համար էի ասում, դմբո, որ մի քիչ ջահել երևայիր:

– Սթենլի, հա, ուզում եմ՝ դո՛ւ ինձ ուղեկցես եկեղեցի: Էլ ո՞վ, եթե ոչ դու:

Սթենլին ժպտաց, ցույց տվեց բջջայինն ու մեղմ ձայնով ասաց.

– Զանգիր հորդ, Ջուլիա: Իսկ ես գնամ էս հիմար աշխատողին, որը ոնց որ թե մոռացել է, որ հաճախորդ ունի, ասեմ, որ շորը վաղը չէ մյուս օրը պատրաստ լինի, ու վերջապես գնանք լանչի: Շուտ արա, Ջուլիա, սոված մեռնում եմ:

Սթենլին կրնկի վրա շրջվեց ու շտապեց դեպի դրամարկղը՝ աչքի պոչով հետևելով Ջուլիային, որը մի պահ վարանեց և ի վերջո զանգեց: Օգտվելով առիթից՝ նա թաքուն հանեց չեկի գրքույկը, վճարեց զգեստի համար ու հավելավճար թողեց, որ ամեն ինչ պատրաստ լինի քառասունութ ժամում: Հետո կտրոնը դրեց գրպանն ու վերադարձավ Ջուլիայի մոտ, որն արդեն անջատել էր հեռախոսը:

– Հը՞,– անհամբեր հարցրեց նա,– գալի՞ս է:

Ջուլիան բացասաբար շարժեց գլուխը:

– Էս անգա՞մ ինչ պատճառ բռնեց բացակայությունն արդարացնելու համար:

Ջուլիան խոր հոգոց հանեց ու աչքերը հառեց Սթենլիին:

– Մահացել է...

Մի քանի վայրկյան երկուսն անխոս իրար էին նայում:

– Հըմմ, պետք է ասեմ, որ էս անգամ արդարացումն անթերի է,– շշնջաց Սթենլին:

– Դու իրոք հիմար ես, գիտե՞ս...

– Խոսելու ընդունակությունս կորցրի, դա չէի ուզում ասել, չգիտեմ էլ՝ ինչ անցավ մտքովս: Ցավում եմ, ջանիկս:

– Ոչինչ չեմ զգում, Սթենլի, ոչինչ... չի էլ ցավում: Սիրտս էլ չլցվեց:

– Կզգաս, դեռ տեղ չի հասել:

– Հա, երևի:

– Ուզո՞ւմ ես զանգել Ադամին:

– Չէ, հիմա չէ, ավելի ուշ:

Սթենլին անհանգիստ նայեց Ջուլիային:

– Չե՞ս ուզում ապագա ամուսնուդ ասել, որ պապադ մահացել է:

– Նա մահացել է երեկ երեկոյան Փարիզում: Դիակը կբերեն ինքնաթիռով, թաղումը կլինի չորս օրից,– ավելացրեց Ջուլիան հազիվ լսելի ձայնով:

Սթենլին սկսեց մատների վրա հաշվել:

– Էս շաբաթ օ՞րը,– աչքերը չռած հարցրեց նա:

– Իմ հարսանիքի օրը,– մրմնջաց Ջուլիան:

Սթենլին գնաց, դրամարկղից հետ վերցրեց իր չեկն ու Ջուլիային քարշ տվեց փողոց:

– Արի, ես եմ քեզ տանում լանչի...

***

Նյու Յորքը ողողված էր հունիսյան ոսկեզօծ լույսով: Ընկերները կտրեցին-անցան Իններորդ պողոտան և ուղղվեցին այս արագ փոփոխվող թաղամասում մնացած միակ հետաքրքիր տեղը՝ ֆրանսիական գարեջրատուն «Պաստիս»: Վերջին տարիներին Միթ Փեքինգ թաղամասի հին պահեստներն իրենց տեղը զիջել էին Լյուքս դասի բրենդներին և քաղաքում ամենահայտնի նորաձևության տներին: Հեղինակավոր հյուրանոցներն ու գրասենյակները ասես հրաշքով ծլած լինեին: Հին, նեղգիծ երկաթգիծը վերածվել էր կանաչապատ ճանապարհի, որ բարձրանում էր մինչև Տասներորդ պողոտա: Այստեղ՝ վերափոխված հին գործարանի առաջին հարկում, ապաստանել էր բիո-շուկան, մյուս հարկերը գրավել էին գովազդային գործակալություններն ու արտադրական կազմակերպությունները, հինգերորդ հարկում էլ Ջուլիայի գրասենյակն էր: Ներքևում Հուդզոն գետի վերակառուցված ափերը երկար զբոսուղիների էին վերածվել հեծանվորդների, վազողների ու Վուդի Ալենի մանհեթենյան նստարանների սիրահարների համար: Հինգշաբթի երեկոյից սկսած՝ թաղամասը լցվում էր հարևան Նյու Ջերսի նահանգից ժամանած հյուրերով, որոնք անցնում էին գետը, գալիս զբոսնելու և զվարճանալու բազմաթիվ բարերում ու մոդայիկ ռեստորաններում:

Տեղավորվելով «Պաստիսի» պատշգամբում՝ Սթենլին երկու կապուչինո պատվիրեց:

– Պետք է Ադամին զանգած լինեի,– մեղավոր դեմքով մրմնջաց Ջուլիան:

– Որ հայտնեիր հորդ մահվան մասին... հա, պետք է անպայման զանգած լինեիր: Իսկ հիմա լավ կլինի՝ մի

քիչ էլ սպասես, նոր հայտնես, որ հարսանիքը պետք է հետաձգել, զգուշացնել քահանային, խոհարարներին, հյուրերին ու նաև նրա ծնողներին: Երազելու ժամանակ թող. մի ժամ էլ տուր նրան ամբողջ աշխարհը գլխին քանդելուց առաջ: Ու համ էլ՝ դու սգի մեջ ես, էդ քեզ իրավունք է տալիս վայելելու:

– Ո՞նց ասեմ նրան:

– Սիրելիս, նա պետք է հասկանա, որ բավական դժվար գործ է նույն օրը կեսօրին և՛ ամուսնանալ, և՛ թաղել հորդ, ու եթե նույնիսկ գաղափարը դուրդ գա, ասեմ՝ ամոթալի բան կստացվի: Էս ինչ փորձանք էր, Աստված իմ...

– Հավատա, Սթենլի, Աստված կապ չունի: Միայն ու միայն հայրս է ընտրել էդ օրը:

– Չեմ կարծում, որ նա որոշել էր երեկ երեկոյան մեռնել Փարիզում՝ մտքին դնելով փչացնել քո հարսանիքը: Նույնիսկ եթե տեղի ընտրությունն անգերազանցելի է:

– Դու նրան չես ճանաչում: Նա ընդունակ է ամեն ինչի՝ քթիցս բերելու համար:

– Խմիր կապուչինոդ, վայելենք էս տաք արևը, հետո զանգենք նախկին ապագա ամուսնուդ:

Հարգելի ընթերցող, այս գիրքը թվայնացրել է 1915.info կայքը իր սեփական միջոցներով: Այս և բազմաթիվ այլ գրքեր կարող եք անվճար ներբեռնել մեր կայքից: Այցելեք՝ https://1915.info
Շնորհակալություն:

## 2

«Էյր Ֆրանսի» «Բոինգ-747» օդանավի անիվները ճռռոցով հպվեցին Ջոն Ֆիցջերալդ Քենեդու օդանավակայանի թռիչքուղուն: Ժամանման սրահի հսկայական պատուհաններից Ջուլիան նայում էր, թե ինչպես էին կարմիր փայտից դագաղը վազքուղով տանում դեպի սպասող դիակառքը: Օդանավակայանի ոստիկաններից մեկը եկավ նրա հետևից: Հոր օգնականի, նշանածի ու

իր ամենամոտ ընկերոջ ուղեկցությամբ Ջուլիան նստեց մինիվենը, որը նրանց տարավ ինքնաթիռի մոտ: Վազքուզու մոտ սպասող մաքսավորը Ջուլիային մի ծրար մեկնեց, որում մի քանի ադմինիստրատիվ փաստաթղթեր էին, հոր ժամացույցն ու անձնագիրը:

Ջուլիան սկսեց թերթել անձնագիրը: Վիզաները վկայում էին Էնթոնի Ուելշի կյանքի վերջին ամիսների մասին. Սանկտ Պետերբուրգ, Բեռլին, Հոնգ Կոնգ, Բոմբեյ, Սայգոն, Սիդնեյ. քաղաքներ, որտեղ Ջուլիան չէր եղել և կուզեր, որ այցելեին միասին:

Մինչ տղամարդիկ վազվզում էին դագաղի շուրջը, Ջուլիան մտածում էր երկար ճամփորդությունների մասին, որոնք հայրն իրականացրել էր, երբ ինքը դեռ խաղահրապարակում առանց պատճառի կռվող փոքրիկ աղջնակ էր:

Քանի՜-քանի անքուն գիշեր է անցկացրել՝ սպասելով նրա վերադարձին, քանի՜-քանի առավոտ դպրոց գնալիս մայթի մի սալիկից մյուսն է ցատկել՝ հորինելով երևակայական մի ցատկախաղ և վստահ լինելով, որ եթե հաղթի, ապա հայրն անպայման կվերադառնա: Իսկ երբեմն գիշերային աղոթքներն իրականանում էին. բացվում էր սենյակի դուռը՝ հատակին նկարելով լույսի կախարդական ճառագայթը, որի մեջ ուրվագծվում էր Էնթոնի Ուելշի ստվերը: Նա գալիս էր, նստում մահճակալի ծայրին՝ ոտքերի մոտ, և վերմակին դնում մի փոքրիկ տուփ, որը Ջուլիան կհայտնաբերեր արթնանալուն պես: Հենց այսպես էլ անցել էր Ջուլիայի մանկությունը. հայրն ամեն ճամփորդությունից մի յուրօրինակ նվեր էր բերում, որը պատմում էր, թե որտեղ է նա եղել: Մեքսիկական տիկնիկը, չինական վրձինը, հունգարական փայտե արձանիկն ու գվատեմալական ապարանջանը Ջուլիայի անփոխարինելի գանձերն էին:

Հետո մոր մոտ ի հայտ եկան առաջին խնդիրները: Անհարմարավետության այդ զգացումն առաջին անգամ ունեցավ կինոթատրոնում՝ կիրակի օրը, երբ ֆիլմի կեսից մայրը հարցրեց, թե ինչու են անջատել լույսերը: Եկողգնացող գիտակցությունը չէր դադարում նոր փոսեր փորել նրա հիշողության մեջ, սկզբում՝ փոքր, հետո՝ ավելի ու ավելի խոր: Նա սկսել էր խառնել խոհանոցն ու երաժշտական սրահը և ամեն անգամ անմարդկային ճիչեր էր արձակում, քանի որ ռոյալն անհետացել էր... հիշողության կորուստ, որի պատճառով մոռանում էր մտերիմների անունները: Բարձրակետը եղավ, երբ նա, տեսնելով Ջուլիային, բացականչեց. «Իմ տանն ի՞նչ է անում էս սիրունիկ բալիկը»: Ի՜նչ անծայր էր այդ տարվա դեկտեմբերի դատարկությունը, երբ շտապօգնության մեքենան եկավ մոր հետևից. մայրը վառել էր գիշերազգեստը և հիացած նայում էր վառվող հագուստին՝ գոհ, որ կարողացել է կպցնել ծխախոտը, այնինչ նա երբեք չէր ծխել:

Մայրը... Մայրը մի քանի տարի անց մահացավ Նյու Ջերսիի հիվանդանոցներից մեկում՝ այդպես էլ չճանաչելով դստերը: Հենց սգի մեջ էլ անցավ Ջուլիայի պատանեկությունը՝ լցված հոր օգնականի հետ դաս սովորելու անթիվ երեկոներով, քանի որ հոր ճամփորդություններն ավելի էին հաճախացել ու երկարել: Հետո քոլեջ, համալսարան, հետո թողեց համալսարանը և վերջապես տրվեց նախ գունավոր մատիտներով, հետո համակարգչի վրա տարբեր կերպարներ ստեղծելու և դրանց կենդանացնելու սիրած զբաղմունքին: Գազանիկներն ասես կենդանանում էին՝ վերածվելով հավատարիմ ընկերների, որոնք մատիտի մի պարզ շարժումով ժպտում էին, և որոնց արցունքները նա սրբում էր մկնիկի օգնությամբ:

– Օրիորդ, այս անձնագիրը ձեր հո՞րն է պատկանում:

Մաքսավորի ձայնը Ջուլիան իրականություն վերադարձրեց: Նա գլխով հավանություն տվեց: Մաքսավորը ստորագրեց ու կնիք դրեց Էնթոնի Ուելշի լուսանկարի վրա: Տարբեր քաղաքների անուններով դաջված անձնագրի էջին իջած այս կնիքն արդեն պատմում էր տիրոջ բացակայության մասին...

Դագաղը դրեցին երկար, սև դիակառքի մեջ: Սթենլին նստեց վարորդի կողքին, Ադամը բացեց դուռը երիտասարդ կնոջ համար, որի հետ պետք այդ օրը կեսօրին ամուսնանար: Էնթոնի Ուելշի օգնականը նստեց հետևի ծալվող նստատեղին՝ հանգուցյալի մոտ: Թափորը տեղից պոկվեց և դուրս եկավ օդանավակայանի տարածքից՝ ուղղվելով դեպի 678 մայրուղի:

Մեքենան շարժվեց հյուսիս: Սկզբում ոչ ոք չէր խոսում: Ուոլեսը աչքը չէր կտրում դագաղից, որի մեջ պարփակված էր իր վերջին գործատուի աճյունը: Սթենլին ակնդետ նայում էր իր ձեռքերին, Ադամը՝ Ջուլիային, իսկ Ջուլիան ուսումնասիրում էր Նյու Յորքի արվարձանների մոխրագույն ուրվագծերը:

– Ո՞ր ճանապարհով եք գնում,– հարցրեց նա վարորդին, երբ երևաց Լոնգ Այլենդ տանող ճամփաբաժանը:

– Ուայթսթոուն Բրիջով, տիկին,– պատասխանեց վերջինս:

– Կարո՞ղ եք Բրուքլինյան կամրջով անցնել:

Վարորդը միացրեց թարթիչն ու գիծը փոխեց:

– Էսպես մի հսկայական պտույտ կտանք,– շշնջաց Ադամը,– նա ավելի կարճ ճանապարհով էր գնում:

– Օրս արդեն փչացել է, նրան մի քիչ էլ հաճույք պատճառենք:

– Ո՞ւմ,– հարցրեց Ադամը:

– Պապայիս: Վերջին անգամ նրան պտտենք Ուոլլ Սթրիթով, Թրայբեքայով, Սոհոյով և, ինչու չէ, Կենտրոնական զբոսայգով:

– Հա, համաձայն եմ, որ օրդ փչացել է, իսկ եթե ուզում ես նրան հաճույք պատճառել,– շարունակեց Ադամը,– ուրեմն պետք է զգուշացնենք քահանային, որ ուշանում ենք:

– Ադա՛մ, շուն սիրո՞ւմ եք,– հարցրեց Սթենլին:

– Ընդհանրապես՝ այո, բայց նրանք ինձ չեն սիրում: Իսկ ինչո՞ւ:

– Հենց էնպես, մտքովս մի բան անցավ,– պատասխանեց Սթենլին՝ մինչև վերջ բացելով պատուհանը:

Թափորը հյուսիսից հարավ կտրեց անցավ Մանհեթենը և մեկ ժամ ուշացումով հասավ 233-րդ փողոց:

Վուդլոնյան գերեզմանատան գլխավոր մուտքի ուղեփակոցը բացվեց: Մեքենան մի նեղլիկ ճանապարհի մտավ, օղակաձև պտույտ կատարեց, անցավ մի քանի դամբարանների մոտով, լճի վրա թեքված զառիվայրով իջավ ու կանգ առավ թարմ փորած գերեզմանափոսի մոտ, որը շուտով գիրկն էր առնելու իր նոր բնակչին:

Քահանան արդեն սպասում էր: Դագաղը դրեցին փոսին դրված հենակների վրա: Ադամը մոտեցավ քահանային՝ արարողության վերջին մանրուքները ճշտելու համար: Սթենլին գրկեց Ջուլիային:

– Ի՞նչ ես մտածում,– հարցրեց նա:

– Ի՞նչ կարող եմ մտածել, երբ թաղում եմ հորս, որի հետ տարիներով չեմ խոսել: Միշտ խառը հարցեր ես տալիս, Սթենլի:

– Հազիվ մի անգամ լուրջ եմ, Ջուլիա: Ի՞նչ ես մտածում հենց հիմա: Կարևոր է, որ հիշես: Հավատա ինձ, էս պահը միշտ հետդ է լինելու:

– Մտածում եմ մորս մասին: Նրանք կհանդիպե՞ն երկնքում, թե՞ մայրս շարունակում է ամպերում թափառել իր մոռացության մեջ:

– Հիմա հավատո՞ւմ ես Աստծուն:

– Չէ հա, բայց ինչ իմանաս, մեկ էլ տեսար...

– Զուլիա, մի բան խոստովանե՞մ, բայց երդվիր, որ ձեռ չես առնի: Ինչքան մեծանում եմ, ավելի ու ավելի եմ հավատում Աստծուն:

Զուլիայի դեմքին մի տխուր ժպիտ գծագրվեց:

– Ճիշտն ասեմ՝ վստահ չեմ, որ հորս դեպքում Աստծու գոյությունը լավ նշան է:

– Քահանան հարցնում է՝ բոլորս հավաքվե՞լ ենք: Կարո՞ղ ենք սկսել,– նրանց մոտենալով՝ հարցրեց Ադամը:

– Էս չորսս ենք,– շարունակեց Զուլիան՝ մատնացույց անելով հոր՝ մոտեցող օգնականին:– Սա մեծն ճանապարհորդների ու միայնակ խաբեբաների դժբախտությունն է: Նրանց համար ընտանիքն ու ընկերները աշխարհով մեկ ցրված ծանոթներ են... Իսկ ծանոթները հազիվ թե հեռվից գան թաղմանը մասնակցելու: Կյանքի էս փուլում էլ չես կարող մեկին ծառայություն մատուցել կամ հաճոյանալ: Մենակ ծնվում, մենակ էլ մեռնում ես:

– Էդ Բուդդայի խոսքն է, իսկ հայրդ իռլանդացի մոլի կաթոլիկ էր, սիրելիս,– պատասխանեց Ադամը:

– Դոբերման, Ադամ, ձեզ մի հսկա դոբերման է պետք,– հառաչեց Սթենլին:

– Բայց ինչո՞ւ եք անպայման ուզում ինձ շուն կպցնել, հը՞:

– Հեչ: Բանի տեղ մի դրեք:

Քահանան մոտեցավ Զուլիային, որ հայտնի իր ցավակցությունն ու ափսոսանքը՝ այսօր այս արարողությունը, այլ ոչ թե հարսանիքն անցկացնելու համար:

– Կարո՞ղ եք մի զարկով երկու նապաստակ սպանել,– հարցրեց Ջուլիան,– վերջապես, հյուրերը թքած ունեն: Իսկ ձեր Տիրոջ համար կարևորը բարի գործերն են, այնպես չէ՞:

Սթենլին հազիվ զսպեց ծիծաղը, մինչդեռ քահանան պատասխանեց.

– Բա՛վ է, օրիորդ:

– Այնքան էլ հիմար բան չեմ ասում. էդպես գոնե հայրս կմասնակցեր հարսանիքիս:

– Ջուլիա՛,– այս անգամ էլ հանդիմանեց Ադամը:

– Լավ, ընդհանուր կարծիքը հաշվի առնելով՝ այնքան էլ լավ գաղափար չէր,– զիջեց նա վերջապես:

– Կուզե՞ք մի քանի խոսք ասել,– հարցրեց քահանան:

– Շատ բան կուզեի ասել...– պատասխանեց Ջուլիան՝ հայացքը գամելով դագաղին:– Գուցե դո՞ւք, Ուոլես,– առաջարկեց նա հոր օգնականին,– ի վերջո, դուք նրա ամենամոտ ընկերն էիք:

– Կարծում եմ՝ ես էլ ի վիճակի չեմ, օրիորդ,– պատասխանեց Ուոլեսը,– և բացի այդ էլ՝ մենք միմյանց անխոս հասկանում էինք: Սակայն եթե թույլ տաք, մի բան կասեմ, բայց ձեզ, ոչ թե նրան: Ի հեճուկս բոլոր թերությունների, որ վերագրում եք ձեր հորը, իմացեք, որ թեև երբեմն կոպիտ էր, հաճախ զվարճալի կամ տարօրինակ, բայց, հավատացեք, լավ մարդ էր և ձեզ շատ էր սիրում:

– Այսպիսով, եթե հաշվարկներս ճիշտ են, մի քանի խոսք ասվեց, մի բան էլ ավելի,– կոկորդը մաքրելով՝ շտապեցրեց Սթենլին՝ նկատելով, թե ինչպես են մշուշվում Ջուլիայի աչքերը:

Քահանան աղոթք կարդաց ու փակեց աղոթագիրքը: Էնթոնի Ուելշի դագաղը դանդաղ իջեցվեց փոսը: Ջուլիան մի վարդ մեկնեց հոր օգնականին: Ուոլեսը ժպտաց ու հետ հրեց ծաղիկը:

– Սկզբում դուք, օրիորդ:

Ծաղկաթերթերը, փայտին դիպչելով, ցիրուցան եղան, ևս երեք վարդ նետվեց դագաղին, ու վերջին հրաժեշտը տվող չորս մարդ բռնեց հետդարձի ճանապարհը:

Ծառուղու խորքում՝ դիակառքի տեղում, երկու սեդան էր կանգնած: Ադամը բռնեց նշանածի ձեռքն ու ուղեկցեց դեպի մեքենան: Ջուլիայի հայացքը պտտվում էր երկնքում:

– Անգամ մի ամպ չկա, կապույտ, կապույտ, կապույտ, լրիվ կապույտ երկինք է, ոչ շոգ է, ոչ ցուրտ, հով քամի էլ չկա, ի՞նչ սիրուն օր է ամուսնանալու համար...

– Մի անհանգստացիր, ուրիշ օր էլ կլինի,– վստահեցրեց Ադամը:

– Սրա պե՞ս,– բացականչեց Ջուլիան՝ ձեռքերը պարզելով,– էս երկնքի պես երկինք ու եղանա՞կ: Կանաչով ներկված ծառե՞ր: Լճում լողացող բադե՞ր: Աչքիս՝ մինչև մյուս գարուն պետք է սպասենք:

– Աշունն էլ սիրուն է, հավատա ինձ, ու երբվանի՞ց ես դու բադ սիրում:

– Նրանք են ինձ սիրում: Տեսա՞ր՝ քիչ առաջ ինչ շատ էին լճակի վրա՝ հորս գերեզմանի մոտ:

– Չէ, ուշադրություն չեմ դարձրել,– պատասխանեց Ադամը՝ անհանգստացած նշանածի հուզմունքի հանկարծակի պոռթկումից:

– Տասնյակ բադեր իրենց փողկապներով եկել նստել էին հենց էնտեղ ու թռան գնացին, երբ որ թաղումն ավարտվեց: Սրանք էն բադերն էին, որ որոշել էին գալ ԻՄ հարսանիքին, բայց մասնակցեցին հորս թաղմանը:

– Վախենում եմ քեզ հակասել, Ջուլիա, բայց վստահ չեմ, որ բադերը փողկապ են կապում:

– Դու ի՞նչ գիտես, է: Դու ինքդ հեչ բադ նկարե՞լ ես: Իսկ ես նկարել եմ: Ու խնդրում եմ՝ հավատաս ինձ, եթե

ասում եմ, որ էս բադերը տոնական էին հագնված,– գոռաց նա:

– Լավ, սերս, քո բադերը կոստյումով էին, իսկ հիմա արի հետ գնանք:

Սթենլին ու հոր օգնականը սպասում էին մեքենաների մոտ: Ադամը Ջուլիային դեպի մեքենան տարավ, բայց նա կանգնեց մի մեծ բացատի մեջտեղում տնկված գերեզմանաքարի մոտ: Կարդաց ննջեցյալի անունն ու ծննդյան թիվը, որն անցած դարի էր:

– Ճանաչո՞ւմ ես,– հարցրեց Ադամը:

– Տատիս գերեզմանն է: Իմ ամբողջ ընտանիքն արդեն էստեղ է թաղված: Ես վերջին Ուելշն եմ: Իհարկե, չհաշված մի քանի հարյուր քեռիներին, հորքուրներին, զարմիկ-զարմուհիներին, որոնք սփռված են Իռլանդիայի և Բրուքլինի ու Չիկագոյի միջև: Կներես քիչ առաջվա համար, մի քիչ կապերս թողեցի:

– Բան չկա, սերս, մենք պետք է ամուսնանայինք, իսկ դու թաղում ես հորդ: Նորմալ է, որ հուզված ես:

Նրանք առաջացան ծառուղով: Երկու «Լինքոլներին» հասնելուն մի քանի քայլ էր մնացել:

– Դու ճիշտ ես,– իր հերթին երկնքին նայելով՝ ասաց Ադամը,– հրաշալի օր է, պապադ մինչև վերջ համը հանեց:

Ջուլիան կտրուկ կանգ առավ ու կոպտորեն ձեռքը դուրս քաշեց նրա ձեռքի միջից:

– Էդպես չնայես ինձ,– մեղա եկավ Ադամը:– Ինքդ ես ամենաքիչը քսան անգամ կրկնել, ինչ մահվան լուրն իմացել ես:

– Հա, ես կարող եմ ասել, ինչքան կամենամ, բայց ո՛չ դու: Սթենլիի հետ նստիր առաջին մեքենան, ես երկրորդով կգամ:

– Կներես, Ջուլիա...

– Էլ մի: Ես ուզում եմ երեկոյան տանը մենակ մնալ ու դասավորել մինչև վերջին պահը համը հանած հորս իրերը..

– Աստծու սիրուն, ես չեմ ասել, դու էիր ասում,– բացականչեց Ադամը՝ մինչ Ջուլիան նստում էր մեքենան:

– Ու մի բան էլ, Ադամ, մեր հարսանիքին բադեր եմ ուզում, հարյուրավոր բադեր,– ավելացրեց նա դուռը շխկացնելուց առաջ:

«Լինքոլնն» անհետացավ գերեզմանատան ճաղերի հետևում: Հուսահատված Ադամը նստեց երկրորդ մեքենայի հետևի նստարանին՝ օգնականի աջ կողքին:

– Երևի ֆոսքտերիեր: Պստլո է, բայց լավ է կծում,– եզրակացրեց Սթենլին՝ տեղավորվելով դիմացն ու վարորդին շարժվելու հրահանգ տալով:

## 3

Հանկարծակի սկսված տեղատարափ անձրևի տակ մեքենան դանդաղ իջնում էր Հինգերորդ պողոտայով: Խցանման մեջ կանգնած՝ Ջուլիան 58-րդ փողոցի անկյունում խաղալիքի մի մեծ խանութ նկատեց: Միանգամից ճանաչեց ցուցափեղկին դրված, կապտամոխրագույն վերարկուով հսկա ջրասամույրին:

Թիլին ծնվել է շաբաթ օրը՝ կեսօրին, այդօրվա նման մի օր, երբ վարար անձրևը, վտակներ դարձած, ցած էր վազում Ջուլիայի գրասենյակի պատուհանների ապակիներով: Մտասույզ Ջուլիան նայում էր, թե ինչպես են վտակները վերածվում գետերի, պատուհանի շրջանակը՝ Ամազոնի ափերի, իսկ անձրևից ծանրացած տերևակույտը՝ մի պստիկ կաթնասունի բնի, որ հեղեղն ուր որ

է՝ կքշեր-կտաներ՝ ջրասամույրների համայնքը մոլորված թողնելով:

Հաջորդ գիշեր նորից անձրևում էր: Անիմացիոն ստուդիայի համակարգչային մեծ սրահում միայնակ նստած՝ Ջուլիան քաշեց իր կերպարի առաջին գծերը: Քանի՞-քանի հազար ժամ է ծախսել էկրանի առաջ՝ նկարելով, գունավորելով, մշակելով լուրթ կապույտ ջրասամույրին կենդանություն պարգևող յուրաքանչյուր արտահայտություն ու միմիկա: Անհնար է հիշել այն անթիվ-անհամար կեսգիշերային հանդիպումները, շաբաթ-կիրակիները, որ նա նվիրել է իր Թիլիի ու նրա ընկերների պատմությանը: Մուլտֆիլմի հաջողությունը փոխհատուցեց Ջուլիայի և նրա ձեռքի տակ աշխատող հիսուն գործընկերների երկու տարվա չարչարանքը:

– Ես այստեղ կիջնեմ ու ոտքով կվերադառնամ տուն,– ասաց նա վարորդին:

Վարորդը մատնացույց արեց չդադարող անձրևը:

– Էսօրվա միակ լավ բանը,– մռթմռթաց Ջուլիան, երբ մեքենայի դուռն արդեն փակվել էր:

Վարորդը հասցրեց տեսնել, թե նա ինչպես վազեց խաղալիքի խանութ: Թքած անձրևի վրա. ցուցափեղկի հետևում նստած Թիլին կարծես ժպտաց՝ ողջունելով նրան: Ջուլիան չդիմացավ ու նրան ձեռքով արեց. ի մեծ զարմանս իրեն՝ հսկա, փափուկ խաղալիքի կողքին կանգնած փոքրիկ աղջիկն իսկույն պատասխանեց: Մայրը կոպտորեն քաշեց նրա ձեռքից և քարշ տվեց դեպի ելքը, բայց փոքրիկն ընդվզեց և թռավ ջրասամույրի լայն բացված գիրկը: Տեսարանը հուզեց Ջուլիային: Աղջնակը կառչել էր Թիլիից, իսկ մայրը խփում էր մատներին, որ բաց թողնի ավարը: Ջուլիան մտավ խանութ և մոտեցավ նրանց:

– Գիտե՞ք, որ Թիլին հրաշքներ է գործում,– հարցրեց Զուլիան:

– Օրիորդ, եթե վաճառողուհու կարիք ունենամ, իմաց կտամ,– պատասխանեց կինը՝ նախատինքով լի հայացք նետելով փոքրիկին:

– Ես վաճառողուհի չեմ, ես նրա մայրիկն եմ:

– Ներողությո՞ւն,– ընտանիքի անհանգստացած մայրը ձայնը բարձրացրեց:– Քանի դեռ հակառակն ապացուցված չէ, ե՛ս եմ նրա մայրը:

– Խոսքս Թիլիի մասին է, փափուկ խաղալիքի, որն այդքան գրավել է ձեր դստերը: Ես եմ նրան լույս աշխարհ բերել: Թույլ կտա՞ք այն նվիրել աղջկան: Տխրում եմ՝ նրան այս լուսավոր ցուցափեղկում մենակ տեսնելով: Արևի պայծառ ճառագայթները վերարկուի գույնը կգցեն, իսկ Թիլին այնքա՛ն է սիրում իր կապտամոխրագույն հագուստը: Չեք էլ կարող պատկերացնել, թե քանի ժամ ենք անցկացրել նրա վզի, փորիկի, դնչիկի ճիշտ գույները գտնելու համար, որ մի քիչ գոնե երջանկանար, չէ՞ որ հեղեղը քշել-տարել էր նրա տնակը:

– Ձեր Թիլին կմնա խանութում, իսկ աղջիկս կսովորի կողքիս մնալ, երբ մենք զբոսնում ենք քաղաքում,– պատասխանեց մայրը՝ այնպես ուժգին քաշելով աղջնակի ձեռքը, որ վերջինս ստիպված եղավ թողնել խաղալիքի հսկա թաթը:

– Թիլին ուրախ կլինի նոր ընկեր ձեռք բերել,– համոզում էր Զուլիան:

– Դուք ուզում եք հաճոյանալ խաղալիքի՞ն,– ապշահար հարցրեց կինը:

– Այսօր հատուկ օր է, ես ու Թիլին երջանիկ կլինեինք, կարծում եմ՝ ձեր դուստրը նույնպես: Ընդամենը մեկ «այո», և երեքս էլ կերջանկանանք, արժե մտածել, այնպես չէ՞:

– Իհարկե ոչ: Ալիսին նվեր պետք չէ, հատկապես անծանոթներից: Հաջողություն, օրիորդ,– պատասխանեց կինը՝ հեռանալով:

– Ալիսն արժանի է, իսկ դուք տասը տարի անց կփոշմանեք,– ձայնեց Ջուլիան՝ ամբողջ մաղձը թափելով:

Աղջկա մայրը շուռ եկավ և գոռոզ հայացքով չափեց Ջուլիային:

– Դուք խաղալիք եք լույս աշխարհ բերել, օրիորդ, իսկ ես՝ երեխա: Այնպես որ ձեր քարոզները ձեզ պահեք, լա՞վ:

– Իրոք որ, փոքրիկ աղջիկը փափուկ խաղալիք չէ, մենք չենք կարող վրձնի մի հարվածով ամոքել նրան պատճառած ցավը:

Կինը վրդովված դուրս եկավ խանութից: Մայր ու աղջիկ, առանց հետ նայելու, հեռացան Հինգերորդ պողոտայով:

– Կներես, Թիլիս,– ասաց Ջուլիան փափուկ խաղալիքին,– ոնց որ թե դիվանագիտությունս դավաճանեց: Ինձ լավ գիտես, դա իմ ուժեղ կողմը չի: Մի անհանգստացիր, կտեսնես, քեզ համար անպայման մի լավ ընտանիք կգտնենք:

Խանութի տնօրենը, որի աչքից ոչինչ չէր վրիպել, մոտեցավ նրան:

– Շատ ուրախ եմ ձեզ տեսնել, օրիորդ Ուելշ, ամսից ավելի է՝ մեզ չեք այցելել:

– Վերջերս շատ զբաղված էի:

– Ձեր փամփլիկը խենթանալու հաջողություն ունեցավ, սա տասներորդ խաղալիքն է, որ պատվիրում ենք: Ընդամենը չորս օր ցուցափեղկին, ու, հո՛պ, տանում են,– վստահեցրեց տնօրենը՝ խաղալիքը տեղը դնելով:– Այս մեկը կարծես թե երկու շաբաթ է՝ այստեղ է: Այս եղանակին...

– Եղանակը կապ չունի,– պատասխանեց Ջուլիան,– այս Թիլին իսկական է, դրա համար է բարդ, քանի որ նա ինքն է ընտրում՝ ում տուն գնա:

– Օրիորդ Ուելշ, ամեն գալուց նույնն եք ասում,– ժպտալով ասաց տնօրենը:

– Նրանք բոլորն էլ յուրօրինակ են,– վստահեցրեց Ջուլիան՝ հրաժեշտ տալով:

Անձրևը դադարել էր: Ջուլիան դուրս եկավ, իջավ Մանհեթենով ու ձուլվեց ամբոխին:

***

Հորացիո փողոցի ծառերը կքել էին թաց տերևների ծանրությունից: Օրվա վերջում արևը մի պահ երևաց ու սուզվեց Հուդզոն գետի ջրերի մեջ: Ծիրանագույն, մեղմիկ մի լույս էր ճառագում Ուեսթ Վիլիջ թաղամասի նեղլիկ փողոցներում: Ջուլիան ողջունեց իր տան դիմաց գտնվող հունական փոքրիկ ռեստորանի տիրոջը: Պատշգամբը դասավորող տղամարդը գլխով արեց ու հարցրեց՝ արդյոք պե՞տք է երեկոյան համար սեղան պահել: Ջուլիան սիրալիր հրաժարվեց ու խոստացավ հաջորդ՝ կիրակի օրը գալ լանչի:

Նա բանալին պտտեց իր փոքրիկ շենքի մուտքի կողպեքում և աստիճաններով երկրորդ հարկ բարձրացավ: Սթենլին սպասում էր՝ ամենավերևի աստիճանին նստած:

– Ո՞նց ես մտել:

– Ջիմուրը՝ ներքևի խանութի տերը, ինչ-որ տուփեր էր իջեցնում նկուղ, օգնեցի, խոսեցինք նրա կոշիկների վերջին հավաքածուից. իսկակա՛ն հրաշք էր, ջանիկս: Տեսնես մեկը կա՞ էս աշխարհում, որ կարող է իրեն էդպիսի ճոխություն թույլ տալ:

– Հաշվի առնելով հանգստյան օրերին խանութ մտնող ու տոպրակները ձեռքին դուրս եկողներին՝ բավական

շատ,– պատասխանեց Ջուլիան:– Բա՞ն է պետք,– հարցրեց՝ բնակարանի դուռը բացելով:

– Ինձ՝ չէ, քեզ է պետք, որ մեկը հետդ լինի:

– Քո տանջված տեսքին նայիր, հիմա ո՞վ է ում պետք:

– Լավ, արևս, արի չկռվենք, դու ճիշտ ես, ես եմ անկոչ հյուրի նման վազելով եկել...

Ջուլիան հանեց գաբարդինե վերարկուն ու շպրտեց բուխարու կողքի բազկաթոռին: Սենյակը լցված էր կարմիր աղյուսե շենքի ճակատամասով բարձրացող գլիցինիայի բույրով:

– Էստեղ իսկապես հավես է,– բացականչեց Սթենլին՝ նետվելով բազմոցին:

– Էս տարի գոնե էս ստացվեց,– սառնարանը բացելով՝ ասաց Ջուլիան:

– Այսի՞նքն:

– Այսինքն՝ էս հին տան մի հարկը խելքի բերելը: Գարեջուր կուզե՞ս:

– Գարեջուրը փչացնում է կազմվածքը, արևս: Իսկ եթե մի-մի բաժակ կարմիր գինի խմենք, հը՞:

Ջուլիան երկու ափսե դրեց փայտե սեղանին, մի ափսե պանիր, բացեց շիշը, միացրեց Քաունթ Բեյսիի[1] սկավառակն ու Սթենլիին իր դիմաց նստելու նշան արեց: Սթենլին նայեց կաբիրնեի[2] պիտակին ու հաճույքից սուլեց:

– Իսկական տոնական սեղան ստացվեց, Սթեն,– նկատեց Ջուլիան՝ իր հերթին սեղան նստելով:– Մի երկու հարյուր հյուր ու պտիֆուր որ լիներ, աչքերներս կփակեինք ու կպատկերացնեինք, որ հարսանիքիս ենք:

---

[1] Ամերիկացի ջազային դաշնակահար և երգեհոնահար: Բեյսին սվինգի պատմության ամենանշանակալի դեմքերից էր:

[2] Ֆրանսիական խաղողի տեսակ, որից պատրաստում են համանուն գինին:

– Ջանիկս, կուզե՞ս պարել,– հարցրեց Սթենլին:

Մինչ Ջուլիան հասցրեց բերանը բացել, Սթենլին նրան ուղղակի քաշեց-հանեց տեղից ու սկսեց հետը սվինգ պարել:

– Տեսա՞ր, անկախ ամեն ինչից՝ քեֆի ենք,– ծիծաղելով ասաց նա:

Ջուլիան գլուխն իջեցրեց նրա ուսին:

– Ի՞նչ էի անելու առանց քեզ, իմ լավ Սթենլի:

– Կկործանվեիր, ու ես էդ վաղուց գիտեմ:

Երաժշտությունը դադարեց, ու Սթենլին վերադարձավ տեղը:

– Ադամին գոնե զանգե՞լ ես:

Ջուլիան զբոսանքի ժամանակ հասցրել էր զանգել ու ներողություն խնդրել ապագա ամուսնուց: Ադամն ըմբռնումով էր մոտեցել մենակ մնալու նրա ցանկությանը: Դեռ մի բան էլ ինքը պետք է ներում հայցեր թաղման ժամանակ սխալ պահվածքի համար: Գերեզմանատնից վերադառնալուց հետո խոսել էր մոր հետ, որը նրան հանդիմանել էր աննրբանկատության համար: Երեկոյան մեկնելու էր ծնողների ամառանոց՝ ընտանիքի հետ անցկացնելու ուիքենդի մնացորդը:

– Գիտես, արևս, պահի տակ մտածում եմ, որ պապադ շատ էլ ճիշտ արեց, որ թաղումն հենց էսօր եղավ:

– Դու Ադամին իրոք տանել չես կարող...

– Ես էդպիսի բան չասացի:

– Երեք տարի մենակ եմ մնացել մի քաղաքում, որտեղ երեք միլիոն ազատ տղամարդ կար: Ադամն առատաձեռն է, ուշադիր, բարեկիրթ ու պատրաստակամ: Նա չի նեղվում իմ գարշելի աշխատանքային գրաֆիկից, կաշվից դուրս է գալիս ինձ երջանկացնելու համար ու, ամեն ինչ մի կողմ, Սթեն, նա սիրում է ինձ:

– Բայց, կներես, ես քո նշանածի դեմ ոչինչ չունեմ, նա իդեալական է: Էնքան որ՝ կուզեի կողքիդ տեսնել մի տղամարդու, որով տարված կլինեիր, եթե անգամ լիքը թերություններ ունենար, քան թե մեկին, որի կողքին մնում ես որոշ լավ կողմերի համար:

– Գլխիս քարոզ կարդալը հե՞շտ է, դո՞ւ ինչու ես մենակ, հը՞:

– Ես մենակ չեմ, սրտիկս, ես այրի տղամարդ եմ, համաձայնիր՝ նույնը չէ: Ու եթե իմ սիրած մարդը մահացել է, դա չի նշանակում, որ նա ինձ լքել է: Պետք է տեսնեիր, թե ի՛նչ գեղեցիկ էր Էդուարդը նույնիսկ հիվանդանոցում պառկած ժամանակ: Հիվանդությունից նրա հմայքը չէր խամրել: Մինչև վերջին շունչը կատակում էր:

– Որո՞նք էին նրա վերջին բառերը,– հարցրեց Ջուլիան՝ Սթենլիի ձեռքը բռնելով:

– Սիրում եմ քեզ....

Երկուսով, լռությամբ պարփակված, իրար էին նայում: Սթենլին վեր կացավ, հագավ բաճկոնն ու համբուրեց Ջուլիայի ճակատը:

– Գնամ քնեմ: Էսօր դու հաղթեցիր, մենակ մնալու հերթն իմն է:

– Լա՛վ, մի քիչ էլ մնա, Սթեն: Էդ վերջին բառերը իրո՞ք նշանակում էին, որ նա սիրում էր քեզ:

– Էդ ամենաչնչին բանն էր, որ կարող էր ասել... Նա մահացավ, որովհետև դավաճանել էր ինձ,– տխուր ժպտալով՝ ասաց Սթենլին:

***

Առավոտյան, երբ Ջուլիան աչքերը բացեց, պառկած էր բազմոցին. տեսավ, որ Սթենլին ծածկել է իրեն ծածկոցով: Ավելի ուշ ափսեի տակ մի երկտող գտավ.

«Ինչքան էլ իրար նեղացնենք ու բզենք, դու իմ ամենահարազատ մարդն ես, ու ես էլ եմ քեզ շատ սիրում: Սթենլի»:

# 4

Ժամը տասին Ջուլիան տնից դուրս եկավ՝ մտադրված օրն անցկացնել գրասենյակում: Գործն ուշացրել էր, իմաստ չուներ տանը մնալ ու տեղում դոփել՝ անընդհատ դասավորելով այն ամենը, ինչ երկու օրից նորից խառնվելու էր: Անիմաստ էր նաև Սթենլիին զանգելը. կիրակի օրերին նրան տեղից կարող էիր հանել միայն փանքեյքով կամ brunch-ով գայթակղելով, թե չէ քնում է մինչև կեսօր:

Հորացիո փողոցը դեռ դատարկ էր: Ջուլիան ողջունեց «Պաստիսի» պատշգամբում նստած հարևաններին ու արագացրեց քայլերը: Իններորդ պողոտայով բարձրանալիս հեռախոսից մի մեղմ հաղորդագրություն ուղարկեց Ադամին, երկու խաչմերուկ բարձրացավ ու մտավ «Չելսի Ֆարմերս Մարքեթի» շենքը: Վերելակավարը նրան վերջին հարկ բարձրացրեց: Ջուլիան բեյջն անցկացրեց ու հրեց գրասենյակի ծանր, մետաղե դուռը: Երեք դիզայներ նստած էին իրենց տեղերում: Նրանց դեմքի արտահայտությունից ու աղբամանի մեջ սուրճի թղթե, ճզմած բաժակների քանակից Ջուլիան հասկացավ, որ գիշերը գրասենյակում են անցկացրել: Խնդիրը, որ մի քանի օր է արդեն՝ մոբիլիզացրել էր ամբողջ թիմը, դեռ լուծում չէր ստացել: Ոչ ոք չէր կարողանում ստեղծել ճպուռների խմբին կյանքի կոչող ալգորիթմը, որոնք պետք է պաշտպանեին ամրոցը աղոթարարների

հարձակումից: Պատին փակցված արտադրական պլանը հուշում էր, որ հարձակումը նախատեսված է հաջորդ երկուշաբթի: Ու եթե այդ ընթացքում էսկադրոնը օդ չբարձրանա, ապա կամ ամրոցն առանց պայքարի կհանձնվի թշնամուն, կամ նոր մուլտֆիլմը ուշացած կհայտնվի էկրաններին: Երկու տարբերակն էլ անընդունելի էր:

Ջուլիան աթոռը քաշեց ու նստեց աշխատակիցների կողքին: Գործի ընթացքը քննարկելով՝ որոշեց հրատապ հավաքել բոլորին: Վերցրեց հեռախոսը և հերթով զանգեց թիմի բոլոր անդամներին: Ամեն անգամ ներողություն խնդրելով նրանց կիրակին փչացնելու համար, խնդրեց մեկ ժամից հավաքվել քննարկումների սրահում: Նույնիսկ եթե պետք լիներ աշխատել զօր ու գիշեր, երկուշաբթի առավոտյան ճպուռների բանակը պետք է հեղեղեր Էնոուքրիի երկինքը:

Ու մինչ առաջին հերթափոխը հանձնում էր գործը, Ջուլիան վազելով իջավ շուկա, որ մի քանի տոպրակ տարբեր տեսակի սենդվիչներ ու խմորեղեն բերի իր թիմին:

Կեսօրին երեսունյոթ հոգի, արձագանքելով նրա խնդրանքին, հավաքվեցին գրասենյակում: Առավոտվա հանգիստ մթնոլորտը լցվեց նկարիչների, նկարազարդողների, դիզայներների, ծրագրավորողների ու անիմացիոն մասնագետների բզզոցով, որոնք քննարկում էին հաշվետվությունները, անխոհեմ գաղափարները և եզրակացություններ անում:

Ժամը հինգին մի նորելուկ աշխատակցի առաջարկած տարբերակը իրար խառնեց բոլորին: Հավաքվեցին խորհրդակցության սրահում: Շառլը՝ երիտասարդ նորեկ ծրագրավորողը, ընդամենը ութ օր էր աշխատում: Երբ Ջուլիայի խնդրանքով սկսեց ներկայացնել իր

տեսությունը, նրա ձայնը դողում էր, իսկ բառերն ասես բարբաջանք լինեին: Ծրագրավորողների թիմի ղեկավարը, ծիծաղելով նրա ամոթխածության վրա, գործն ավելի բարդացրեց: Վերջապես երիտասարդը նստեց համակարգչի մոտ ու սկսեց նվագել ստեղների վրա՝ թիկունքում զգալով ընկերների քմծիծաղը, որը կտրուկ դադարեց, երբ ճպուռներից մեկը էկրանին սկսեց թափահարել թևերը, թռավ ու մի կատարյալ շրջան գծեց Էնոուքրիի երկնքում:

Ջուլիան առաջինը շնորհավորեց նրան, իսկ մյուս երեսունհինգը ծափահարեցին: Մնում էր օդ բարձրացնել մնացած յոթ հարյուր քառասուն զինված ճպուռներին: Արդեն վստահություն ձեռք բերած ու ոգևորված Շառլը բացատրեց մեթոդը, որի շնորհիվ կկարողանային զարգացնել ալգորիթմը: Մինչ նա մանրակրկիտ բացատրում էր իր տեսությունը, հեռախոսը զնգաց: Պատասխանող աշխատակիցը Ջուլիային նշան արեց մոտենալ, քանի որ զանգը հրատապ էր: Ջուլիան խնդրեց աշխատակիցներից մեկին նշումներ անել և սրահից դուրս եկավ՝ իր սենյակում խոսելու համար:

***

Ջուլիան իսկույն ճանաչեց պարոն Ջիմուրի՝ Հորացիո փողոցի տան առաջին հարկի կոշիկների խանութի տիրոջ ձայնը: Հաստատ իր տան խողովակներից կրկին ջուր է դուրս տվել: Ջուրը հոսել է առաստաղով ու թափվել պարոն Ջիմուրի կոշիկների հավաքածուի վրա, որի ամեն զույգի գինը զեղչերի ժամանակ իր կես ամսվա աշխատավարձի չափ էր: Այ դրանում Ջուլիան վստահ էր, որովհետև անցած տարի ապահովագրական գործակալը հենց այդ գումարի չափով չեկ փոխանցեց պարոն Ջիմուրին՝ ի հատուցումն իր հասցրած վնասների.

Ջուլիան տնից դուրս գալիս մոռացել էր պտտել իր դարավոր լվացքի մեքենայի ջրի փականը: Բայց ո՞վ չի մոռանում...

Այդ օրը նրա ապահովագրական գործակալը երդվեց, որ դա վերջին նմանատիպ փոխհատուցումն է: Հազիվ էր համոզել իր կազմակերպությանը չլուծարել Ջուլիայի ապահովագրական պայմանագիրը: Չէ՞ որ Թիլին իր երեխաների սիրելի հերոսն էր, ու իր կիրակնօրյա քնի միակ առհավատչյան՝ մուլտֆիլմի DVD-ն:

Իսկ այ, պարոն Ջիմուրի ու Ջուլիայի հարաբերությունների վերականգնումն ավելի մեծ ջանքեր պահանջեց: Հարկ եղավ նրան հրավիրել Սթենլիի մոտ կազմակերպված Գոհաբանության տոնին, ամանորյա միջոցառմանը, ուշադրության հազար ու մի տեսակ այլ դրսևորումներ ցուցաբերել, որպեսզի շիկացած մթնոլորտը երկու հարևանի միջև մեղմանա: Պարոն Ջիմուրը բավական մռայլ կերպար էր, ամեն ինչի մասին ուներ իր կարծիքն ու հիմնականում ծիծաղում էր միայն իր արած կատակների վրա:

Ջուլիան շունչը պահած սպասում էր, որ խոսակիցը հայտնի հերթական աղետի մասին:

– Օրիորդ Ուելշ...

– Պարոն Ջիմուր, շատ եմ ցավում, ինչ էլ որ եղած լինի:

– Ես էլ, օրիորդ Ուելշ, խանութս լեփ-լեցուն է, ու ես լիքը գործ ունեմ՝ ձեր բացակայության ընթացքում ձեր առաքանիներով զբաղվելու փոխարեն:

Ջուլիան փորձեց հանգստացնել սրտի բաբախյունն ու պարզել, թե ինչի մասին է խոսքը:

– Ի՞նչ առաքանի:

– Դո՛ւք պետք է ինձ ասեք, օրիորդ:

– Ներողություն եմ խնդրում, բայց ես ոչինչ չեմ պատվիրել, իսկ պատվիրելու դեպքում էլ գրասենյակ եմ բերել տալիս:

– Շատ լավ, բայց սա այդ դեպքը չէ: Մի հսկայական բեռնատար կանգնել է մուտքիս դիմաց: Կիրակին իմ ամենակարևոր օրն է, և ես կարող եմ մեծ կորուստներ ունենալ: Արկղն իջեցրած համբալները հրաժարվում են գնալ, մինչև ինչ-որ մեկը չստորագրի ստացականը: Հիմա ի՞նչ անենք:

– Ա՞րկղ:

– Այո, այո, հենց արկղ: Ուզում եք՝ հաճախորդներիս սպասեցնեմ ու ամեն ինչ երկու անգամ կրկնե՞մ:

– Բան չեմ հասկանում, պարոն Ջիմուր,– կմկմաց Ջուլիան,– ու իրոք չգիտեմ՝ ինչ ասեմ:

– Օրինակ՝ կարո՞ղ եք ասել, թե երբ կհասնեք, որ գոնե այս պարոններին հայտնեմ, թե ինչքան ժամանակ ենք կորցնելու ձեր պատճառով:

– Բայց ես ոչ մի կերպ չեմ կարող հիմա գալ, գործս եռում է...

– Իսկ ես, ձեր կարծիքով, մո՞ւկ եմ տշում, օրիորդ Ուելշ,– բորբոքվեց պարոն Ջիմուրը:

– Պարոն Ջիմուր, ես ոչինչ չեմ պատվիրել, ոչ ծրար, ոչ տուփ, ոչ էլ մանավանդ՝ արկղ: Դա հաստատ սխալմունք է:

– Քանի որ արկղը դրված է հենց իմ պատուհանի դիմաց, նույնիսկ առանց ակնոցի էլ վրան կարդացվում է ձեր անունը՝ թավ տառերով գրված մեր հասցեի ու «Դյուրաբեկ» բառերի արանքում: Հաստատ դուք եք ինչ-որ բան մոռացել: Առաջին անգամ չէ, որ հիշողությունը ձեզ դավաճանում է, այնպես չէ՞:

Ի՞նչ կարող էր լինել: Գուցե Ադամից էր, կամ ինչ-որ պատվեր, որի մասին մոռացել էր, կամ, ասենք,

գրասենյակային պարագա, որ սխալմամբ տան հասցեով էր պատվիրել: Ամեն դեպքում, Ջուլիան չէր կարող թողնել աշխատակիցներին, որոնց կիրակի օրով հավաքել-բերել էր: Պարոն Ջիմուրի տոնը ստիպում էր շուտափույթ լուծում գտնել:

– Պարոն Ջիմուր, կարծում եմ՝ ելքը գտա: Ինձ ձեր օգնությունն է պետք այս անհարմար իրավիճակից դուրս գալու համար:

– Օ՛, կրկին հիանում եմ ձեր մաթեմատիկական մտածելակերպով: Ակնկալում էի, թե կասեիք, որ գտել եք ՁԵՐ խնդրի լուծումը, և ոչ թե ինձ ներքաշեիք, օրիորդ Ուելշ: Այնպես որ, ուշադիր լսում եմ:

Ջուլիան հայտնեց, թե որտեղ է պահում իր բնակարանի բանալու կրկնօրինակը՝ վեցերորդ աստիճանի գորգի տակ: Պետք է ընդամենը հաշվել: Եթե ոչ վեցերորդի, ապա յոթերորդի, կամ միգուցե ութերորդի: Այսպիսով պարոն Ջիմուրը կարող է բացել դուռը, առաքիչները կբարձրացնեն արկղն ու անհապաղ կհեռացնեն ցուցափեղկերը փակող հսկա բեռնատարը:

– Ու երևի նաև պետք է սպասեմ՝ գնան, որ դուռը հետևներից փակեմ, այդպես չէ՞:

– Ճիշտ այդպես, պարոն Ջիմուր...

– Եթե ինչ-որ էլեկտրասարքավորում եք պատվիրել, օրիորդ Ուելշ, երախտապարտ կլինեմ, որ տեղադրեք մասնագետների օգնությամբ: Իհարկե, եթե հասկանում եք՝ ինչ եմ ուզում ասել:

Ջուլիան ուզեց վստահեցնել, որ ոչ մի էլեկտրասարքավորում էլ չի պատվիրել, բայց հարևանն արդեն կախել էր հեռախոսը: Նա թոթվեց ուսերը, մի քանի վայրկյան ոտքը կախ գցեց ու վերադարձավ իրեն անհանգստացնող հարցերին:

***

Մութն ընկնելուն պես բոլորը հավաքվեցին քննարկումների սենյակի մեծ էկրանի առաջ: Շառլը նստած էր համակարգչի մոտ: Արդյունքը հուսադրող էր: Մի քանի ժամ ևս, և «ճպուռների մարտը» տեղի կունենա ճիշտ ժամանակին: Ծրագրավորողները վերահաշվարկներ էին անում, դիզայներները՝ ուղղում նկարների վերջին դետալները, ու Ջուլիան սկսեց իրեն ավելորդ զգալ: Նա գնաց թեյասրահ, որտեղ տեսավ Դրեյին՝ նկարչին ու իր ընկերոջը, որի հետ երկար տարիներ սովորել էր:

Տեսնելով, թե ինչպես է Ջուլիան ճմլկոտում, Դրեյը որոշեց, որ նրա մեջքը ցավում է, ու խորհուրդ տվեց տուն վերադառնալ: Բարեբախտաբար, տունը մի քանի փողոց ներքև էր, ու նա կարող էր օգտվել առիթից: Դրական արդյունքի դեպքում իսկույն հետ կկանչեն: Ջուլիան շնորհակալություն հայտնեց հոգատարության համար, բայց պնդեց, որ կմնա իր թիմի կողքին: Դրեյն էլ հակաճառեց՝ ասելով, թե մի սենյակից մյուսն անցնելով՝ Ջուլիան ավելորդ լարվածություն է ավելացնում ընդհանուր հոգնածությանը:

– Երբվանի՞ց է իմ ներկայությունն ազդում ձեր վրա,– հարցրեց Ջուլիան:

– Լուն ուղտ մի սարքի, առանց էդ էլ բոլորը գերլարված են: Վերջին վեց շաբաթվա մեջ մի օր չենք հանգստացել:

Մինչև հաջորդ կիրակի Ջուլիան արձակուրդի էր, ու աշխատակիցները հույս ունեին մի քիչ շունչ քաշել:

– Մենք գիտեինք՝ ամուսնական ճամփորդության ես: Սխալ չհասկանաս, Ջուլ, ես ընդամենը «դեսպանն» եմ,– շփոթված ասաց Դրեյը:– Էդ էն գինն է, որ վճարում ես վրադ վերցրած պատասխանատվության համար: Ինչ

դարձել ես ստեղծագործական բաժնի ղեկավար՝ թարգել ես սովորական աշխատակից լինելը, կշիռդ արդեն ուրիշ է, հասկանո՞ւմ ես... Տեսա՞ր՝ մի քանի զանգով կիրակի օրով ինչքան մարդ հավաքեցիր...

– Բայց արժեր, չէ՞: Ակնարկդ հասկացա,– պատասխանեց Զուլիան:– Ես լքում եմ ձեզ, որ իմ «կշիռը» հանկարծ չճնշի ձեր ստեղծագործական մտքի թռիչքը: Զեն տվեք, երբ ամեն ինչ պատրաստ լինի, ոչ թե որովհետև ես ձեր շեֆն եմ, այլ որովհետև ես ձեր թիմի անդամ եմ:

Զուլիան վերցրեց աթոռներից մեկի թիկնակին թողած անջրանցիկ թիկնոցը, ստուգեց՝ արդյոք բանալիները ջինսի գրպանում են ու հապշտապ քայլերով գնաց դեպի վերելակը:

Շենքից դուրս գալով՝ զանգահարեց Ադամին, բայց միացավ ձայնային ինքնապատասխանիչը:

– Ես եմ, Ադամ, ուզում էի ձայնդ լսել: Զզվելի շաբաթ էր ու անդուր կիրակի: Ու արդեն չգիտեմ էլ, արժեր մենակ մնալ, թե չէ: Գոնե վատ տրամադրությունս գլխիդ չջարդեցի: Ինձ հենց նոր օֆիսից բառիս բուն իմաստով դուրս վռնդեցին: Մի քիչ կքայլեմ... Դու երևի արդեն քաղաք ես եկել ու պառկել: Մամադ էլի կյանքդ կերե՞լ է: Գոնե մի մեսիջ թողնեիր: Համբուրում եմ, սիրելիս: Ուզում էի ասել՝ զանգի, բայց անիմաստ է, քնած կլինես: Համ էլ ասածներս բանի տեղ մի դիր: Լավ, արև, մինչ վաղը: Հենց զարթնես՝ զանգի:

Զուլիան բջջայինը դրեց պայուսակն ու գնաց գետափով զբոսնելու: Կես ժամ անց վերադարձավ տուն ու դրսի դռանը փակցրած մի ծրար գտավ: Վրան իր անունն էր խզբզած: Անհանգստացած բացեց: «Ես, զբաղվելով ձեր առաքանիով, հաճախորդ կորցրի: Բանալին տեղում է: Հ.Գ. Տասնմեկերորդ աստիճանի տակ

էր, ոչ թե վեցերորդի, յոթերորդի կամ ութերորդի: Բարի կիրակի»: Ստորագրության չէին արժանացրել:

– Փառք Աստծու, գոնե վրան հասցեն չի գրել, որ գողերը տեղն իմանան,– մռթմռթաց Ջուլիան՝ աստիճաններով վեր մագլցելով:

Ամեն քայլի հետ անհանգստությունն աճում էր. տեսնես ի՞նչ արկղ է: Ջուլիան արագացրեց քայլերը, գորգի տակից հանեց բանալին՝ որոշելով դրա համար այլ թաքստոց գտնել, ու ներս մտնելով՝ վառեց լույսը:

Մի հսկայական արկղ ուղղահայաց բազմել էր հյուրասենյակի մեջտեղում:

– Տեսնես ի՞նչ կլինի,– ինքնիրեն ասաց նա՝ իրերը նետելով սեղանին:

Կողքին՝ հենց «Դյուրաբեկ» բառի տակ կպցրած պիտակի վրա, Ջուլիան կարդաց իր անունը: Սկսեց պտտվել բաց գույնի փայտից պատրաստված հսկայական արկղի շուրջը: Այն բավական ծանր էր թվում նույնիսկ մի քանի քայլ տեղաշարժելու համար: Մուրճ ու պտուտակահան էլ ունենար, չէր իմանա՝ ինչպես բացեր:

Ադամը հեռախոսազանգերին չէր պատասխանում, ինչպես միշտ՝ մնում էր զանգահարել Սթենլիին:

– Հո չե՞մ խանգարում:

– Կիրակի էս ժամի՞ն: Սպասում էի՝ կզանգես ինչ-որ տեղ թռնելու համար:

– Սթեն, երդվիր, որ դու չես ինձ ուղարկել երկումետրանոց էս հիմար արկղը:

– Ի՞նչ ես դուրս տալիս, Ջուլիա:

– Էդպես էլ գիտեի: Հարց համար երկու. ո՞նց է բացվում երկումետրանոց էս հիմար արկղը:

– Ինչի՞ց է:

– Փայտից:

– Երևի սղոցով, գանձս:

– Շատ շնորհակալ եմ, Սթենլի, ես էլ երևի սղոցը պահում եմ պայուսակում կամ դեղերիս ամանի մեջ,– պատասխանեց Ջուլիան:

– Հազար ներողություն, իսկ ի՞նչ կա մեջը:

– Հենց էդ էլ փորձում եմ հասկանալ: Ու եթե ուզում ես հետաքրքրությունդ բավարարել, Սթենլի, գցվիր տաքսու մեջ ու հասիր օգնության:

– Արդեն պիժամայով եմ, է, ջանիկս:

– Բայց ոնց որ թե պատրաստվում էիր դուրս գալ:

– Տեղերիս միջից:

– Լավ, մենակ յոլա կգնամ:

– Է-է՛, սպասի մտածեմ:

– Բռնակ ունի՞:

– Չէ:

– Ծխնի՞:

– Չեմ տեսնում:

– Կարո՞ղ է՝ ինչ-որ մոդեռն նկարչի սարքած չբացվող արկղ է, ստորագրություն չկա՞,– քթի տակ ծիծաղեց Սթենլին:

Ջուլիայի քար լռությունից պարզ դարձավ, որ կատակելու համար անհարմար պահ էր ընտրել:

– Փորձե՞լ ես մի քիչ հրել, Ջուլիա, ոնց որ բացում են հին զգեստապահարանների դռները: Մի քիչ հրում ես ու հոպ...

Մինչ Սթենլին բացատրում էր, Ջուլիան ձեռքերը դրեց արկղին, հրեց Սթենլիի ասածի պես, ու արկղի ճակատամասը կամաց պտտվեց:

– Ալո, ալո,– հեռախոսի մեջ բղավում էր Սթենլին,– ի՞նչ եղար:

Հեռախոսը ցած սահեց Ջուլիայի ձեռքից: Ցնցված՝ նա անթարթ, չռած աչքերով նայում էր արկղի պարունակությանը, և տեսածը նրան մղձավանջ էր թվում:

Սթենլիի ձայնը դեռ ծվծվում էր ոտքերի մոտ ընկած հեռախոսի միջից: Ջուլիան զգույշ կռացավ, վերցրեց այն՝ առանց աչքն արկղից մի վայրկյան կտրելու:

– Սթենլի՞:

– Սիրտս վախից ճաքեց, Ջուլիա, ամեն ինչ նորմա՞լ է:

– Համարյա:

– Հեսա շալվարս վրաս քաշեմ, վազելով գամ:

– Չէ, չէ, մի արի,– մեռած ձայնով ասաց Ջուլիան,– կարիք չկա:

– Ստացվե՞ց բացել:

– Հա,– անտարբեր պատասխանեց նա,– վաղը կզանգեմ:

– Դու ինձ վախեցնում ես: Գալիս եմ...

– Պառկիր, Սթենլիս, պաչիկ եմ անում:

Ու Ջուլիան անջատեց հեռախոսը:

– Էս ի՞նչ խաղ են խաղում գլխիս,– ինքնիրեն բարձրաձայն հարցրեց նա՝ իր բնակարանի կենտրոնում մենակ կանգնած:

***

Արկղի մեջ՝ Ջուլիայի դեմ դիմաց, մի մարդաբոյ մոմե արձան էր կանգնած՝ Էնթոնի Ուելշի ճիշտ կրկնապատկերը: Ցնցող նմանություն էր. մնում էր՝ աչքերը բացեր: Ջուլիան փորձեց շունչը տեղը բերել: Քրտինքի մի քանի կաթիլ ցած հոսեց մեջքով: Նա մանր քայլերով մոտեցավ արկղին: Հոր մարդաբոյ կրկնօրինակը սքանչելի էր, մաշկի գույնն ու ֆակտուրան՝ մահու չափ բնական: Կոշիկները, մոխրագույն կոստյումը, սպիտակ բամբակյա վերնաշապիկը՝ ամեն ինչ ճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես Էնթոնի Ուելշը միշտ սիրել է: Ջուլիան ուզում էր ձեռք տալ դեմքին, մազ պոկել՝ հավաստիանալու համար, որ դա հայրը չէր, բայց հայր ու աղջիկ վաղուց

արդեն իրար չէին դիպչել: Համբույրները, գրկախառնությունները, անգամ պարզ ձեռքսեղմումները, քնքշության ցանկացած այլ դրսևորում արդեն խորթ էր նրանց: Ոչինչ չէր կարող լցնել տարիների ընթացքում առաջացած անդունդը, էլ ուր մնաց՝ մոմե այս կրկնօրինակը:

Հիմա մնում էր հասկանալ այս առեղծվածը: Ինչ-որ մեկի խելքին փչել էր պատրաստել Էնթոնի Ուելշի կրկնօրինակը, նման Քվեբեքի, Փարիզի կամ Լոնդոնի մոմե թանգարաններում դրված արձաններին, և նույնիսկ ավելի ռեալիստական, քան մինչև այդ ստեղծվածները: Ջուլիան միայն մի ցանկություն ուներ՝ գոռալ՝ ինչքան թոքերում ուժ կար...

Ուսումնասիրելով մոմե արձանը՝ Ջուլիան թևքին հայտնաբերեց քորոցով ամրացված մի կտոր, որի վրայի կապույտ թանաքով նկարված սլաքը ցույց էր տալիս պիջակի վերևի գրպանը: Նա պոկեց այն ու հետևի կողմում խզբզած երկու բառ կարդաց. «Միացրո՛ւ ինձ»: Նա միանգամից ճանաչեց հոր ձեռագիրը:

Սլաքի ուղղորդած գրպանում, որտեղ Էնթոնի Ուելշը սովորաբար մետաքսե թաշկինակ էր դնում, հեռավահանակի նման մի բանի ծայր էր երևում: Ջուլիան վերցրեց այն: Վրան ընդամենը սպիտակ գույնի, քառակուսի մի կոճակ կար:

Ջուլիային թվաց՝ գիտակցությունը կկորցնի: Սա սարսափելի երազ էր, ահա, մի քանի րոպեից քրտինքի մեջ վեր կթռչի ու հետո մի լավ կծիծաղի այդ զառանցանքի վրա: Նայելով, թե ինչպես են հոր դագաղն իջեցնում հողը՝ նա ինքն իրեն համոզում էր, որ իր սուգը վաղուց էր սգացել, ու չի կարելի տխրել մեկի համար, ով վերջին քսան տարում բացակայել է իր կյանքից: Եվ Ջուլիան, որ հպարտանում էր, թե արդեն հասուն ու խոհեմ մարդ է, հիմա ընկել էր իր ենթագիտակցական

կապվածության թակարդը: Ծիծաղելի անհեթեթություն: Հայրը փչացրել էր իր մանկությունը, ու հիմա թույլ չի տա, որ նրա ուրվականը վերադառնա՝ փչացնելու երիտասարդ կնոջ իր կյանքը:

Փողոցում հռնդացող աղբատար մեքենայի աղմուկի մեջ ոչ մի տարօրինակ բան չկար: Ջուլիան աչք չէր փակել, գոց աչքերով կանգնած արձանը սպասում էր, որ նա որոշի՝ սեղմե՞լ կոճակը, թե՞ ոչ:

Աղբատարի աղմուկը գնալով հեռանում էր: Ա՜խ, ինչ լավ կլիներ, որ չհեռանար, որ ինքը վազեր պատուհանի մոտ ու աղբ թափողներին աղաչեր իր տնից տանել այդ սարսափելի նվերը: Բայց փողոցում արդեն լռություն էր տիրում:

Ջուլիան մատը դրեց կոճակին, շա՜տ զգույշ՝ իր մեջ սեղմելու ուժ չգտնելով:

Պետք էր ինչ-որ բան անել: Ամենաճիշտը կլիներ փակել արկղը, վրան գտնել փոխադրող կազմակերպության հասցեն, առավոտ շուտ զանգահարել նրանց, հրահանգել, որ գան տանեն այդ սարսափազդու տիկնիկը, ու վերջապես գտնել այս չար կատակի հեղինակին: Տեսնես ո՞վ էր այդ դիմակահանդեսի կազմակերպիչը, իր շրջապատից ո՞վ էր այդչափ դաժան:

Ջուլիան լայն բացեց պատուհանը և ամբողջ թոքերով ներս քաշեց գիշերվա թարմ օդը:

Դրսում նույն աշխարհն էր, ինչպես թողել էր երեկ՝ տան դուռը փակելով: Հունական ռեստորանի սեղանները հավաքված էին, լույսերը անջատած, մի կին շան հետ անցնում էր խաչմերուկը: Շոկոլադագույն լաբրադորը, կապը քաշելով, վազվզում էր զիգզագներով՝ հոտոտելով մեկ լապտերը, մեկ լուսավորված պատը:

Ջուլիան անշարժ էր՝ վահանակը ձեռքի մեջ սեղմած: Մտքում մաղում էր բոլոր ծանոթներին, ու ընդամենը մի

անուն էր մտքին գալիս, որ կարող էր գրել ու բեմադրել այս սցենարը: Ցասումից եռալով՝ նա շուռ եկավ, կտրեց անցավ սենյակը՝ հստակ որոշելով փարատել իր կասկածները:

Ջուլիան սեղմեց կոճակը: Ինչ-որ կտտոց լսվեց. արդեն կենդանի տիկնիկի կոպերը բացվեցին, դեմքը ժպիտով ճառագայթեց, ու հոր ձայնը հարցրեց.

– Արդեն կարոտել ես, չէ՞, ինձ:

## 5

– Հեսա կզարթնեմ: Էս ամենն իրական չի, չէ՞: Դե ասա, քանի լրիվ չեմ գժվել:

– Լավ, լավ, Ջուլիա, հանգստացիր,– պատասխանեց հոր ձայնը:

Նա մի քայլ առաջ արեց՝ արկղից դուրս գալու համար ու դեմքը ծամածռելով՝ ճմլկոտեց: Շարժումները, նույնիսկ դեմքի թույլ նշմարելի կնճիռները կատարյալ էին:

– Չէ, չես գժվել,– շարունակեց նա,– ուղղակի շոկի մեջ ես, իսկ էս դեպքում դա լրիվ նորմալ է, մի բան էլ ավելի:

– Ոչ մի բան էլ նորմալ չի, դու չես կարող էստեղ լինել,– գլուխը թափահարելով՝ ասաց Ջուլիան,– ուղղակի անհնար է:

– Համաձայն եմ, բայց քո առաջ կանգնածը էնքան էլ ես չեմ...

Ջուլիան ձեռքի ափով փակեց բերանն ու սկսեց վայրենի քրքջալ:

– Օ՛ֆ, մարդու ուղեղն ի՞նչ տարօրինակ սարք է: Քիչ մնաց հավատայի: Չէ, ես խոր քնած եմ: Երևի տուն

գալուց ինչ-որ սխալ բան եմ խմել, որ վրաս լավ չի նստել: Սպիտակ գինի՞: Հա, հաստատ, ես սպիտակ գինուց վատ եմ լինում: Ի՜նչ դեբիլ եմ, որ իմ իսկ երևակայական խաղն ինձ հաղթեց,– շարունակեց նա՝ սենյակում հետ ու առաջ անելով:– Ասեմ քեզ՝ ավելի անհավատալի երազ տեսած չկամ:

– Թարգը տուր, Ջուլիաս,– քնքշորեն խնդրեց հայրը:– Լավ էլ արթուն ես, գիտակցությունդ էլ տեղն է:

– Ո՛չ, շատ կասկածում եմ, որովհետև հիմա քեզ տեսնում, հետդ խոսում եմ, իսկ դու մեռել ես, մեռել ես...

Էնթոնի Ուելշը մի քանի վայրկյան լուռ նայեց նրան և զգույշ պատասխանեց.

– Իհարկե, Ջուլիա, ես մեռել եմ:

Ու քանի որ Ջուլիան մնացել էր քարացած, տեղում գամված, ձեռքը դրեց նրա ուսին ու մատնացույց արեց բազմոցը.

– Կնստե՞ս մի րոպե ու ինձ լսես:

– Ո՛չ,– ասաց նա՝ հետ քաշվելով:

– Իմ Ջուլիա, իրոք պետք է նստես ու լսես ինձ:

– Իսկ եթե չեմ ուզո՞ւմ: Ինչի՞ պետք է ամեն ինչ քո ուզածով լինի:

– Էլ չէ: Հերիք է կոճակը սեղմես, ու կմնամ տեղում: Բայց էլ երբեք չես իմանա՝ ինչն ինչոց է:

Ջուլիան նայեց ափի մեջ սեղմած նեղլիկ վահանակին, մի պահ երկմտեց, ատամները սեղմեց ու չուզելով նստեց՝ հնազանդվելով հորն ահավոր նման այդ տարօրինակ մեքենային:

– Լսում եմ,– շշնջաց նա:

– Գիտեմ, որ էս ամենը երևակայության սահմաններից դուրս է: Ու գիտեմ նաև, որ ահագին ժամանակ է՝ չենք շփվել:

– Մի տարի հինգ ամիս:

– Հաստա՞տ էդքան շատ:

– Ու քսաներկու օր:

– Փայլուն հիշողություն ունես, աղջիկս:

– Ծննդյանս օրը երբեք չեմ մոռանա: Օգնականիդ զանգել տվեցիր, որ հայտներ, թե կուշանաս ընթրիքից, որին էդպես էլ չեկար:

– Մեռնեմ՝ չեմ հիշի:

– Իսկ ես մեռնեմ՝ չեմ մոռանա:

– Լավ, հիմա էդ հարցը չենք քննարկում:

– Ես ոչ մի հարց առաջ չեմ քաշել,– պատասխանեց Ջուլիան:

– Չգիտեմ էլ՝ որտեղից սկսեմ:

– Ամեն ինչ իր սկիզբն ունի. էդ քո սիրած արտահայտություններից մեկն էր: Էնպես որ, բարի եղիր սկսել ու ինձ բացատրել, թե ինչ է կատարվում:

– Մի քանի տարի առաջ դարձա էսպես ասած՝ բարձր տեխնոլոգիաներով զբաղվող մի կազմակերպության բաժնետեր: Մի ամիս հետո նրանց ֆինանսական պահանջները մեծացան, իմ փայը նույնպես, ու արդյունքում դարձա վարչական խորհրդի անդամ:

– Այսինքն՝ էլի՞ մի փոքր կազմակերպություն ես սնանկացրել:

– Օ՛ ոչ, էս անգամվա ներդրումներս անձնական բնույթ էին. ես սովորական բաժնետեր էի, թեկուզ միլիոններ էի ներդրել:

– Իսկ եթե գաղտնիք չէ, ինչո՞վ էր զբաղվում կազմակերպությունը, որի մեջ էդքան փող ես ներդրել:

– Անդրոիդներով:

– Ինչերո՞վ,– զարմացավ Ջուլիան:

– Լավ էլ լսեցիր, հումանոիդներով՝ եթե քեզ ավելի հարմար է:

– Ինչի՞ համար:

– Մենք առաջինը չէինք, որ փորձեցինք մարդանման ռոբոտներ սարքել, որոնք մեզ կազատեն ամենօրյա հոգսերից:

– Փաստորեն, դու վերակենդանացել ես իմ տունն ավլել-մաքրելու համա՞ր...

– Հա, խանութ գնալու, տանը հետևելու, հեռախոսին ու բոլոր տեսակի հարցերին պատասխանելու. ամեն դեպքում, սրանք հնարավոր էփլիքեյշնների մի մասն են: Էսպես ասեմ՝ իմ ասած կազմակերպությունը մի ավելի հզոր ծրագիր է մշակել, ինչ-որ առումով՝ ավելի ամբիցիոզ:

– Ի՞նչ ծրագիր:

– Որը հարազատներին հնարավորություն է տալիս մի քանի օր ավելի վայելել սիրելիների ներկայությունը...

Ջուլիան ապշած նայում էր հորը՝ իրականում չընկալելով նրա ասածները: Էնթոնի Ուելշն ավելացրեց.

– Նրանց մահից հետո...

– Ձե՞ռ ես առնում,– հարցրեց Ջուլիան:

– Եթե արկղը բացելուց դեմքդ տեսնեիր, կհասկանայիր, որ չէ,– պատասխանեց Էնթոնի Ուելշը՝ նայելով պատին կախված հայելուն:– Պետք է խոստովանեմ, որ տեսքս կատարյալ է: Մենակ թե ճակատիս կնճիռները շատ խորն են ստացվել: Ոնց որ մի քիչ չափն անցել են, հը՞:

– Ինչ ինձ հիշում եմ՝ կնճիռ ունեցել ես, ու եթե ձգել չես տվել, իրենք իրենց չէին անհետանա:

– Շնորհակալություն, թանկագինս,– լայն ժպտալով՝ պատասխանեց Էնթոնի Ուելշը:

Ջուլիան վեր կացավ, մոտեցավ՝ ավելի լավ ընկալելու համար: Եթե իր առջև իրոք մեքենա էր, ամոթ կլիներ չխոստովանել, որ անզուգական գործ էր արված:

– Անհնար է, տեխնիկապես անհնար է:

– Ի՞նչ ես ավարտին հասցրել երեկ երեկոյան՝ կոմպիդ առաջ նստած, որ մի տարի առաջ անհնար էր թվում:

Ջուլիան գնաց նստեց խոհանոցի սեղանի մոտ ու գլուխն առավ ձեռքերի մեջ:

– Մենք աստղաբաշխական գումարներ ենք դրել էս արդյունքներն ունենալու համար, ու ես դեռ փորձանմուշ եմ: Դու իմ առաջին հաճախորդն ես, բնականաբար՝ քեզ համար իմ ծառայություններն անվճար են: Նվեր է,– բարեհամբույր ավելացրեց Էնթոնի Ուելշը:

– Նվե՞ր: Տեսնես ո՞ր մի ցնդածը սենց նվեր կուզի:

– Գիտե՞ս, թե ինչքան մարդ կա, որ կյանքի վերջին պահին ասում է. «Եթե իմանայի, եթե հասկանայի կամ լսեի, եթե գոնե կարողանայի ասել, եթե գոնե...»,– ու քանի որ Ջուլիան բերանը ջուր առած նստած էր, Էնթոնի Ուելշը շարունակեց,– շուկան ու պահանջարկը մեծ է:

– Հիմա էս «բանը», որի հետ խոսում եմ, իրոք դո՞ւ ես:

– Համարյա: Էսպես ասեմ. էս մեքենան ունի իմ հիշողությունն ու գլխուղեղի կեղևի մեծ մասը: Սա միլիոնավոր պրոցեսորներից կազմված բարդ համակարգ է, որ կարող է վերարտադրել մաշկի գույնն ու ֆակտուրան և կատարելության հասցնել մարդու մարմնի շարժունությունը:

– Ինչո՞ւ, ինչի՞ համար,– հարցրեց շշմած Ջուլիան:

– Որ մենք ունենաք էն մի քանի օրը, որ մեզ չի հերիքել, հավերժությունից մի քանի ժամ ավելի պոկենք, ընդամենը որ ես ու դու վերջապես կարողանանք ասել իրար էն ամենը, ինչ չենք հասցրել ասել: Իսկ մենք ինչքա՜ն բան ունեինք իրար ասելու...

***

Ջուլիան բազմոցից վեր կացել և հետ ու առաջ էր անում հյուրասենյակում՝ ծանրութեթև անելով ստեղծված իրավիճակը: Խոհանոցում մի բաժակ ջուր լցրեց, մի շնչով խմեց ու հետ եկավ Էնթոնի Ուելշի մոտ:

– Ո՞ւմ պատմես, որ հավատա,– լռությունը խախտելով՝ մրմնջաց նա:

– Ամեն անգամ պատմություններ հորինելուց նույն բանն ես, չէ՞, ասում: Ամեն անգամ, երբ կենդանացնում ես կերպարներիդ, էդ էս, չէ՞, մտածում: Երբ չէի հավատում մասնագիտությանդ լրջությանը, դու չէի՞ր ասում, որ ես նիհիլիստ եմ, որը չի հավատում երազների զորությանը: Դու չէի՞ր ինձ հա բացատրում, որ հազարավոր երեխաներ ծնողներին իրենց հետ տանում են ձեր ստեղծած երևակայական աշխարհ: Դու չէի՞ր ինձ անդադար երեսով տալիս, որ քո գործը լուրջ չէի ընդունում, մինչդեռ դա քեզ խաղաղություն բերեց: Դու ստեղծեցիր տարօրինակ գույներով ջրասամույրին ու հավատացիր նրան: Հիմա ի՞նչ, երբ աչքիդ առաջ էդ անհավանական կերպարը շունչ է առել, հրաժարվում ես հավատալ, որովհետև հո՞րդ ես նմանեցնում: Եթե պատասխանդ դրական է, ուրեմն մնում է սեղմես կոճակն ու անջատես ինձ,– վերջացրեց Էնթոնի Ուելշը՝ ցույց տալով սեղանին դրված հեռավահանակը:

Ջուլիան ծափահարեց:

– Գիտե՞ս, հիմա օգտվում ես առիթից, որ մեռած եմ, ու լկտիավարի ես պահում քեզ:

– Եթե պետք է ընդամենը սեղմեմ կոճակը, որ ձայնդ կտրես, չեմ ափսոսա...

Հենց այն պահին, երբ Էնթոնի Ուելշի դեմքին հայտնվեց Ջուլիային այնքան ծանոթ արտահայտությունը,

որին միշտ հաջորդում էր նրա ցասումը, փողոցից երկու կարճ ազդանշան լսվեց:

Զուլիայի սիրտը սկսեց արագ բաբախել: Աշխարհի բոլոր ձայների միջից նա ճանաչեց Ադամի արգելակների ճռռոցը, որ լսվում էր մեքենան հետ տալուց: Անկասկած, նա ներքևում էր:

– Վա՛խ քո,– շշնջաց նա՝ շտապելով դեպի պատուհանը:

– Հը, ի՞նչ է:

– Ինչ չէ, Ադամն է:

– Ո՞վ:

– Ադամը, որի հետ պատրաստվում էի շաբաթ օրն ամուսնանալ:

– Պատրաստվո՞ւմ էիր:

– Հա, պատրաստվում էի, բայց շաբաթ քեզ էինք թաղում...

– Վայ, հա...

– Հենց հա... Լավ, ավելի ուշ կխոսենք: Իսկ դու շուտ մտիր արկղիդ մեջ:

– Ի՞նչ:

– Մինչև Ադամը ավտոն կանգնեցնի, մի քանի րոպե կանցնի, ու հետո կբարձրանա: Ես հարսանիքս չեղարկեցի քեզ թաղելու համար, լավ կլինի էնպես անենք, որ քեզ սենյակի մեջտեղում չտեսնի:

– Չեմ հասկանում անկապ գաղտնիքներ պահելու իմաստը: Եթե դա էն մարդն է, որի հետ ուզում էիր ամբողջ կյանքդ անցկացնել, պետք է որ վստահես նրան: Ես կարող եմ նրան ամեն ինչ բացատրել, ոնց որ քիչ առաջ քեզ բացատրեցի:

– Սկսենք նրանից, որ անցյալով պետք չէ խոսել, հարսանիքն ընդամենը հետաձգվել է: Ինչ վերաբերում է բացատրություններիդ՝ դրանք արդեն պրոբլեմատիկ են, ես

նույնիսկ չեմ հավատում, էլ ուր մնաց՝ Ադամից հավատալ պահանջեմ:

– Կարող է՝ նա ավելի լայնախոհ է:

– Ադամը տեսասարքը չի կարողանում միացնել, անդրոիդների մասին էլ չխոսենք: Աստծու սիրուն, մտիր արկղիդ մեջ:

– Թույլ տուր նշել, որ ախմախ գաղափար է:

Ջուլիան հուսալքված նայեց հորը:

– Լավ, լավ, էդպիսի դեմք մի ընդունիր: Մի վայրկյան մտածիր: Երկուսմետրանոց փակ արկղ սենյակի մեջտեղում, մտքովդ չի՞ անցնում, որ կուզենա նայել՝ մեջն ինչ կա:

Ու քանի որ Ջուլիան լռում էր, Էնթոնին բավարարված ավելացրեց.

– Ես էդպես եմ կարծում:

– Շուտ արա,– աղաչեց Ջուլիան՝ նետվելով դեպի պատուհանը,- իջավ ավտոյից: Թաքնվիր ինչ-որ տեղ:

– Էս պստլիկ տան մեջ ո՞ւր գնամ,– Էնթոնի Ուելշը սուլելով շուրջը նայեց:

– Իմ տունն իմ միջոցների ու կարողացածի չափ է:

– Հավատա, որ ոչ: Եսիմ, եթե գոնե ասենք՝ գրադարան լիներ կամ փոքր հյուրասրահ, բիլիարդանոց, կամ գոնե խորդանոց, կիմանայի՝ ուր գնայի: Էս մի մեծ սենյակ է, ոչ թե բնակարան: Ոնց կարելի է էսպես ապրել: Ո՞նց ես էստեղ առանձնանում:

– Պատկերացնո՞ւմ ես, մարդկանց մեծ մասը բնակարանում բիլիարդանոց կամ գրադարան չունի:

– Դու քո շրջապատով մի չափիր, սիրելիս:

Ջուլիան հոր կողմը դարձավ ու հայացքով շանթահարեց նրան:

– Կենդանի ժամանակ կյանքս փչացրիր, հիմա էլ սարքել ես տվել էս երեքմիլիարդանոց մեքենան, որ մեռնելուց հետո էլ հարամես:

– Էս «մեքենան» եթե էդքան արժենար, ոչ ոք չէր կարողանա առնել:

– Երևի մենակ քո ընկերները, հը՞,– ծաղրեց Ջուլիան:

– Ինչ զզվելի բնավորություն ունես, դստրիկս: Լավ, հերիք տատանվես, ոնց որ թե արագ պետք է նոր գտած հորդ նորից մի տեղ «կորցնես»: Վերևում ի՞նչ է, ձեղնահա՞րկ:

– Ուրիշ բնակարան:

– Հարևանիդ ինչքա՞ն լավ ես ճանաչում, որ գնամ մի քիչ աղ կամ կարագ ուզեմ, մինչև դու նշանածիցդ ազատվես:

Ջուլիան շտապեց խոհանոց ու սկսեց մեկ առ մեկ բացել դարակները:

– Ի՞նչ ես ման գալիս:

– Բանալին,– շշնջաց նա: Ադամը դրսից ձայն էր տալիս նրան:

– Դու ունես վերևի բնակարանի բանալի՞ն: Ասեմ իմանաս, որ եթե մտքովդ անցնի ինձ նկուղ ուղարկել, ես, ամենայն հավանականությամբ, աստիճանների վրա կհանդիպեմ նրան:

– Վերևի բնակարանն իմն է: Առել եմ անցած տարի պարգևավճարի հաշվին, բայց վերանորոգելու փող չունեի, դրա համար լրիվ քարուքանդ վիճակում է:

– Էստեղ էլ լավ վիճակ չի:

– Մի բառ էլ ավել ասես՝ կսպանեմ:

– Լավ, լավ, արևս, կներես հակաճառելու համար, բայց արդեն շատ ուշ է: Ու եթե մեկ-մեկ տունը հավաքեիր, շատ շուտ կգտնեիր գազօջախի կողքի մեխից կախած բանալին:

Զուլիան գլուխը բարձրացրեց, նետվեց դեպի պատից կախված տրցակը, ճանկեց այն ու մտցրեց հոր բուռը:

– Բարձրացիր ու ձեն-ծպտուն չհանես: Ադամը գիտի, որ վերևում մարդ չկա:

– Ինձ դաս տալու տեղը, Զուլիա, լավ կանես՝ գնաս խոսես հետը, հիմա էնքան կգոռա՝ բոլոր հարևաններիդ իրար կխառնի:

Զուլիան վազեց դեպի պատուհանն ու դուրս կախվեց:

– Զուլիա՛, ո՞ւր ես, մեռա զանգը տալով,– հետ-հետ գնալով՝ բացականչեց Ադամը:

– Երևի փչացել է, կներես,– պատասխանեց Զուլիան:

– Ձենս էլ չե՞ս լսել:

– Վայ, հենց նոր լսեցի: Հեռուստացույց էի նայում:

– Լավ, հիմա կբացե՞ս գոնե:

– Հա, հա, իհարկե,– երկմտեց Զուլիան՝ կանգնած մնալով պատուհանի մոտ այնքան ժամանակ, մինչև լսեց վերևի դռան շխկոցը:

– Լավ անակնկալ է, չէ՞:

– Բնականաբար: Ինչի՞ ես հարցնում:

– Որովհետև դեռ կանգնած եմ փողոցում: Երբ մեսիջդ ստացա, հասկացա, որ լավ չես, դե, ամեն դեպքում մտածեցի... Տուն գալիս ասացի՝ մտնեմ քեզ տեսնեմ, բայց ոնց որ չարժեր...

– Սպասիր, վա՛յ, բացում եմ:

Զուլիան գնաց դռան մոտ ու սեղմեց մուտքի դուռը բացող կոճակը: Ներքևում չխկոց լսվեց, աստիճանների վրա՝ Ադամի քայլերը: Զուլիան հազիվ հասցրեց նետվել խոհանոց, վերցնել հեռուստացույցի հետ ոչ մի կապ չունեցող հեռավահանակը, սարսափով թաքցնել, բացել սեղանի դարակն ու գտնել ճիշտ վահանակը՝ աղոթելով, որ մարտկոցները մեռած չլինեն: Հեռուստացույցը

ճիշտ ժամանակին միացավ. Ադամը հրեց դուռն ու ներս մտավ:

– Էս երբվանի՞ց էլ դուռ չես կողպում,– մտնելով՝ հարցրեց նա:

– Կողպում եմ, ուղղակի նոր բացեցի, որ ներս գաս,– տակից դուրս եկավ Ջուլիան՝ մտքում կռվելով հոր հետ:

Ադամը հանեց բաճկոնը, նետեց աթոռին ու սկսեց անթարթ նայել հեռուստացույցի էկրանին թափվող ձյանը:

– Իրո՞ք հեռուստացույց էիր նայում: Բայց դու միշտ զզվել ես դրանից:

– Մեկ-մեկ պատահում է,– ուժերը հավաքելով՝ պատասխանեց Ջուլիան:

– Ասեմ քեզ՝ ախմախ ծրագիր ես նայում:

– Ձեռք մի առ, ուզում էի անջատել, բայց քանի որ հաճախ չեմ միացնում, սխալ բան սեղմեցի:

Ադամը նայեց շուրջն ու հայտնաբերեց սենյակի մեջտեղում դրած տարօրինակ առարկան:

– Հը՞,– անթաքույց լարվածությամբ հարցրեց Ջուլիան:

– Եթե աչքիցդ վրիպել է, ասեմ, որ սենյակիդ մեջտեղում երկումետրանոց արկղ է դրված:

Ջուլիան սկսեց ամեն տեսակ բացատրություններ հնարել: Դա հատուկ արկղ է, որով պետք է հետ ուղարկեն մի փչացած համակարգիչ, ու որը սխալմամբ, գրասենյակ տանելու փոխարեն, բերել են տուն:

– Երևի շատ «նուրբ» համակարգիչ է, եթե էս մեծության արկղ է պետք:

– Հա, շատ բարդ համակարգ է,– ավելացրեց Ջուլիան,– շատ մեծ ու շուտ վնասվող:

– Ու ասում ես՝ հասցեն խառնե՞լ են,– շարունակում էր հարցաքննել Ադամը:

– Չէ՛, ճիշտն ես ուզում իմանալ՝ ես եմ պատվիրելիս սխալ հասցե գրել: Էս վերջերս էնքան եմ հոգնել, որ ամեն ինչ խառնում եմ:

– Դե ուշադիր եղիր, սերս, թե չէ կմեղադրեն գրասենյակի միջոցները վատնելու համար:

– Չէ հա, ով պետք է մեղադրի,– պատասխանեց Ջուլիան: Ձայնի մեջ անհամբերության ելևէջներ լսվեցին:

– Բան չունե՞ս ինձ ասելու:

– Ինչի՞ ես հարցնում:

– Որովհետև պետք եղավ տասն անգամ զանգել ու ձայնս գլուխս գցել, որ մոտենայիր պատուհանին: Հեռուստացույցը միացրած էր, անտենայի լարը՝ անջատած: Մի հատ քեզ նայիր: Շատ տարօրինակ ես քեզ պահում, Ջուլիա, էդքան բան:

– Ի՞նչ ես ուզում քեզնից թաքցնեմ, Ադամ,– պատասխանեց Ջուլիան՝ այլևս չփորձելով թաքցնել լարվածությունը:

– Չեմ ասում՝ բան ես թաքցնում: Գուցե դո՞ւ ասես՝ ինչն ինչից է:

Ջուլիան թափով բացեց ննջասենյակի դուռը, հետո զգեստապահարանինը, ապա անցավ խոհանոց ու սկսեց հերթով բացել բոլոր դարակները:

– Աստծու սիրուն, Ջուլիա, ի՞նչ ես անում,– հարցրեց Ադամը:

– Սիրեկանիս եմ փնտրում, էդ էս, չէ՞, հարցնում:

– Ջուլիա...

– Ջուլիա՝ ի՞նչ:

Բորբոքվող վեճը կանխվեց հեռախոսի զանգով: Երկուսով անհանգստացած նայեցին հեռախոսին: Ջուլիան պատասխանեց: Նա լսեց խոսակցին, շնորհակալություն հայտնեց զանգի համար ու անջատելուց առաջ՝ շնորհավորեց:

– Ո՞վ էր:

– Գրասենյակից էր: Վերջապես կարողացան լուծել խնդիրը, որի պատճառով ֆիլմի նկարահանումները հետ էին ընկել: Հիմա կարող են շարունակել: Ժամանակին հասցնում ենք:

– Տեսար՝ ինչ լավ է, սիրելիս,– մեղմացած ասաց Ադամը,– վաղն առավոտ կարող ենք հանգիստ գնալ ու անցկացնել մեր մեղրամիսը:

– Ադամ, հասկանում եմ, որ վատ բան եմ անում... Շատ եմ ցավում... Պետք է գրասենյակից վերցնեմ ու քեզ վերադարձնեմ տոմսերը:

– Կարող ես շպրտել կամ հիշատակ պահել, դրանք ոչ հետ տալ կլինի, ոչ էլ փոխել:

Ջուլիան դեմքը ծամածռեց. ամեն անգամ, երբ պատասխան չէր ունենում, բարձրացնում էր հոնքերը:

– Էդպես մի նայիր երեսիս, Ջուլիա,– միանգամից սկսեց արդարանալ Ադամը,– խոստովանիր՝ ամեն օր չես տեսնի, որ հարսանեկան ճամփորդությունը չեղարկեն երեք օր առաջ: Արի գնանք, էլի...

– Որովհետև տոմսերը հետ չե՞ն վերցնի:

– Լավ էլի, սեր իմ,– Ադամն ամուր գրկեց նրան:– Ոնց որ տրամադրությունդ մեսիջիցդ հետո չի փոխվել, գալս սխալ էր: Մենակ մնալու կարիք ունես, դեմ չեմ, հասկանում եմ: Ես գնամ, վաղը կգամ: Վաղը նոր օր կլինի:

Հենց այն պահին, երբ դռնից դուրս էր գալիս, վերևից շխկոց լսվեց: Ադամը գլուխը բարձրացրեց ու նայեց Ջուլիային:

– Լավ էլի, Ադամ, ընդամենը առնետ էր:

– Ընդամենը զարմանում եմ՝ ոնց ես ապրում էս կապիտոնապոմում[1]:

---

[1] Հնագույն քաղաք Գալիլեյան ծովի ափին: Ֆրանսիական խոսակցական լեզվում «կապիտոնա» բառը (capharnatim) նշանակում է քաոսային խառնաշփոթ, քաոս:

– Պատկերացրու՝ լավ: Մի օր կտեսնես, երևի տեղափոխվեմ մեծ բնակարան:

– Ջուլիա, մենք պետք է էս շաբաթ ամուսնանայինք: Երևի արդեն ժամանակն է՝ ասես «մե՞նք»:

– Կներես, սխալ արտահայտվեցի:

– Դեռ ինչքա՞ն պետք է գնաս-գաս քո տան ու իմ երկուսենյականոցի միջև, որը, քո կարծիքով, փոքր է:

– Արի չսկսենք էդ անվերջ խոսակցությունը, գոնե ոչ էսօր: Խոստանում եմ, հենց փող ունենանք ու կարողանանք երկու հարկը միացնել իրար, երկուսիս համար էլ տեղ կլինի:

– Գիտես, Ջուլիա, ուղղակի ես քեզ շատ եմ սիրում, դրա համար համաձայնեցի քեզ չպոկել էս տեղից, որն ինձնից շատ ես սիրում: Բայց եթե շատ ուզենայիր, մենք վաղուց կարող էինք էստեղ միասին ապրել:

– Ի՞նչ նկատի ունես,– հարցրեց Ջուլիան,– եթե մտածում ես հորս փողերի մասին, ասեմ, որ կենդանության օրոք նրանից բան չեմ վերցրել, էլ ուր մնաց հիմա: Կներես, պետք է գնամ քնեմ, ու քանի որ մեղրամիսը հետաձգվեց, ինձ վաղը ծանր աշխատանքային օր է սպառնում:

– Ճիշտ ես, սիրելիս, գնա քնիր, իսկ էս վերջին կծածներդ կվերագրենք հոգնածությանդ:

Ադամն ուսերը թափ տվեց ու դուրս եկավ: Ջուլիան ձեռքով արեց, բայց նա նույնիսկ շուռ չեկավ, որ տեսնի: Ներքևի դուռը շռնդյունով փակվեց:

***

– Մերսի առնետի համար, ամեն ինչ լսեցի,– բնակարան մտնելով՝ բացականչեց Էնթոնի Ուելշը:

– Բա ի՞նչ էիր ուզում, ասեի, թե հորս տեսքն ունեցող վերջին մոդայի անդրոիդը պտտվում է վերևում,

որ շտապօգնություն կանչեր, ու ինձ փակեի՞ն գժանոցում:

– Շատ խնդալու կլիներ,– ծիծաղելով նկատեց Էնթոնի Ուելշը:

– Այսինքն՝ ուզում ես շարունակենք քաղաքավարություն-քաղաքավարությո՞ւն խաղալ: Լա՛վ, ուրեմն շնորհակալություն եմ հայտնում հարսանիքս փչացնելու համար,– ասաց Ջուլիան:

– Հազար ներողություն, որ մեռել եմ, սիրելիս:

– Նաև շնորհակալություն, որ ինձ կռվեցրիր ներքևի հարևանիս հետ, որ հիմա մի քանի ամիս ամեն անգամ ինձ տեսնելիս երեսը խոժոռելու է:

– Կոշիկ վաճառո՞ղը, թքած ունեմ:

– Բայց հիմա հագինդ նրա կոշիկներից է, հա՞, ոնց որ... Ու շնորհակալություն, որ փչացրիր միակ հանգստյանս օրը:

– Պահ, քո տարիքում ես մենակ Գոհաբանության օրն էի հանգստանում:

– Ասել ես, գիտեմ: Ու վերջապես, խորին երախտագիտությունս եմ հայտնում, որ նշանածիս մոտ ինձ ամենավերջին տականքի պես պահեցի:

– Էլ մի, հերիք ինձ մեղադրես, քո բնավորությունից խոսիր:

– Դու ոչ մի բանի հետ կապ չունե՞ս,– գոռաց Ջուլիան:

– Լավ, Ջուլի, երևի մի քիչ... Բարիշե՞նք:

– Բարիշե՞նք: Էսօրվա՞ համար, երեկվա՞, բացակա տարիների՞, թե՞ մեր բոլոր պատերազմների համար:

– Ես երբեք չեմ պատերազմել քո դեմ, Ջուլիա: Հա, բացակայել եմ, բայց ոչ թշնամացել:

– Դու շարունակիր կատակել... Դու միշտ փորձել ես հեռվից-հեռու ամեն ինչ ղեկավարել՝ առանց դրա բարոյական իրավունքն ունենալու: Բայց էս ի՞նչ եմ ես անում: Խոսում եմ մեռելի հետ...

– Ուզո՞ւմ ես՝ անջատիր ինձ:

– Հա, երևի հենց էդ էլ անեմ: Քեզ նորից դնեմ արկղիդ մեջ ու հետ ուղարկեմ բարձր տեխնոլոգիաների քո եսիմ որ կազմակերպությանը:

– 1-800-300-00 01, կոդը՝ 654:

Ջուլիան հարցական նայեց նրան:

– Կազմակերպության հեռախոսի համարն է: Զանգիր, կոդն ասա, ու եթե համարձակությունդ չհերիքի՝ իրենք էլ կարող են անջատել, ու քսանչորս ժամում կգան, կտանեն ինձ: Բայց լավ մտածիր: Քանի՛-քանի մարդ կերազեր մի քանի ժամ ավելի անցկացնել մեռած հոր կամ մոր հետ... Երկրորդ շանսը չես ունենա: Մենք ունենք ընդամենը վեց օր ու ոչ մի վայրկյան ավելի:

– Ինչո՞ւ հենց վեց:

– Էթիկական նորմերից ելնելով:

– Այսի՞նքն:

– Հասկանում ես, չէ՞, Ջուլիա, որ նման հայտնագործությունը որոշակի բարոյական հարցեր է առաջ քաշում: Մենք որոշեցինք, որ շատ կարևոր է՝ մեր հաճախորդները չկապվեն մեքենաներին, ինչքան էլ որ դրանք կատարյալ լինեն: Մինչև օրս էլ մարդիկ տարբեր ձևերով մահվանից հետո «խոսել են» հարազատների հետ՝ կտակի, գրքերի, ձայնագրությունների ու նկարների միջոցով: Էսպես ասեմ. հիմա մենք առաջարկում ենք ժամանակակից ու ամենակարևորը՝ ինտերակտիվ միջոց,– Էնթոնի Ուելշն այնպես էր ոգևորվել, ասես գնորդին համոզում էր մի բան առնել:– Պետք է ընդամենը «մեռնողին» առաջարկել ավելի զարգացած տարբերակ, քան թուղթն է կամ ձայնագրությունը՝ իր վերջին կամքը հարազատներին փոխանցելու, իսկ վերջիններիս՝ մի քանի օր ավելի նրա ներկայությունը վայելելու համար: Բայց միևնույն ժամանակ չենք կարող

թույլ տալ, որ նրանց մոտ զգացմունքներ առաջանան մեքենայի հանդեպ: Մենք ուսումնասիրել ենք նախադեպերը: Չգիտեմ՝ կհիշե՞ս, թե՞ չէ, բայց կերակրվող տիկնիկներն այնքան լավն էին ստացվել, որ որոշ մարդիկ նրանց վերաբերվում էին որպես երեխաների: Մենք չենք ուզում նույն սխալն անել: Չես կարող հավերժ պահել հորդ կամ մորդ կլոնը, ինչքան էլ որ դա գայթակղիչ թվա:

Էնթոնին նայեց Ջուլիայի անվճռական դեմքին:

– Եվ վերջապես, ինչ վերաբերում է մեզ... Մի շաբաթից մարտկոցներս կնստեն, ու դրանք փոխելու ոչ մի տարբերակ չկա: Հիշողությունս լրիվ կջնջվի, ու վերջին շունչս կփչեմ:

– Ու ոչ մի բան անել չի՞ լինի:

– Ոչ, ամեն ինչ մտածված է: Եթե հանկարծ մտքովդ անցնի մարտկոցներին ձեռք տալ, հիշողությունս միանգամից ֆորմատ կարվի: Ծանր է խոստովանել, բայց ես ոնց որ միանգամյա օգտագործման գրպանի լապտերիկ լինեմ: Վեց օր լույս եմ տալու ու հետո հայտնվեմ հավիտենական խավարի մեջ: Վեց օր, Ջուլիա, վեց կարճ օր, որ կորցրածդ ժամանակը վերագտնես, որոշիր:

– Մենակ քո մտքով նման բան կանցներ: Վստահ եմ, որ դու սովորական բաժնետեր չէիր...

– Եթե դեռ ուզում ես էս խաղը խաղալ ու քանի դեռ կոճակը չես սեղմել, կխնդրեի, որ իմ մասին անցյալով չխոսես: Հաշվենք՝ էդ էլ իմ պստիկ բոնուսն է...

– Վե՞ց օր: Հարյուր տարի է՝ վեց օր ազատ ժամանակ չեմ ունեցել:

– Պտուղը ծառից հեռու չի ընկնում, աղջիկս...

Ջուլիան հայացքով շանթահարեց հորը:

– Լավ, կներես, սրտիդ մոտիկ մի ընդունիր:

– Իսկ Ադամին ի՞նչ ասեմ:

– Նոր մոտդ խաբելը լավ ստացվեց, ու տակից դուրս եկար...

– Ես նրան ոչ թե խաբեցի, այլ որոշ բաներ չասացի: Տարբեր բաներ են:

– Կներես, մանրամասները բաց եմ թողել: Ուրեմն շարունակիր որոշ բաներ թաքցնել...

– Իսկ Սթենլի՞ն:

– Էն գոմիկ ընկե՞րդ:

– Իմ ամենաընկերը...

– Հա, հենց նրան նկատի ունեմ,– պատասխանեց Էնթոնի Ուելշը,– եթե նա իրոք քո ամենալավ ընկերն է, ուրեմն պետք է ավելի նրբանկատ լինես:

– Դու պատրաստվում ես ամբողջ օրն էստե՞ղ անցկացնել՝ մինչև գնամ գործի գամ:

– Հարսանյաց ճամփորդության համար հաստատ արձակուրդ էիր վերցրել: Էնպես որ, կարող ես մնալ տանը:

– Դո՞ւ ինչ գիտես:

– Քո բնակարանի առաստաղը կամ հատակը, ոնց կուզես, ձայնամեկուսացված չեն: Վատ վիճակում գտնվող բոլոր հին տներն ունեն էդ խնդիրը:

– Է՛նթոնի,– բորբոքվեց Ջուլիան:

– Ջուլիա, աղաչում-պաղատում եմ, սիրելիս, նույնիսկ եթե ես մեքենա եմ, ինձ «պապա» ասա, տրաքվում եմ, երբ հետս անունով ես խոսում:

– Գրողը տանի, ախր քսան տարուց ավելի է, ես քեզ «պապա» չեմ ասել:

– Եվս մի պատճառ էս վեց օրը լիարժեք վայելելու համար,– լայն ժպտալով՝ պատասխանեց Էնթոնի Ուելշը:

– Մեռնեմ, թե հասկանում եմ՝ ինչ անեմ,– մրմնջաց Ջուլիան ու մոտեցավ պատուհանին:

– Գնա քնելու, օրը գա՝ բարին հետը: Դու աշխարհում առաջին մարդն ես, որին տրված է էս հնարավորությունը, արժե լավ մտածել: Ինչ որոշում էլ կայացնելու լինես, արա վաղն առավոտյան՝ թարմ ուղեղով: Եթե որոշես ինձ անջատել, միակ կորուստդ կլինի աշխատանքից ուշանալը: Հարսանիքիդ համար մի շաբաթ բացակայելու էիր, հորդ մահվան կապակցությամբ կարող ես, չէ՞, մի քանի ժամ բացակայել:

Ջուլիան բավական երկար ուսումնասիրում էր այս տարօրինակ հայրիկին, որն անթարթ իրեն էր նայում: Եթե նրան լավ չճանաչեր, կմտածեր, որ իրեն ուղղված հայացքի մեջ մի քիչ քնքշություն կա: Ու թեև դա ընդամենը կրկնօրինակն էր մի մարդու, որն արդեն չկա, քիչ մնաց բարի գիշեր մաղթեր, բայց իրեն հետ պահեց: Նա փակեց իր սենյակի դուռն ու բերանքսիվայր ընկավ մահճակալին:

Րոպեները թռան, հետո ժամ անցավ, հետո՝ մյուսը: Վարագույրները բացված էին, ու գիշերվա լույսը սփռվել էր պահարանի դարակներին: Պատուհանից այն կողմ երկնքից կախված լիալուսինը կարծես թե լողում էր սենյակի մանրահատակին: Մահճակալին պառկած՝ Ջուլիան մեկիկ-մեկիկ վերհիշում էր մանկության օրերը: Քանի՜-քանի նման գիշեր է անցկացրել՝ թաքուն սպասելով հոր վերադարձին, այն հոր, որն այս գիշեր սրտատրոփ սպասում էր պատի հետևում: Ինչքա՜ն է անքուն լսել քամու հնարած պատմությունները հոր ճամփորդությունների ու անթիվ երկրների հրաշքների մասին: Քանի՜-քանի գիշեր էր անցկացրել այսպես երազելով: Երազելու սովորությունը չէր թողել: Ինչքա՜ն մատիտ, ինչքան ռետին էր մաշել, որ իրար հետևից իր ստեղծած կերպարները շունչ առնեին, հանդիպեին ու սիրով լցվեին միմյանց հանդեպ: Ջուլիան լավ գիտեր,

որ ստեղծագործել պետք է գիշերը, քանի որ իրականության պայծառ լույսը սպանում է բոլոր երազները: Որտե՞ղ է վերջանում մեր մանկությունը:

Մի փոքրիկ մեքսիկական տիկնիկ նիրհում էր ջրասամույրի գիպսե արձանիկի՝ իրականացած անհավանական երազանքի առաջին մույլաժի կողքին: Ջուլիան վեր կացավ ու ձեռքն առավ այն: Նրա նախազգացումը երբեք չէր դավաճանել՝ ժամանակը հարստացրել էր երևակայությունը: Ուրեմն ինչո՞ւ չհավատալ:

Ջուլիան խաղալիքը դրեց տեղը, հագավ գիշերային խալաթն ու բացեց սենյակի դուռը: Էնթոնի Ուելշը, հյուրասենյակի բազմոցին նստած, NBC-ի սերիալ էր դիտում:

– Ես ինձ թույլ տվեցի միացնել անտենան, պատկերացնո՞ւմ ես, անգամ հոսանքին միացրած չէր: Գժվել եմ էս սերիալի համար:

Ջուլիան նստեց նրա կողքին:

– Բայց այ, էս սերիան չեմ տեսել, ամեն դեպքում հիշողությանս մեջ չկա:

Ջուլիան վերցրեց հեռավահանակն ու անջատեց ձայնը: Էնթոնին աչքերը վեր հառեց:

– Ուզում էիր խոսե՞նք,– հարցրեց Ջուլիան,– արի խոսենք:

Նրանք լուռ նստեցին մոտ տաանհինգ րոպե:

– Կայֆ, ես էս սերիան չէի տեսել, ամեն դեպքում հիշողությանս մեջ չկա,– կրկնեց Էնթոնի Ուելշը՝ հեռուստացույցի ձայնը բարձրացնելով:

Այս անգամ Ջուլիան լրիվ անջատեց հեռուստացույցը:

– Հիշողությունդ կախել է, նույն բանը երկու անգամ կրկնեցիր:

Եվս տաանհինգ րոպե անցավ լռության մեջ: Էնթոնի Ուելշն անթարթ նայում էր սև էկրանին:

– Մի անգամ՝ քո ծնունդին, կարծեմ ինը տարեկանիդ ժամանակ, երկուսով ընթրեցինք քո սիրած չինական ռեստորանում ու հետո ամբողջ երեկոն անցկացրինք հեռուստացույց նայելով, ինչպես հիմա, միայն երկուսով: Դու պառկել էիր իմ անկողնում, ու նույնիսկ երբ բոլոր հաղորդումները նայեցինք, պրծանք, շարունակում էիր նայել էկրանի ձյանը: Բայց երևի չհիշես, շատ փոքր էիր: Հենց էդպես էլ քնեցիր գիշերվա ժամը երկուսին: Ուզեցի տանել քո սենյակ, բայց ձեռքերով էնքան ամուր էիր գրկել բարձը, որ անհնար էր քեզ պոկել: Եվ էդպես փռված քնեցիր, ու ես ստիպված եղա տեղավորվել դիմացի բազկաթոռին ու ամբողջ գիշեր նայեցի քեզ: Չէ, հաստատ չես հիշի, ընդամենը ինը տարեկան էիր:

Ջուլիան լուռ էր: Էնթոնի Ուելշը նորից միացրեց հեռուստացույցը:

– Տեսնես որտեղից են պեղում էս պատմությունները... Պատկերացնո՞ւմ ես՝ ինչ երևակայություն է պետք: Միշտ զարմացել եմ: Ու գիտե՞ս՝ ինչն է հետաքրքիր, որ մենք վերջում ահավոր կապվում ենք սերիալների հերոսներին:

Ջուլիան ու հայրը նստած մնացին կողք կողքի, առանց մի բառ փոխանակելու: Ջուլիայի ձեռքը հանգչում էր հոր ձեռքի կողքին, բայց նրանց ձեռքերը ոչ մի վայրկյան չդիպան, ու ոչ մի բառ չխախտեց այդ անսովոր գիշերվա խաղաղությունը: Երբ ծեգի առաջին շողերը սողոսկեցին սենյակ, Ջուլիան վեր կացավ, լուռ գնաց դեպի իր սենյակը, ննջարանի շեմին շրջվեց ու մեղմ ասաց.

– Բարի գիշեր:

# 6

Կողասեղանին դրված զարթուցիչը գուժեց ժամը ինը: Ջուլիան աչքերը բացեց ու վեր թռավ:

– Վախ քո...

Նա նետվեց լողասենյակ՝ ճանապարհին խփվելով դռան շրջանակին:

– Արդեն երկուշաբթի է,– փնթփնթաց նա,– ինչ ահավոր գիշեր էր:

Նա քաշեց լոգարանի վարագույրը, մտավ ու բավական երկար ժամանակ կանգնեց տաք ջրի տակ: Քիչ ավելի ուշ՝ ատամները լվալիս, նայեց իրեն լվացարանի վերևում կախված հայելու մեջ ու սկսեց խելագարի պես քրքջալ: Մի սրբիչը փաթաթեց վրան, մյուսը՝ մազերին, ու որոշեց թեյ դնել: Սենյակով անցնելիս մտքում որոշեց թեյը կուլ տալուց հետո անպայման զանգել Սթենլիին: Եթե նրան պատմեր գիշերվա զառանցանքի մասին, անկասկած Սթենլին կորոշեր նրան զոռով քաշ տալ հոգեբանի մոտ: Պայքարելն անիմաստ էր, քանի որ Ջուլիան կես օր չէր դիմանում առանց Սթենլիին զանգելու կամ տեսնելու: Իսկ այդքան անիրական երազն անպայման պետք էր պատմել լավագույն ընկերոջը:

Ժպիտը շուրթերին, նա պատրաստվում էր բացել հյուրասենյակ տանող դուռը, երբ ներսից եկող ափսեների աղմուկը նրան ստիպեց հետ ցատկել:

Սիրտը սկսեց արագ բաբախել: Սրբիչները նետելով հատակին՝ նա հապճեպ վրան քաշեց ջինսն ու պոլոն, մի փոքր կարգավորեց մազերը, վերադարձավ լոգասենյակ, նայեց հայելու մեջ. մի քիչ կարմրաներկը չէր խանգարի: Հետո կիսով չափ բացեց հյուրասենյակի դուռը, գլուխը դուրս հանեց ու վախվորած շշնջաց.

– Ադա՞մ: Սթենլի՞:

– Գաղափար չունեմ՝ առավոտյան թեյ ես խմում, թե սուրճ, դրա համ երկուսն էլ սարքել եմ,– խոհանոցի հատվածից ձայն տվեց Էնթոնի Ուելշը՝ հպարտ բարձրացնելով տաք սրճեփը:– Մի քիչ թունդ է ստացվել, ոնց որ ես եմ սիրում,– հիացած ավելացրեց նա:

Ջուլիան նայեց հին փայտե սեղանին: Իր ափսեն արդեն դրված էր: Մուրաբայի երկու պստիկ բանկան ու մեղրի կճուճիկը շարված էին կատարյալ անկյունագծով: Մի քիչ այն կողմ կարագի ամանն էր, կողքին՝ փաթիլների ամանը: Կաթի տուփը ձիգ խոյանում էր շաքարամանի կողքին:

– Վերջացրու:

– Ի՞նչը: Հիմա՞ ինչ եմ արել:

– Իդեալական հոր էս հիմար խաղդ: Դու ինձ համար երբեք նախաճաշ չես պատրաստել, ու պետք չէ անել հիմա, երբ դու...

– Օ, ոչ, պետք չի անցյալ ժամանակով... Մենք էդ կանոնն արդեն ֆիքսել ենք: Խոսում ենք միայն ներկայով: Ապագան մի ճոխություն է, որը ես ինձ չեմ կարող թույլ տալ...

– Դու ես ֆիքսել էդ կանոնը, իսկ առավոտյան ես թեյ եմ խմում:

Էնթոնին Ջուլիայի բաժակի մեջ սուրճ լցրեց:

– Կաթ ավելացնե՞մ:

Ջուլիան բացեց լվացարանի ծորակն ու լցրեց էլեկտրական թեյնիկը:

– Հը՞, մի բան որոշեցի՞ր,– հարցրեց Էնթոնի Ուելշը՝ տոստերի մեջից երկու կտոր հաց հանելով:

– Թե նպատակդ խոսելն էր, կարծում եմ՝ երեկվա զրույցը ոչ մի բան չտվեց,– հանգիստ ձայնով ասաց Ջուլիան:

– Անձամբ ես մեծ հաճույք ստացա երեկվանից, դու չէ՞:

– Իմ ոչ թե ինը, այլ տասը տարեկանն էր: Առաջին ուիքէնդը, որ անցկացրինք առանց մամայի: Կիրակի էր, իսկ նրան հիվանդանոց տարան հինգշաբթի: Չինական ռեստորանի անունը «Wang» էր, անցած տարի փակվեց: Իսկ երկուշաբթի՝ առավոտ շուտ, երբ ես դեռ քնած էի, դու ճամպրուկդ հավաքեցիր ու գնացիր՝ անգամ առանց ինձ հաջողություն ասելու:

– Ես հանդիպում ունեի կեսօրին Սիեթլում: Թե՞ չէ, ոնց որ Բոստոնում: Վախ քո, էլ չեմ էլ հիշում: Ես հետո եկա հինգշաբթի... թե՞ ուրբաթ:

– Հիմա ի՞նչ կարևոր է,– հարցրեց Ջուլիան՝ սեղան նստելով:

– Դե մի քանի նախադասությամբ իրար ահագին բան ասեցինք, էդպես չի՞, Ջուլիա: Ջուրը երբեք չի եռա, եթե թեյնիկը չմիացնես:

Ջուլիան հոտ քաշեց դիմացը դրած բաժակից:

– Կյանքումս սուրճ չեմ խմել,– ասաց նա՝ լեզուն թաթախելով ըմպելիքի մեջ:

– Ուրեմն ինչի՞ ես ասում, թե չես սիրում,– հարցրեց Էնթոնի Ուելշը՝ տեսնելով, թե ինչպես աղջիկը մի շնչով ներս քաշեց բաժակի պարունակությունը:

– Որովհետև գիտեմ,– դեմքը ծամածռելով՝ Ջուլիան բաժակը ցած դրեց:

– Մենք սովորում ենք դրա դառնությանը... հետո նոր գնահատում մեջը թաքնված նրբությունը,– ասաց Էնթոնին:

– Ես պետք է գնամ գործի,– մեղրի ամանը բացելով՝ ընդհատեց Ջուլիան:

– Որոշում կայացրի՞ր. հա՞, թե՞ չէ: Էս իրավիճակը նյարդայնացնում է, կարող եմ, չէ՞, պատասխան ակնկալել:

– Չգիտեմ՝ ինչ ասեմ քեզ: Ինձնից անհնարինը մի պահանջիր: Քո գործընկերներն ու դու մի այլ՝ կարևոր բարոյական պահ եք բաց թողել:

– Հապա ասա, հետաքրքիր է:

– Որ դուք տակնուվրա եք անում ինչ-որ մեկի կյանքը, ով դա ձեզնից չէր խնդրել:

– Ինչ որ մեկի՞,– խայթեց Էնթոնի Ուելշը:

– Բառախաղ մի արա: Չգիտեմ էլ՝ ինչ ասեմ քեզ, արա ինչ ուզում ես, վերցրու հեռախոսը, զանգիր նրանց, ասա կոդը, ու թող հեռվից-հեռու իմ փոխարեն որոշեն:

– Վեց օր, Ջուլիա, վեց օր, ու կկարողանաս սգալ հորդ մահը, ոչ թե ինչ-որ անծանոթի: Վստա՞հ ես, որ չես կարող ինքդ ընտրություն կատարել:

– Վեց օր քեզ համար... մի տեսակ շատ չի՞ լինի...

– Ես էլ էս աշխարհից չեմ, ոչ մի օգուտ չունեմ: Երբեք չեմ մտածել, որ կասեմ, բայց հիմա ոնց որ եկել է ժամանակը: Համաձայն եմ, եթե խորանաս՝ ծիծաղելի իրավիճակ է,– հրճվելով շարունակեց Էնթոնի Ուելշը,– մենք դա հաշվի չենք առել: Չլսված բան է: Արի խոստովանիր, որ մինչև էս հանճարեղ մեքենայի հայտնվելը դժվար թե կարողանայիր հետևել աղջկադ դեմքի արտահայտությանը, երբ նրան հայտնում ես քո մահվան մասին: Հը՞: Լավ, քո անտարբերությունից ելնելով՝ էդքան էլ ծիծաղելի չէր...

– Ընդհանրապես...

– Մի վատ բան ասեմ: Ես չեմ կարող նրանց զանգել: Անհնար է: Միակ մարդը, որ կարող է անջատել ծրագիրը, սեփականատերն է: Բացի դրանից, ես արդեն մոռացել եմ գաղտնաբառը, այն միանգամից ջնջվեց ուղեղիցս: Հուսով եմ՝ ինչ-որ տեղ գրել ես... ամեն դեպքում...

– 1-800-300 00 01, կոդը՝ 654:

– Հա, լավ էլ հիշում ես:

Ջուլիան վեր կացավ, բաժակը տարավ, դրեց լվացարանի մեջ: Հետո շրջվեց, երկար նայեց հոր դեմքին ու վերցրեց խոհանոցի պատից կախված հեռախոսը:

– Ես եմ,– ասաց նա գործընկերոջը,– որոշեցի հետևել քո խորհրդին... ամեն դեպքում՝ մասամբ: Էսօր չեմ գա, երևի վաղն էլ, երևի էլի մի քանի օր, դեռ չգիտեմ, բայց քեզ տեղյակ կպահեմ: Ամեն երեկո նամակ ուղարկիր, որ իմանամ՝ գործն ուր հասավ, ու անպայման զանգիր, եթե հանկարծ խնդիրներ առաջանան: Ու աչքդ Շառլի վրա պահիր, մենք նրան շա՛տ պարտական ենք: Չեմ ուզում, որ մեկուսանա, օգնիր նրան ինտեգրվել: Դե, քեզ տեսնեմ, Դրեյ...

Ջուլիան հեռախոսը կախեց՝ առանց հայացքը հորից կտրելու:

– Շատ ճիշտ ես անում, որ հետևում ես աշխատակիցներիդ,– ասաց Էնթոնի Ուելշը,– ես միշտ ասել եմ, որ ցանկացած կազմակերպության հիմքում երեք սյուն կա՝ թիմը, թիմը ու կրկին թիմը:

– Երկու օր: Դու ունես երկու օր, լսո՞ւմ ես: Հիմա ինքդ որոշիր՝ դա քեզ հերի՞ք է, թե՞ չէ: Քառասունութ ժամ հետո ինձ վերադարձնում ես իմ բնականոն կյանքին, իսկ դու...

– Վեց օր:

– Երկու:

– Վեց,– շարունակեց վիճել Էնթոնի Ուելշը:

Հեռախոսի զանգն ընդհատեց վիճաբանությունը: Էնթոնին բարձրացրեց լսափողը, Ջուլիան խլեց այն նրա ձեռքից, ամուր կառչեց դրանից ու հորը նշան արեց, որ քար լռություն պահպանի:

Ադամն անհանգստացել էր, որ Ջուլիան աշխատանքի չէր: Նա զղջում էր իր կասկածամտության ու

նեղացկոտության համար: Ջուլիան իր հերթին ներողություն խնդրեց նախորդ երեկոյի լարված իրավիճակի համար, շնորհակալություն հայտնեց, որ Ադամը հաղորդագրությունը ստանալուց հետո եկել էր այցելության: Ու եթե նույնիսկ պահը շատ հարմար չէր, նրա հանկարծակի հայտնվելն իր պատուհանների տակ շատ ռոմանտիկ էր:

Ադամն առաջարկեց աշխատանքային օրվա ավարտին հանդիպել: Եվ մինչ Էնթոնի Ուելշը ամաններն էր լվանում՝ հնարավորինս շատ աղմուկ բարձրացնելով, Ջուլիան Ադամին բացատրում էր, որ հոր մահն ավելի ծանր է տանում, քան կպատկերացներ: Սարսափելի երազները հանգիստ չէին տալիս, և ինքը լրիվ հյուծվել է: Անիմաստ էր նախորդ օրվա անհաջող փորձը կրկնել: Մի խաղաղ կեսօր կամ երեկո, կամ վաղը, ամենաուշը՝ մյուս օրը կհանդիպեն: Այդուհետ նա կլինի այն նույն սիրալիր աղջիկը, որի հետ Ադամն ուզում էր հավերժ կապել իր կյանքը:

– Ասում էի, չէ՞, պտուղը ծառից հեռու չի ընկնում,– կրկնեց Էնթոնի Ուելշը՝ հենց որ Ջուլիան կախեց լսափողը:

Ջուլիան հայացքով շամփրեց նրան:

– Հիմա՞ ինչ կա,– հարցրեց հայրը:

– Երևի կյանքիդ մեջ աման լվացած չկայիր, չէ՞:

– Դու ի՞նչ գիտես, բացի դրանից՝ իմ ծրագրում աման լվալը ներառված է,– զվարթ պատասխանեց Էնթոնին:

Անպատասխան թողնելով հորը՝ Ջուլիան վերցրեց բանալիների տրցակը:

– Ո՞ւր,– հարցրեց Էնթոնին:

– Գնամ վերևի տունը մի քիչ խելքի բերեմ, բացառվում է, որ մնաս էստեղ ու ամբողջ գիշեր հետ ու առաջ անես, քնելու մի քանի ժամ ունեմ, հասկանում ես, չէ՞:

– Եթե պատճառը հեռուստացույցի ձայնն է, մի քիչ կիջեցնեմ...

– Գիշերն անցկացնում ես վերևում, ու դա քննարկման ենթակա չէ:

– Հիմա ի՞նչ, ինձ քշում ես ձեղնահա՞րկ:

– Մի խելքին մոտ պատճառ կասե՞ս, որ փոշմանեմ:

– Առնետները... ինքդ ասացիր, որ առնետներ կան,– պատժին սպասող երեխայի ձայնով պատասխանեց հայրը:

Ու երբ Ջուլիան դուրս էր գալիս, հետևից ձայն տվեց.

– Էսպես մենք ոչ մի բանի չենք հասնի...

Ջուլիան դուռը վրա բերեց ու սկսեց բարձրանալ աստիճաններով: Էնթոնին նայեց գազօջախի ժամացույցին, մի պահ կարկամեց ու սկսեց փնտրել սպիտակ հեռավահանակը, որ Ջուլիան թողել էր սեղանին:

Գլխավերևում լսվեցին աղջկա ոտնաձայները, տեղափոխվող կահույքի գռռոցը, բացվող-փակվող պատուհանների շխկոցը: Երբ Ջուլիան ցած իջավ, հայրը, հեռավահանակը ձեռքին, կանգնած էր իր արկղի մեջ:

– Էս ի՞նչ գործի ես,– հարցրեց նա:

– Պատրաստվում եմ անջատվել, երևի երկուսիս համար էլ լավ կլինի, հատկապես՝ քո, ոնց հասկանում եմ՝ զզվեցրել եմ արդեն:

– Բա ես գիտեի՝ չես կարող,– վահանակը նրա ձեռքից խլելով՝ ասաց Ջուլիան:

– Հա, ասել եմ, որ մենակ դու կարող ես զանգել ու կոդն ասել, որ ինձ անջատեն, բայց ոնց որ դեռ ի վիճակի եմ մի հատ կոճակ սեղմել,– մռթմռթաց հայրը՝ արկղից դուրս գալով:

– Օֆ, ինչ կուզես՝ արա,– վահանակը հետ տալով՝ ասաց Ջուլիան,– սպանեցիր թողեցիր...

Էնթոնի Ուելշը վահանակը նետեց սեղանին և տեղավորվեց դստեր դիմաց:

– Հա, իմիջիայլոց, ո՞ւր էիք գնալու մեղրամսին:

– Մոնրեալ, ինչի՞:

– Յա՛, փաստորեն փեսան գժվել է...– ատամների արանքից ֆսսացրեց Էնթոնին:

– Քվեբեկի դեմ ի՞նչ ունես:

– Հավատա՝ ոչ մի բան: Մոնրեալը բավական սիրունիկ քաղաք է, էնտեղ նույնիսկ լավ ժամանակ եմ անցկացրել: Բայց խնդիրը դա չէ:

– Բա՞...

– Որ...

– Ի՞նչ...

– Ամուսնական ճամփորդություն մի ժամվա թռիչքի հեռավորությամբ... ինչպիսի ճոխություն... Իսկ ինչո՞ւ ոչ քեմփինիք-քարով, հյուրանոցի համար էլ չէիք վճարի:

– Իսկ եթե ե՞ս եմ ընտրել տեղը: Իսկ եթե ես գժվում եմ Մոնրեալի համար, և ես ու Ադամը լավ հիշողություններ ունենք էնտեղի՞ց: Հիմա՞ ինչ կասես:

– Կասեմ, որ եթե դու ես ընտրել մեղրամիսդ տնից մի ժամվա հեռավորության վրա անցկացնելը, ուրեմն իմ աղջիկը չես, էսքան բան,– ծաղրանքով հայտարարեց Էնթոնին,– հասկանում եմ, որ թխկու սիրոպ սիրում ես, բայց ոչ էդքան....

– Ոնց հասկանում եմ, քո a priori-ներից ձեռք չես քաշել, հը՞:

– Համաձայն եմ, որ փոխվելու համար ուշ է արդեն: Լավ, Ջուլիա, արի պատկերացնենք, որ դու ես որոշել կյանքիդ ամենահիշարժան երեկոներն անցկացնել ծանոթ քաղաքում: Մնաս բարով, հայտնագործության մոլուցք: Մնաս բարով, ռոմանտիզմ: Պանդոկապան, տուր մեզ նույն սենյակը, ինչ անցած անգամ, վերջապես էս

երեկոն չի տարբերվում մնացած բոլոր երեկոներից: Մատուցե՛ք մեզ մեր սովորական ճաշը, ապագա ամուսինս, վա՛յ, կներես, ամուսինս ատում է փոփոխություններ,– սկսեց քրքջալ Էնթոնի Ուելշը:

– Պրծա՞ր:

– Հա, կներես: Վայ, Աստված իմ, մեռած լինելը լավ բան է: Ինչ անցնի արհեստական մտքովդ՝ կարող ես ասել, կա՛յֆ...

– Դու ճիշտ ես, մենք ոչ մի բանի չենք հասնի,– ասաց Ջուլիան՝ հոր զվարճությանը վերջ տալով:

– Էստեղ որ՝ հաստատ: Չեզոք գոտի է պետք գտնել:

Ջուլիան զարմացած նայեց նրան:

– Հերիք չէ՞ քո բնակարանում պահմտոցի խաղանք, Ջուլիա, ի՞նչ կասես: Նույնիսկ եթե հաշվի առնենք վերևի սենյակը, ուր ինձ ուզում ես ճխտել, տարածքը քչություն է անում, իսկ թանկ վայրկյանները, որ երկու լակոտի պես անիմաստ ծախսում ենք, ավելի ու ավելի են սպառվում: Ու էլ երբեք հետ չեն գա:

– Ի՞նչ ես առաջարկում...

– Մի փոքրիկ ճամփորդություն: Ոչ մի զանգ գրասենյակից, Ադամի ոչ մի ներխուժում, ոչ մի երեկո հեռուստացույցի առաջ չռած աչքերով, այլ զբոսանքներ, զբոսանքներ, ու մենք երկուսով կխոսենք ամեն ինչից: Հենց սրա համար եմ էդքան հեռվից հետ եկել: Մի պահ, մի քանի օր, միայն մենք երկուսով, միայն մենք երկուսով, Ջուլիա...

– Ուզում ես՝ քեզ տամ էն, ինչ դու ինձ երբեք չես տվել, հա՞:

– Հերիք կռվես հետս, Ջուլիա: Հետո մի ամբողջ հավերժություն կունենաս պատերազմը վերսկսելու համար, իմ զենքերը կմնան հիշողությանդ մեջ: Ես ունեմ ընդամենը վեց օր, ուրիշ բան չեմ խնդրում:

– Իսկ որտե՞ղ ենք անցկացնելու քո փոքրիկ ճամփորդությունը:

– Մոնրեալում:

Ջուլիան չկարողացավ թաքցնել ժպիտը, որ լուսավորեց նրա դեմքը:

– Մոնրեալո՞ւմ:

– Դե հա, տոմսերը վերադարձնել չի լինի... Ընդամենը կարող ենք փորձել փոխել ուղևորներից մեկի անունը...

Ու քանի որ Ջուլիան մազերը հավաքեց, պիջակը գցեց ուսին ու կարծես ուզում էր դուրս գալ՝ առանց հորը որևէ պատասխանի արժանացնելու, Էնթոնի Ուելշը կտրեց նրա ճանապարհը:

– Էդ դեմքը մի ընդունիր, Ադամն ասեց, չէ՞, որ կարող ես դրանք դեն գցել:

– Նա ինձ առաջարկեց պահել որպես հուշ: Ու եթե ականջներդ լավ սրած լինեիր, ձայնի հեգնանքը կլսեիր: Բայց չեմ կարծում, որ ուզենար՝ ուրիշ մեկի հետ գնայի:

– Ոչ թե ուրիշ մեկի, այլ հարազատ հորդ:

– Մի կողմ քաշվիր, հա, խնդրում եմ:

– Ո՞ւր ես գնում,– հարցրեց Էնթոնի Ուելշը՝ ճանապարհ տալով:

– Մաքուր օդի:

– Բարկացա՞ծ ես:

Պատասխանի փոխարեն աստիճանների վրա լսվեցին հեռացող Ջուլիայի ոտնաձայները:

***

Գրինիչ փողոցի խաչմերուկում մի տաքսի կանգնեց, ու Ջուլիան հապշտապ նստեց: Հետ նայելու կարիք չկար: Նա վստահ էր, որ Էնթոնի Ուելշը պատուհանից նայում էր Իններորդ պողոտայի ուղղությամբ հեռացող դեղին ֆորդի հետևից: Հենց որ մեքենան անհետացավ

խաչմերուկում, Էնթոնին գնաց խոհանոց, հեռախոսը վերցրեց ու երկու զանգ արեց:

Ջուլիան իջավ Սոհոյի դիմաց: Խաղաղ իրավիճակում նա ոտքով կանցներ արդեն անգիր իմացած ճանապարհը. ընդամենը երկու քայլ էր: Բայց Ջուլիան այնքան էր ուզում տնից հեռու փախչել, որ եթե ինչ-որ մեկը փողոցում հեծանիվ թողած լիներ, հաստատ կգողանար: Նա հրեց հնաոճ իրերի փոքրիկ խանութի դուռը. մուտքի զանգակը ծնգաց: Բարրոկոյի ոճի բազկաթոռին բազմած Սթենլին գլուխը բարձրացրեց գրքից:

– «Քրիստինա թագուհու» մեջ Գրետա Գարբոյի մուտքն անգամ ավելի շքեղ չի ստացվել...

– Ի՞նչ նկատի ունես:

– Քո մուտքը, արքայադուստրս՝ արքայական և սարսափազդու միևնույն ժամանակ:

– Հեչ հարմար օր չես գտել ձեռ առնելու համար:

– Ոչ մի օր, ինչքան էլ որ այն հիասքանչ լինի, չի անցնում առանց հեգնանքի: Էս գործի չե՞ս:

Ջուլիան մոտեցավ հին գրապահարանին ու սկսեց ուշադիր նայել ամենավերևի դարակում դրված ոսկեզօծ, նրբագեղ սեղանի ժամացույցը:

– Դու, ի՞նչ է, Ջուլիա, գործից թռել ես, որ գաս ուսումնասիրես, թե տասնութերորդ դարում ժամը քանի՞ն է,– հարցրեց Սթենլին՝ ուղղելով քթի ծայրին իջած ակնոցը:

– Շատ սիրուն է:

– Հա, ես էլ եմ սիրուն, ի՞նչ է պատահել:

– Հեչ, ուղղակի անցա քեզ տեսնելու:

– Հա, էլի, եթե էդպես է, ուրեմն ես վաղվանից դադարեցնում եմ Լյուդովիկոս 16-րդի վաճառքն ու անցնում փոփ-արտին,– պատասխանեց Սթենլին՝ մի կողմ դնելով ձեռքի գիրքը:

Նա վեր կացավ ու նստեց կարմիր փայտից սեղանի ծայրին:

– Էս պուպուշիկ դեմքին ի՞նչ ամպեր են ծանրացել, սրտիկս:

– Դե հիմա...

Ջուլիան գլուխը դրեց Սթենլիի ուսին:

– Օ, իրոք որ ծանր է,– ասաց նա՝ Ջուլիային գիրկն առնելով:– Հիմա քեզ թեյ կտամ, որ ընկերներիցս մեկը բերել է Վիետնամից: Բոլոր թույներդ կմաքրի, կտեսնես, այն կատարյալ է, երևի որովհետև նվիրողն անարժան մեկն էր...

Սթենլին պահարանից վերցրեց թուրմի թեյնիկը: Հետո միացրեց էլեկտրական թեյնիկը, որ դրված էր դրամարկղի համար պատվանդան ծառայող հին սեղանի վրա: Մի քանի րոպե էր պետք, որ ջուրը եռա, ու կախարդական թուրմը լցվի հենց այդ առիթով հնաոճ պահարանից հանված հախճապակե բաժակների մեջ: Ջուլիան ներշնչեց հասմիկի բույրն ու մի փոքրիկ կում արեց:

– Լսում եմ քեզ, ու չփորձես ընդվզել, սրտիկս, էս աստվածային ըմպելիքը քարկապ ընկած լեզուները բացելու հատկություն ունի:

– Ինձ հետ կմեկնեի՞ր ամուսնական ճամփորդության, Սթենլի:

– Եթե ամուսնացած լինեինք, դեմ չէի լինի... Բայց էդ դեպքում, ջանիկս, պետք է անունդ Ջուլիան լիներ, ոչ թե Ջուլիա, այլապես մեր մեղրամիսը դառնամսի կվերածվեր...

– Սթեն, ինչ կլինի, մի շաբաթով խանութդ փակիր, ու արի քեզ փախցնեմ...

– Ի՜նչ ռոմանտիկ է հնչում, և ո՞ւր:

– Մոնրեալ:

– Օ՜, ոչ, երբեք:

– Դո՞ւ ինչ ունես Քվեբեկի դեմ:

– Ես անտանելի տառապանքների վեց ամիս եմ անցկացրել երեք կիլո կորցնելու համար, ու հիմա չեմ պատրաստվում մի քանի օրում հետ հավաքել: Նրանց ռեստորաններին դիմանալն անհնար է: Եվ հետո՝ ատում եմ հերթապահ տարբերակ լինելը:

– Ինչի՞ ես էդպես ասում:

– Ո՞վ է քեզ մերժել ինձնից առաջ:

– Ի՞նչ կարևոր է: Մեկ է՝ չես հավատալու:

– Եթե փորձես բացատրել՝ ինչից ես նեղվել, երևի հասկանամ...

– Եթե նույնիսկ ամենասկզբից պատմեմ, մեկ է, չես հավատալու, Սթենլի:

– Ենթադրենք ես դեբիլ եմ... Ասա տեսնեմ, ե՞րբ ես վերջին անգամ քեզ թույլ տվել կես օր չաշխատել:

Հանդիպելով Ջուլիայի քար լռությանը՝ Սթենլին շարունակեց.

– Շաբաթվա սկզբին առավոտ շուտ ներխուժում ես խանութ՝ սուրճ բուրելով, երբ գիտեմ, որ զզվում ես դրանից: Վատ արված շպարիդ տակ թաքցրած դեմքդ ասում է, որ ընդամենը մի քանի ժամ ես քնել, ու խնդրում ես, որ նշանածիդ փոխարեն, բան ու գործս թողած, հետդ գամ ամուսնական ճամփորդության: Ի՞նչ է կատարվում, Ջուլիա: Գիշերն ուրիշ տղամարդու հե՞տ ես անցկացրել:

– Իհարկե ոչ,– բացականչեց Ջուլիան:

– Նորից եմ հարցնում, Ջուլիա, ինչի՞ց կամ ումի՞ց ես փախչում:

– Ոչ մի բանից:

– Գիտես, ջանիկս, ես լիքը գործ ունեմ: Ու եթե դու ինձ այլևս չես վստահում, անցնեմ իմ դարդերին,– բացականչեց Սթենլին՝ ձևացնելով, թե գնում է խանութի հետնամաս:

– Գիրքդ բաց հորանջում էիր, երբ մտա: Ահավոր վատ ես խաբում,– ծիծաղելով ասաց Ջուլիան:

– Ուրեմն էդ հոտած դեմքդ բացի: Կուզե՞ս՝ գնանք քայլենք: Խանութներն ուր որ է՝ կբացվեն, հաստատ մի զույգ նոր կոշիկի կարիք կունենաս:

– Եթե տեսնեիր, Սթենլի, թե ինչքան կոշիկ ունեմ, որ երբեք չեմ հագել...

– Չեմ ասում, է, ոտքերիդ հաճույք պատճառենք. տրամադրությունդ է պետք փոխել:

Ջուլիան ձեռքը վերցրեց ոսկեզօծ ժամացույցը: Թվացույցի պաշտպանիչ ապակին չկար: Մատերի ծայրով զգույշ շոյեց սլաքները:

– Իրոք որ շատ սիրուն է,– ասաց նա՝ բոպեի սլաքը շարժելով:

Նրա հպումից ժամի սլաքը ևս սկսեց շարժվել:

– Ի՜նչ լավ կլիներ, որ կարողանայինք ժամանակը հետ տալ...

Սթենլին ուշադիր նայեց Ջուլիային:

– Ժամանակը հե՞տ տալ: Ինչքան էլ հետ տաս, սրտիկս, էս հնությանը չես ջահելացնի: Այլ կերպ մոտեցիր հարցին, հենց այդ հնությունն է, որ գեղեցկություն է պարգևում,– պատասխանեց Սթենլին՝ ժամացույցը հետ՝ դարակին դնելով:– Ու վերջապես կասե՞ս, ինչն է քեզ տանջում:

– Եթե քեզ առաջարկեին իրականացնել ճամփորդություն հորդ անցած ճամփեքով, ի՞նչ կասեիր:

– Իսկ ի՞նչ ունեմ կորցնելու: Ճի՞շտն ես ուզում՝ եթե պետք լիներ գնալ աշխարհի ծայրը, որ մորիցս գոնե մի մազ գտնեի, արդեն ինքնաթիռի մեջ ուղեկցորդուհիներին զզվեցնելիս կլինեի, ոչ թե էստեղ ժամանակ կկորցնեի մի խելագարի հետ, նույնիսկ եթե նա իմ ամենամոտ ընկերն է: Եթե էդպիսի հնարավորություն ունես, Ջուլիա, մի երկմտիր:

– Իսկ եթե արդեն շատ ուշ է...

– Շատ ուշ լինում է այն ժամանակ, երբ ամեն ինչ անվերադարձ է: Նույնիսկ մահվանից հետո հայրդ միշտ ներկա է:

– Օ՜, չես էլ պատկերացնի՝ ինչ աստիճան...

– Ինչ էլ ասես, մեկ է, շատ ես կարոտում նրան:

– Տարիներ ի վեր ես հարմարվել եմ նրա բացակայությանը: Ու սովորել ապրել առանց նրա...

– Սիրելիս, նույնիսկ այն երեխաները, որ երբեք իսկական ծնողներին չեն տեսել, վաղ թե ուշ իրենց արմատներին վերադառնալու պահանջ են զգում: Իհարկե, դա հաճախ անարդար է այն մարդկանց նկատմամբ, որոնք նրանց սիրել ու մեծացրել են, բայց դա է մարդկային բնությունը: Գիտե՞ս, դժվար է կյանքում առաջ գնալ, երբ չգիտես՝ որտեղից ես գալիս: Ուրեմն, եթե պետք է մեկնես շուրջերկրյա ճամփորդության, որ ի վերջո հասկանաս, թե ով էր քո հայրը, համակերպվես ձեր անցյալի հետ, ապա ճամփա ընկիր:

– Մենք ընդհանուր հիշողություններ շատ քիչ ունենք:

– Իսկ գուցե ավելի՞, քան կարծում ես: Կյանքումդ մի անգամ մի կողմ դիր հպարտությունդ, որն ինձ շատ է դուր գալիս, ու մեկնիր էդ ճամփորդությանը: Եթե քեզ համար չէ, գոնե արա դա իմ կյանքի ամենաթանկ մարդկանցից մեկի համար. մի օր կծանոթացնեմ ձեզ, նա աշխարհի ամենալավ մաման է:

– Էդ ո՞վ է,– Ջուլիայի ձայնի մեջ խանդի ելևէջներ թրթռացին:

– Դա դու ես՝ մի քանի տարի անց:

– Դու անփոխարինելի ես, իմ Սթենլի,– բացականչեց Ջուլիան՝ Սթենլիի այտին մի համբույր դրոշմելով:

– Ես կապ չունեմ, ջանիկս, էս թեյի ազդեցությունն է:

– Ուրեմն շնորհավորիր Վիետնամի քո ընկերոջը, նրա թեյն իրոք կախարդական հատկություն ունի,– դուրս գալով՝ բացականչեց Ջուլիան:

– Եթե էդքան շատ դուրդ եկավ, սրտիկ, մի քանի տուփ կվերցնեմ, հետ գալուց կգաս կտանես: Անկյունի խանութից եմ առել:

## 7

Ջուլիան չորս-չորս ցատկելով վեր վազեց աստիճաններով ու մտավ տուն: Հյուրասենյակը դատարկ էր: Նա մի քանի անգամ ձայն տվեց, բայց ապարդյուն: Հյուրասենյակը, բաղնիքը, նույնիսկ վերևի բնակարանը դատարկ էին: Աչքին ընկավ Էնթոնի Ուելշի՝ արծաթազօծ շրջանակով լուսանկարը՝ բուխարու վրա դրված:

– Ո՞ւր էիր,– հարցրեց հայրը՝ հանկարծակիի բերելով նրան:

– Վախեցրիր... Իսկ դո՞ւ ուր էիր:

– Շատ շոյված եմ, որ անհանգստացար ինձ համար: Գնացել էի ման գալու: Էստեղ ձանձրալի էր:

– Էս ի՞նչ է,– հարցրեց Ջուլիան՝ ցույց տալով բուխարուն դրված շրջանակը:

– Վերևի սենյակն էի հավաքում, քանի որ գիշերն էնտեղ պետք է անցկացնեմ, ու պատահաբար գտա զիբիլների մեջ: Ես չեմ կարող քնել մի սենյակում, որտեղ դրված է իմ նկարը: Ու դրա համար բերեցի, դրեցի էստեղ, բայց եթե ուզում ես, կարող ես շպրտել:

– Դեռ ուզո՞ւմ ես ճամփորդության մեկնել,– հարցրեց Ջուլիան:

– Գնացել էի փողոցի ծայրի ճամփորդական գործակալություն: Մարդկային շփումը ոչնչով չես փոխարինի: Մի սիրունիկ ջահել աղջիկ, հա, մի քիչ էլ քեզ էր նման, հատկապես ժպիտը... Ի՞նչ էի ասում:

– Սիրունիկ աղջկանից էիր պատմում...

– Հա, վայ... նա համաձայնեց մի քիչ խախտել օրենքները: Ամբողջ ժամ ու կես ստեղնաշարին կտկտացրեց, էն աստիճան, որ ինձ թվաց՝ Հեմինգուեյի վեպն է մուտքագրում, ու վերջապես հաջողեցրեց տպել տոմսն իմ անունով: Առիթից օգտվելով՝ տեղերը փոխեցի ու բիզնես-կլաս վերցրի:

– Դու վերջն ես: Բայց ինչի՞ց որոշեցիր, որ կհամաձայնեմ գալ:

– Եսիմ: Բայց քանի որ որոշել ես տոմսերը փակցնել քո հիշողությունների ապագա ալբոմում, գոնե բիզնես-կլասի տոմսեր կլինեն: Ընտանեկան պատվի հարց է, թանկագինս:

Ջուլիան ուղղվեց իր սենյակ, ու Էնթոնին հարցրեց՝ հիմա՞ ուր է գնում:

– Շորերս հավաքելու, ԵՐԿՈՒ օրվա համար,– պատասխանեց նա՝ հատուկ շեշտելով օրերի քանակը,– ուզածդ էդ չէ՞ր:

– Մեր արկածը կտևի վեց օր, օրերը փոփոխման ենթակա չեն: Ոնց փորձեցի համոզել Էլոդիին՝ գործակալության հմայիչ աղջկան, նա մնաց անվարան:

– Երկու օր,– գոռաց Ջուլիան:

– Օֆ, ինչ ուզում ես՝ արա: Հեչ որ չէ՝ էնտեղ քեզ շոր կառնենք: Եթե չես նկատել, ասեմ, որ ջինսդ պատռվել է, ու ծունկդ երևում է:

– Իսկ դո՞ւ, ձեռքերդ թափ տալո՞վ ես գնալու,– գլուխը դռնից դուրս հանելով՝ հարցրեց Ջուլիան:

Էնթոնին ուղղվեց դեպի սենյակի մեջտեղում դրված արկղը և դուրս քաշեց երկրորդ բաժինը փակող դռնակը: Ներսում սև կաշվից մի փոքրիկ ճամպրուկ էր դրված:

– Ամենաանհրաժեշտ բաներից մի քանի կտոր դրել են հետս, որ էլեգանտ տեսք ունենամ վեց օրվա ընթացքում, մինչև մարտկոցներս նստեն,– ասաց նա՝ առանց ներքին բավարարվածությունը թաքցնելու,– քո բացակայության ընթացքում ինձ թույլ տվեցի վերցնել փաստաթղթերս, որ քեզ էին տվել: Նաև վերցրի ժամացույցս,– ավելացրեց նա՝ հպարտությամբ ցույց տալով դաստակը:– Հուսով եմ՝ դեմ չես, որ մի քանի օր կապեմ: Հենց հետ գանք, կվերադարձնեմ... Դե, դու հասկանում ես:

– Լավ կլիներ, որ թարգեիր քչփորել իմ եղած-չեղածի մեջ:

– Քո տունը քչփորելը, սիրելիս, անձավագիտությանը հավասար բան է: Վերևում՝ քանդուքարափի մեջ, կրաֆտե[1] ծրարում գտել եմ իմ անձնական իրերը:

Ջուլիան փակեց իր ճամպրուկն ու դրեց մուտքի դռան մոտ: Նա հորը զգուշացրեց, որ դուրս կգա, բայց շուտ կվերադառնա: Հիմա պետք է գնար ու Ադամի մոտ արդարացներ իր մեկնումը:

– Ի՞նչ ես մտածում անել,– հարցրեց Էնթոնի Ուելշը:

– Չե՞ս կարծում, որ դա մեր երկուսի գործն է,– պատասխանեց Ջուլիան:

– Ես թքած ունեմ Ադամի վրա, ինձ դու ես հետաքրքրում:

– Չէ հա: Էդ է՞լ է գրված ծրագրիդ մեջ:

– Ինչ էլ մտքիդ լինի, խորհուրդ կտամ չասել՝ ուր ենք գնում:

---

[1] Կրաֆտ (գերմ.՝ Kraft՝ ուժ) – փաթեթավորման շատ ամուր թուղթ:

– Հիը, ու ես պետք է հետևեմ հորս խորհուրդներին, որը գաղտնիք պահելու մեծ մասնագետ է:

– Ընդունիր որպես ընկերական խորհուրդ: Իսկ հիմա, սիրելիս, թռիր, մենք պետք է մաքսիմում երկու ժամից դուրս գանք:

***

Ջուլիան տաքսուց իջավ Ամերիկայի պողոտայի 1350 համարի շենքի մոտ: Նա մտավ ապակեպատ հսկայական շենքը, որտեղ տեղակայված էր Նյույորքյան շատ հայտնի հրատարակչություններից մեկի մանկական բաժինը: Շենքում բջջայինը չէր բռնում, նա ընդունարանում ներկայացավ ու աշխատակցուհուն խնդրեց միացնել պարոն Քովերմանին:

– Հո բան չի՞ եղել,– Ջուլիայի ձայնը ճանաչելով՝ հարցրեց Ադամը:

– Ժողովի՞ ես:

– Գրքի նմուշն ենք քննարկում, մի քառասունհինգ րոպեից կվերջացնենք: Կուզե՞ս երեկոյան ժամը ութին մեր իտալացու մոտ սեղան պատվիրեմ:

Ադամի աչքն ընկավ հեռախոսի էկրանին:

– Ի՞նչ է, էստե՞ղ ես:

– Ընդունարանում...

– Լավ չստացվեց, հիմա բոլորս հավաքված, նորություններն ենք քննարկում...

– Պետք է խոսենք,– նրան ընդհատեց Ջուլիան:

– Չի լինի՞՝ մինչև երեկո սպասես:

– Ադամ, ես չեմ կարող ընթրել քեզ հետ:

– Գալիս եմ,– հեռախոսը կախեց Ադամը:

Ջուլիան նրան դիմավորեց ընդունարանում, նոր դժբախտություն գուժող մռայլ դեմքով:

– Ներքևում սրճարան կա, արի իջնենք,– ասաց Ադամը:

– Ավելի լավ է դրսում՝ պուրակում քայլենք:

– Ամեն ինչ էդքան վա՞տ է,– հարցրեց Ադամը, երբ դուրս եկան շենքից:

Ջուլիան չպատասխանեց: Նրանք բարձրացան Վեցերորդ պողոտայով: Երեք թաղամաս, ու մտան Կենտրոնական զբոսայգի:

Կանաչապատ ծառուղիները սակավամարդ էին: Ականջակալներով զինված մի քանի վազող, աշխարհից վերացած ու կենտրոնացած իրենց վազքի ռիթմի վրա, անցան նրանց կողքով: Շիկակարմիր մի սկյուռիկ նրանց ընդառաջ վազեց ու թաթիկները վեր բարձրացրեց՝ ուտելիքի ակնկալիքով: Ջուլիան ձեռքը տարավ գրպանն ու մի քանի ընկույզ մեկնեց նրան:

Փոքրիկ կրծողը, ագահ աչքը ընդեղենից չպոկելով, մի պահ վարանեց մոտենալ: Բայց ցանկությունը հաղթեց վախին, արագ շարժումով հափշտակեց ընկույզն ու մի քանի մետր հետ փախավ՝ Ջուլիայի ակնդետ հայացքի տակ ավարը կրծելու:

– Մի՞շտ ես գրպանումդ ընկույզ պահում,– զարմացած հարցրեց Ադամը:

– Գիտեի, որ էստեղ ենք գալու ու տաքսի նստելուց առաջ մի փաթեթ առա,– պատասխանեց Ջուլիան՝ լի ափը մեկնելով սկյուռիկին, որի ընկերներն արդեն եկել, հավաքվել էին:

– Ու դու ինձ գործից կտրեցիր վարժեցնողի հնարքներդ ցուցադրելու համա՞ր:

Ջուլիան խոտի վրա դատարկեց փաթեթում մնացած ընկույզներն ու շարունակեց քայլել: Ադամը հետևեց նրան:

– Ես մեկնում եմ,– տխուր ձայնով ասաց Ջուլիան:

– Ինձ լքո՞ւմ ես,– անհանգստացավ Ադամը:

– Չէ, այ գիժ, մի քանի օրով:

– Քանի՞:

– Երկու կամ վեց, ոչ ավելի:

– Երկու կամ վե՞ց:

– Եսիմ, չգիտեմ:

– Ջուլիա, դու հանկարծակի հայտնվում ես իմ գրասենյակում, դեմքի էնպիսի արտահայտությամբ, ասես աշխարհը փուլ է եկել, ուրեմն խնդրում եմ, մի ստիպիր՝ բերանիցդ խոսքերը մեկ-մեկ աքցանով քաշեմ:

– Քո ժամանակն էդքան թա՞նկ է:

– Լավ, սերս, գազազած ես, հասկանում եմ, բայց ես ի՞նչ կապ ունեմ: Ես քո թշնամին չեմ, Ջուլիա, ես ընդամենը մարդ եմ, որը քեզ սիրում է, ու ասեմ քեզ, էդ հեչ հեշտ չի: Ինչի՞ ես ինձ ստիպում քավել ուրիշի մեղքերը:

– Հորս օգնականն էր առավոտյան զանգել, Ադամ: Ես մի քանի գործ ունեմ վերջացնելու Նյու Յորքից դուրս:

– Որտե՞ղ:

– Վերմոնտից հյուսիս, Կանադայի սահմանի մոտ:

– Կուզե՞ս՝ երկուսով գնանք, շաբաթ-կիրակի:

– Չէ, շատ շտապ է:

– Դրա համա՞ր էին ինձ զանգել ճամփորդության գործակալությունից:

– Քե՞զ: Ու ի՞նչ էին ասում,– կմկմաց Ջուլիան:

– Ինչ-որ մեկը գնացել էր նրանց մոտ: Ու ինձ համար անհասկանալի պատճառով ինձ վերադարձրին միայն իմ տոմսի գումարը, իսկ քոնը՝ ոչ: Ոչ մի բացատրություն չուզեցին տալ: Ես արդեն հանդիպման էի, չէի կարող ուշանալ:

– Երևի հորս օգնականի գործն է, նրա մոտ էդ կարգի բաները լավ են ստացվում, շատ ճարպիկն է:

– Դու գնում ես Կանադա՞:

– Ասեցի՝ սահմանի մոտ:

– Իրո՞ք ուզում ես գնալ, Ջուլիա:

– Կարծում եմ՝ հա,– մռայլ պատասխանեց Ջուլիան:

Ադամն ամուր գրկեց նրան:

– Ուրեմն գնա՝ ուր ուզում ես: Էլ բան չեմ հարցնի: Չեմ հանդգնում երկրորդ անգամ չվստահողի դեր տանել: Համ էլ պետք է վերադառնամ գործի: Կուղեկցե՞ս ինձ:

– Չէ, մի քիչ էլ կմնամ:

– Սկյուռիկներիդ հե՞տ,– հեգնեց Ադամը:

– Ըհը, սկյուռիկներիս հետ:

Ադամը համբուրեց նրա ճակատը, ձեռքով հրաժեշտ տվեց ու շրջվելով՝ հեռացավ:

– Ադա՛մ:

– Ի՞նչ, Ջուլիա:

– Ափսոս, որ հանդիպման ես: Շատ կուզեի...

– Գիտեմ, բայց էս քանի օրը բախտներս չի բերում:

Ադամին օդային համբույր ուղարկեց.

– Իրոք պետք է գնամ, սերս: Վերմոնտից կզանգե՞ս, երբ հասնես:

Ջուլիան հայացքով ճանապարհեց նրան...

***

– Հը, լա՞վ անցավ,– մեծահոգաբար հարցրեց Էնթոնի Ուելշը, երբ դուստրը տուն մտավ:

– Ցնցող:

– Բա ինչի՞ ես թաղման դեմքով: Այսինքն՝ լավ է ուշ, քան երբե՞ք:

– Ես էլ եմ ինձ նույն հարցը տալիս: Երևի որովհետև առաջին անգամ է, որ խաբում եմ իմ սիրած մարդուն...

– Օ՛ ոչ, Ջուլիաս, երկրորդ անգամ, երեկվա մասին մոռացել ես: Բայց թե կուզես, հաշվենք՝ երեկվանը փորձ էր ու չի հաշվվում:

– Հեչ չթեթևացրեց: Ես երկու օրվա մեջ երկու անգամ դավաճանել եմ Ադամին, իսկ նա էնքան նրբանկատ գտնվեց, որ ինձ բաց թողեց առանց ավելորդ հարցեր տալու: Երբ տաքսի նստեցի, հասկացա, որ ես այն կինն եմ, որ երդվել եմ երբեք չլինել:

– Էլ մի չափազանցրու:

– Հաստա՞տ: Քո կարծիքով՝ կա՞ ավելի արգահատելի բան, քան դավաճանել մեկին, ով այնքան է քեզ վստահում, որ հարցեր չի տալիս:

– Էն աստիճան աշխատանքով տարված լինել, որ մոռանալ սիրելիներին:

– Ով էլ ասեր...

– Նա, ով, ասածիդ պես, գործից հասկանում է... Կարծում եմ՝ մեր մեքենան սպասում է: Շտապենք: Փաստաթղթերի ստուգման վրա ավելի շատ ժամանակ ենք ծախսելու, քան ինքնաթիռներում:

Մինչ Էնթոնի Ուելշն իջեցնում էր ճամպրուկները, Ջուլիան պտտվեց բնակարանում: Աչքին ընկավ բուխարու վրա դրված արծաթազօծ շրջանակը. նա շրջեց այն դեմքով դեպի պատն ու դուրս եկավ:

***

Մեկ ժամ անց լիմուզինը դուրս եկավ Ջոն Ֆիցջերալդ Քենեդու օդանավակայան տանող ճանապարհ:

– Կարող էինք տաքսիով գալ,– ասաց Ջուլիան՝ պատուհանից նայելով թռիչքուղու վրա կանգնած ինքնաթիռներին:

– Հա, բայց համաձայնիր, որ էս մեքենան ավելի հարմարավետ է: Մոտիցդ վերցրել եմ կրեդիտ քարտերս, ուքանի որ դու չես պատրաստվում օգտվել իմ ժառանգությունից, գոնե թող ինքս մի քիչ ծախսեմ: Եթե իմանաս՝ ինչքան մարդ է կյանքն անցկացրել իմ պես փող

դիզելով սև օրվա համար, կհասկանաս, որ սա չտեսնված ճոխություն է: Հերիք է, Ջուլիա, դեմքիդ արտահայտությունը փոխիր: Մի քանի օրից հետ կգաս Ադամիդ մոտ, ու հավատա՝ նա քեզ էլ ավելի կսիրի: Լիաթոք վայելիր էս մի քանի օրը հորդ հետ: Հիշիր՝ ե՛րբ ենք մենք վերջին անգամ իրար հետ տեղ գնացել:

– Երբ ես յոթ տարեկան էի, մաման դեռ ողջ էր: Ու մենք երկուսով մեր արձակուրդն անցկացրինք լողավազանի մոտ, մինչ դու դուրս չէիր գալիս հյուրանոցի հեռախոսախցիկից ու հարցեր էիր լուծում,– պատասխանեց Ջուլիան՝ մայթի մոտ կանգնած լիմուզինից դուրս գալով:

– Ես մեղավոր չէի, որ էդ ժամանակ բջջայինները դեռ չէին հորինել,– իր կողմի դուռը բացելով՝ բացականչեց Էնթոնի Ուելշը:

***

Օդանավակայանի միջազգային տերմինալը լեփ-լեցուն էր: Էնթոնին, խոր հոգոց հանելով, միացավ ուղևորների երկար հերթին, որ օձի պես գալարվելով՝ ձգվում էր դեպի գրանցասեղանները: Հոգնեցուցիչ սպասումի պտուղ թանկագին նստեցման կտրոնները ստանալով՝ նրանք մեկ այլ հերթի պոչը բռնեցին, այս անգամ էլ՝ անվտանգությունն անցնելու համար:

– Տես, Ջուլիա, ինչ լարված են բոլորը, էս ձևական քաշքշուկը փչացնում է ճամփորդության հաճույքը: Ու ոնց անես, որ չմեղադրես, անհամբերությունից չգժվես, երբ ստիպում են ժամերով ոտքի վրա մնալ, մինչդեռ ոմանց գրկից երեխաներն են կախված, մյուսների ոտքերից՝ տարիքի ծանրությունը: Քո կարծիքով՝ էս ջահել կինն իր երեխայի կերամանի մեջ ռումբ կմտցնե՞ր: Ծիրանի կոմպոտի ու խնձորի պյուրեի ռումբ...

– Հավատա, անհավանական ոչինչ չկա:

– Դե լավ, արի սթափ մտածենք: Ու ո՞ւր կորան անգլիացի ջենթլմենները, որոնք թեյ էին վայելում բլիցկրիգի ժամանակ:

– Մնացին ռումբերի տակ, հա՞,– շշնջաց Ջուլիան՝ անհարմար զգալով հոր բարձր ձայնից:– Փնթփնթալու բնավորությանդ վերջ չես տվել: Բացի էդ, եթե անվտանգության աշխատակցին բացատրեմ, որ հետս ճամփորդող մարդը հորս տնազն է ու խորանամ մանրուքների մեջ, նա հաստատ մտածելու ունակությունը կկորցնի, չէ՞: Ես իմը թողել եմ հյուրասենյակիս մեջտեղում դրված հսկա արկղի մեջ...

Էնթոնին ուսերը թոթվեց ու առաջ անցավ. անվտանգության շրջանակի միջով անցնելու նրա հերթն էր: Ջուլիան մտքում կրկնեց վերջին արտաբերած միտքն ու հանկարծակի հուզմունքից դողալով՝ ձայն տվեց հորը.

– Արի,– համակած տագնապը խեղդելով՝ բացականչեց նա,– արի գնանք էստեղից, օդանավը հիմար գաղափար էր: Արի մեքենա վարձենք, ես կքշեմ, վեց ժամից կլինենք Մոնրեալում, ու երդվում եմ՝ ճանապարհին կխոսենք: Մեքենայի մեջ ավելի հեշտ է խոսել, համաձայն չե՞ս:

– Քեզ ի՞նչ եղավ, Ջուլիա: Ինչի՞ց վախեցար:

– Չե՞ս հասկանում,– նրա ականջին շշնջաց Ջուլիան,– քեզ երկու վայրկյանում կբռնացնեն: Մեջդ էնքան մետաղ կա, որ դետեկտորների ձայնն աշխարհը կբռնի: Ոստիկանները վրա կհասնեն, քեզ կբռնեն, կսկսեն հետազոտել, ոտքից գլուխ ռենտգեն կանեն ու հետո մասմաս կանեն, որ հասկանան, թե էս ինչ տեխնոլոգիական հրաշք է:

Էնթոնին ժպտաց ու քայլեց դեպի անվտանգության աշխատակիցը: Նա բացեց անձնագիրը, միջից ինչ-որ ծալած թուղթ հանեց, ուղղեց ու մեկնեց նրան:

Վերջինս աչքի անցկացրեց, կանչեց իր վերադասին ու Էնթոնի Ուելշին խնդրեց մի կողմ կանգնել: Ոստիկանության ավագն իր հերթին ծանոթացավ փաստաթղթին ու ըմբռնումով մոտեցավ: Էնթոնի Ուելշին մի կողմ հրավիրեցին, ամենայն զգուշությամբ զննեցին ու թողեցին առաջանալ:

Ջուլիան, մյուս բոլոր ուղևորների պես, ստիպված անցավ բոլոր գործողությունները: Հանել տվեցին կոշիկները ու ջինսի գոտին: Վերցրին մազակալը՝ ասելով, որ շատ երկար ու շատ սուր է, եղունգկտրիչը, որ մոռացել էր պայուսակի մեջ, ու եղունգի խարտոցը, որի երկարությունը երկու սանտիմետրից ավելի էր: Վերջում էլ հանդիմանեցին անպատասխանատվության համար:

Չէ՞ որ ցուցանակների վրա բավական խոշոր տառերով նշված էր այն առարկաների ցանկը, որոնք որ արգելված էր ինքնաթիռ բարձրացնել: Նա հակառակվեց, թե ավելի հեշտ էր նշել այն առարկաների ցանկը, որ թույլատրվում էր վերցնել, ու անվտանգության աշխատակիցը ռազմական սերժանտի ձայնով հարցրեց, թե արդյոք նա խնդիրներ ունի՞ անվտանգության կանոնների հետ: Ջուլիան վստահեցրեց, որ ոչ, որ իր ինքնաթիռը թռչում է քառասունհինգ րոպեից, ու աշխատակցի պատասխանին չսպասելով՝ վերցրեց պայուսակն ու շտապեց միանալ Էնթոնիին, որ հեռվում կանգնած՝ քմծիծաղով հետևում էր:

– Կարո՞ղ եմ հարցնել, ո՞րն է քո առավելությունը:

Էնթոնին թափահարեց ձեռքին բռնած թուղթն ու մեկնեց աղջկան:

– Դու կարդիոստիմուլյատոր ունե՞ս:

– Արդեն տասը տարի է:

– Ինչի՞:

– Որովհետև ինֆարկտ եմ ստացել, ու սիրտս օգնության կարիք ուներ:

– Ե՞րբ:

– Եթե ասեմ, որ մորդ մահվան տարելիցին, կասես, որ դերասանություն եմ անում, չէ՞, Ջուլիա:

– Իսկ ես ինչի՞ չեմ իմացել:

– Երևի շատ էիր զբաղված քո կյանքով ապրելով:

– Ինձ ոչ ոք ոչ մի բան չի ասել:

– Պետք էր նախ քեզ գտնել... Հա, ու համ էլ արի պատմություն չդարձնենք: Առաջին մի քանի ամիսը գժվում էի էն մտքից, որ մեջս պետք է ինչ-որ օտար մարմին լինի: Հիմա հասկանում եմ, որ օտար մարմինն է ինձ պահում: Ո՞ւր ենք գնում: Էսպես ինքնաթիռն էլ բաց կթողնենք,– ասաց Էնթոնի Ուելշը՝ չվերթների ցուցանակներն ուսումնասիրելով:– Հա, լավ, մի ժամ ուշացում է տալիս: Մնում է մենակ, որ ինքնաթիռները ճիշտ ժամանակին թռչեին...

Ջուլիան օգտվեց ազատ ժամանակից, սկսեց ուսումնասիրել գրախանութը: Ստենդի հետևից նա թաքուն հետևում էր հորը, որը սպասասրահում նստած՝ հայացքը հառել էր հեռուներին՝ ինքնաթիռների ուղղությամբ, և Ջուլիան առաջին անգամ զգաց, որ կարոտել էր նրան: Շրջվելով՝ նա հավաքեց Սթենլիի համարը:

– Ես օդանավակայանում եմ,– շշնջաց նա հեռախոսի մեջ:

– Արդեն թռնո՞ւմ ես,– նույնպես շշնջաց ընկերը:

– Մոտդ մարդ կա՞, հո չեմ անհանգստացնում:

– Ես էլ քեզ էի ուզում նույնը հարցնել, ջանիկս...

– Իհարկե ոչ, ես եմ քեզ զանգել,– պատասխանեց Ջուլիան:

– Բա ինչի՞ ես շշուկով խոսում:

– Եսիմ, ես էլ չհասկացա:

– Դու պետք է շուտ-շուտ գաս ինձ մոտ, դու ինձ հաջողություն ես բերում: Քո գնալուց մի ժամ հետո ծախեցի 18-րդ դարի ժամացույցը: Արդեն երկու տարի է՝ մոտս էր:

– Եթե իրոք 18-րդ դարի էր, մի ամիս էսկողմ-էնկողմը էական չէր:

– Նա էլ լավ ստել գիտեր: Չգիտեմ՝ ում հետ ես, չեմ էլ ուզում իմանալ, բայց ինձ հիմարի տեղ մի դիր, գիտես, որ զզվում եմ:

– Դա էն չի, ինչ մտածում ես, հավատա ինձ:

– Հավատքը կրոնի խնդիր է, ջանիկս:

– Կկարոտեմ քեզ, Սթենլի:

– Վայելիր էս մի քանի օրը: Ճամփորդությունները լուսավորում են երիտասարդությանը:

Նա կախեց հեռախոսը՝ Ջուլիայից խլելով վերջին խոսքի իրավունքը: Անջատելուց հետո նայեց հեռախոսին ու ավելացրեց.

– Ում հետ ուզում ես՝ գնա: Բայց չսիրահարվես մի կանադացու, որը քեզ կպահի իր երկրում: Օրն առանց քեզ շատ երկար է, ու տեղդ արդեն զգում եմ:

## 8

Ժամը յոթն անց կեսին «Ամերիկյան ավիաուղիների» համար 4742 ինքնաթիռը վայրէջք կատարեց Մոնրեալի Պիեռ Թրյուդո օդանավակայանում: Մաքսատունն անցան առանց որևէ խնդրի: Մեքենան նրանց դրսում սպասում էր: Ճանապարհին ազատ էր, ու կես ժամ անց նրանք արդեն սլանում էին քաղաքի բիզնես կենտրոնով: Էնթոնին մատնացույց արեց ապակեպատ մի աշտարակ:

– Գիտես, չէ՞, տեսել եմ, թե ոնց էին կառուցում,– հառաչեց նա,– քո տարիքին է:

– Հիմա ինչի՞ ես պատմում:

– Դու մի տարօրինակ սեր ես տածում էս քաղաքի հանդեպ, ու ես որոշեցի քեզ մի հուշ թողնել: Ինչ-որ մի օր էստեղով զբոսնելիս կհիշես, որ հայրդ իր կյանքի մի քանի ամիսն ապրել ու աշխատել է էս աշտարակում: Ու էս փողոցը քեզ ավելի հարազատ կդառնա:

– Օք, կհիշեմ,– պատասխանեց Ջուլիան:

– Չե՞ս ուզում իմանալ՝ ինչով էի զբաղվում:

– Երևի բիզնեսով:

– Օ՛, ոչ: Էդ ժամանակ ես ընդամենը թերթի մի փոքրիկ կրպակ ունեի: Դու գիտեիր, թե ես շապիկո՞վ եմ ծնվել: Չէ... Հաջողությունն ավելի ուշ է վրա հասել:

– Ու երկար ժամանա՞կ ես դրանով զբաղվել,– զարմացած հարցրեց Ջուլիան:

– Մինչև մի օր որոշեցի տաք ըմպելիքներ վաճառել: Այ, էդ ժամանակ սկսվեց իսկական բիզնեսը,– աչքերը փայլեցնելով՝ շարունակեց Էնթոնին,– աշնան սկզբից մինչև գարնան վերջը դրսում փչող սառը քամուց կապտած մարդիկ ներս էին վազում, ու պետք է տեսնեիր, թե ոնց էին նետվում դեպի իմ վաճառած սուրճը, տաք շոկոլադն ու թեյը, որոնց գինը շուկայականից երկու անգամ թանկ էր...

– Իսկ հետո՞:

– Հետո մենյուս թարմացրի սենդվիչներով: Մամադ արևածագից սկսում էր դրանք պատրաստել: Ու մեր բնակարանի խոհանոցը շատ արագ վերափոխվեց իսկական լաբորատորիայի:

– Դուք ապրել եք Մոնրեալո՞ւմ:

– Հա, ապրում էինք սալաթով, խամոնի[1] շերտերով ու փաթեթավորման թղթերով շրջապատված: Իսկ երբ սկսեցի բիզնես կենտրոնի տարբեր հարկերում գտնվող գրասենյակներին առաքման ծառայություն առաջարկել, վարձեցի առաջին աշխատողին:

– Ո՞ւմ:

– Մորդ: Նա աշխատեցնում էր կրպակը, ես առաքում էի պատվերները: Նա էնքա՛ն սիրուն էր, որ մարդ կար՝ օրական չորս պատվեր էր տալիս, մենակ թե գար ու հիանար նրանով: Ինչ ծիծաղել էինք ծիծաղում: Ամեն գնորդ ուներ իր «անձնական անկետան»: Օրինակ՝ 1407 գրասենյակի հաշվապահը մորդ հանդեպ անտարբեր չէր, ու սենդվիչների մեջ ամեն ինչ կրկնակի էր դրվում, իսկ տասնմեկերորդ հարկի աշխատակազմի ղեկավարին չէր սիրում, ու նրա սենդվիչների մեջ դնում էր սալաթի ամենատանջած թերթիկներն ու մանանեխի տակի մնացածը:

Հասան հյուրանոց: Բեռնակիրը նրանց ուղեկցեց ընդունարան:

– Մենք ամրագրում չունենք,– անձնագիրը հյուրանոցի աշխատակցին մեկնելով՝ ասաց Զուլիան:

Աշխատակիցը համակարգչի էկրանի վրա ստուգեց ազատ համարների ցանկը, հետո մուտքագրեց ազգանունը:

– Բայց դուք արդեն սենյակ պատվիրել եք, այն էլ ինչպիսի՛ սենյակ:

Զուլիան զարմանք կտրած նայեց նրան, իսկ Էնթոնին մի քանի քայլ հետ գնաց:

[1] Խամոն – իսպանական ազգային դելիկատես խոզի մսից:

– Պարոն և տիկին Ուելշ... Քովերման,– բացականչեց աշխատակիցը,– ու եթե չեմ սխալվում, ամբողջ շաբաթ հյուրընկալվում եք մեզ մոտ:

– Ոնց ես համարձակվել,– ֆշշացրեց Ջուլիան անմեղ դեմքով կանգնած հորը:

Աշխատակիցը կանխեց հասունացող վեճը:

– Դուք ամրագրել եք...– աշխատակիցը, մտքում հաշվելով «պարոն ու տիկին Ուելշների» տարիքային տարբերությունը, ելևէջող ձայնով ավելացրեց,– հարսանեկան լյուքսը:

– Կարող էիր գոնե ուրիշ հյուրանոց ընտրել,– հոր ականջին շշնջաց Ջուլիան:

– Դա էր փաթեթի մեջ, սիրելիս,– արդարացավ Էնթոնին:– Ապագա ամուսինդ ամբողջական փաթեթ էր վերցրել՝ հյուրանոց ու կեցություն: Փառք Աստծու, գոնե երկանգամյա սննդից է հրաժարվել: Բայց խոստանում եմ, նա ոչ մի վնաս չի կրի, կասենք՝ հաշիվն իմ քարտից քաշեն: Դու իմ ժառանգն ես, էնպես որ դու ես ինձ հյուրասիրում,– ծիծաղեց նա:

– Ես փողի դարդը չեմ,– բորբոքվեց Ջուլիան:

– Հաստա՞տ: Բա ինչի՞:

– Հարսանեկան լյուքսի:

– Ոչ մի պրոբլեմ, ես հարցրել եմ գործակալին, գտնվում է վերջին հարկում, բաղկացած է երկու սենյակից ու հյուրասենյակից: Բարձրությունից վախ չունես, չէ՞:

Ու մինչ Ջուլիան հանդիմանում էր հորը, աշխատակիցը նրանց մեկնեց բանալիներն ու հաճելի կեցություն մաղթեց...

Բեռնակիրը նրանց դեպի վերելակներն առաջնորդեց: Ջուլիան հետ դարձավ ու հարձակվեց ընդունարանի աշխատակցի վրա:

– Դա ամենևին այն չէ, ինչ դուք կարծում եք: Նա իմ հայրն է:

– Ես ոչինչ չեմ կարծում, տիկին,– կարկամած պատասխանեց նա:

– Այո, այո, հենց կարծում եք ու սխալվում եք:

– Օրիորդ, վստահեցնում եմ ձեզ, այստեղ ինչ ասես՝ տեսել եմ,– ասաց ընդունարանի աշխատակիցը՝ սպասասեղանին հենվելով ու առաջ գալով, որ ոչ ոք չլսի,– գերեզմանի պես լուռ եմ,– հավաստիացրեց նա հանգստացնող տոնով:

Ու մինչ Ջուլիան պատրաստվում էր մի կծող պատասխան տալ, Էնթոնին բռնեց նրա թևից ու հեռու քաշեց սպասասեղանից:

– Էդքան դարդ ես անում, թե մարդիկ ինչ կմտածե՞ն:

– Իսկ քո՞ ինչ գործն է:

– Էդպես կորցնում ես մի փոքր կտոր ազատություն ու մի մեծ կտոր լավ տրամադրություն: Արի, արի, բեռնակիրը պահել է վերելակի դուռը, իսկ մենակ մենք չէ, որ պետք է բարձրանանք:

***

Լյուքսը համապատասխանում էր Էնթոնիի պատմածին: Հին քաղաքի կողմը բացվող պատուհաններով երկու սենյակները բաժանված էին փոքրիկ հյուրասենյակով: Ջուլիան հազիվ էր հասցրել պայուսակը դնել մահճակալին, երբ դուռը թակեցին: Սպասավորը ներս բերեց անվավոր սեղանիկը, որի վրա դրված էր դույլիկով շամպայնը, երկու գավաթ ու մի տուփ շոկոլադ:

– Սա ի՞նչ է,– հարցրեց Ջուլիան:

– Տիկին, մեր հյուրանոցը շնորհավորում է ձեզ ամուսնության կապակցությամբ,– պատասխանեց սպասավորը:

Ջուլիան մռայլ հայացքով չափեց նրան ու վերցրեց սեղանիկին դրված երկտողը: Հյուրանոցի տնօրինությունը շնորհակալություն էր հայտնում տեր և տիկին Ուելշ-Քովերմաններին մեղրամիսն իրենց հյուրանոցում անցկացնելու համար: Ամբողջ անձնակազմը գտնվում էր նրանց հայեցողության ներքո՝ անմոռանալի կացություն ապահովելու համար: Ջուլիան պատռեց երկտողը, զգույշ դրեց անվավոր սեղանիկին ու դուռը շխկացրեց սպասավորի քթի տակ:

– Բայց տիկին, սա մտնում է ձեր սենյակի վճարի մեջ,– լսվեց դռան հետևից:

Ջուլիան չպատասխանեց, բայց երբ սեղանիկի անիվների գլգլոցը հեռացավ, բացեց դուռը, հասավ երիտասարդի հետևից, վերցրեց շոկոլադն ու հետ եկավ: Տղան վեր թռավ, երբ 702 համարի լյուքսի դուռը շխկաց երկրորդ անգամ:

– Էս ի՞նչ էր,– սենյակից դուրս գալով՝ հարցրեց Էնթոնի Ուելշը:

– Հեչ,– փոքրիկ հյուրասենյակի պատուհանագոգին նստելով՝ պատասխանեց Ջուլիան:

– Սիրուն տեսարան է, չէ՞,– հարցրեց Էնթոնին՝ հայացքը հառելով հեռվում երևացող Սուրբ Լավրենտիոսին[1]:– Ընտիր եղանակ է, կուզե՞ս՝ գնանքման գանք:

– Հա, էստեղ մնալուց լավ է:

– Ես չեմ ընտրել հյուրանոցը,– պատասխանեց Էնթոնին՝ սվիտերը գցելով դստեր ուսերին:

***

Մոնրեալի հին փողոցներն իրենց ծուռտիկ մայթերով կարող էին մրցել եվրոպական ցանկացած

[1] Գետ Հյուսիսային Ամերիկայի արևելքում:

ամենագեղեցիկ թաղամասի հետ: Զբոսանքն սկսեցին Դ'Արմե հրապարակից. Էնթոնին իր վրա վերցեց աղջկան տիար Մեզոնյովի կյանքը պատմելու պարտականությունը, որի արձանը հպարտ վեր էր խոյանում փոքրիկ ավազանի կենտրոնում: Զուլիան հորանջելով ընդհատեց նրան ու, մենակ թողնելով քաղաքի հիմնադրի հիշատակին նվիրված արձանի դիմաց, գնաց դեպի մի քանի մետր այն կողմ գտնվող ու իրեն ավելի հետաքրքրող կոնֆետ վաճառողի կրպակը:

Մի քանի րոպե անց վերադարձավ կոնֆետներով լի տոպրակով, մեկնեց հորը, բայց վերջինս հրաժարվեց, ինչպես կասեին քվեբեկցիները՝ բերանը հավի տուտուզի պես հավաքելով: Զուլիան նայեց իր պատվանդանին հպարտ կանգնած տիար Մեզոնյովին, հետո՝ հորը, հետո կրկին բրոնզե արձանին, ու գլխով հավանության նշան տվեց:

– Ի՞նչ,– հարցրեց Էնթոնին

– Ոնց որ մի խնձորի երկու կես լինեք, իրար հետ լավ յոլա կգնայիք:

Նա հորը քարշ տվեց Նոտր Դամ փողոց: Էնթոնին ցանկություն հայտնեց կանգնել 130 համարի շենքի մոտ: Սա քաղաքի ամենահին շինությունն էր, բացատրեց նա աղջկան, որտեղ դեռ ապաստանում են մի քանի սուլպիցիեններ, որոնք նախկինում տիրում էին այդ կղզուն[1]:

Զուլիան կրկին հորանջեց ու հապշտապ անցավ բազիլիկի մոտով՝ վախենալով, թե հայրը կուզենա ներս մտնել:

---

[1] Սուրբ Սուլպիցիոսի միաբանության հոգևորականներ:

– Չես պատկերացնի՝ ինչ ես կորցնում,– հետևից ձայնեց Էնթոնին, մինչ Ջուլիան արագացրեց քայլերը:– Կամարները զարդարված են աստղազարդ երկնքի պես:

– Հիմա արդեն գիտեմ,– հեռվից կանչեց Ջուլիան:

– Աղջիկս, քեզ էստեղ ենք մկրտել,– ստիպված եղավ գոռալ Էնթոնին:

Ջուլիան կտրուկ կանգ առավ, շրջվեց հոր կողմն ու թոթվեց ուսերը:

– Լավ, արի գնանք տեսնենք,– հետաքրքրությունից դրդված՝ հանձնվեց Ջուլիան՝ բարձրանալով Մոնրեալի Աստվածամոր տաճարի աստիճաններով:

Տաճարի ներսն իրոք հիասքանչ էր: Շքեղ փայտաքանդակներով զարդարված կենտրոնական մուտքն ու գմբեթը ասես պատված լինեին լաջվարդով: Հմայված՝ Ջուլիան մոտեցավ խորանին:

– Ավելի շքեղ բան չեմ տեսել,– շշնջաց նա:

– Ուրախ եմ, որ դուրդ եկավ,– ցնծալով պատասխանեց Էնթոնին

Հայրը Ջուլիային առաջնորդեց Սակրե Կյոր:

– Իրո՞ք ինձ էստեղ եք կնքել,– հարցրեց Ջուլիան:

– Իհարկե ոչ: Մամադ աթեիստ էր, էդպես էլ թույլ չտվեց:

– Բա ինչի՞ խաբեցիր:

– Որ մտնես ու տեսնես էս գեղեցկությունը,– պատասխանեց Էնթոնին՝ ուղղվելով դեպի տաճարի արքայական փայտե դռները:

Սեն-Ժակ փողոցի սյունաշար շենքերի սպիտակ ճակատամասերն այնքան նման էին Ուոլլ Սթրիթի շենքերին, որ Ջուլիային մի պահ թվաց, թե գտնվում է Մանհեթենի հարավում: Սեն-Էլեն փողոցի լապտերները նոր էին վառվել: Ոչ շատ հեռու, երբ հասան կանաչ սիզամարգերով զարդարված ծառուղուն, Էնթոնին հանկարծ հենվեց

նստարանին ու քիչ մնաց ընկներ: Նա ձեռքի շարժումով հանգստացրեց իր կողմ շտապող Ջուլիային:

– Վախենալու բան չկա, ծնկիս հոդի մեջ կարճ միացում տվեց:

Ջուլիան նրան օգնեց նստել:

– Շա՞տ է ցավում:

– Ավաղ, արդեն քանի օր է՝ ես ոչ մի ցավ չեմ զգում,– դեմքը ծամածռելով ասաց նա,– փաստորեն՝ մահվան մեջ էլ ինչ-որ լավ բան կա:

– Հերիք է, հա: Ինչի՞ ես դեմքդ խառնել: Մեկը կմտածի՝ իրոք ցավում է:

– Կարծում եմ՝ ծրագիրն է էդպես գրված: Համաձայնիր, որ եթե ինչ-որ տեղդ վնասես ու դեմքդ ցավ չարտահայտի, առնվազն տարօրինակ կթվա:

– Լավ, մանրամասներն ինձ պետք չեն: Օգնե՞մ:

Էնթոնին գրպանից մի սև նոթատետր ու գրիչ հանեց և մեկնեց Ջուլիային:

– Կնշե՞ս, որ երկրորդ օրը աջ ոտքս խնդիր առաջացրեց: Հաջորդ կիրակի դու պետք է նրանց հանձնես տետրը: Այն կօգնի բարելավել ապագա մոդելները:

Ջուլիան լուռ էր. ձեռքը սկսեց դողալ, երբ սպիտակ թղթին էր հանձնում հոր բառերը:

Էնթոնին նկատեց ու ձեռքից վերցրեց գրիչը:

– Դե լա՛վ, հա, Ջուլիա, բան չկա: Տես, քայլել կարող եմ,– վեր կենալով՝ ասաց նա:– Ընդամենը մի պստիկ անսարքություն, որ ինքն իրեն կանցնի: Ինչ-որ բան ֆիքսելու կարիք չկա:

Միաձի զբոսակառքը շարժվում էր դ'Յուվիլ հրապարակով, ու Ջուլիան հայտարարեց, որ միշտ երազել է կառքով պտտվել: Հազար անգամ զբոսնել է Կենտրոնական զբոսայգով, բայց երբեք չի հանդգնել կառք նստել, հիմա իսկ և իսկ ժամանակն էր: Էնթոնին

սարսափով նայեց նրան, բայց Ջուլիան հասկացրեց, որ ընդվզելն անիմաստ է: Նա մռթմռթալով կառք բարձրացավ.

– Խայտառակ եղանք, խայտառակ եղանք...

– Դու չէի՞ր ասում, որ հետաքրքիր չէ, թե մարդիկ ինչ կմտածեն:

– Հա, բայց ամեն ինչ չափ ու սահման ունի:

– Միասին ճամփորդելը քո գաղափարն էր, ու ըհը, ճամփորդում ենք,– պատասխանեց Ջուլիան:

Էնթոնին անհանգստացած աչքը չէր կտրում ձիու գավակից, որը ամեն քայլի հետ համաչափ օրորվում էր:

– Զգուշացնում եմ, որ եթե հանկարծ էս հաստակաշին պոչը վեր տնկի, ես միանգամից իջնում եմ:

– Ձիերը չեն պատկանում հաստակաշիների ընտանիքին,– ուղղեց Ջուլիան:

– Էս քամակո՞վ: Կներես, բայց ստիպված եմ չհամաձայնել:

***

Ջբոսակառքը կանգ առավ հին նավահանգստում՝ պանդոկի մոտ: Նավամատույցում հին հողմաղացի տեղը վեր բարձրացող ցորենի վիթխարի ամբարները լրիվ ծածկում էին դիմացի ափը: Դրանց հսկայական սապատներն ասես դուրս էին պրծել ջրից ու խոյացել երկինք:

– Արի գնանք էստեղից,– դժգոհ ասաց Էնթոնին:– Ամբողջ կյանքս ատել եմ էս բետոնե հրեշներին, որ այլանդակում են հորիզոնը: Չեմ հասկանում, թե ինչի մինչև հիմա չեն քանդել:

– Երևի որովհետև ազգային արժեք են համարվում,– պատասխանեց Ջուլիան:– Համ էլ, երևի մի օր մենք հասկանանք դրանց գեղեցկությունը:

– Ինչ լավ է՝ էդ օրը ես չեմ լինի, կարծում եմ՝ դու էլ:

Նրանք զբոսնեցին հին նավահանգստի ափի երկայնքով: Հետո շրջեցին Սուրբ Լավրենտիոս գետեզրի կանաչ ծառուղով: Ջուլիան հորից մի քանի քայլ առաջ էր ընկել: Երկնքում ճախրող ծովորորները գրավեցին նրա ուշադրությունը: Ջուլիան վեր նայեց: Երեկոյան զեփյուռը խառնեց աղջկա մազերի փունջը:

– Ո՞ւր ես նայում,– հարցրեց Ջուլիան հորը:

– Քեզ եմ նայում:

– Ու ի՞նչ ես մտածում:

– Որ շատ սիրուն ես ու մամայիդ ես նման,– պատասխանեց նա՝ աննկատ ժպտալով:

– Սոված եմ,– հայտարարեց Ջուլիան:

– Մի քիչ էլ գնանք ու կնստենք քո ուզած տեղում: Էս նավամատույցները լիքն են պստիկ ռեստորաններով, որոնք... մեկը մյուսից ահավոր են...

– Ու ո՞րն է ամենավատը՝ ըստ քեզ:

– Մի անհանգստացիր, ես վստահում եմ մեր ճաշակին, երկուսով հաստատ մի բան կգտնենք:

Ճանապարհին Ջուլիան ու Էնթոնին պտտվեցին փոքրիկ խանութներով: Հին նավամատույցը գնում, կորչում էր Սուրբ Լավրենտիոսի գրկում...

– Տեսա՞ր էն մարդուն,– բացականչեց Ջուլիան՝ ամբոխի մեջ մի տղամարդու կերպարանք մատնացույց անելով:

– Ի՞նչ մարդ:

– Պաղպաղակ վաճառողի մոտ, սև պիջակով,– հստակեցրեց Ջուլիան:

– Բան չեմ տեսնում:

Ջուլիան քաշեց Էնթոնիի թևից՝ ստիպելով արագացնել քայլերը:

– Ի՞նչ օձ կծեց քեզ:

– Արագացրու, թե չէ կկորցնենք նրան:

Նավամատույցում հայտնված զբոսաշրջիկների խումբը հանկարծ կլանեց Ջուլիային:

– Բան ասա, բան հասկանամ,– խռխռացրեց Էնթոնին, որ հազիվ էր հասցնում նրա հետևից:

– Ասում եմ՝ արի,– առանց նրանց սպասելու՝ կարգադրեց Ջուլիան:

Բայց Էնթոնին հրաժարվեց մեկ քայլ անգամ առաջ գնալ, նստեց նստարանին, ու Ջուլիան, նրան թողնելով այդտեղ, համարյա վազելով հեռացավ՝ փնտրելու այն առեղծվածային մարդուն, որը կարծես գրավել էր նրա ամբողջ ուշադրությունը: Մի քանի րոպե անց վերադարձավ՝ լրիվ հուսահատված:

– Կորցրի...

– Կբացատրե՞ս՝ ինչ ես անում:

– Ինձ թվաց, թե ներքևում՝ շրջիկ վաճառականների մոտ, տեսա քո օգնականին:

– Իմ օգնականը արտասովոր դեմք չունի: Նա նման է աշխարհի բոլոր մարդկանց, ու բոլորը նման են նրան: Հաստատ սխալվել ես:

– Բա ուրեմն ինչի՞ էդպես հանկարծակի կանգ առար:

– Ծնկիս հոդը...– խղճալի պատասխանեց Էնթոնի Ուելշը:

– Յա՛, բա ասում էիր՝ ցավ չես զգում:

– Էլի էս ախմախ ծրագիրն է մեղավոր: Հետո, մի քիչ ներողամիտ եղիր, ես իմ տերը չեմ, ես ընդամենը բարդ համակարգված մեքենա եմ... Ու եթե նույնիսկ էդպես է, Ուոլեսն ազատ, թոշակառու մարդ է, ու իրավունք ունի գնալ՝ ուր կուզի:

– Բայց արի ընդունիր, որ շատ տարօրինակ համընկնում է:

– Աշխարհը շատ փոքր է: Բայց վստահեցնում եմ, որ շփոթել ես մեկի հետ: Ասում էիր՝ սոված ես, չէ՞:

Ջուլիան հորն օգնեց վեր կենալ:

– Ոնց որ թե ամեն ինչ տեղն ընկավ,– ոտքը թափահարելով՝ ասաց Էնթոնին:– Տես, նորից կարող եմ ցատկոտել: Արի մի քանի քայլ էլ անենք, նոր նստենք:

***

Գարնան գալուն պես ամեն տեսակի հուշանվերներ, կեղծ ապրանք ու զարդեղեն վաճառողներն իրենց սեղանիկները շարել էին նավամատույցով մեկ:

– Արի, արի էսկողմ գնանք,– Էնթոնին աղջկան քաշեց դեպի ամբարտակ:

– Բայց մենք գնում էինք ուտելու...

Էնթոնին ցույց տվեց մի երիտասարդ, սիրունիկ աղջկա, որն ածխամատիտով ու ընդամենը տասը դոլարով նկարում էր անցորդներին:

– Ոսկի ձեռքեր ունի,– բացականչեց Էնթոնին՝ նրա գործերն ուսումնասիրելով:

Հետևի ճաղավանդակին ամրացված էսքիզներն ու զբոսաշրջիկի դիմանկարը, որ այդ պահին նկարում էր, վկայում էին աղջկա տաղանդի մասին: Ջուլիան առանձնապես չհուզվեց. երբ սոված էր, աչքին ոչինչ չէր երևում: Իսկ նա գայլի ախորժակ ուներ: Նրա հավեսով ուտելը միշտ հիացրել էր շրջապատի մարդկանց՝ թե աշխատակիցներին, թե նրանց, ովքեր ինչ-որ կապ են ունեցել նրա հետ: Մի անգամ Ադամը նրա դիմաց նրբաբլիթների մի ամբողջ բուրգ դրեց: Ջուլիան արդեն հարձակվել էր յոթերորդ նրբաբլիթի վրա, մինչդեռ Ադամը հինգերորդից հետո հանձնվել ու արդեն տառապում էր մարսողության խանգարումից: Ամենաանարդարն այն էր, որ դա Ջուլիայի կառուցվածքի վրա ընդհանրապես չէր անդրադառնում...

– Գնացի՞նք,– ասաց նա:

– Սպասիր,– պատասխանեց Էնթոնին՝ գրավելով հենց նոր վեր կացած զբոսաշրջիկի տեղը:

Ջուլիան աչքերը երկինք հառեց:

– Ի՞նչ են անում,– անհամբեր հարցրեց նա:

– Ուզում եմ ինձ նկարեն,– զվարթ առարկեց Էնթոնին: Ու դիմելով ածխամատիտը սրող նկարչուհուն՝ հարցրեց,– դիմացի՞ց, թե՞ պրոֆիլից:

– Երեք քառորդո՞վ,– առաջարկեց երիտասարդ կինը:

– Աջի՞ց, թե՞ ձախից,– ճշտեց Էնթոնին՝ աթոռակի վրա այս ու այն կողմ պտտվելով:– Ինձ միշտ ասել ես, որ պրոֆիլս այս կողմից ավելի սիրուն է: Դուք ի՞նչ կասեք: Իսկ դո՞ւ, Ջուլիա, դո՞ւ ինչ ես մտածում:

– Ոչ մի բան, ընդհանրապես ոչ մի բան,– պատասխանեց վերջինս՝ մեջքը դարձնելով հորը:

– Ինչքան զիբիլ կոնֆետ կար՝ կերար, էնպես որ, ստամոքսդ հաստատ մի ժամ էլ կհամբերի: Զարմանում եմ, որ էդքան քաղցր ուտելուց հետո դեռ սոված ես:

Նկարչուհին ըմբռնողաբար ժպտաց Ջուլիային:

– Հայրս է, մի քանի տարի է՝ իրար չէինք տեսել, շատ զբաղված էր ինքն իրենով: Մեր վերջին զբոսանքի ժամանակ ինձ տարել է մանկապարտեզ: Նոր-նոր ենք սկսել շփվել: Հանկարծ նրան չասեք, որ ես արդեն երեսունն անց եմ, կարող է շոկի մեջ ընկնի:

Նկարչուհին մատիտը մի կողմ դրեց ու նայեց Ջուլիային:

– Եթե դուք շարունակեք ինձ ծիծաղեցնել, նկարս կփչացնեմ:

– Տեսնո՞ւմ ես,– միացավ Էնթոնին,– դու օրիորդին խանգարում ես աշխատել: Գնա նայիր կախած նկարները, շուտով կվերջացնենք:

– Նա թքած ունի նկարի վրա, եկել նստել է, որովհետև դուք նրա դուրն եկել եք,– բացատրեց Ջուլիան նկարչուհուն:

Էնթոնին աղջկան նշան արեց մոտենալ, ասես ինչ-որ կարևոր գաղտնիք ուներ ասելու: Դեմքը ծամածռելով՝ Ջուլիան կռացավ դեպի հայրը:

– Քո կարծիքով,– շշնջաց վերջինս նրա ականջին,– քանի երիտասարդ կին կա, որ տեսել է, թե ինչպես են նկարում իրենց հորը մահվանից երեք օր անց: Հը՞:

Պատասխան չգտնելով՝ Ջուլիան մի կողմ քաշվեց:

Նստած դիրքից չշեղվելով՝ Էնթոնին հետևում էր Ջուլիային, մինչ վերջինս նայում էր նկարները, որոնք չէին գտել իրենց տերերին, կամ նկարչուհին նկարել էր իր հաճույքի կամ ձեռքը բացելու համար:

Ու հանկարծ Ջուլիայի դեմքը քարացավ, աչքերը չռվեցին, բերանը բացուփակ արեց, ասես օդը չէր հերիքում: Հնարավո՞ր էր արդյոք, որ աճխամատիտի մի քանի հարված կարողանար այդպես տակնուվրա անել հիշողությունները: Ճաղավանդակին կախված այդ դեմքը, կզակի ներքևի փոսիկը, այս նուրբ գիծը, որ ընդգծում էր այտոսկրերը, թղթից հառած այս հայացքը, որից աչք կտրել չէր լինում, այս հանդուգն ճակատն անցած տարիներից այնքան հիշողություններ վեր հանեցին:

– Թոմա՞ս,– կմկմաց նա...

## 9

1989 թվականի սեպտեմբերի մեկին լրացավ Ջուլիայի տասնութ տարին: Եվ այդ օրը տոնելու համար նա պատրաստվում էր լքել քոլեջը, որտեղ նրան գրանցել էր Էնթոնի Ուելշը՝ հոր ընտրածից կտրականապես տարբեր բնագավառում միջազգային փոխանակման մի ծրագրի մասնակցելու համար:

Գումարը հավաքել էր անհատական դասընթացներ անցկացնելով, վերջին ամիսներին գրաֆիկայի ամբիոնում թաքուն մոդել աշխատելով, համակուրսեցիների հետ թուղթ խաղալով ու հաղթելով ու համառ ջանքերով պոկած կրթաթոշակից: Պետք եղավ ներգրավել Էնթոնի Ուելշի օգնականին, որ ֆակուլտետի դեկանը, իմանալով հոր կարողության մասին, չընդվզի ու չմերժի նրա դիմումը: Ուոլեսը համաձայնեց դժկամորեն, անընդհատ մռթմռթալով՝ «Օրիորդ Ուելշ, այս ինչ հանցանքի մեջ եք ինձ ներքաշում: Եթե ձեր հայրն իմանա...», ստորագրեց ձևաթուղթը, որ վկայում էր, որ իր գործատուն երկար ժամանակ է արդեն՝ չէր հոգում սեփական դստեր ծախսերը: Փաստաթղթերը ներկայացնելուց հետո միայն Ջուլիան կարողացավ համոզել համալսարանի ղեկավարությանն ու ստանալ կրթաթոշակը:

Հետո եղավ այցելությունը Պարկ պողոտայի վրա գտնվող հոր տուն, որտեղ աղմկալի ու բուռն վեճից հետո վերցրեց իր անձնագիրը, ուժգին շխկացրեց դուռը, նստեց ավտոբուս, ժամանեց ՋՖՔ օդանավակայան և 1989 թվականի հոկտեմբերի 6-ի վաղ առավոտյան հասավ Փարիզ:

Ու հանկարծ նա վերհիշեց ուսանողական սենյակը: Փայտե սեղանը, որ կպած էր Աստղադիտարանի տանիքների կողմը բացվող աննկարագրելի տեսարանով պատուհանին, երկաթյա աթոռը, դարավոր լամպը, կոշտ, բայց բուրումնավետ անկողիններով մահճակալները, երկու ընկերուհիներին, որ ապրում էին նույն սանդղահարթակում, ու որոնց անուններն արդեն չէր հիշում:

Սեն-Միշել բուլվարը, որտեղով ամեն օր ոտքով գնում էր Գեղարվեստի ազգային բարձրագույն դպրոց: Արագո բուլվարի անկյունի սրճարանն ու նրա հաճախորդներին,

որ ամեն առավոտ ծխում էին բարի մոտ ու կոնյակով սուրճ խմում: Անկախության մասին երազանքներն իրականացել էին, ու ոչ մի ֆլիրտ չպետք է խանգարեր սովորելուն: Առավոտից իրիկուն, գիշեր ու ցերեկ Ջուլիան նկարում էր: Նա նստել էր Լյուքսեմբուրգյան պարտեզի գրեթե բոլոր նստարաններին, անցել բոլոր ծառուղիներով, պառկել արգելված սիզամարգերին՝ հետևելով ցատկոտող, անճարակ ճնճղուկներին. միայն նրանց արգելված չէր սիզամարգի վրա թռվռալ: Հոկտեմբերն անցել էր, և Ջուլիայի փարիզյան առաջին աշնան արշալույսները ձուլվել էին նոյեմբերյան մոխրագույն օրերի մեջ:

Արագոյի սրճարանում բոլոր երեկոների պես մի երեկոյի Սորբոնի ուսանողները բուռն քննարկում էին Գերմանիայում տեղի ունեցող դեպքերը: Սեպտեմբերի սկզբից հազարավոր գերմանացիներ ԳԴՀ-ից փորձել էին հատել հունգարական սահմանը՝ արևմուտք տեղափոխվելու համար: Նախօրեին մոտ մեկ միլիոն ցուցարարներ դուրս էին եկել Բեռլինի փողոցներ:

– Սա պատմական իրադարձություն է,– բացականչեց նրանցից մեկը:

*Անպուանն էր:*

Հիշողությունների հզոր ալիքը համակեց նրան:

– Պետք է գնալ էնտեղ,– առաջարկեց մյուսը:

*Սա էլ Մաթիասն էր: Հիշում եմ՝ անդադար ծխում էր, շուկ բորբոքվում, խոսում անդադար, իսկ եթե հանկարծ ասելու բան չէր ունենում՝ ցածրաձայն երգում էր: Երբեք չեմ հանդիպել մեկին, ով այդքան վախենար լռությունից:*

Համակիրները հավաքվեցին: Նույն գիշեր մի մեքենա կուղղվի Գերմանիա: Մեկը մեկին փոխարինելով՝ նրանք ակնկալում էին կեսօրից առաջ հասնել Բեռլին:

Տեսնես ի՞նչը դրդեց Ջուլիային ձեռք բարձրացնել, ի՞նչ ուժ նրան ստիպեց մոտենալ Սորբոնի ուսանողների սեղանին:

– Կարո՞ղ եմ ես էլ գալ ձեզ հետ,– հարցրեց նա:

*Հապ-հապ հիշում եմ բոլոր բառերը:*

– Վարել գիտեմ ու ամբողջ օրը քնած եմ եղել:

*Խաբեցի:*

– Ժամերով կարող եմ մնալ ղեկին:

Անտուանը խորհրդակցեց մյուսների հետ: *Տեսնես Անպուա՞նն էր, թե՞ Մաթիասը:* Այսինքն՝ ինչ կարևոր էր, մեծամասնության որոշմամբ Ջուլիան ստացավ հերոսամարտին մասնակցելու թույլտվություն:

– Ամերիկացի է, մենք նրանց դեռ պարտք ենք,– ավելացրեց Մաթիասը, մինչ Անտուանը դեռ երկմտում էր:

Ու ձեռքը բարձրացնելով՝ ավելացրեց.

– Իր երկիր վերադառնալով՝ նա կպատմի հեղափոխությունների հանդեպ ֆրանսիացիների համակրանքի մասին:

Աթոռները մի կողմ քշվեցին, ու Ջուլիան տեղավորվեց իր նոր ընկերների կողքին: Քիչ անց Արագո բուլվարում Ջուլիան մի քանի հոգու հետ գրկախառնվեց, մի քանի անծանոթի համբուրեց. ոչ ոքի չէր ճանաչում, բայց քանի որ ճանապարհ էր ընկնելու, պետք էր հրաժեշտ տալ Փարիզում մնացողներին: Հազարավոր կիլոմետրեր պետք է անցնեին, ձգձգելու ժամանակ չկար:

Նոյեմբերի 7-ի երեկոյան, Սենայի երկայնքով՝ Բերսիի առափնյա ափով բարձրանալով, Ջուլիան վայրկյան անգամ չէր կասկածում, որ ընդմիշտ հրաժեշտ է տալիս Փարիզին ու էլ երբեք չի տեսնի Աստղադիտարանի տանիքները ուսանողական հանրակացարանի պատուհանից:

Սանլի, Կոմպյենյե, Ամյեն, Կամբրե... ցուցանակների վրա գրված անծանոթ քաղաքների առեղծվածային անունները լողում էին աչքի առաջ:

Կեսգիշերին մոտ համարյա հասել էին Բելգիա, ու Վալանսյենի մոտ Ջուլիան նստեց ղեկին:

Սահմանին մաքսավորներին անհանգստացրեց Ջուլիայի ամերիկյան անձնագիրը, բայց Գեղարվեստի դպրոցի ուսանողական տոմսը փրկեց իրավիճակը, ու ճամփորդությունը շարունակվեց:

*Մաթիասն անդադար երգում էր՝ նյարդայնացնելով Անտրուանին, իսկ ես փորձում էի մտապահել ինձ համար դեռ անհասկանալի բառերը, որ չքնեմ:*

Հիշողությունները Ջուլիային ստիպեցին ժպտալ: Այլ հուշեր ևս հորդեցին: Ճանապարհի առաջին կանգառը: Փողերը հաշվեցինք. հերիքում էր բագետի ու մի քանի շերտիկ խամոնի համար: Ջուլիայի պատվին մի շիշ կոկա-կոլա գնեցին, որից նա ընդամենը մի կում հաստրեց անել:

Ուղեկիցները շատ արագ էին խոսում, ու շատ բան չէր հասկացվում: Իսկ նա մտածում էր, թե ֆրանսերենի վեցամյա դասընթացից հետո արդեն համարյա ֆրանսուհի է... *Ինչի՞ էր պապան ուզում, որ ես սովորեմ էս լեզուն: Ի հիշապակ Մոնրեալում անցկացրած ամիսների՞:* Բայց արդեն պետք է ճանապարհ ընկնեին:

Մոնսից հետո՝ Լա Լուվյերի ճամփաբաժնի մոտ, ճանապարհը խառնեցին: Բրյուսելը մի այլ ավանտյուրա էր: Այստեղ էլ էին ֆրանսերեն խոսում, բայց արտասանությունը շատ ավելի ընկալելի էր ամերիկացու համար, նույնիսկ երբ շատ արտահայտություններ շարունակում էին անծանոթ մնալ: Իսկ տեսնես ի՞նչն այդքան զվարճացրեց Մաթիասին, երբ անցորդներից մեկը նրանց սիրալիր ցույց տվեց Լիեժ բարձրացող ճամփան:

Անտուանի հաշվարկներով՝ ճամփաբաժին վերադարձը կտևեր մեկ ժամ, ու խնդրում էր արագացնել: Հեղափոխությունը նրանց չի սպասի: Նոր նշումներ քարտեզի վրա, կտրուկ շրջադարձ. ճանապարհը հյուսիսով շատ երկար կտևեր, ու նրանք որոշեցին գնալ հարավով՝ Դյուսելդորֆով:

Բայց նախ պետք է անցնեին ֆլամանդական Բրաբանտով: Այստեղ ֆրանսերեն գրեթե չէին խոսում: Ի՞նչ արտասովոր երկիր է՝ մի քանի կիլոմետր հեռավորության վրա մարդիկ երեք լեզվով էին խոսում: «Կոմիքսների ու կատակի երկիր»՝ պատասխանեց Մաթիասը՝ Ջուլիային հորդորելով ավելի արագ քշել: Լիեժին մոտենալիս Ջուլիայի աչքը կպավ, ու մեքենան մի կողմ քաշեց:

Կանգ առան շտապօգնության շարքում՝ էմոցիաները կարգավորելու համար. Անտուանը Ջուլիային հանդիմանեց ու աքսորեց հետևի նստարան:

Պատիժն անցավ էր. Ջուլիան չիմացավ էլ, թե ինչպես անցան արևմտյան անձնագրային կետը: Մաթիասը, որ դեսպան հոր շնորհիվ դիվանագիտական անցաթուղթ ուներ, կարողացել էր համոզել սահմանապահներին, որ գիշերվա այդ ուշ ժամին իր «քրոջը», որ հենց նոր էր ժամանել Միացյալ Նահանգներից, չարթնացնեն:

Կարեկից սահմանապահը բավարարվեց՝ ստուգելով ձեռնոցի տուփի մեջ պահվող փաստաթղթերը:

Ջուլիան աչքերը բացեց արդեն Դորտմունդում: Միաձայն (իրեն բան չէին հարցրել) որոշվել էր դադար առնել ու նախաճաշել իսկական սրճարանում: Նոյեմբերի 8-ի առավոտն էր, երբ Ջուլիան կյանքում առաջին անգամ արթնացավ Գերմանիայում: Վաղն իր ճանաչած աշխարհը փլուզվելու էր՝ երիտասարդ աղջկա կյանքը անսպասելիորեն հորձանուտը նետելով:

Բիլեֆելդն անցան, մոտենում էին Հանովերին, երբ Զուլիան դարձյալ նստեց ղեկին: Անտուանը փորձեց ընդվզել, բայց ո՛չ նա, ո՛չ Մաթիասն արդեն ի վիճակի չէին վարել, իսկ մինչև Բեռլին դեռ երկար ճանապարհ կար: Երկու ընկերներն անմիջապես քնեցին, իսկ Զուլիան կարողացավ վերջապես մի քանի րոպե վայելել լռությունը: Համարյա հասել էին Հելմշտադ: Տհաճ տեսարան էր. նրանց դիմաց փշալարերով գծված էին արևելյան Գերմանիայի սահմանները: Մաթիասն աչքերը կիսաբաց արեց ու Զուլիային հրամայեց մայթեզրի մոտ կանգնել:

Դերերը վերաբաշխվեցին. Մաթիասը նստեց ղեկին, Անտուանը՝ կողքին, իսկ Զուլիային ուղարկեցին հետև: Մաթիասի դիվանագիտական անցաթուղթը կախարդական փայտիկի պես պետք է սահմանապահներին համոզեր նրանց բաց թողնել: «Գլխավոր փորձն ենք անում»,– հրամայեց Մաթիասը: Ոչ մի բառ իրական մտադրությունների մասին: Եթե հարցնեն ԳԴՀ այցի նպատակը, Մաթիասը կպատասխանի, որ եկել են այցելելու իր դիվանագետ հորը, որը հիմա պաշտոնավարում է Բեռլինում, Զուլիան էլ կտանի իր ամերիկացու դերը, որի հայրը ևս պաշտոնավարում է Բեռլինում: «Իսկ ե՞ս»,– հարցրեց Անտուանը: «Իսկ դու ծպտուն չհանես»,– մեքենան տեղից պոկելով՝ պատասխանեց Մաթիասը:

Ճանապարհն աջ կողմից եզերված էր եղևնիների խիտ անտառով: Շուտով անտառեզրին երևացին պահակակետերի մութ ուրվագծերը: Տարածքն այնքան մեծ էր, որ տարանցիկ երկաթուղային կայարանի տպավորություն էր թողնում: Մեքենան խցկվեց երկու բեռնատարի արանքը: Սահմանապահը նշան արեց փոխել գիծը: Մաթիասն այլևս չէր ժպտում:

Ճանապարհի երկու կողմերում՝ հեռվում անհետացող ծառերի կատարներից վեր, իրար դեմ դիմաց

խոյանում էին լուսարձակներով բեռնված երկու հենասյուն ու սահմանապահական չորս դիտակետ: «Marienborn, Border Check Point»[1] ցուցանակը կախված էր ճաղավոր դարպասների վրա, որոնք գոցվում էին ներս մտնող յուրաքանչյուր մեքենայի հետևից:

Առաջին անցակետում նրանց ստիպեցին բացել բեռնախցիկը: Ու երբ անցան Անտուանի ու Մաթիասի պայուսակները քրքրելուն, Ջուլիան հասկացավ, որ հետը ոչինչ չի վերցրել: Հետո առաջանալու հրաման եղավ, ու նրանք անցան նեղ միջանցքով, որի երկու կողմում շարված էին փաստաթղթերի ստուգման համար նախատեսված սպիտակ, թիթեղածածկ տնակները: Մի սպա Մաթիասին հրամայեց մեքենան կանգնեցնել մայթին: Անտուանը մռթմռթաց, թե ի սկզբանե վստահ էր՝ այս ճամփորդությունը խենթություն էր, իսկ Մաթիասը նրան հիշեցրեց, թե ինչ են պայմանավորվել ղեկին նստելուց առաջ: Ջուլիան հայացքով հարցրեց նրան, թե ինքն ինչ պետք է անի:

*Մաթիասը վերցրեց մեր անձնագրերը: Լավ եմ հիշում, ոնց որ երեկ լիներ: Ու հեռևեց սահմանապահին: Ես ու Անտուանը նրան էինք սպասում, ու թեև մենակ էինք մեքենայում էդ մռայլ կառույցում, ծպտուն անգամ չէինք հանում՝ հիշելով մեր պայմանավորվածությունը: Հետո Մաթիասը հայտնվեց մի զինվորականի հետ: Ոչ ես, ոչ Անտուանը չէինք հասկանում, թե ինչ էր մեզ սպասվում: Երիտասարդ զինվորականը հերթով զննեց մեզ: Հետո անձնագրերը մեկնեց Մաթիասին ու անցնելու նշան արեց: Երբեք չէի ապրել այդպիսի վախ, որը սողոսկում էր մաշկիդ տակ ու սառեցնում արյունդ: Մեքենան դանդաղ առաջ գնաց մինչև հաջորդ անցակետ ու այս անգամ*

[1] Մարիենբոր, սահմանային անցակետ (*անգլ.*):

*կանգ առավ մի հսկայական ծածկի տակ, որտեղ ամեն ինչ սկսվեց նորից: Մաթիասը գնաց դեպի բարաքներ, ու երբ վերջապես վերադարձավ, նրա լայն ժպիտից հասկացանք, որ դեպի Բեռլին ճանապարհն ազատ է: Մեզ արգելված էր ճանապարհից շեղվել, մինչև հասնեինք Բեռլին:*

***

Մոնրեալի հին նավահանգստի զբոսուղիներում ճեմող զեփյուռը սրթսրթացրեց Ջուլիային: Բայց նրա աչքերը շարունակում էին գամված մնալ անցյալից հայտնված ու ածխամատիտով սպիտակ թղթի վրա նկարված տղամարդու դեմքին: Թուղթն ավելի սպիտակ էր, քան զորանոցները, որոնք մի ժամանակ երիզում էին Գերմանիան երկու մասի բաժանող սահմանը:

***

*Թոմաս, ես գալիս էի քեզ մոտ: Ինչ անդարդ էինք մենք, իսկ դու դեռ ողջ էիր...*

Ավելի քան մեկ ժամ անցավ, մինչև Մաթիասը վերագտավ երգելու ցանկությունը: Մի քանի բեռնատարից զատ, միակ մեքենաները, որ կարելի էր հանդիպել մայրուղում, «Տրաբանտներն» էին: Կարծես թե այդ երկրի ամբողջ բնակչությունը ցանկացել էր նույն մեքենան ձեռք բերել, որ երբեք չմրցեին հարևանների հետ: Ու ԳԴՀ-ի մայրուղիներով հպարտ ընթացող նրանց «Պեժո 504»-ը շքեղ տպավորություն էր թողնում: Բոլոր վարորդներն անթաքույց հիացմունքով, երկար նայում էին սլացող ֆրանսուհու հետևից:

Անցան Շերմենը, Տիսսենը, Կյոպերնիցը, Մագդեբուրգը և վերջապես Պոտսդամը: Մինչև Բեռլին մնում էր հինգ կիլոմետր: Անտուանն անպայման ուզում էր՝ Բեռլին

մտնելուց հենց ինքը լիներ ղեկին: Ջուլիան քրքջաց. հիշեց, թե ինչպես էին իր հայրենակիցները ազատագրում քաղաքը սրանից մոտ 45 տարի առաջ:

– Ու մինչև հիմա էնտեղ են,– միանգամից կծելով՝ արձագանքեց Անտուանը:

– Իմ սիրելի ֆրանսիացիներ, մենք միշտ ձեզ հետ ենք,– նույն տոնով պատասխանեց Ջուլիան:

– Զզվեցրիք երկուսդ էլ,– թեման փակեց Մաթիասը:

Ու նորից բոլորը ձայները կտրեցին, մինչև հասան արևելյան Գերմանիայում անկլավ արևմտյան կղզյակի դարպասներին: Ոչ մի բառ չասվեց, մինչև մտան քաղաք, ու Մաթիասը բացականչեց. «Ich Bin ein Berliner!»[1].

## 10

Նրանց բոլոր հաշվարկները սխալ դուրս եկան: Նոյեմբերի 8-ի կեսօրն անց էր, բայց նրանցից ոչ մեկը չէր անհանգստանում, որ ուշացել են: Նրանք սպառված էին, բայց անտեսում էին հոգնածությունը: Քաղաքում անհանգստությունը կախված էր օդում, զգացվում էր, որ ինչ-որ բան է սպասվում: Անտուանը ճիշտ էր. չորս օր առաջ երկաթե վարագույրի այն կողմում մի միլիոն արևելյան գերմանացիներ ըմբոստացել էին հանուն իրենց ազատության: Պատը, որ զօր ու գիշեր հսկում էին հազարավոր զինվորներ ու շներով ոստիկաններ, բաժանում էր նրանց, ովքեր սիրում էին իրար, ապրում իրար հետ, իսկ հիմա անհույս սպասում էին, որ մի օր վերամիավորվեն: Ընտանիքներ, ընկերներ կամ

[1] Ես բեռլինցի եմ *(գերմ.)*:

հարևաններ, որոնք արդեն քսանութ տարի բաժանված են քառասուներեքկիլոմետրանոց փշալարերով ու դիտակետերով «զարդարված» բետոնե պատով, որն այնքան դաժանորեն կանգնեցվեց այն տխուր ամռանը, երբ հայտարարվեց Սառը պատերազմը:

Սրճարանում տեղավորվելով՝ երեք ընկեր ականջները կախ լսում էին եռացող խոսակցությունները: Անտուանը կենտրոնացրել էր լիցեյում ստացած գերմաներենի գիտելիքների իր ամբողջ պաշարը, որ կարողանար Մաթիասի ու Ջուլիայի համար թարգմանել բեռլինցիների մեկնաբանությունները: Կոմունիստական ռեժիմը երկար չէր ձգի: Ոմանք մտածում էին, որ անցակետերը շուտով կբացվեն: Ամեն ինչ փոխվել էր հոկտեմբերյան այն օրվանից, ինչ Գորբաչովը ժամանել է ԳԴՀ: Ոտքի վրա մի բաժակ գարեջուր խմելու եկած Tagesspiegel-ի լրագրողը վստահեցնում էր, որ իր խմբագրությունում ամեն ինչ եռում է: Թերթը, որ այդ ժամին արդեն տպված էր լինում, դեռ տպարան չէր մտել. ինչ-որ կարևոր բան էր սպասվում. ավելին ոչինչ չէր կարող ասել:

Գիշերն իջնելուն պես հոգնածությունն իրեն զգալ տվեց: Ջուլիան հորանջում էր անդադար ու զկռտում: Մաթիասն ամեն կերպ փորձում էր պայքարել վրա հասած այդ չարիքի դեմ, նույնիսկ վախեցրեց Ջուլիային անսպասելի ճիչով, բայց նրա բոլոր փորձերը ուղեկցվում էին բարձր քրքիջով, որն էլ ավելի էր խորացնում Ջուլիայի զկռտոցը: Հետո Անտուանն անցավ գործի: Ստիպեց ինչ-որ ակրոբատիկ շարժումներ անել, բաժակով ջուրը խմել տվեց թևերը խաչած ու գլուխը ցած կախած: Փորձված միջոց էր, բայց չօգնեց, ու սպազմը նոր թափ առավ: Սրճարանի մյուս հաճախորդներն էլ սկսեցին իրենց իմացած միջոցներն առաջարկել: Թափով, մինչև վերջ խմել մի պինտա հեղուկ, քիթը փակելով՝

հնարավորինս երկար չշնչել, պառկել գետնին ու ոտքերը ծալել կրծքի մոտ: Ամեն մեկն իր տարբերակն էր առաջարկում, իրարից առաջն ընկնելով՝ խորհուրդներ տալիս, մինչև վաճառասեղանի մոտ նստած գարեջուր խմող բժիշկը գրեթե մաքուր անգլերենով Ջուլիային ասաց, որ հանգստանալու ժամանակն է: Աչքերի շուրջ շրջանակները վկայում էին, որ նա ոտքի վրա մնալ չի կարողանում: Քնելն ամենալավ դեղամիջոցն էր: Ու նրանք որոշեցին հյուրատուն գտնել:

Անտուանը հարցրեց, թե որտեղ կարող են գիշերել: Հոգնածությունը նրան էլ չէր խնայել. բարմենն այդպես էլ չհասկացավ, թե նրա ուզածն ինչ էր: Մի փոքրիկ հյուրանոցում երկու սենյակ գտան: Տղաները հանգրվանեցին մի սենյակում, Ջուլիան՝ մյուս: Մի կերպ հասան չորրորդ հարկ ու միանգամից հրաժեշտ տալով՝ փլվեցին անկողնուն: Անտուանը ստիպված ամբողջ գիշերն անցկացրեց գետնին փռած վերմակի վրա, քանի որ Մաթիասը սենյակ մտնելուն պես լայնքով մեկ փռվել էր մահճակալին:

***

Նկարչուհին չէր կարողանում վերջացնել իր էսքիզը: Երեք անգամ «բնորդին» խնդրեց չշարժվել, բայց Էնթոնի Ուելշի ուշքն ուրիշ կողմ էր: Մինչ երիտասարդ կինը փորձում էր ճիշտ պատկերել նրա դեմքի արտահայտությունը, նա անդադար պտտում էր գլուխը, որ տեսնի Ջուլիային: Ջուլիան, մի քանի քայլ այն կողմ, հայացքը չէր հեռացնում նկարչուհու կախած նկարներից: Հայացքը բացակա էր, նա ասես մտքով սավառնում էր հեռուներում: Ինչ հայրը նստել էր նկարվելու, Ջուլիան աչք չէր կտրել նկարից: Էնթոնին ձայն տվեց, բայց Ջուլիան հեռուներում էր...

***

Նոյեմբերի 9-ի կեսօրին մոտ էր, երբ երեքով հանդիպեցին փոքրիկ հյուրանոցի սպասասրահում: Կեսօրից հետո շրջեցին քաղաքում: *Մի քանի ժամից, Թոմաս, մի քանի ժամից ես քեզ կտեսնեմ...*

Սկզբում այցելեցին Հաղթանակի կամար: Մաթիասը հայտարարեց, որ այն ավելի շքեղ տեսք ունի, քան Վանդոմ հրապարակի կամարը, իսկ Անտուանը նկատեց, որ այդ կարգի համեմատություններն անիմաստ են: Ջուլիան հարցրեց՝ արդյոք նրանք մի՞շտ են այդպես վիճում, տղաները զարմացած նայեցին Ջուլիային՝ առանց հասկանալու, թե ինչ է ուզում ասել: Հետո ոտքով անցան Քու'Դամով, էլի համարյա մի հարյուր փողոց, երբեմն, երբ Ջուլիան էլ ոտքի վրա չէր կարողանում մնալ, տրամվայ էին նստում: Ժամը երեքին մոտ հայտնվեցին Կայսր Վիլհելմի հիշատակին կառուցված եկեղեցու մոտ, որը գերմանացիներն անվանում են «դատարկ ատամ», քանի որ շենքի կեսն ավերվել էր վերջին պատերազմի ժամանակ՝ ռմբակոծության պատճառով: Կանգուն մնացած մասը յուրօրինակ տեսք էր ստացել, որի շնորհիվ էլ արժանացել էր իր անվանը: Պահպանել էին՝ ինչպես որ կար, որպես հուշարձան:

18:30-ին Ջուլիան ու իր երկու ընկերները դուրս եկան մի այգու մոտ ու որոշեցին զբոսնել:

Կարճ ժամանակ անց արևելագերմանական կառավարության մամլո խոսնակը կկարդա մի դեկլարացիա, որը կփոխի աշխարհի, համենայն դեպս՝ 20-րդ դարի վերջի դիմանկարը: Արևելյան Գերմանիայի քաղաքացիներին այդուհետ թույլատրվում էր դուրս գալ, ազատ գնալ Արևմտյան կողմ. անցակետերի զինվորներն այլևս նրանց վրա շներ բաց չէին թողնի ու չէին

կրակի: Քանի՛-քանի կին, տղամարդ ու երեխա է զոհ գնացել Սառը պատերազմի դաժան տարիներին՝ փորձելով ճեղքել ամոթի պատը: Քանի՛-քանիսն են իրենց կյանքը թողել պատի տակ՝ ընկնելով իրենց աչալուրջ հսկիչների գնդակից:

Բեռլինցիներն այսուհետ կարող էին ազատ տեղաշարժվել: Լրագրողներից մեկը հարցրեց խոսնակին, թե երբվանից է որոշումը մտնում ուժի մեջ: Լավ չըմբռնելով իրեն ուղղված հարցը՝ վերջինս պատասխանեց՝ հենց հիմա:

Ժամը ութին լուրը հեռարձակվեց Գերմանիայի երկու կողմի հեռուստատեսային ու ռադիոյի բոլոր ալիքներով. անհավատալի լուրը դեռ երկար էր արձագանքում ամենուր...

Արևելյան Գերմանիայի հազարավոր քաղաքացիներ հորդացին դեպի անցակետեր: Արևմտյան Գերմանիայի հազարավոր քաղաքացիներ շտապեցին մյուս կողմից: Եվ ազատություն տենչացող այս ամբոխն իր հետ քշեց տարավ երկու ֆրանսիացուն ու նրանց ընկերակցող ամերիկուհուն:

Ժամը 22:30-ին Արևմուտքն ու Արևելքը՝ ամեն մեկը մի կողմից, հոսեցին դեպի անցակետերը: Զինվորականները, նման իրադարձություններին անպատրաստ ու ազատությունից խելագարված մարդկանց ամբոխից ապշահար, իրենք էլ հայտնվեցին պատի տակ: Բորնհայմեր փողոցի արգելափակոցները բացվեցին, ու Գերմանիան բռնեց միացման իր ուղին:

*Դու ոտնապակ էիր փվել քաղաքը՝ իրար հետևից կտրել-անցնելով փողոցները, դու շտապում էիր գրկել ազատությունը, ես քայլում էի դեպի քեզ՝ առանց իմանալու կամ հասկանալու, թե ինչ ուժ է ինձ առաջ հրում: Էդ իմ հաղթանակը չէր, իմ երկիրը չէր, էդ փողոցներն*

*ինձ անծանոթ էին... բայց իրական անծանոթը ես էի: Ու ես իմ հերթին սկսեցի վազել, վազել, որ դուրս պրծնեմ էդ խելագար ամբոխից: Անպուանն ու Մաթիասը փորձում էին ինձ պաշտպանել. մենք անցնում էինք անվերջ թվացող բեկոնե պատնեշի մոտով, որը հույսով լցված նկարիչներն արդեն անխնա նկարազարդել էին: Քո համաքաղաքացիներից մի քանիսը, որոնց համար անցակետերի մոտ սպասումի վերջին ժամերն արդեն անտանելի էին թվում, սկսեցին պատը մագլցել: Իսկ մենք ձեզ էինք սպասում աշխարհի էս մյուս կողմում: Աջից կանգնած մարդիկ պարզել էին թևերը, որ ձեզ օգնեն՝ չընկնեք, ձախից ոմանք բարձրանում էին ավելի ուժեղների ուսերին, որ տեսնեին, թե ոնց եք դուք՝ երկաթե աքցանների գերիներդ, շտապում մի քանի մետր էլ առաջանալ: Մենք աղաղակում էինք, որ քաջալերեինք ձեզ, փարատեինք ձեր վախը, որ իմանայիք, որ մենք ձեզ սպասում ենք: Մեր ձայները խառնվել էին: Ու ես՝ Նյու Յորքից թռած ամերիկացիս, զավակն էն երկրի, որ հաղթել էր քո հայրենիքին, իրար գրած էդ բազմության մեջ հանկարծ սկսեցի դառնալ գերմանացի: Ու իմ գարիքի պարզամտությամբ սկսեցի շշնջալ. «Ich Bin ein Berliner», ու սկսեցի լաց լինել: Եթե իմանայիր՝ ինչքա՛ն եմ լացել, իմ սեր, Թոմաս...*

***

Այդ երեկո մեկ այլ՝ Մոնրեալի կառամատույցներում շրջող զբոսաշրջիկների ամբոխի կենտրոնում Ջուլիան լուռ լալիս էր: Նայելով մատիտով նկարած դիմանկարին՝ Ջուլիան անկարող էր զսպել արցունքները:

Էնթոնի Ուելշը աչքն աղջկանից չէր հեռացնում: Ու նորից ձայն տվեց.

– Ջուլիա՛, լա՞վ ես:

Բայց աղջիկը չէր լսում նրան, ասես քսան երկար տարիները բաժանել էին նրանց:

***

*Ամբոխն ավելի ու ավելի էր փոթորկվում: Մարդիկ հորդում էին դեպի պապը: Ոմանք սկսեցին փորել ինքնաշեն գործիքներով, պպուտակահաններով, քարերով, գրպանի դանակներով, ուրիշ ծիծաղելի գործիքներով. պապն ուրիշ ճար չուներ, պետք է հանձնվեր: Գիտե՞ս, էդ ժամանակ Բեռլինում էր աշխարհահռչակ մի թավջութակահար[1]: Իմանալով, թե ինչ է կատարվում, նա միացավ մեզ, միացավ ձեզ: Գործիքը հարմարեցրեց ու սկսեց նվագել: Բայց կարո՞ղ է՝ էդ երեկո չէր... կարևոր չէ արդեն: Երաժշտությունն իր հերթին գրոհում էր պապը: Ֆա-երը, սի-երը, լյա-երը ճախրում էին օդում՝ ձեզ հասցնելով ազատության մեղեդին: Մենակ ես չէի, է, լալիս: Գիշերը թաց էր արցունքներից: Լցված էր իրար գրկած մոր ու աղջկա արցունքներով, որոնք քսանութ տարի իրար չէին տեսել, չէին գրկել, չէին զգացել մեկմեկու հոտը: Գիտե՞ս, տեսել եմ ճերմակամազ հայրերի, որոնք հազարավոր մարդկանց մեջ ճանաչում էին իրենց որդիներին: Ես տեսել եմ էն բեռլինցիներին, որոնց հոգու ցավը մենակ արցունքները կսրբեին: Ու հանկարծ էդ խաժամուժի մեջ՝ պապի վրա, ես տեսա փոշուց սևացած քո դեմքը... ու քո աչքերը: Դու առաջին արևելյան գերմանացին էիր, որին ես տեսա, իսկ ես առաջին աղջիկն էի արևմուտքից, որին դու տեսար:*

[1] *Մստիսլավ Ռոստրոպովիչը:*

***

– Ջուլիա,– կանչեց Էնթոնի Ուելշը:

Ջուլիան դանդաղ շրջվեց՝ առանց մի բառ ասելու, ու նորից դարձավ նկարին:

***

*Բավական երկար մնացիր անշարժ, մեր ապշած հայացքներն իրարից չէին կտրվում: Դու հայտնաբերել էիր էս նոր աշխարհը, որ իրեն հրամցնում էր քեզ, ու էնպես էիր նայում ինձ, ասես կապված էինք անտեսանելի թելով: Ես հիմարի պես լալիս էի, դու ժպտում էիր ինձ: Դու մի մեծ քայլ արեցիր ու պատից ցած ցատկեցիր, ես ուրիշների պես ձեռքերս պարզեցի քեզ: Դու ընկար վրաս, երկուսով գլորվեցինք գետնին, որի վրա դու երբեք ոտք չէիր դրել: Դու գերմաներենով ներողություն խնդրեցիր, ես քեզ անգլերենով ողջունեցի: Դու ուղղվեցիր ու վստահ շարժումով թափ տվեցիր ուսերիս փոշին, ասես էդ քեզ համար սովորական բան լիներ: Ինձ ինչ-որ բաներ էիր ասում, բայց ես ոչինչ չէի հասկանում: Ու ժամանակ առ ժամանակ գլխով էիր անում: Ես ծիծաղեցի, որովհետև դու զվարճալի տեսք ունեիր, ես՝ քեզնից առավել: Հետո դու ձեռքդ մեկնեցիր ինձ ու ասացիր անունդ... Էն անունը, որ ես դեռ հազարավոր անգամներ կշշնջամ: Ու որ այնքան երկար ժամանակ չեմ արտասանել... Թոմաս...*

***

Կառամատույցում մի կին հրեց նրան, ու նույնիսկ չշրջվեց: Ջուլիան նրան ուշադրություն չդարձրեց: Զարդեղեն վաճառողը փայտից ուլունքները մտցրեց նրա քթի տակ, նա դանդաղ տարուբերեց գլուխը՝ ոչ մի բառ չլսելով նրա գովերգերից: Էնթոնին տասը դոլար

տվեց նկարչուհուն ու վեր կացավ: Նկարչուհին նրան մեկնեց նկարը. դեմքի արտահայտությունը ճշգրիտ էր, նմանությունը՝ կատարյալ: Բավարարված Էնթոնին ձեռքը մտցրեց գրպանն ու կրկնապատկեց պահանջված գումարը: Հետո մի քանի քայլ առաջ անցավ դեպի Ջուլիան:

– Ի՞նչ ես արդեն տասը րոպե ուշադիր ուսումնասիրում:

***

*Թոմաս, Թոմաս, Թոմաս, արդեն մոռացել էի, թե ինչքա՜ն քաղցր է հնչում անունդ: Մոռացել էի դեմքդ, փոսիկներդ, ժպիտդ, մինչև որ քեզ էդքան նման էս նկարը հիշեցրեց ամեն ինչ: Ո՜նց կուզեի, որ երբեք չգնայիր Քաբուլ: Եթե էն օրը, երբ ասեցիր, որ ուզում ես լրագրող դառնալ, իմանայի, ա՜խ, եթե իմանայի, թե ոնց կվերջանա էս ամենը, ես քեզ կասեի, ես քեզ կհամոզեի, որ էդ ահավոր վայր գաղափար է:*

*Երևի դու ինձ պատասխանեիր, որ աշխարհին ճշմարտություն պատմողը ոչ մի վատ բան անել չի կարող, նույնիսկ եթե լուսանկարները դաժան են ու պղտորում են մարդկանց հոգիները: Դու լուրջ ձայնով կսկսեիր գոռալ, որ եթե մամուլն իմանար պատի մյուս կողմի իրականությունը, կառավարությունն ավելի շուտ կքանդեր այն: Բայց նրանք գիտեին, Թոմաս, նրանք հատ-հատ գիտեին ձեզնից յուրաքանչյուրի կյանքը, նրանք հետևում էին ձեզ. մեզ ղեկավարողներն էդքան քաջություն չունեին: Ու ականջիս մեջ են քո բառերը, որ մարդ պետք է ինձ պես մեծացած լինի մի երկրում, որտեղ կարելի է ազատ մտածել, խոսել առանց վախենալու ու չվախենալ ռիսկի դիմելուց: Ամբողջ գիշեր կխոսեինք, նաև առավոտյան, հետո հաջորդ օրը: Եթե իմանայիր, թե ոնց եմ կարոտել մեր կռիվները, Թոմաս...*

*Փասպարկների բացակայությունից՝ սպիպված կհանձնվեի, ոնց որ էն օրը, երբ գնացի: Ո՞նց քեզ հեպ պահեի, քեզ, քեզ, որին ազապությունն էդքան չէր հերիքել: Դու ճիշտ էիր, Թոմաս, դու ընտրել էիր աշխարհի ամենալավ մասնագիտությունը: Մասուդին հանդիպեցի՞ր: Նա քեզ հարցազրույց կվե՞ց, ու հիմա, երբ երկուսդ էլ երկնքում եք, ասա՝ արժե՞ր: Նա քեզանից շատ երկար ապրեց: Հազարավոր մարդիկ էին մասնակցում նրա հուղարկավորությանը Փանջշիրի հովտում, մինչդեռ ոչ ոք էդպես էլ չկարողացավ հավաքել քո մարմնի բեկորները: Տեսնես՝ ինչի՞ նման կլիներ իմ կյանքը, եթե քո ավտոշարասյունը չպայթեր արկի վրա, եթե ես չվախենայի, Թոմաս, եթե ես քեզ թողած չլինեի դրանից որոշ ժամանակ առաջ...*

***

Էնթոնին ձեռքը դրեց Զուլիայի ուսին:

– Ո՞ւմ հետ ես խոսում, Զուլիա:

– Ոչ ոքի,– ցնցվեց Զուլիան:

– Նկարը մթագնել է ուղեղդ, ու շուրթերդ դողում են:

– Հանգիստ թող ինձ,– շշնջաց նա:

***

*Անհարմար իրավիճակ էր ստեղծվել: Անտուանին ու Մաթիասին ներկայացրի քեզ՝ քսանհինգ անգամ շեշտելով «ընկերներ» բառը, որ դու լավ ֆիքսես: Ի՞նչ անեի, քո անգլերենը շատ հեռու էր կատարյալ լինելուց: Դու էլ երևի հասկացար, ժպտացիր նրանց, ու ողջագուրվեցիք: Մաթիասը գրկեց քեզ ու շնորհավորեց: Անտուանը բավարարվեց ձեռքսեղմումով, բայց նա էլ էր ընկերոջ պես հուզված: Մենք չորսով գնացինք քաղաք: Դու ինչ-որ մեկին էիր փնտրում, ինձ թվաց՝ ինչ-որ կնոջ, իրականում՝ քո մանկության ընկերոջը: Տասը տարի*

առաջ նա իր ընտանիքի հետ կարողացել էր պատի մյուս կողմն անցել, ու էդ օրվանից չէիք տեսնվել: Բայց ո՞նց գտնես ընկերոջդ փողոցում իրար գրկող, երգող, խմող ու պարող բազմամարդ ամբոխի մեջ: Ասացիր՝ աշխարհը մեծ է, ընկերությունը՝ անսահման: Չհասկացա էլ՝ առոգանությո՞ւնդ էր պատճառը, թե՞ նախադասությանդ պարզամտությունը, բայց Անտուանն սկսեց ծիծաղել. ինձ համար քո մտքերը սքանչելի էին: Գիտե՞ս՝ ինչն էր հետաքրքիր. կյանքը քեզ էդքան ցավ էր պատճառել, բայց կարողացել էիր պահպանել մանկությանդ երազանքները: Մենք որոշեցինք քեզ օգնել ու միասին կտրեցինք-անցանք ամբողջ Արևմտյան Բեռլինը: Էնքան վստահ էիր գնում, Թոմաս, ասես ինչ-որ տեղ արդեն պայմանավորվել էիք հանդիպել: Ճանապարհին ուսումնասիրում էիր բոլոր դեմքերը, հոմշտում անցորդներին, անընդհատ այսուայնկողմ շրջվում: Արևը դեռ չէր ծագել, երբ Անտուանը կանգնեց մի ինչ-որ հրապարակի կենտրոնում ու գոռաց. «Կարո՞ղ ենք գոնե իմանալ էդ մարդու անունը, որին հիմարի պես արդեն քանի ժամ է՝ փնտրում ենք»: Դու չհասկացար նրա հարցը: Անտուանն ավելի բարձր գոռաց. «Անունը, Name, Vorname»: Դու խանդավառվեցիր ու գոռացիր քո հերթին. «Կնա՛պ»: Կորած ընկերոջդ անունը Քնապ էր: Ու Անտուանը, հասկացնելու համար, որ քո պատճառով չէր նյարդայնանում, սկսեց բարձր գոռալ. «Քնապ, Քնա՛պ»:

Մաթիասն էլ միացավ՝ խելագար ծիծաղով համակված, ես իմ հերթին սկսեցի գոռալ՝ Կնա՛պ, Կնա՛պ: Դու նայեցիր մեզ՝ ասես իրոք խելագարներ էինք, հետո սկսեցիր ծիծաղել ու գոռալ. «Քնապ, Քնա՛պ, Քնապ»: Մենք համարյա պարում էինք, ձայներս գլուխներս գցած՝ ձայն տալիս ընկերոջդ, որին համարյա տասը տարի չէիր տեսել:

Հանկարծ հսկայական ամբոխի մեջ մեկը շրջվեց: Տեսա, թե ինչպես խաչվեցին ձեր հայացքները. քո փարիքի տղամարդն ուշադիր քեզ էր նայում: Թոմաս, ասեմ քեզ՝ քիչ մնաց խանդեի:

Ինչպես ոհմակից հետ մնացած ու անտառի թավուտում դեմ դիմաց դուրս եկած երկու գայլ, դուք անշարժ կանգնած զննում էիք միմյանց: Ու հետո Քնապը տվեց քո անունը. «Թոմա՞ս»: Ի՜նչ սիրուն էիք նայվում արևմտյան Բեռլինի մայթերին կանգնած: Դու գրկեցիր ընկերոջդ: Ձեր երջանիկ դեմքերից վսեմություն էր կաթում: Անտուանը լալիս էր: Մաթիասը փորձում էր հանգստացնել. երդվում էր, որ եթե իրենք էլ էդքան երկար բաժանված լինեին, նույն զգացումները կունենային: Անտուանն ավելի բորբոքվելով ասում էր, որ դա անհնար է, քանի որ իրենք ավելի քիչ էին իրար ճանաչում... Գլուխդ դրեցիր Քնապի ուսին: Հետո, տեսնելով, որ քեզ եմ նայում, միանգամից ուղղվեցիր ու կրկնեցիր՝ «Աշխարհը մեծ է, ընկերությունը՝ անսահման»: Անտուանին մխիթարելն արդեն անիմաստ էր...

Նստեցինք մի բարում: Ցրտից կապտել էինք, բայց թքած ունեինք: Քնապն ու դու առանձնացել էիք: Ինչքա՜ն բառեր էին պետք տասը տարվա տեղը հանելու համար, ու ինչքան պետք էր լռել... Չբաժանվեցիք ո՛չ գիշերը, ո՛չ էլ հաջորդ օրը: Երկրորդ օրվա առավոտյան Քնապին ասացիր, որ պետք է գնաս: Ավելի երկար չէիր կարող մնալ. տատիկդ մնացել էր պատի մյուս կողմում: Մենակ թողնել չէր լինի, դու նրա միակ հենարանն էիր... Հա՛, էս տարի կդառնար հարյուր տարեկան: Հույս ունեմ, որ քեզ գտավ էնտեղ՝ երկնքում: Ո՞նց սիրեցի տատիկիդ: Ի՜նչ սիրուն էր, երբ մեր դուռը ծեծելուց առաջ հյուսում էր երկար, սպիտակ մազերը... Խոստացար Քնապին, որ եթե ամեն ինչ նորից չփոխվի, շուտ հետ կգաս: Քնապը

*վստահեցրեց, որ դարպասներն էլ երբեք չեն փակվի, ու դու պատասխանեցիր. «Երևի, բայց եթե էլի տասը տարի պետք լինի սպասել՝ տեսնվելու համար, ես կշարունակեմ մտածել քո մասին, ամեն-ամեն օր»:*

*Հետո վեր կացար, շնորհակալություն հայտնեցիր մեր «նվերի» համար: Արածներս մի մեծ բան չէր, բայց Մաթիասը պատասխանեց՝ չարժի, ու որ շատ ուրախ էր օգնելու համար: Անտուանն առաջարկեց քեզ ուղեկցել մինչև Արևելքի ու Արևմուտքի անցակետը:*

*Բոլորով դուրս եկանք ու հետևեցինք նրանց, ովքեր քեզ պես վերադառնում էին տուն. հեղափոխությունը՝ հեղափոխություն, բայց նրանց տներն ու ընտանիքները քաղաքի մյուս կողմում էին:*

*Ճանապարհին բռնեցիր ձեռքս, ես չդիմադրեցի: Ու էդպես՝ ձեռք ձեռքի, քայլեցինք երկա՛ր-երկար:*

***

– Ջուլիա՛, դողացնում ես, վերջում մրսելու-հիվանդանալու ես: Արի հետ գնանք: Թե կուզես՝ առնենք էդ նկարը, ու կնայես՝ ինչքան սիրտդ ուզի: Բայց արդեն տանը:

– Չէ, նկարն անգին է, պետք է թողնենք էստեղ: Խնդրո՛ւմ եմ, մի քանի րոպե էլ, ու կգնանք:

***

*Անցակետի երկու կողմում ոմանք դեռ կապաղած փորում էին բետոնե պատը: Էստեղ պետք է բաժանվեինք: Առաջինը Քնապին հրաժեշտ տվեցիր. «Զանգիր, հենց հնարավոր լինի»,– ասաց նա՝ այցեքարտը մեկնելով: Տեսնես դու ուզեցիր լրագրող դառնալ, որովհետև Քնապը լրագրո՞ղ էր: Թե՞ էդ երեխա ժամանակ միմյանց տված խոստում էր: Հազար անգամ հարցրել եմ, Թոմաս, ու դու*

հազար անգամն էլ խուսափել ես պատասխանից՝ ծուռ ժպտալով, ոնց որ ամեն անգամ, երբ նյարդայնացնում էի քեզ... Սեղմեցիր Անտուանի ձեռքը, հետո Մաթիասինն ու դարձար ինձ:

Եթե իմանայիր, Թոմաս, եթե իմանայիր, թե էդ օրը ո՛նց էի վախենում, ո՛նց էի վախենում, որ երբեք չեմ զգա քո շուրթերը: Դու մտար իմ կյանք, ոնց որ գալիս է ամառը՝ առանց զգուշացնելու, առավոտյան հանկարծակի սենյակը ողողած լույսի շողերով: Շոյեցիր դեմքս, մատներդ սահեցին դեմքիս վրայով, ու հերթով համբուրեցիր կոպերս: «Շնորհակալություն»՝ միակ բառը, որ ասացիր հեռանալով: Քնապը հետևում էր մեզ, ես զգում էի նրա հայացքը: Ասես նա սպասում էր, որ ես ինչ-որ բան ասեմ, ինչ-որ բան, որ ընդմիշտ կջնջի էն տարիները, որ բաժանել էր ձեզ իրարից: Տարիներ, որ այդպես փոխեցին ձեր կյանքը: Ու հիմա նա վերադառնում է իր խմբագրություն, դու՝ արևելյան Բեռլին:

Չդիմացա ու հետևիցդ գոռացի՝ «Ես էլ եմ գալիս, ինձ էլ տար հետդ: Ուզում եմ տեսնել տատիկիդ, որի համար որ հետ ես գնում», պատասխանի չսպասելով՝ բռնեցի ձեռքդ, ու, երդվում եմ, աշխարհի բոլոր ուժերն էլ հավաքվեին, ձեռքս բաց չէի թողնի: Քնապը թոթվեց ուսերը, նայեց ապշած դեմքիդ ու ասաց. «Հիմա ճամփան բաց է: Երբ կուզեք՝ հետ կգաք»:

Անտուանը փորձեց ինձ մտափոխել, նրա կարծիքով՝ արածս խենթություն էր: Գուցե, բայց ես երբեք նման արբեցում չէի զգացել: Մաթիասը բզեց Անտուանին. ի՞նչ գործ ունես: Հետո վազելով մոտեցավ ու գրկեց ինձ. «Կզանգես, երբ գաս Փարիզ»,– ու թղթի կտորի վրա գրած հեռախոսահամարը բուռս մտցրեց: Ես գրկեցի երկու ֆրանսիացիներիս, ու բաժանվեցինք: Ես էլ երբեք Փարիզ չգնացի, Թոմաս...

*Ես հեպևեցի քեզ, ու նոյեմբերի 11-ի առավոտ ծեգին, օգտվելով կիրող խառնաշփոթից, մենք անցանք սահմանը, ու ես երևի թե առաջին ամերիկացի ուսանողն էի, որ մտավ արևելյան Բեռլին, ու եթե նույնիսկ առաջինը չէի, ուրեմն հաստատ ամենաերջանիկն էի:*

*Գիտե՞ս, Թոմաս, ես խոսքիս տերը եղա: Հիշո՞ւմ ես էն մութ սրճարանը, որտեղ ինձ սպիպեցիր երդվել, որ եթե մի օր ճակատագիրը բաժանի մեզ, երջանիկ կլինեմ՝ ինչ էլ պատահի: Հասկանում էի՝ մտքինդ ինչ է. իմ սերը երբեմն խեղդում էր քեզ, իսկ դու շատ էիր տառապել ազատության պակասից, որ համաձայնեիր կյանքդ կապել ինձ հետ: Ու թեկուզ քեզ հաջողվեց փչացնել իմ երջանկությունը, ես խոսքս պահեցի:*

*Ես պատրաստվում եմ ամուսնանալ, Թոմաս, ավելի ճիշտ՝ պատրաստվում էի ամուսնանալ, հարսանիքը խափանվեց: Երկար պատմություն է, որն ինձ բերեց հասցրեց Մոնրեալ: Երևի՝ որ մի վերջին անգամ դեմքդ տեսնեի: Համբուրիր տատիկիդ իմ կողմից էդտեղ՝ երկնքում:*

***

– Ջուլիա, արդեն ծիծաղելի չէ: Մենակ քեզ կողքից տեսնես. ոնց որ հայրդ լինես, երբ մարտկոցները նստում են: Համարյա մի ժամ անշարժ կանգնած ինչ-որ բան ես շշնջում:

Պատասխանելու փոխարեն՝ Ջուլիան առաջ ընկավ: Էնթոնի Ուելշը քայլերն արագացրեց, որ հասնի նրա հետևից:

– Լավ, կարո՞ղ է բացատրես, թե ինչ է կատարվում,– վրա տվեց նա՝ հասնելով աղջկան:

Ջուլիան քար լռություն էր պահպանում:

– Հլը տես,– շարունակեց Էնթոնին՝ իր դիմանկարը մտցնելով աղջկա քթի տակ,– լավ է, չէ՞, ստացվել:– Եվ ուրախ-ուրախ ավելացրեց,– Առ, քեզ եմ նվիրում:

Ջուլիան, հորն անուշադրության մատնելով, արագ-արագ քայլում էր հյուրանոցի ուղղությամբ:

– Դե լավ, հետո կտամ: Երևի սխալ պահի վրա հասա:

Ու քանի Ջուլիան շարունակում էր լռել, Էնթոնի Ուելշը շարունակեց.

– Լսի, նկարը, որ էդպես ուշադիր նայում էիր, ինձ ինչ-որ բան էր հիշեցնում: Ու քո տարօրինակ տրամադրությունը հաստատ կապված է դրա հետ: Չգիտեմ, ինչը՝ ոնց, բայց էդ դեմքին նայելիս մոտս deja-vu է առաջանում:

– Լո՞ւրջ: Ուրեմն ասեմ: Որովհետև դու բռունցքով իջել ես էդ դեմքին, երբ եկել էին Բեռլին իմ հետևից: Որովհետև էդ էն մարդն է, ում ես սիրում էի տասնութ տարեկանում, իսկ դու, դու ինձ պոկեցիր նրանից ու զոռով հետ բերեցիր Նյու Յորք...

## 11

Ռեստորանը գրեթե լեցուն էր: Հոգատար սպասավորը նրանց երկու գավաթ շամպայն հյուրասիրեց: Էնթոնին չհասցրեց բաժակին դիպչել. Ջուլիան մի շնչով դատարկեց իր շամպայնը, հետո՝ հորինը ու մատուցողին նշան արեց նորից բերել: Երբ մենյուն բերեցին, նա արդեն հարբած էր:

– Լավ, հերիք է,– սաստեց Էնթոնին, մինչ Ջուլիան պատվիրում էր չորրորդ գավաթը:

– Ինչի՞ որ: Մեջը լիքը պղպջակ կա ու համ էլ համով է:

– Արդեն հարբած ես:

– Չէ, դեռ չէ,– ծիծաղելով պատասխանեց նա:

– Փորձիր քեզ մի քիչ հավաք պահել: Ի՞նչ է, ուզում ես փչացնե՞լ մեր առաջին ընթրիքը: Կարիք չկա քեզ վարի տալու, բավական է ասես, որ ուզում ես վերադառնալ:

– Չէ՛, չէ, չէ: Ես սոված եմ:

– Եթե կուզես, կարող ես պատվիրել, որ առաքեն սենյակ:

– Ա՛յ, արի մի բան ասեմ: Ես արդեն էն տարիքում չեմ, որ ինձ խորհուրդ տան:

– Երեխա ժամանակդ էլ էիր նույնն անում, երբ ուզում էիր ինձ համբերությունից հանել: Ու հա, դու ճիշտ ես, Ջուլիա, մենք երկուսս էլ էդ տարիքից դուրս ենք եկել:

– Եթե խոր մտածեմ, դա միակ ընտրությունն էր, որ չարեցիր իմ փոխարեն:

– Ո՞րը:

– Թոմասը:

– Ոչ, առաջինն էր, ոչ թե միակը, հետո դու ինքդ լիքը որոշումներ ես կայացրել, եթե հիշում ես...

– Դու միշտ փորձել ես կյանքս վերահսկել:

– Էդ հիվանդությամբ շատ պապաներ են տառապում: Համ էլ ինչ-որ բան չի կպնում. դու ոնց որ թե ինձ մեղադրում էիր միշտ բացակա լինելու մեջ:

– Ես կգերադասեի, որ դու պարզապես բացակա լինեիր, բայց էդ բացակա լինելդ քեզ գոհացնում էր:

– Դու հարբած ես, Ջուլիա, ու շատ բարձր ես խոսում, անհարմար է:

– Անհարմա՞ր է: Իսկ անհարմար չէ՞ր, որ դու անսպասելի ներխուժեցիր Բեռլինի մեր բնակարան, անհարմար չէ՞ր ձայնդ գլուխդ գցելն ու իմ սիրած մարդու տատիկին սպառնալը, որ նա քեզ մեր տեղն ասի: Անհարմար չէ՞ր, երբ դու ջարդեցիր սենյակի դուռը, որտեղ մենք քնած էինք, ու մի քանի րոպե անց էլ փշրեցիր Թոմասի ծնոտը: Հեչ անհարմար չէ՞ր:

– Ընդունում եմ, չափն անցել էի..

– Ընդունո՞ւմ ես: Իսկ ինչքանո՞վ էր ճիշտ, որ մազերիցս քաշելով տարար մինչև փողոցում քեզ սպասող մեքենան: Ինչքանո՞վ էր ճիշտ, որ ինձ օդանավակայանով մեկ էնպես քարշ տվեցիր, ասես խամաճիկ լինեի: Ինչքանո՞վ էր ճիշտ, որ դու ինձ գոտիով կապեցիր նստարանին, որ ինքնաթիռից դուրս չնետվեմ: Ինչքանո՞վ էր ճիշտ, որ Նյու Յորք հասնելուն պես ինձ շպրտեցիր իմ սենյակ, ասես հանցագործ լինեի, ու դուռը վրաս բանալիով փակեցիր:

– Մեկ-մեկ մտածում եմ, թե ինչ լավ արեցի, որ մեռա անցած շաբաթ:

– Լավ, էլի, խնդրում եմ, թարգը տուր, քարոզներիցդ արդեն կուշտ եմ:

– Վայ, էդ ոչ մի կապ չունի քո չքնաղ ելույթի հետ, Ջուլիա, լրիվ ուրիշ բանի մասին էի մտածում:

– Ինչի՞ մասին:

– Քո պահվածքի՝ էն վայրկյանից սկսած, երբ տեսար Թոմասի նկարը:

Ջուլիայի աչքերը չռվեցին:

– Էդ ի՞նչ կապ ունի մահվան հետ:

– Ծիծաղելի է, համաձայն չե՞ս: Էսպես ասեմ. առանց հետին մտքի ես խոչընդոտեցի, որ դու շաբաթ օրն ամուսնանայիր,– լայն ժպիտով հայտարարեց Էնթոնի Ուելշը:

– Ու էդ քեզ կայֆ տվեց, հա՞:

– Որ հարսանիքդ հետաձգվե՞ց: Մինչև վերջին րոպեն ի սրտե ցավում էի դրա համար, իսկ հիմա արդեն չէ...

Բարձրաձայն վիճող երկու հաճախորդի պահվածքից շվարած մատուցողը որոշեց միջամտել ու առաջարկեց պատվիրել: Ջուլիան սթեյք ուզեց:

– Լա՞վ եփված, թե կիսաեփ,– հարցրեց մատուցողը:

– Ոչ, ավելի շուտ արյունոտ,– պատասխանեց Էնթոնի Ուելշը:

– Իսկ պարոնի՞ համար:

– Մարտկոցներ, մարտկոցներ կարո՞ղ է ունենաք,– հարցրեց Ջուլիան:

Մատուցողը կարկամեց, իսկ Էնթոնին շտապեց հայտնել, որ չի ընթրելու:

– Ամուսնանալը մի բան է,– ասաց նա աղջկան,– բայց թույլ տուր նկատել, որ ամբողջ կյանքդ մեկի հետ անցկացնելը լրիվ ուրիշ է: Անսահման սեր է պետք, սիրո համար՝ անսահման տարածություն: Սերը պետք է ունենա իր անկյունը, որ ստեղծված է երկուսի համար, որտեղ որ երկուսից ոչ մեկը իրեն մենակ չպետք է զգա, որտեղ երկուսն էլ թագավոր են:

– Բայց դու ո՞վ ես, է, որ խոսես Ադամի հանդեպ իմ զգացմունքներից: Դու ոչ մի բան չգիտես:

– Ես Ադամից չեմ խոսում, Ջուլիա, այլ քո մասին ու էն տարածության, որ պատրաստ ես նրան զոհել: Ու եթե ձեր համատեղ կյանքի հորիզոնը պղտորված է մեկ ուրիշի մասին հիշողություններով, ուրեմն դեռ երկար ճանապարհ ունեք ներդաշնակության հասնելու համար:

– Ոնց որ էդ ամենից բան ես, հա՞, հասկանում:

– Ջուլիա, մամադ մահացել է, ես մեղավոր չեմ, ու հերիք ինձ մեղադրես:

– Թոմասն էլ է մեռել, ու եթե նույնիսկ դու նրա մահվան հետ կապ չունես, ես քեզ միշտ կմեղադրեմ: Ոնց տեսնում ես՝ տարածության տեսակետից ես ու Ադամն ունենք անսահման ազատ տարածություն:

Էնթոնի Ուելշը հազաց, քրտինքի մի քանի կաթիլ փայլեց ճակատին

– Դու քրտնո՞ւմ էլ ես,– զարմացած հարցրեց Ջուլիան:

– Տեխնիկական մի փոքրիկ անսարքություն, ու լրիվ անիմաստ,– պատասխանեց վերջինս՝ անձեռոցիկով

զգույշ ճակատը սրբելով,– դու տասնութ տարեկան էիր, Ջուլիա, և ուզում էիր կյանքդ կապել մի կոմունիստի հետ, որին գիտեիր ընդամենը մի քանի շաբաթ:

– Չորս ամիս:

– Լավ, կներես, տասնվեց շաբաթ:

– Ու նա Արևելյան Գերմանիայից էր, ոչ թե կոմունիստ:

– Շատ ավելի պայծառ:

– Ու եթե մի բան կա, որ երբեք չեմ մոռանա, էդ էն է, թե ինչու եմ քեզ երբեմն էդքան ատել:

– Պայմանավորվել էինք, չէ՞, առանց անցյալ ժամանակի խոսել: Մի վախեցիր հետս ներկայով խոսել. մեռած էլ՝ մեկ է, հայրդ եմ, կամ էն, ինչ նրանից մնացել է...

Մատուցողը հրամցրեց Ջուլիայի ուտեստը: Ջուլիան խնդրեց նորից շամպայն լցնել: Էնթոնի Ուելշը ձեռքով փակեց գավաթի բերանը:

– Մենք դեռ խոսելու բան ունենք, հիշում ես, չէ՞:

Մատուցողն անծպտուն հեռացավ:

– Դու ապրում էիր Արևելյան Բեռլինում, ամիսներով քեզնից լուր չկար: Ո՞րն էր լինելու հաջորդ քայլդ, Մոսկվա՞ն:

– Ո՞նց գտար ինձ:

– Արևմտագերմանական մամուլում տպածովդ: Ինչ-որ մեկը շատ բարի էր գտնվել ու մի օրինակ ուղարկել էր ինձ:

– Ո՞վ:

– Ուոլեսը, Ջուլիա: Երևի էդ էլ մեղա գալու ձև էր, որ քեզ օգնել էր Ամերիկայից գնալ:

– Փաստորեն՝ դու գիտեիր:

– Կամ էլ երևի ինքն էլ էր անհանգստանում ու որոշել էր, որ ժամանակն է արդեն վերջ դնել քո արկածներին, քանի գլխիդ իսկական փորձանք չէիր բերել:

– Ես երբեք էլ փորձանքի մեջ չեմ եղել: Ես սիրում էի Թոմասին:

– Մինչև որոշակի տարիք մենք սիրով ենք տարվում ինչ-որ մեկի հանդեպ, մինչև որ հասկանում ենք, որ մենք ընդամենը մեզ ենք սիրում: Դու պետք է իրավաբանություն սովորեիր Նյու Յորքում, բայց թռար Փարիզ՝ Գեղարվեստի դպրոց: Հազիվ էիր տեղավորվել, ու հասար Բեռլին, գժի պես սիրահարվեցիր առաջին պատահածին, մոռացար նկարչությունը, չգիտեմ ինչու՝ որոշեցիր դառնալ լրագրող, ու եթե հիշողությունս չի դավաճանում, նա էլ էր, չէ՞, որոշել լրագրող դառնալ... տարօրինակ էր...

– Քե՞զ ինչու էր էդ հուզում:

– Ես էի Ուոլեսին ասել, որ երբ ուզես՝ անձնագիրդ տա, ու ես հարևան սենյակում էի, երբ եկար ու դարակիցս վերցրիր:

– Չեմ հասկանում, էդ թատրոնը պարտադի՞ր էր: Ինչո՞ւ դու չտվեցիր:

– Որովհետև, եթե հիշում ես, մեր հարաբերությունները շատ լարված էին: Կամ էլ էսպես ասեմ՝ եթե ես տայի, քո արկածախնդիր ոգին կսպանեի: Համ էլ, ինձ հակառակվելը քո ճանապարհորդությանն ահագին համ ու հոտ տվեց, ճիշտ չե՞մ ասում:

– Իրոք էդքան մտածե՞լ ես:

– Ես եմ Ուոլեսին ասել փաստաթղթերի տեղը, ու ես իրոք հարևան սենյակում էի: Մի քիչ էլ երևի իմ վիրավորված ինքնասիրությունից դրդված:

– Դու վիրավորվո՞ւմ էլ ես:

– Իսկ Ադա՞մը,– շարունակեց Էնթոնի Ուելշը:

– Ադամը ոչ մի կապ չունի:

– Տարօրինակ բան ասեմ, աղջիկս, բայց մի մոռացիր, որ եթե ես չմեռնեի, դու հիմա Ադամի հետ ամուսնացած

կլինեիր: Լավ, փորձեմ հարցս վերաձևակերպել, բայց նախ աչքերդ փակիր:

Ջուլիան տատանվեց՝ չհասկանալով, թե հայրն ուր է տանում, բայց հնազանդվեց ու փակեց աչքերը:

– Լավ փակիր: Որ ոչ մի բան չտեսնես:

– Ի՞նչ խաղ ենք խաղում:

– Մի անգամ սուս մնա, Ջուլիա, ու արա, ինչ խնդրում եմ: Մի քանի րոպե կտևի:

Ջուլիան կոպերը փակեց, ու մութը պաշարեց նրան:

– Պատառաքաղը գտիր ու սկսիր ուտել:

Խաղը զվարճացրեց Ջուլիային: Նա ձեռքը խարխափեց սփռոցի վրա՝ մինչև գտավ պահանջվող իրը: Հետո անվստահ ժեստով պատառաքաղով վերցրեց մսի կտորն ու մոտեցրեց բերանին՝ առանց գաղափար ունենալու, թե ինչ է ուտելու:

– Ուտելիքի համը տարբերվո՞ւմ է, եթե չես տեսնում:

– Երևի,– պատասխանեց Ջուլիան՝ աչքերը փակ պահելով:

– Հիմա մի քանի բան արա ինձ համար, բայց աչքերդ հանկարծ չբացես:

– Ասա,– խուլ ձայնով ասաց Ջուլիան:

– Մտածիր ինչ-որ երջանիկ ակնթարթների մասին:

***

*Հիշում եմ, մենք երկուսով շրջում էինք Թանգարանների կղզում: Երբ ծանոթացանք կապիկիդ հետ, առաջին հարցը, որ կվեց՝ ինչով եմ զբաղվում: Հեշտ զրույց չէր, դու թարգմանում էիր նրա ասածները քո կոտրված անգլերենով, ես էլ չգիտեի քո լեզուն: Բացատրեցի, որ սովորում եմ Փարիզի գեղարվեստի դպրոցում: Նա ժպտաց, հետո գնաց, փորփրեց իր դարակներն ու մի բացիկ բերեց, որի վրա պատկերված էր Վլադիմիր*

*Ռացկինի*[1]՝ *նրա սիրած ռուս նկարչի կրավներից մեկը: Հետո մեզ հրահանգեց դուրս գալ՝ մաքուր օդ շնչելու և էդ գեղեցիկ օրը վայելելու: Դու նրան չպատմեցիր քո արտասովոր ճամփորդությունից, չասեցիր էլ՝ թե ոնց ենք ծանոթացել: Ու երբ հրաժեշտ էինք տալիս, հարցրեց, թե երբ ես տեսել Քնապին: Դու երկար վարանեցիր, բայց դեմքիդ արտահայտությունը մատնեց հանդիպումը: Տատիկդ ժպտաց ու ասաց, որ շատ ուրախ է քեզ համար:*

*Հենց դուրս եկանք փողոց, ձեռքս բռնեցիր, ու ամեն անգամ, երբ հարցնում էի, թե ուր ենք վազում էդպես արագ, պատասխանում էիր՝ արի, արի: Մենք անցանք Շպրեի փոքրիկ կամուրջը:*

*Թանգարանների կղզին... Արվեստին նվիրված շինությունների էդպիսի կուտակում երբեք չէի տեսել: Ես գիտեի, թե քո երկիրը մոխրագույն էր, իսկ էստեղ ամեն ինչ գունավոր էր: Դու ինձ քարշ տվեցիր Հին թանգարանի մոտ*[2]*: Մտանք. դրսից հսկայական, քառակուսի թվացող շենքը ներսից գմբեթավոր էր: Երբևէ նման ճարտարապետություն տեսած չկայի, էդքան տարօրինակ ու միևնույն ժամանակ՝ չտեսնված գեղեցիկ ու ներդաշնակ: Ինձ քաշեցիր սրահի մեջտեղը, հետո սկսեցիր պտտվել, մի անգամ, երկրորդ, երրորդ, ավելի ու ավելի արագ, մինչև գլուխս պտտվեց: Հետո կանգնեցրիր էդ խելահեղ վալսը, ինձ գիրկդ առար ու ասացիր՝ voila, էս է գերմանական ռոմանտիզմը, շրջան՝ քառակուսու սրտում, որն ապացուցում է, որ բոլոր տարբերությունները կարող են միավորվել: Հետո գնացինք Պերգամոն*[3]*:*

---

1 *Հեղինակի հորինած կերպար:*

2 *Altes Museum* – Բեռլինի կիրառական արվեստի թանգարան:

3 *Թանգարան Բեռլինում:*

***

– Հը, մի անգա՞մ էլ ապրեցիր էդ երջանիկ պահերը:

– Հա՛,– դեռ փակ աչքերով պատասխանեց Ջուլիան:

– Ո՞վ կար հետդ:

Ջուլիան բացեց աչքերը:

– Կարող ես չպատասխանել, Ջուլիա: Էդ քո կյանքն է, ես էլ քո փոխարեն որոշումներ չեմ կայացնելու:

– Ինչի՞ համար է էս ամենը:

– Ամեն անգամ, երբ փակում եմ աչքերս, մորդ դեմքն եմ տեսնում:

– Թոմասն ինձ հայտնվեց նկարում՝ ուրվականի պես, ստվերի պես, որն ասում էր՝ գնա հանգիստ, խաղաղ ամուսնացիր, առանց իմ մասին մտածելու և զղջալու: Էս նշան էր ի վերուստ:

Էնթոնին հազաց:

– Չէ մի չէ, էդ ընդամենը մատիտով գծած էսքիզ էր: Եթե անձեռոցիկս հեռու շպրտեմ ու չընկնի մուտքի մոտ դրված անձրևանոցների ամանի մեջ, ոչինչ չի փոխվի: Եթե գինու վերջին կաթիլն ընկնի մեր կողքին նստած կնոջ բաժակի մեջ ու ոչ թե սեղանին, ուրեմն նա կամուսնանա հետը նստած բթամտի հե՞տ: Էդպես մի նայիր, Մարսից չեմ իջել, ուղղակի էդ ապուշը, տպավորիչ երևալու համար, ընկերուհու հետ էնքան բարձր էր խոսում, որ ստիպված լսել եմ ամբողջ խոսակցությունը:

– Գիտե՞ս՝ ինչու ես էդպես ասում, որովհետև երբեք նշաններին չես հավատացել: Դու միշտ ուզել ես ամեն ինչ ղեկավարել:

– Նշանները սուտ բաներ են, Ջուլիա: Թղթի հազարավոր ճմռթած գնդիկներ եմ շպրտել գրասենյակիս աղբամանի մեջ, ու ամեն անգամ մտածելով, որ եթե նշանակետին խփեմ, երազանքս կիրականանա: Բայց

սպասածս նշանը չկար ու չկար: Շարունակեցի իմ հիմար գրազը, որոշելով, որ եթե երեք կամ չորս անգամ իրար վրա հաջողեմ, ուրեմն արժանի եմ հատուցման: Երկու տարի անդադար փորձելուց հետո կարողացա թուղթը գցել ինձնից տասը մետր հեռավորության վրա դրած աղբամանի մեջ, բայց ոչ մի բան: Մի երեկո երեք կարևոր հաճախորդների հետ գործնական ընթրիքի էի: Մինչ գործընկերներիցս մեկը թվարկում էր բոլոր երկրները, որտեղ մասնաճյուղեր ունեինք, ես փնտրում էի էն երկիրը, որտեղ ապրում էր իմ երազների կինը. պատկերացնում էի փողոցները, որոնցով նա առավոտյան քայլելով անցնում էր: Ռեստորանից դուրս գալիս նրանցից մեկը՝ չինացին, բայց անունը չհարցնես, չեմ հիշում, մի հետաքրքիր պատմություն պատմեց: Ասեց, որ եթե թռնենք լիալուսինը արտացոլող ջրափոսի մեջ, լունի ոգին մեզ մոտ կբերի նրանց, ում կարոտում ենք: Դու պետք է տեսնեիր նրա դեմքը, երբ ես զույգ ոտքով ցատկեցի ջրի մեջ: Հաճախորդս ոտքից գլուխ ջուր դարձավ, նույնիսկ գլխարկից էր կաթում: Ներողություն խնդրելու փոխարեն ասացի, որ նրա հնարքը չի աշխատում: Կինը, որին տենչում էի, չհայտնվեց: Էնպես որ, մի պատմիր հիմար նշաններից, Զուլիա, որոնցից կառչում են նրանք, ովքեր կորցրել են հույսն առ Աստված:

– Չփորձես նման բաներ ասել,– գոռաց Զուլիան,– փոքր ժամանակ ես ցատկել եմ հազարավոր առվակների ու ջրափոսերի մեջ, որ դու երեկոյան տուն գաս: Արդեն շատ ուշ է հեքիաթների համար: Վաղուց արդեն երեխա չեմ:

Էնթոնի Ուելշը տխուր նայեց աղջկան: Զուլիայի զայրույթը դեռ չէր անցել: Նա հետ հրեց աթոռը, վեր կացավ ու դուրս եկավ ռեստորանից:

– Կներեք նրան,– ասաց նա մոտեցող մատուցողին՝ սեղանին մի քանի թղթադրամ դնելով,– կարծում եմ՝ ձեր շամպայնի պղպջակները շատ-շատ էին...

***

Նրանք վերադարձան հյուրանոց հին քաղաքի նեղլիկ փողոցներով: Ոչ մի բառ չխաթարեց գիշերվա լռությունը: Ջուլիան քայլում էր զիգզագներով: Երբեմն ոտքն առնում էր մայթեզրերին: Էնթոնին առաջ էր գալիս նրան օգնելու, բայց նա իսկույն վերականգնում էր հավասարակշռությունն ու անտեսում հոր օգնությունը՝ չթողնելով անգամ դիպչել իրեն:

– Ես երջանիկ կին եմ,– օրորվելով ասաց նա,– երջանիկ ու փթթուն: Ունեմ իմ սիրած մասնագիտությունը, ապրում եմ իմ երազած բնակարանում, աշխարհի ամենալավ ընկերն իմն է, ու ես ամուսնանում եմ իմ սիրած տղամարդու հետ: Փթթո՛ւն, փթթուն,– կցկտուր կրկնեց նա:

Հանկարծ ոտքը ոլորվեց, Ջուլիան հազիվ հենվեց փողոցի լապտերի սյանն ու ցած սահեց:

– Գրողը տանի,– թրմփալով մայթին՝ փնթփնթաց նա:

Նա կրկին արհամարհեց հոր՝ իրեն օգնության մեկնած ձեռքը: Էնթոնին ծնկի իջավ ու նստեց կողքին: Փոքրիկ փողոցը դատարկ էր, ու երկուսով շարունակեցին մնալ այդպես՝ սյանը հենված, գետնին նստած: Անցավ մոտ տասը րոպե: Էնթոնին վերարկուի գրպանից մի փոքրիկ փաթեթ հանեց:

– Էս ի՞նչ է,– հարցրեց Ջուլիան:

– Կոնֆետ:

Ջուլիան ուսերը թոթվեց ու գլուխը շրջեց:

– Տակը երեք թե չորս շոկոլադե արջուկ պիտի լինի... Վերջին տվյալներով՝ նրանք խաղում էին ժելե օձերի հետ:

Ջուլիան չէր արձագանքում, հայրը ձևացրեց, թե ուզում է փաթեթը նորից դնել գրպանը, բայց Ջուլիան ձեռքից թռցրեց այն:

– Փոքր ժամանակ մի օր փողոցային կատու բերեցիր տուն,– սկսեց Էնթոնին, երբ Ջուլիան կուլ տվեց երրորդ արջուկին:– Դու կատվին էիր սիրում, կատուն էլ՝ քեզ: Բայց ութ օր հետո նա նորից պոկվեց փողոց... Հը՞, վերադառնանք:

– Չէ,– ծամելով պատասխանեց Ջուլիան:

Շիկակարմիր ձի լծած ձիակառքն անցավ նրանց մոտով: Էնթոնին ձեռքով ողջունեց կառապանին:

***

Մեկ ժամ անց վերադարձան հյուրանոց: Ջուլիան կտրեց-անցավ սրահն ու նստեց աջ վերելակը, Էնթոնին՝ ձախը: Հանդիպեցին վերջին հարկի սանդղահարթակում, կողք կողքի քայլեցին մինչև հարսանեկան լյուքսի դուռը, որտեղ Էնթոնին ճանապարհը զիջեց աղջկան: Ջուլիան ուղիղ մտավ իր սենյակը, Էնթոնին՝ իր:

Ջուլիան իրեն գցեց մահճակալին ու սկսեց քրքրել պայուսակը՝ բջջայինը գտնելու համար: Նայեց ժամացույցին ու զանգեց Ադամին: Ինքնապատասխանիչը միացավ: Ջուլիան լսեց հաղորդագրությունն ու կախեց ավելի շուտ, քան կինչեր ծնգոցը: Հետո հավաքեց Սթենլիի համարը:

– Ոնց որ թե լավ ես, հա՞, ջանիկս:

– Քեզ ահավոր շատ եմ կարոտել, գիտես, չէ՞:

– Հա՞ որ, գաղափար չունեմ... Հը, ի՞նչ կասես ճամփորդությունիցդ:

– Երևի վաղը հետ գամ, Սթենլի:

– Արդե՞ն: Գտա՞ր, ինչ որ ուզում էիր:

– Հիմնականում՝ հա:

– Ադամը հենց նոր գնաց էստեղից,– խորհրդավոր հայտարարեց Սթենլին:

– Մոտդ էր եկե՞լ:

– Հա, վա՛յ, նոր ասեցի, չէ՞: Խմա՞ծ ես, ի՞նչ է, Ջուլիա:

– Մի՛ քիչ:

– Էդ աստիճանի լավ ես, հա՞:

– Վա՛յ, ինչո՞ւ եք բոլորդ ուզում, որ ես վատ լինեմ:

– Ովքե՞ր ԵՆՔ ուզում: Ես մենակ եմ, արևս:

– Ի՞նչ էր ասում:

– Երևի ուզում էր քեզնից խոսել կամ էլ որոշել էր կողմնորոշումը փոխել: Բայց էդ դեպքում իզուր ժամանակ սպանեց, որովհետև, ախր, հեչ իմ ճաշակով չի, է՞:

– Ադամը եկել էր իմ մասի՞ն խոսելու:

– Ոչ, թանկագինս, եկել էր, որ *ես* խոսեի քո մասին: Մարդիկ միշտ էդպես են անում, երբ կարոտում են իրենց սիրելիներին:

Հեռախոսի մեջ լսվում էր Ջուլիայի ծանր շնչառությունը:

– Նա շատ տխուր էր, ես նրան, գիտես, առանձնապես տանել չեմ կարողանում ու երբեք էլ չեմ թաքցրել, բայց չեմ սիրում, երբ մարդիկ տխրում են...

– Իսկ ինչո՞ւ էր տխուր,– անկեղծ վշտացած՝ հարցրեց Ջուլիան:

– Դու կամ լրիվ խելքդ գցել ես, Ջուլիա, կամ տեղը տեղին հարբել: Նա հուսահատված էր, որ հարսանիքի չեղարկվելուց ընդամենը երկու օր հետո իր հարսնացուն... վա՛խ, ոնց եմ տրաքում էդ *հարսնացու* բառից, նաֆթալինի հոտ է գալիս... լավ, ինչ որ է... որ իր հարսնացուն թռել է՝ առանց հասցե թողնելու կամ փախուստը բացատրելու: Հիմա ոնց, տեղ հասա՞վ, սիրելիս, թե՞ «Ֆեդեքսով» մի տուփ ասպիրին ուղարկեմ...

– Նախ՝ ես չեմ «թռել» առանց հասցե թողնելու, ու ես գնացել եմ նրան տեսնելու...

– Բա ոնց, Վերմոնտ: Ձեռք ես առնո՞ւմ, Ջուլիա: Ասել ես, որ գնում ես Վերմո՞նտ: Ու դու դա համարում ես հասցե՞:

– Իսկ Վերմոնտում ի՞նչ խնդիր կա,– կմկմալով հարցրեց Ջուլիան:

– Դե՛, ոչ մի, մինչև որ ես չբլթացրի...

– Ի՞նչ ես արել, Սթենլի,– շունչը պահելով՝ հարցրեց Ջուլիան:

– Ասացի, որ Մոնրեալում ես: Էլ չգիտեի՝ ինչ էշություն դուրս տամ... Մյուս անգամ երբ խաբելու լինես, սիրելիս, նախօրոք զգուշացրու, իրար հետ քննարկենք, որ գոնե մեր խաբածները համընկնեն:

– Գրողը տանի...

– Ասիր ու թողիր...

– Ընթրե՞լ եք միասին:

– Դե, մի բերան բան սարքեցի, կերավ...

– Սթենլի:

– Հա ի՞նչ: Հո չէի թողնելու սովից մեռներ: Չգիտեմ, թե ինչ ես կորցրել Մոնրեալում, սիրելիս, կամ *ում* ես կորցրել, հասկանում էլ եմ, որ իմ գործը չի, բայց աղաչում-պաղատում եմ, զանգիր Ադամին, իմ խաթեր...

– Սխալ բաներ ես մտածում, Սթենլի:

– Ո՞վ ասեց, որ ես ինչ-որ բան եմ մտածում, ջանիկս: Եթե դա քեզ կհանգստացնի, ասել եմ, որ քո գնալը ոչ մի կապ չունի ձեր երկուսի հարաբերությունների հետ, ու որ դու գնացել ես հորդ հետքերով: Տեսա՞ր, խաբելու համար էլ տաղանդ է պետք:

– Երդվում եմ, որ չես խաբել, Սթենլի...

– Հետո ասեցի, որ նրա մահը քեզ ցնցել է, ու որ ձեր զույգի համար կարևոր էր, որ դու փակեիր անցյալի բոլոր բաց մնացած դռները: Սիրահարների կյանքում միջանցիկ քամիներ պետք չեն, համաձայն չե՞ս:

Ջուլիան շարունակում էր լռել:

– Հը, դե ասա տեսնեմ, արև, ո՞ւր հասար պապա Ուելշի պատմության հետքերով,– վերսկսեց Սթենլին:

– Ոնց որ թե էլի բաներ եմ գտել, որոնց պատճառով ատել եմ նրան:

– Ցնցված եմ: Ուրի՞շ:

– Ու մի՛ քիչ բաներ, որոնց համար սիրել եմ...

– Հիմա վաղը հետ գալի՞ս ես, թե՞ չէ:

– Չգիտեմ... Բայց երևի ճիշտ կլինի հետ գալ ու տեսնել Ադամին:

– Թե չէ՞...

– Լսի, էսօր գնացել էի ման գալու ու տեսա մի նկարչուհու...

Ջուլիան Սթենլիին պատմեց, թե ինչ էր գտել Մոնրեալի հին նավահանգստում, ու առաջին անգամ Սթենլին նրան չընդհատեց իր կծու ակնարկներով:

– Տեսնում ես, չէ՞, որ ժամանակն է հետ գալու, Սթեն: Նյու Յորքից գնալն ամեն անգամ վրաս թանկ է նստում: Ու հետո, եթե ես վաղը չվերադառնամ, ո՞վ քեզ հաջողություն կբերի:

– Կուզե՞ս մի խորհուրդ տամ: Թղթի վրա գրի էն ամենը, ինչ մտքովդ կանցնի, ու լրիվ հակառակն արա: Դե վերջ, բարի գիշեր, անուշս:

Սթենլին անջատեց հեռախոսը: Ջուլիան դուրս սողաց մահճակալից, որ գնա լոգասենյակ, ու չլսեց հոր խլացող ոտնաձայները, որ մարեցին հարևան սենյակում:

## 12

Շառագունած արևածագը փռվել էր Մոնրեալի վրա: Երկու ննջարանները բաժանող հյուրասենյակը ողողված էր արևածագի մեղմ լույսով: Դուռը թակեցին: Էնթոնին բացեց, ու մատուցողը ներս մտցրեց անվավոր սեղանիկը: Երիտասարդն առաջարկեց նախաճաշի սեղան գցել, բայց Էնթոնին մի քանի դոլար մտցնելով նրա գրպանը, շնորհակալություն հայտնեց ու վերցրեց նախաճաշը: Մատուցողը դուրս եկավ, Էնթոնին հետևեց, որ նրա հետևից դուռն անաղմուկ փակվի: Նա երկմտեց, թե որ սեղանիկն ընտրի. ցածրի՞կ սեղանիկը, թե՞ պատուհանի մոտ դրված կլոր միոտանին, որտեղից անզուգական բնապատկեր էր բացվում: Երկրորդ տարբերակը հաղթեց, ու Էնթոնին զգուշորեն փռեց սփռոցը, դասավորեց սպասքը, նարնջի հյութով սափորը, փաթիլներով ամանը, վիեննական խմորեղենի զամբյուղն ու բարակիրան ծաղկամանում հպարտ բազմած վարդը: Մի քայլ հետ գնաց, հետո տեղաշարժեց ծաղկամանը. կենտրոնում ավելի հարմար է, կաթամանն էլ ավելի լավ է նայվում հացամանի կողքին: Ջուլիայի ափսեի մեջ դրեց կարմիր ժապավենով կապված նախշազարդ թղթի մի գլանակ ու ծածկեց անձեռոցիկով: Այս անգամ մի մետր հեռու գնաց, որ հիանա իր կոմպոզիցիայի ներդաշնակությամբ: Փողկապի հանգույցն ուղղելուց հետո մոտեցավ ու, կամաց թակելով Ջուլիայի սենյակի դուռը, հայտարարեց, որ Տիկնոջ նախաճաշը մատուցված է: Ջուլիան փնթփնթաց ու հարցրեց, թե ժամը քանիսն է:

– Վեր կենալու ժամն է, դպրոցի ավտոբուսը տասնհինգ րոպեից կգա, ուշացար:

Մինչև քթի ծայրը վերմակի տակ ընկղմված Ջուլիան բացեց մի աչքն ու կատվի պես ձգվեց: Տարիներ ի վեր այդքան խոր քնած չկար: Նա խառնշտորեց մազերն ու աչքերը կկոցած պահեց այնքան ժամանակ, մինչև դրանք վարժվեցին ցերեկային լույսին: Հետո կտրուկ վեր թռավ ու գլխապտույտ զգալով՝ նստեց մահճակալի ծայրին: Կողասեղանին դրած ժամացույցը ցույց էր տալիս ժամը ութը:

– Ինչո՞ւ էսքան շու՛տ,– դժգոհեց նա՝ լոգասենյակ մտնելով:

Ու մինչ Ջուլիան ցնցուղ էր ընդունում, փոքրիկ հյուրասենյակի բազկաթոռի մեջ ընկղմված Էնթոնի Ուելշը, հոգոց հանելով, աչքը չէր կտրում ափսեից կախված կարմիր ժապավենից:

***

Կանադական ավիաուղիների ինքնաթիռը ժամը յոթն անց տասը պոկվեց Նյուարքի օդանավակայանից: Հրամանատարի ձայնը բարձրախոսներից հայտարարեց, որ սկսում են վայրէջք կատարել Մոնրեալում: Օդանավը ճիշտ նախատեսված ժամին մոտեցավ վայրէջքի: Ավագ ուղեկցորդը սկսեց բացատրել վայրէջքի ժամանակ անվտանգության կանոնները: Ադամը ձգվեց ինչքան որ հնարավոր էր, փակեց սեղանիկն ու լուսամուտից դուրս նայեց: Ինքնաթիռն անցնում էր Սուրբ Լավրենտիոսի վրայով: Հեռվում գծագրվում էին քաղաքի արվարձանները, կարելի էր տարբերակել Մոն Ռուայալի ուրվագծերը: ՄԴ-80-ը թեքվեց, Ադամը ձգեց ամրագոտին: Օդաչուի խցիկից արդեն երևում էր օդանավակայանի թռիչքուղին...

***

Ջուլիան ամուր կապեց պենյուարի գոտին ու մտավ փոքրիկ հյուրասենյակ: Նա մի հայացք գցեց սեղանին ու ժպտաց իրեն աթոռ առաջարկած Էնթոնիին:

– Քեզ համար «Earl Grey» եմ պատվիրել,– ասաց նա՝ բաժակը լցնելով: Տղան է՛լ սևն առաջարկեց, է՛լ սևի սևը, է՛լ դեղինը, հետո սպիտակը, հետո կանաչը, ծխեցրածը, սիչուանականը, չինականը, ֆորմոզականը, կորեականը, հնդկականը, ցեյլոնինը, նեպալինը, մնացածն էլ չեմ հիշում, մի հարյուր հատ թվեց, մինչև սպառնացի, որ ինքնասպան կլինեմ...

– «Earl Grey»-ը հենց էն է, ինչ պետք է,– պատասխանեց Ջուլիան՝ անձեռոցիկը բացելով:

Նրա աչքն ընկավ կարմիր ժապավենով կապված թղթին. Ջուլիան հարցական նայեց հորը:

Էնթոնին այն խլեց նրա ձեռքից:

– Կբացես նախաճաշից հետո:

– Էս ի՞նչ է,– հարցրեց Ջուլիան:

– Երկար ու ոլորված բաներ են, անունը՝ կրուասան,– խմորեղենի ամանը ցույց տալով՝ ասաց Էնթոնին,– եռանկյունիները, որոնց երկու կողմից շագանակագույն բաներ են երևում, շոկոլադով կրուասաններ են, իսկ այ, չորացած մրգով էս մեծ խխունջները խաղողով հացերն են:

– Է՛, կարմիր ժապավենով կապած բանի մասին եմ խոսում, որ պահեցիր:

– Քեզ ասեցի՝ հետո:

– Բա ինչո՞ւ էիր դրել ափսեի մեջ:

– Փոշմանեցի, ավելի ուշ կբացես:

Էնթոնին մի պահ շրջվեց, և Ջուլիան, օգտվելով առիթից, նրա ձեռքից խլեց թղթի գլանակը: Պոկեց

ժապավենն ու բացեց այն: Թոմասի դեմքը ժպտաց Ջուլիային:

– Ե՞րբ ես հասցրել առնել,– հարցրեց նա:

– Երեկ, երբ նավահանգստից դուրս էինք գալիս, դու գլուխդ տնկեցիր՝ առաջ ընկար: Ես լավ փող տվեցի նկարչուհուն, ու ասաց, որ կտա, քանի որ հաճախորդը չի ուզել նկարը վերցնի, իսկ իրեն պետք չի:

– Քո՞ ինչին էր պետք:

– Մտածեցի՝ կուրախանաս, երկար ժամանակ աչքդ դրանից չէիր կտրում:

– Լավ, լա՛վ, ճիշտն ասա, ինչո՞ւ ես առել,– համառեց Ջուլիան:

Էնթոնին նստեց բազմոցին՝ աչքը Ջուլիայից չկտրելով:

– Որովհետև մենք պետք է խոսենք, Ջուլիա: Ես հույս ունեի երբեք չանդրադառնալ սրան, ու խոստովանում եմ, որ շատ եմ մտածել՝ խոսել, թե չէ: Ասեմ՝ մտքովս չի անցել, որ մեր փոքրիկ չարաճճիությունը կարող է վտանգել մեր հարաբերությունները, քանի որ արդեն պատկերացնում եմ քո ռեակցիան: Բայց քանի որ բոլոր նշանները, ոնց որ դու ես ասում, ինձ ասում են՝ ասա, ասա, ուրեմն մի բան ասեմ...

– Վայ, հերիք սարուձոր ընկնես, դե ասա...– կտրուկ ասաց Ջուլիան:

– Ջուլիա, ինձ թվում է՝ Թոմասը իրականում չի մեռել...

***

Ադամը կատաղած էր: Նա ճանապարհ էր ընկել առանց ուղեբեռի, որ օդանավակայանից հնարավորինս շուտ դուրս գա, բայց Ճապոնիայից ժամանած 747 չվերթի ուղևորներն արդեն գրավել էին մաքսային

անցակետի բոլոր պատուհանները: Իսկ հերթին նայելով՝ հասկանում էր, որ ամենաքիչը քսան րոպե հետո նոր կկարողանա նետվել տաքսու մեջ:

«Sumimasen!»... բառը ճիշտ ժամանակին դուրս լողաց նրա հիշողությունից: Մի ճապոնական հրատարակչությունում աշխատող նրա լրագրողներից մեկն այնքան հաճախ էր այն օգտագործում, որ Ադամն արդեն մտածում էր, թե ներողություն խնդրելն ազգային սովորույթ էր: «Sumimasen, կներեք»,– կրկնում էր նա՝ ճարպկորեն խցկվելով ճապոնական ավիաուղիների ուղևորների արանքով, ու տասը «Sumimasen» հետո Ադամին հաջողվեց անձնագիրը խցկել կանադացի մաքսային սպայի քթի տակ, որն անմիջապես կնիքը խփեց ու վերադարձրեց: Արհամարհելով ուղեբեռի հանձնման սրահում հեռախոսով խոսելու արգելքը՝ Ադամը պայուսակի գրպանից հանեց բջջայինն ու հավաքեց Ջուլիայի համարը:

***

– Ոնց որ հեռախոսդ է զանգում, երևի սենյակում ես թողել,– լարված ձայնով ասաց Էնթոնին:

– Թեման մի փոխիր: Ինչ նկատի ունես, երբ ասում ես՝ «իրականում չի մեռել»:

– «Ողջ է» բառն ավելի կսազի էս դեպքում...

– Թոմասը ո՞ղջ է,– շանթահարված հարցրեց Ջուլիան:

Էնթոնին գլխով հավանության նշան արեց:

– Ի՞նչ գիտես:

– Նրա նամակից: Սովորաբար էն աշխարհի գնացածները նամակ գրել չեն կարող: Երևի թե՝ բացի ինձնից... Երբեք դրա մասին չէի մտածել, բայց հետաքրքիր փաստ է...

– Ի՞նչ նամակ,– բացականչեց Ջուլիան:

– Որ դու նրանից ստացար էդ դժբախտ դեպքից վեց ամիս հետո: Նամակը եկել էր Բեռլինից, նրա անունն էլ գրված էր հետևում:

– Ես երբեք Թոմասից նամակ չեմ ստացել: Ասա, որ խաբում ես:

– Դու չէիր էլ կարող ստանալ, որովհետև թողել, տնից գնացել էիր, ես էլ չէի կարող ուղարկել քեզ, որովհետև հասցե չէիր թողել: Բայց արի համաձայնիր, որ էս էլ մի լավ, լրացուցիչ փաստ է ցուցակդ թարմացնելու համար:

– Ի՞նչ ցուցակ:

– Ինձ ատելու պատճառներիդ ցուցակը:

Ջուլիան վեր կացավ ու մի կողմ հրեց նախաճաշի սեղանիկը:

– Չես մոռացել, չէ՞, որ անցյալ ժամանակով չենք խոսում: Ուրեմն ինչ որ ասեցիր, դարձրու ներկա ժամանակով, որ ճիշտ լինի,– գոռաց նա՝ հյուրասենյակից դուրս գալով:

Ջուլիան շրխկացրեց իր սենյակի դուռը. հյուրասենյակում մենակ մնացած Էնթոնին նստեց Ջուլիայի տեղը:

– Ափսոս էին,– քրթմնջաց նա՝ բուրումնավետ թխվածքներին նայելով:

***

Տաքսու հերթի մեջ խարդախություն անելն անհնար էր: Համազգեստավոր մի կին յուրաքանչյուր ուղևորի ցույց էր տալիս այն մեքենան, որ պետք է նստեր: Ադամը ստիպված էր սպասել իր հերթին: Ու նա կրկին հավաքեց Ջուլիայի հեռախոսահամարը:

***

– Անջատիր կամ պատասխանիր, նյարդայնացրեց արդեն,– ասաց Էնթոնին՝ մտնելով Ջուլիայի սենյակ:

– Հենց հիմա դուրս արի:

– Ջուլիա, Աստծու սիրուն, համարյա քսան տարի է անցել:

– Ու համարյա քսան տարվա մեջ դու ոչ մի հարմար առիթ չգտա՞ր, որ հետս խոսես,– գոռաց նա:

– Մենք իրար հետ շփվելու շատ քիչ առիթ ենք ունեցել վերջին քսան տարում,– վստահ ձայնով պատասխանեց նա:– Ու եթե լիներ էլ, չգիտեմ՝ կասեի՞, թե՞ չէ: Ինչի՞ համար: Որ մի պատճա՞ռ էլ ունենայիր քանդելու էն, ինչ հազիվ հավաքել էիր: Լավ գործ ունեիր Նյու Յորքում, բնակարան 42-րդ փողոցում, սիրած մարդ, որ, եթե չեմ սխալվում, դերասանական կուրսերի էր գնում, հետո մյուսը, որն իր ահավոր նկարներն էր ցուցադրում Քուինսում, որին թողեցիր, երբ փոխեցիր գործդ ու մազերիդ գույնը, կամ հակառակ հերթականությամբ՝ արդեն չեմ հիշում:

– Դո՞ւ որտեղից գիտես էդ ամենը:

– Եթե իմ կյանքը քեզ երբեք չի հետաքրքրել, չի նշանակում, որ ես չեմ հետաքրքրվել քեզնով:

Էնթոնին մի երկար հայացք գցեց աղջկա վրա ու վերադարձավ հյուրասենյակ: Ջուլիան հետևից ձայն տվեց:

– Բացե՞լ ես:

– Ես ինձ երբեք թույլ չեմ տվել բացել ուրիշի նամակները:

– Գոնե պահե՞լ ես:

– Քո սենյակում է, ավելի շուտ՝ էն սենյակում, որ քոնն էր, երբ տանն էիր ապրում: Դրել եմ գրասեղանիդ դարակում, ինձ թվաց, հենց էնտեղ նա պետք է քեզ սպասեր:

– Իսկ ինչո՞ւ ոչ մի բան չասեցիր, երբ հետ եկա Նյու Յորք:

– Իսկ ինչո՞ւ ինձ զանգեցիր Նյու Յորք գալուցդ վեց ամիս հետո, հը՞, Ջուլիա: Ու էն էլ որովհետև հասկացար, որ քեզ տեսել էի պատուհանից՝ Սոհոյի դեղատանը: Իսկ կարո՞ղ է՝ էդքան տարվա բացակայությունից հետո սկսել ես ինձ մի քիչ կարոտել: Ու եթե կարծում ես, որ շախ ու մատ անողը միշտ ես եմ եղել, չարաչար սխալվում ես

– Էս քո համար խա՞ղ էր:

– Աստված չանի... Երեխա ժամանակ սիրում էիր ջարդել քո բոլոր խաղալիքները:

Էնթոնին մի ծրար դրեց նրա մահճակալին:

– Սա քեզ,– ավելացրեց նա:– Երևի ճիշտ կլիներ՝ ավելի շուտ պատմեի, բայց հնարավորություն չեմ ունեցել:

– Էս ի՞նչ է,– հարցրեց Ջուլիան:

– Մեր Նյու Յորքի տոմսերը: Պատվիրել եմ առավոտյան, երբ դու դեռ քնած էիր: Ասեցի, չէ՞, որ ռեակցիադ կանխատեսել էի, ու ենթադրում եմ, որ մեր ճամփորդությունն ավարտված է: Հագնվիր, վերցրու պայուսակդ ու իջիր նախասրահ: Ես գնամ հաշիվը փակելու:

Դուրս գալով՝ Էնթոնին իր հետևից զգույշ փակեց դուռը:

***

Մայրուղին ծանրաբեռնված էր, տաքսին դուրս եկավ Սեն-Պատրիկ փողոց: Այստեղ էլ էր խցանված: Վարորդն առաջարկեց դուրս գալ 720-րդ փողոց ու ճանապարհը կտրել Ռընե Լեվեք պուրակով: Ադամը թքած ուներ երթուղու վրա, կարևորը շուտ հասնելն էր: Վարորդը հոգոց հանեց. հաճախորդը պետք է համբերությամբ զինվի, ինքն ավելին անել չի կարող: Մի կես ժամից տեղ կհասնեն, կարող է նույնիսկ ավելի շուտ, եթե քաղաք մտնելուց երթևեկությունը թեթևանա: Ու այսքանից հետո ասել, թե տաքսու վարորդները

սիրալիր չեն... Նա բարձրացրեց ռադիոընդունիչի ձայնը, որ խոսակցությանը վերջ տա:

Մոնրեալի բիզնես թաղամասի աշտարակներից մեկի տանիքը հայտնվեց հեռվում. հյուրանոցն արդեն շատ մոտ էր:

***

Պայուսակն ուսին գցած՝ Ջուլիան հաստատուն քայլերով ուղղվեց դեպի ընդունարան: Հյուրընկալը դուրս եկավ իր սեղանի հետևից ու շտապեց նրան ընդառաջ:

– Տիկին Ուելշ,– ասաց նա՝ ձեռքերը տարածելով,– պարոնը ձեզ սպասում է դրսում, լիմուզինը, որ պատվիրել ենք, մի փոքր ուշանում է, այսօր անտանելի խցանումներ են:

– Շնորհակալություն,– պատասխանեց Ջուլիան:

– Ցավում եմ, տիկին Ուելշ, որ ժամանակից շուտ եք հեռանում, հուսով եմ, որ մեր ծառայությունների որակը չէ պատճառը, այդպես չէ՞,– զղջահար հարցրեց նա:

– Ձեր կրուասանները սքանչելի էին,– պատասխանեց Ջուլիան,– ու ի գիտություն բոլորի՝ ասեմ, որ ես ամուսնացած չեմ:

Նա դուրս եկավ հյուրանոցից ու տեսավ մայթին իրեն սպասող Էնթոնիին:

– Մեքենան պետք է որ չուշանա,– ասաց նա,– այ, արդեն մոտեցավ:

Սև լինքոլնը կանգնեց նրանց մոտ: Իջնելուց առաջ վարորդը բացեց բեռնախցիկը: Ջուլիան բացեց դուռը և նստեց հետևի նստարանին: Մինչ դռնապանը տեղավորում էր նրանց երկու պայուսակները, Էնթոնին շրջանցեց մեքենան: Ինչ-որ տաքսի բարձր ազդանշան տվեց նրանից ընդամենը մի քանի սանտիմետր այնկողմ ու քիչ մնաց վրաերթի ենթարկեր:

***

– Ինչ անուշադիր մարդիկ են, տո՛,– գոռաց տաքսու վարորդը՝ մեքենան երկրորդ շարքում կանգնեցնելով Սեն-Պոլ հյուրանոցի դիմաց: Ադամը մի քանի դոլար խցկեց նրա բուռն ու առանց մանրին սպասելու՝ նետվեց դեպի պտտադռները: Նա ներկայացավ ընդունարանում ու հարցրեց օրիորդ Ուելշի սենյակը: Դրսում սև լիմուզինը սպասեց, որ տաքսին բարեհաճի հեռանալ: Նրանց ճանապարհը փակող տաքսիստը թղթադրամներն էր հաշվում և շտապելու մտադրություն անգամ չուներ:

– Տեր և տիկին Ուելշներն արդեն հեռացել են հյուրանոցից, ցավում եմ,– Ադամին պատասխանեց հյուրընկալը:

– *Տեր* և տիկին Ուելշնե՞րը,– կրկնեց Ադամը՝ շեշտելով «տեր» բառը:

Դռնապանը, հոգոց հանելով, մոտեցավ նրան.

– Ինչո՞վ կարող եմ օգնել,– եռանդագին հարցրեց նա:

– Ասացեք խնդրեմ, իմ կինը ձեր հյուրանոցո՞ւմ է անցկացրել այս գիշերը:

– Ձեր կի՞նը,– հարցրեց դռնապանը՝ Ադամի ուսի վրայով դեպի դուրս մի հայացք նետելով:

Լիմուզինը դեռ տեղից չէր պոկվել:

– Օրիորդ Ուելշը:

– Այո, օրիորդը մեր հյուրերի շարքում էր, բայց արդեն գնացել է:

– Նա մենա՞կ էր:

– Չեմ հիշում, որ նրան տեսած լինեմ ինչ-որ մեկի ուղեկցությամբ,– ավելի ու ավելի կաշկանդվելով՝ պատասխանեց դռնապանը:

Ազդանշանների սիմֆոնիան Ադամին ստիպեց դուրս նայել փողոց:

– Պարո՞ն,– միջամտեց դռնապանը՝ նորից փորձելով գրավել նրա ուշադրությունը:– Գուցե մենք կարող ենք ձեզ ինչ-որ բա՞ն հյուրասիրել:

– Ձեր աշխատակիցն ինձ նոր ասաց, որ պարոն և տիկին Ուելշները հեռացել են ձեր հյուրանոցից: Երկուսով: Երկու հոգի: Հիմա նա մենա՞կ էր, թե՞ ոչ,– վրա տվեց Ադամը:

– Մեր աշխատակիցն ինչ-որ բան խառնել է,– վստահեցրեց դռնապանը՝ հայացքով շանթահարելով ընդունարանի երիտասարդ աշխատակցուհուն,– մենք հարյուրավոր հաճախորդներ ունենք: Թե՞յ, կամ գուցե սո՞ւրճ կցանկանաք:

– Իսկ նա վաղո՞ւց է գնացել:

Դռնապանը զգույշ նայեց փողոց: Սև լիմուզինը վերջապես տեղից շարժվեց: Մեքենայի հետևից նայելով՝ նա թեթևացած հոգոց հանեց:

– Բավական ժամանակ է արդեն,– պատասխանեց նա:– Մենք հրաշալի մրգային հյութեր ունենք: Թույլ տվեք ձեզ ուղեկցել ճաշասենյակ, այսօր դուք իմ հյուրն եք:

## 13

Ճանապարհին ոչ մի բառ չփոխանակեցին: Ամբողջ թռիչքի ընթացքում Ջուլիան աչքը չկտրեց պատուհանից:

***

*Ամեն անգամ ինքնաթիռ նստելիս ամպերի մեջ քո դեմքն եմ փնտրել, Թոմաս, փորձել երկնքով մեկ լողացող բազում կերպարների մեջ գտնել քո դիմագծերը: Հարյուր*

նամակ եմ գրել, հարյուրն էլ ստացել քեզնից՝ շաբաթական երկու նամակ: Մենք երդվել էինք նորից հանդիպել առաջին իսկ հնարավորության դեպքում: Դասերից ազատ ժամանակ աշխատում էի, որ փող հավաքեմ քեզ մոտ վերադառնալու համար: Աշխատել եմ ռեստորաններում, մարդկանց կեղավորել կինոթատրոններում, միաժամանակ բաժանել թռուցիկներ, ու ամեն, ամեն ինչ արել եմ՝ երազելով այն օրվա մասին, երբ կիջնեմ Բեռլինի օդանավակայանում, ուր դու ինձ սպասելիս կլինես... Քանի՜-քանի գիշեր աչքերս չեմ փակել՝ հիշելով քո հայացքը, թե ոնց էինք լիաթոք ծիծաղում գորշ քաղաքի փողոցներում: Երբեմն, երբ տատիկիդ հետ մենակ էինք մնում, ասում էր, որ չի հավատում մեր սիրուն: Որ էդ երկար չի տևի: Որ մենք շատ տարբեր էինք, ես՝ արևմուտքից եկած աղջիկս, ու դու՝ արևելքի հպարտ զավակը: Ու ամեն անգամ, երբ դու տուն էիր գալիս ու գրկում ինձ, ես քո ուսի վրայից նայում էի նրան ու ժպտում՝ ասես վստահեցնելով, որ նա սխալվում է: Ու երբ հայրս ինձ զոռով նստեցրեց պատուհանների տակ սպասող մեքենան, ես ինչքան ուժ ունեի, գոռում էի քո անունը, ուզում էի, որ դու լսես: Իսկ էն երեկո, երբ լուրերը հայտնեցին Քաբուլում տեղի ունեցած «պատահարի» մասին, որ խլել էր չորս լրագրողի կյանքը, ու որոնցից մեկը գերմանացի էր, ես նույն ակնթարթին հասկացա, յոթերորդ զգայարանով հասկացա, Թոմաս, որ խոսքը հենց քո մասին էր: Ռեստորանում հին, փայտե վաճառասեղանի հետևում կանգնած բաժակներն էի սրբում: Արյունը սառեց երակներումս: Ու կորցրի գիտակցությունս... Հաղորդավարն ասաց, որ ձեր մեքենան պայթել է սովետական զորքերի մոռացած արկի վրա: Ճակատագիրն ասես ուզում էր նորից բռնել քեզ ու չթողնել, որ հասնեիր քո երազած ազատությանը: Թերթերը ոչ մի բացատրություն չտվեցին. զոհերի թիվն ասել էին՝

հերիք էր. ու արդեն ինչ կարևոր է, թե ովքեր էին, ինչ էին արել իրենց կյանքում, թե ում էին թողել վշտի ու մթության մեջ: Բայց ես գիտեի, գիտեի, Թոմաս, որ դու ես էն գերմանացին, որի մասին խոսում են: Երկու օր պետք եղավ, որ գտնեմ Քնապին, երկու օր բերանս փշուր չէի դրել:

Հետո նա վերջապես զանգեց. նրա ձայնի տեմբրից իսկույն հասկացա, որ նա կորցրել է ընկերոջը, իսկ ես՝ իմ սիրուն: Իմ ամենահարազատ մարդը՝ անդադար կրկնում էր նա: Նա իրեն մեղավոր էր զգում, որ քեզ օգնել էր լրագրող դառնալ, ես էլ, իմ ցավը թողած, նրան էի հանգստացնում: Նա քեզ օգնեց հասնել քո երազանքին: Ես նրան ասում էի, թե ինչքան ես ինքդ քեզ փնովել, որ չես կարողացել նրան ըստ արժանվույն շնորհակալություն հայտնել: Ու մենք երկար խոսում էինք քեզնից, որ դու մեզ չլքես, միշտ մեզ հետ մնաս: Նա ինձ ասաց, որ ձեր մարմիններն այդպես էլ չեն ճանաչել: Մի վկա պատմել է, որ արկի պայթյունից մեքենան բզիկ-բզիկ էր եղել: Ճանապարհը փասնյակ մետր շառավղով ծածկված էր պատռտված թիթեղի կտորներով, իսկ այնտեղ, որտեղ դուք մահացել էիք, մնացել էր պայթյունի հետևանքով բացված ձագարն ու մեքենայի՝ մարդկային անհետեթության ու վայրագության մասին վկայող կմախքը: Քնապը չէր կարողանում իրեն ներել, որ քեզ ուղարկել էր Աֆղանստան: Վերջին պահին, ինչ-որ մեկի փոխարեն՝ ասում էր նա՝ արցունքները կուլ տալով: Ա՛խ, գոնե դու կողքին չլինեիր այդ վայրկյանին, երբ նա մարդ էր փնտրում: Բայց ես հո հասկանում էի, որ նա քեզ քո երազանքների նվերն էր արել: Կներես, կներես, կներես՝ հեծեծալով կրկնում էր Քնապը, ու ես, հուսահատված, լաց էլ չէի լինում. վախենում էի, որ արցունքի կաթիլների հետ դու միջից դուրս կգաս: Ես չկարողացա հեռախոսն անջատել, Թոմաս, ուղղակի դրեցի վաճառասեղանին, հանեցի գոգնոցս ու դուրս եկա փողոց: Քայլում

էի, առանց հասկանալու, թե ուր եմ գնում: Շուրջս քաղաքը եռում էր՝ ասես ոչինչ էլ չէր եղել, ոչինչ...

Ո՞ւմ էր պետք, որ առավոտյան Քաբուլի թաղամասերից մեկում երեսնամյա մեկը, անունը՝ Թոմաս, մահացել է՝ արկի վրա պայթելով: Ո՞ւմ հոգին էր ցավում: Ո՞վ էր գիտակցում, որ ես քեզ էլ չէի տեսնելու, որ իմ աշխարհը քանդվել էր ու էլ երբեք նույնը չէր լինի, որ ես էլ էի պայթել էդ մեքենայի մեջ...

Ասացի՞ քեզ, որ երկու օր բան չէի կերել: Ոչի՜նչ: Պատրաստ էի հարյուր անգամ էլ կրկնել, մենակ թե քեզ հետ խոսեի իմ մասին, որ լսեի, թե ինչպես ես պատմում քո մասին: Ինչ-որ մի փողոցի անկյունում նորից գիտակցություն կորցրի...

Գիտե՞ս, որ քո շնորհիվ ծանոթացա Սթենլիի հետ, որը մեր հանդիպման առաջին պահից դարձավ իմ ամենալավ ընկերը: Նա դուրս եկավ իմ կողքի հիվանդասենյակից: Մոլորված քայլում էր հիվանդանոցի երկար միջանցքով: Սենյակիս դուռը կիսաբաց էր: Նա կանգ առավ, նայեց ինձ ու ժպտաց: Աշխարհում ոչ մի ծաղրածու չէր կարողանա դեմքին էդքան փխուր ժպիտ պատկերել: Շուրթերը դողում էին: Հանկարծ նա շշնջաց էն երկու բառը, որ ես ինքս ինձ արգելել էի արտասանել, բայց նրան երևի թե կարող էի խոստովանել, քանի որ չէի ճանաչում: Հոգիդ անծանոթին բացելը հարազատ մեկի հետ խոսել չի, ճշմարտությունը չի դառնում անդարձելի, ընդամենը հոգու ճիչ է, որ հետո կարելի է մաքրել մոռացության ռետինով: «Նա մահացավ»,- ասաց Սթենլին, ու ես պատասխանեցի. «Հա, նա մահացավ»: Նա խոսում էր իր ընկերոջ, ես՝ քո մասին: Հենց էդպես էլ ծանոթացանք, ես ու Սթենլին, էն օրը, երբ կորցրինք նրանց, ում սիրում էինք: Էդուարդը գնաց ՁԻԱՀ-ից, իսկ դու մի ուրիշ պանդեմիայից, որ մինչ օրս փոթորկվում է

*մարդկանց աշխարհում: Նա նստեց ոտքերիս մոտ, հարցրեց, թե գոնե լացել եմ, ու քանի որ ես ճիշտն ասացի, նա էլ խոստովանեց՝ ես էլ: Նա մեկնեց ձեռքը, ես բռնեցի, ու մեր երկուսի աչքերից դուրս հորդացին առաջին արցունքները, որոնք Էդուարդին կանում-հեռացնում էին Սթենլիից, քեզ էլ՝ ինձնից:*

***

Էնթոնի Ուելշը հրաժարվեց ուղեկցորդուհու առաջարկած ըմպելիքից: Սրահը գրեթե դատարկ էր, սակայն Ջուլիան գերադասել էր տասը շարք հեռու նստել՝ պատուհանին կպած, հայացքը՝ երկնքի անծայրածիրության մեջ մոլորված:

***

*Հիվանդանոցից դուրս գրվեցի ու հեռացա տնից: Կարմիր ժապավենով կապեցի քո հարյուր նամակները: Դրեցի գրասեղանիս դարակում: Էլ պետք չէր վերընթերցել՝ հիշելու համար: Ճամպրուկս հավաքեցի ու գնացի՝ առանց նույնիսկ հորս հրաժեշտ տալու, որին էդպես էլ չէի ներել մեզ բաժանելու համար: Փողը, որ հավաքել էի քեզ մոտ գալու համար, օգտագործեցի, որ հորից հեռու ապրեմ: Մի քանի ամիս հետո սկսեցի նկարչուհու իմ կարիերան ու կյանքը, որտեղ դու էլ չկայիր...*

*Ես ու Սթենլին սկսեցինք իրար հետ շատ ժամանակ անցկացնել: Ու ծնվեց մեր մեծ ընկերությունը: Էն ժամանակ նա աշխատում էր Բրուքլինում՝ հնոտիաշուկայում: Մենք հանդիպում էինք երեկոները՝ կամրջի մեջտեղում: Երբեմն ժամերով մնում էինք էնտեղ, բազրիքներին կպած՝ նայելով գետով վեր ու վար անող նավերին, երբեմն զբոսնում էինք ափին: Նա պատմում էր Էդուարդից, ես՝ քեզնից, ու երբ տուն էինք գալիս,*

մեզնից յուրաքանչյուրը ձեզնից մի քիչ կանում էր իր հետ՝ իր գիշերվա գիրկը:

Թոմա՛ս, ինչքան եմ փնտրել եմ քո սրվերը մայթերին կախված ծառերի սրվերների մեջ, քո դեմքի արտացոլումը Հուդզոնի ջրերում, անհույս փորձել եմ քաղաքում սուրացող քամու սուլոցի մեջ բռնել քո ձայնի ելևէջները: Երկու տարի մեկ առ մեկ վերապրել եմ Բեռլինում անցկացրած մեր ամեն վայրկյանը, երբեմն ծիծաղել մեզ վրա, բայց ոչ մի ակնթարթ չեմ դադարել քո մասին մտածելուց:

Ես այդպես էլ չստացա քո նամակը, Թոմաս, էն նամակը, որն ինձ կավետեր, որ դու չես մեռել: Չգիտեմ էլ, թե ինչ ես գրել: Նամակն ուղարկել ես համարյա քսան տարի առաջ, բայց կարծես երեկ լիներ: Գուցե ուզում էիր ասել, որ էդքան ամիս քեզնից լուր չկար, ու դու էլ երբեք ինձ չես սպասելու օդանավակայանում: Ու որ իմ գնալուց հետո ահավոր շատ ժամանակ է անցել: Կամ որ մեր զգացմունքները հանգել են. չէ՞ որ սերն էլ ունի իր մայրամուտը, որը վրա է հասնում, երբ մոռանում ենք մեկմեկու համբույրների համը: Կամ երևի դու դադարել ես հավատալ մեր սիրուն, կամ էլ երևի ես մեկ ուրիշ պատճառով եմ քեզ կորցրել: Քսան տարի կամ համարյա քսան տարի. ի՜նչ երկար էր գալիս նամակդ...

Մենք էլ առաջվանը չենք: Տեսնես նորից կգնայի՞ Փարիզից Բեռլին: Ի՞նչ կլիներ, եթե մեր հայացքները նորից խաչվեին, քոնը՝ պատի մի կողմից, իմը՝ մյուս: Գիրկդ կբացեի՞ր ինձ համար, ինչպես որ բացեցիր Քնապի համար 1989 թվականի նոյեմբերյան մի երեկո: Կգնայի՞նք զբոսնելու քաղաքի փողոցներով, որն, ի տարբերություն մեզ, գնալով ջահելանում է: Տեսնես քո շուրթերն այսօր է՞լ նույնքան քնքուշ ու քաղցր կլինեին: Երևի ճիշտ կլինի, եթե քո նամակը էդպես էլ փակված

*մնա իմ գրասեղանի դարակում, հը՞, ավելի հեշտ չի՞ լինի մեզ համար:*

***

Ուղեկցորդուհին թփթփացրեց Ջուլիայի ուսին: Ժամանակն էր կապել ամրագոտիները, ինքնաթիռը մոտենում էր Նյու Յորքին:

***

Ադամը դժվարությամբ համակերպվեց, որ ստիպված է օրվա մեծ մասն անցկացնել Մոնրեալում: «Էյր Կանադայի» աշխատակիցը ջանք չխնայեց հաճոյանալու համար, բայց, ավաղ, Նյու Յորք վերադառնալու միակ ազատ տեղը ժամը տասնվեցին թռչող ինքնաթիռում էր: Նա բազմիցս փորձեց կապվել Ջուլիայի հետ, բայց գծի մյուս կողմում միանում էր ինքնապատասխանիչը...

***

Վերադարձան ուրիշ մայրուղով, պատուհանից այս անգամ Մանհեթենի աշտարակներն էին երևում: Լինքոլնը մտավ համանուն թունելը:

– Տարօրինակ զգացում ունեմ, որ աղջիկս ուրախ չէ ինձ հյուրընկալելու համար: Քո փտած ձեղնահարկի փոխարեն լավ կլինի գնամ իմ տուն: Շաբաթ օրը կվերադառնամ, կմտնեմ արկղիս մեջ. հենց էդ օրն էլ կգան, ինձ կտանեն: Լավ կլինի զանգես Ուոլեսին, որ հաստատ համոզվենք, որ տանը չի,– ասաց Էնթոնին՝ Ջուլիային մեկնելով թղթի մի կտոր, որի վրա նշված էր Ուոլեսի հեռախոսահամարը:

– Կառավարիչդ շարունակում է քո տա՞նն ապրել:

– Գաղափար անգամ չունեմ, թե *օգնականս* ինչով է զբաղվում: Մեռնելուցս հետո առիթ չեմ ունեցել նրանից

իր աշխատանքի գրաֆիկը ճշտել: Բայց եթե չես ուզում ինֆարկտ ստանա, ճիշտ կլինի, որ տանը չլինի, երբ մենք ներս մտնենք: Ու եթե ստացվի հետը խոսել, երախտապարտ կլինեմ, եթե պատճառ գտնես նրան մի շաբաթով աշխարհի մյուս ծայրն ուղարկելու:

Պատասխանելու փոխարեն Ջուլիան հավաքեց Ուոլեսի հեռախոսահամարը: Ձայնային հաղորդագրությունը հայտնեց, որ իր գործատուի մահվան պատճառով նա մեկ ամսով արձակուրդ է վերցնում: Պատասխան հաղորդագրություն թողնել չէր լինում: Պարոն Ուելշի գործերի հետ կապված անհապաղ հարցերի դեպքում խնդրվում էր ուղիղ կապվել նոտարի հետ:

– Հանգիստ կարող ես շունչ քաշել, ճամփան բաց է,– հայտարարեց Ջուլիան՝ բջջայինը պայուսակում տեղավորելով:

Կես ժամ անց մեքենան կայանեց Էնթոնի Ուելշի առանձնատան դիմաց: Ջուլիան նայեց առանձնատան ճակատամասին, ու նրա հայացքը կանգ առավ երրորդ հարկի պատուհաններից մեկին: Հենց այդտեղ էր, որ մի կեսօր դպրոցից վերադառնալիս նա տեսավ մորը՝ պատշգամբի ճաղավանդակից կիսակախ: Ի՞նչ կլիներ, եթե նա մորը ձայն չտար: Մայրը, տեսնելով Ջուլիային, թեթև ձեռքով արեց, ասես այդ շարժումը մաքրելու, ջնջելու էր իր մտադրության բոլոր հետքերը:

Էնթոնին բացեց իր փոքրիկ պայուսակն ու բանալիների տրցակը մեկնեց Ջուլիային:

– Բանալիներ է՞լ են սարքել, տվել ձեռքդ:

– Էսպես ասեմ. քննարկել ենք նույնիսկ էն վարկածը, որ դու կամ չես ուզենա ինձ տուն թողնել, կամ էլ միանգամից կանջատես: Հը՞, բացում ես, թե՞ չէ: Հեչ կարիք չկա էնքան կանգնել, մինչև հարևանները ճանաչեն:

– Յա՛, դու ճանաչում ես քո հարևանների՞ն: Էս ի՞նչ նորությունն էր:

– Լավ, էլի, Ջուլիա:

– Լավ, լավ,– հոգոց հանեց վերջինս՝ պտտելով դռան երկաթակուռ ծանր բռնակը:

Լույսը նրա հետ ներս սահեց: Ոչ մի բանի ձեռք տված չէր, նույնն էր, ինչպես նրա վաղ հուշերում. հսկայական շախմատի տախտակ հիշեցնող սև-սպիտակ քառակուսիներով հատակը, աջ կողմում շքեղ, կորնթարդ վեր բարձրացող մուգ փայտից աստիճանների հովհարը: Ինչքա՛ն էր հայրը սիրում պարծենալ մեծանուն կահույքագործի փորագրած ոստե ճաղաշարով: Խորքում գտնվող դուռը տանում էր դեպի խոհանոց ու պահոց, որոնք ավելի մեծ էին, քան այն բնակարանը, որտեղ Ջուլիան ապրում էր տնից հեռանալու օրվանից: Ձախ կողմում աշխատասենյակն էր, ուր հայրը լրացնում էր իր անձնական հաշվապահական գրքերն այն հազվադեպ երեկոներին, երբ մնում էր տանը: Ամենուր ճոխության հետքեր էին, որոնք Էնթոնի Ուելշին հեռացրել էին այն ժամանակներից, երբ նա Մոնրեալի երկնաքերներից մեկում սուրճ էր վաճառում: Ամենաբարձր պատին կախված էր փոքրիկ Ջուլիայի դիմանկարը: Արդյոք նրա աչքերում դեռ փայլո՞ւմ էին այն կայծերը, որ նկարիչը որսացել էր հնգամյա աղջնակի հայացքում: Ջուլիան բարձրացրեց գլուխը, որ հիանա կեսոնե առաստաղով: Եթե երեսվածքներից այստեղ կամ այնտեղ մի քանի սարդոստայն կախված լիներ, ապա առանձնատունը ուրվականների դղյակի կնմանվեր, բայց Էնթոնի Ուելշի տունը, ինչպես միշտ, անթերի տեսք ուներ:

– Հիշում ես, չէ՞, Ջուլիա, սենյակդ որ կողմում էր,– հարցրեց Էնթոնին՝ մտնելով իր աշխատասենյակ:– Գնա, վստահ եմ, որ դեռ ճամփան հիշում ես: Եթե սոված ես,

տես՝ խոհանոցի դարակներում կարող է ուտելու բան մնացած լինի. մակարոնեղեն կամ ինչ-որ պահածո: Էդքան էլ երկար ժամանակ չի, որ մեռել եմ:

Էնթոնին հայացքով հետևեց Ջուլիային, որ երկու-երկու բարձրանում էր աստիճաններով՝ ձեռքը բազրիքով սահեցնելով, ճիշտ այնպես, ինչպես երեխա ժամանակ, ու հասնելով սանդղահարթակին, ճիշտ ինչպես երեխա ժամանակ, շրջվեց, որ տեսնի՝ իրեն հետևող կա՞, թե՞ ոչ:

– Հը՞,– հարցրեց նա՝ աստիճանների բարձունքից ցած նայելով:

– Ոչ մի բան,– ժպտալով պատասխանեց Էնթոնին:

Ու մտավ իր աշխատասենյակ:

Ջուլիայի առաջ ձգվեց երկար միջանցքը: Առաջին դուռը տանում էր մոր սենյակ: Ջուլիան ձեռքը դրեց դռան բռնակին. այն անձայն իջավ ներքև և նույնպես անձայն բարձրացավ, երբ նա մտափոխվեց ու չմտավ սենյակ: Ջուլիան առաջ գնաց դեպի միջանցքի խորքը առանց կանգ առնելու:

***

Սենյակը լուսավորված էր տարօրինակ ծիածանագույն լույսով: Վրա բերված վարագույրները փողփողում էին գորգի վառ գույների վրա: Նա մոտեցավ մահճակալին, տեղավորվեց ծայրին ու դեմքը թաղեց բարձերի մեջ՝ ռունգերով մեկ ներշնչելով բարձերեսի բույրը: Հիշողության մեջ դուրս լողացին այն գիշերները, որ անց էր կացնում ծածկոցի տակ գրպանի լապտերի լույսով գաղտնի գիրք կարդալով. այն երեկոները, երբ մտացածին հերոսները կենդանանում էին վարագույրների հետևում, երբ պատուհանը բաց էր: Ինչքա՜ն ստվերային հանցակիցներ էին գալիս՝ նրա հետ կիսելու գիշերվա անքուն ժամերը: Ջուլիան երկարեց ոտքերն ու սկսեց

չորսբոլորը նայել: Ահա ջահը, որ թեթև էր թվում, բայց չափազանց ծանր էր, ու դրա համար էլ նրա սև թևերը չէին պտտվում, երբ բարձրանում էր աթոռին ու փչում վրան: Զգեստապահարանի կողքին դրված էր փայտե սնդուկը, որի մեջ նա հավաքում էր իր տետրերը, մի քանի լուսանկար, մոգական անվանումներով երկրների քարտեզները, որ գնել էր թղթավաճառներից կամ փոխանակել այն քարտեզներով, որոնցից երկուսն ուներ (ինչ իմաստ կար երկու անգամ գնալ նույն տեղը, երբ աշխարհում այնքա՜ն չբացահայտված տեղեր կային): Հայացքն ուղղվեց գրադարակին, որտեղ դասավորված էին նրա դպրոցական դասագրքերը՝ ուղիղ գծով, սեղմված երկու հին խաղալիքի՝ կարմիր շան ու կապույտ կատվի միջև, որ տարիներ ի վեր անտեսել են մեկմեկու: Պատմության դասագրքի նռնագույն կազմը, որ քոլեջն ավարտելուց ի վեր անշարժ պառկած էր գրասեղանին, ասես նրան աչքով էր անում: Զուլիան մահճակալից վեր կացավ ու մոտեցավ սեղանին:

Տեսնես քանի՞ ժամ էր կողմնացույցի պոչով խազխզած փայտերեսով սեղանի մոտ պարապությունից ձանձրանալով՝ տետրում բարեխղճորեն նույն նախադասությունը գրել, երբ Ուոլեսը դուռը թակեց, որ ստուգի՝ դասերն արել է, թե ոչ: «Հոգնել եմ, հոգնել եմ, հոգնել եմ...» տողերը լցրել էին տետրի բոլոր էջերը: Պահարանի ճենապակե բռնակները աստղի ձև ունեին: Բավական էր մի քիչ քաշել դարակը, ու այն դուրս էր սահում: Զուլիան բացեց դարակը: Կարմիր ֆլոմաստերը գլորվեց դարակի խորքը: Զուլիան ձեռքը ներս մտցրեց, բայց բացվածքը մեծ չէր, ու անամոթը դուրս սողոսկեց: Խաղը դուր եկավ Զուլիային, նրա ձեռքը շարունակեց շոշափելով հետազոտել դարակը: Բութ մատով զգաց գծագրական կարկինը, ճկույթով՝ տոնավաճառում շահած ուլունքները,

որոնք բավական անդուր էին կրելու համար: Մատ-նեմատը դեռ տատանվում էր: Իսկ սա՞ ինչ էր: Գորտի տեսքով մատիտի սրի՞չը, թե՞ ինքնակպչուն ժապավենի պանակ կրիան: Միջնամատը թղթի դեմ առավ: Վերևի աջ անկյունի թեթև անհարթությունը մատնում էր նա-մականիշի առկայությունը: Ծայրը թեթևակի պոկվել էր տարիների ընթացքում: Դարակի մթության գրկում նիր-հած ծրարը շոյելով՝ մատը սահեցրեց թանաքով գրչի թողած հետքերով: Ինչպես այն խաղում, երբ երկուսից մեկը փորձում է մատների ծայրով գուշակել մյուսի ձեռ-քին գրված բառը, Զուլիան ճանաչեց Թոմասի ձեռա-գիրը: Դուրս քաշեց ծրարը, պատռեց ու հանեց նամակը:

*Սեպտեմբեր 1991*

*Զուլիա*

*Ես ողջ եմ մնացել մարդկային խելագարության մսա-ղացից: Ես միակն եմ, որ ողջ եմ մնացել: Վերջին նամա-կումս արդեն գրել էի, որ վերջապես գնացինք Մասուդին փնտրելու: Ականջներումս դեռ զնգացող պայթյունից հետո մոռացել էլ եմ, թե ինչու էի փնտրում նրան: Մոռացել եմ, թե ինչ խանդավառությամբ էի ուզում պատմել նրան ճշմարտությունը: Ոչինչ չեմ տեսել՝ ափելությունից զատ, որն ընկերներիս մահվան բերանը տարավ ու քիչ մնաց՝ ինձ էլ սպաներ: Գյուղացիներն ինձ գտել էին փլատակների մի-ջից՝ մոտ քսան մետր հեռու էնտեղից, որտեղ ես պետք է հոգիս ավանդած լինեի: Ինչո՞ւ մահվան շունչը բավարար-վեց ինձ օդ շպրտելով, իսկ ընկերներիս պատառ-պատառ արեց: Երբեք չեմ իմանա: Բոլորը կարծել են, թե մեռած եմ, ու դրել են սայլակի մեջ: Եթե էդ փոքրիկ կղան դիմանար գայթակղությանը, չհաղթահարեր վախն ու չփորձեր ժա-մացույցը թևիցս հանել, եթե թևս չշարժվեր, ու երեխան վախից կոկորդով մեկ չգոռար, ինձ հաստատ կթաղեին:*

Բայց ես ողջ էի, ողջ էի դուրս պրծել մսաղացից: Ասում են՝ երբ մահը գրկում է քեզ, ամբողջ կյանքդ անցնում է աչքիդ առջևով: Իսկ երբ գրկում է ու սկսում համբուրել, արդեն էլ բան չես տեսնում: Իսկ ես փենդի մեջ միայն քո դեմքն եմ տեսել: Հասկանալի կխանդեիր, եթե ասեի, որ ինձ մի սիրունիկ բուժքույր էր խնամում, բայց ինձ խնամողը տղամարդ էր, որի երկար մորուքի մեջ ոչ մի գրավիչ բան չկար: Վերջին չորս ամիսն անց եմ կացրել Քաբուլի հիվանդանոցի մահճակալին գամված: Մաշկս վառվել է, բայց հիմա նվնվալու համար չեմ գրում:

Հինգ ամիս քեզ նամակ չգրելը մահվան չափ երկար էր, Զուլիա, մենք սովոր էինք շաբաթական երկու անգամ իրար գրելուն: Հինգ ամիս ոչ մի բառ, համարյա կես տարի, որն ավելի երկար թվաց, որովհետև քեզ վաղուց է արդեն՝ ոչ տեսել էի, ոչ գրկել: Ահավոր դժվար է սիրել հեռավորության վրա, ու էդ ամեն օր, անդադար տանջում էր ինձ:

Քնապը լուրն առնելուն պես թռավ-եկավ Քաբուլ: Պետք է տեսնեիր, թե ոնց էր լալիս, երբ մտավ մոտս, ու խոստովանեմ, ես էլ մի քիչ հուզվեցի: Բախտս բերել էր, որ կողքիս պառկած վիրավորը երեխայի պես քնած էր, թե չէ ամոթով կմնայի էդ քաջի մոտ: Ես եմ Քնապին խնդրել, որ միանգամից չզանգի, քեզ չասի, որ ողջ եմ: Գիտեի, որ քեզ արդեն հասցրել էր մահվանս լուրը, իսկ որ ողջ եմ՝ ես պետք է ասեի: Երևի թե իրական պատճառն ուրիշ է, երևի թե քեզ գրելով՝ թողնում եմ, որ շարունակես սգալ մեր սիրո պատմության ավարտը:

Զուլիա, մեր սերը ծնվել է մեր տարբերությունից, ամեն առավոտ արթնանալով նոր բաներ հայտնաբերելու ցանկությունից: Դու երբեք չես պատկերացնի, թե քանի՜-քանի ժամ եմ անցկացրել՝ նայելով քեզ, երբ քնած էիր,

երբ ժպտում էիր երազում: Դու չգիտես էլ, որ ժպտում ես քնած ժամանակ: Չես էլ պատկերացնի, թե քանի՜-քանի անգամ ես կծկվել, կպել ինձ՝ քնիդ մեջ ինձ համար անհասկանալի բառեր մռթմռթալով: Մի հարյուր անգամ հաստատ հաշվել եմ:

Ջուլիա, Ջուլիա՛, իմ սեր, ես գիտեմ, որ միասին ինչ-որ բան կառուցելը լրիվ ուրիշ աշխարհ է: Սկզբում ափում էի հորդ, հետո փորձեցի հասկանալ նրան: Տեսնես՝ ես ի՞նչ կանեի նրա փոխարեն: Եթե դու ինձ համար աղջիկ ունենայիր, ու ինձ նրա հետ մենակ թողնեիր, ու եթե նա սիրահարվեր մի անծանոթի, որն ապրում էր մի աշխարհում, որտեղ ոչինչ չկար, կամ ինչ էլ որ կար, սարսափեցնում է ինձ, երևի թե՝ հա: Երբեք չեմ ուզել քեզ պատմել էն գարիների մասին, որոնք անցել են պապի հետևում, չեմ ուզել մեր անցկացրած գեթ մեկ վայրկյանը ծանրացնել այդ անհեթեթ հիշողություններով. դու արժանի էիր ավելիին, քան հրեշավոր արարքների կարող մարդկանց մասին փխուր պատմությունները: Հայրդ հաստատ կեղյակ էր ամեն ինչից ու քեզ համար ավելի լավ ապագա էր երազում:

Ես ափում էի հորդ, որ քեզ գարավ՝ ինձ թողնելով մեր սենյակում, արնաշաղախ, անկարող քեզ հետ պահել: Կապաղությունից սկսեցի բռունցքներով խփել պատերին, որոնց ներսում դեռ զնգում էր քո ձայնը, ու փորձում էի հասկանալ, հասկանալ հորդ: Ախր ինչպես քեզ հավատիացնեի, որ սիրում էի, առանց հասկանալ փորձելու:

Դու վերադարձել էիր քո կյանքին, դա բնության օրենքն է: Հիշո՞ւմ ես, որ անընդհատ խոսում էիր ճակատագրի նշաններից, ես չէի հավատում, բայց ի վերջո հանձնվեցի, նույնիսկ եթե էսօր էս նամակը գրելիս նա նախապատրաստում է վատթարագույնը:

Ես քեզ սիրում էի էնպիսին, ինչպիսին կայիր, ու երբեք չեմ ուզել, որ փոխվես, սիրել եմ՝ առանց ամեն ինչ հասկանալու, վստահ լինելով, որ ժամանակն ամեն ինչ կդնի տեղը, երևի այդ սիրուց զարված՝ երբեմն մոռանում էի հարցնել, դու է՞լ ես ինձ սիրում էնքան, որ սիրես էն ամենը, ինչ բաժանում էր մեզ: Երևի թե դու ինքդ ինձ ժամանակ չես տվել, որ հարցնեմ, ոչ էլ ժամանակ ես ունեցել ինքդ քեզ հարցնելու: Բայց դրա ժամանակը, ի հեծուկս բոլոր մահերի, եկել է:

Վաղը վերադառնում եմ Բեռլին: Նամակը կգցեմ առաջին պատահած փոստարկղը: Ինչպես միշտ՝ մի քանի օրից կհասնի քեզ, Ջուլիա: Եթե ճիշտ եմ հաշվել՝ ամսի 16-17-ին:

Ծրարում կգտնես մի բան, որ միշտ գաղտնի եմ պահել: Կուզեի քեզ լուսանկարս էլ ուղարկել, բայց հիմա ահավոր տեսք ունեմ, համ էլ երևի ինձ շատ երևակայեցի: Ինչ որ է: Քեզ ինքնաթիռի տոմս եմ ուղարկում: Տեսնո՞ւմ ես, էլ պետք չի՝ հարյուր տարի աշխատես, որ գաս հասնես ինձ, եթե, իհարկե, դեռ ուզում ես: Ես էլ եմ տնտեսել, որ գամ քո հետևից: Տոմսը հետս բերել էի Քաբուլ, պետք է ուղարկեի քեզ, բայց եղավ՝ ինչ եղավ... Տես, դեռ ուժի մեջ է:

Ես քեզ կսպասեմ Բեռլինի օդանավակայանում ամեն ամսվա վերջին օրը:

Եթե հանդիպենք, խոստանում եմ, որ երբեք չեմ բաժանի մեր աղջկան էն մարդուց, ում նա մի օր կընտրի: Ու ինչքան էլ նրանք տարբեր լինեն, ես կհասկանամ նրան, ով իմ աղջկան կտանի ինձնից, կհասկանամ աղջկաս, որովհետև ես սիրել եմ նրա մորը:

Ջուլիա, ես քեզ երբեք չեմ մեղադրի, ես կհարգեմ քո որոշումը, ինչքան էլ որ ծանր լինի: Եթե դու չգաս, եթե ես ստիպված լինեմ ամեն ամսվա վերջին օրը վերադառնալ օդանավակայանից մենակ, իմացիր, որ կհասկանամ քեզ, ինչքան էլ դժվար լինի՝ կհասկանամ:

*Ես երբեք չեմ մոռանա էն չքնաղ դեմքը, որ կյանքն ինձ պարգևեց նոյեմբերյան մի երեկո, երբ մեր հույսը վերածնվեց, երբ ես՝ արևելքցիս, մագլցում էի պապը, որ ընկնեմ քո՝ արևմուտքցու գիրկը...*

*Դու ամենապայծառ բանն ես, որ պատահել է իմ կյանքում: Ու ամեն գրածս բառի հետ նորից ու նորից գիտակցում եմ, թե ինչքան շատ եմ սիրում քեզ:*

*Երևի՝ ցտեսություն: Ամեն դեպքում ես գիտեմ, որ դու կաս ու միշտ կլինես: Հեռու՛, ինչ-որ տեղ, բայց կաս ու շնչում ես. ու էդ արդեն երջանկություն է:*

*Սիրում եմ քեզ, սիրում եմ, սիրում...*

*Թոմաս»:*

Ծրարի միջից մի դեղնած գրքույկ ընկավ: Ջուլիան բացեց այն: Ինքնաթիռի տոմսի կարմիր պատճենաթղթի վրա տպագրված էր. Ֆրոյլայն Ջուլիա Ուելշ, Նյու Յորք - Փարիզ - Բեռլին, 29 սեպտեմբերի, 1991 թիվ: Ջուլիան նամակը հետ դրեց գրասեղանի դարակի մեջ, բացեց պատուհանն ու նորից պառկեց մահճակալին: Բավական երկար ժամանակ մնաց պառկած՝ ձեռքերը գլխի հետևում, աչքը վարագույրներին, որոնց ծալքերի արանքում սահեցին-անցան մենավոր անցյալի գրկից հանկարծ հայտնված մտացածին ընկերները:

***

Վաղ կեսօրին Ջուլիան դուրս եկավ իր սենյակից ու գնաց մթերանոց: Բացեց պահարանը, որտեղ Ուոլեսը սովորաբար պահում էր անուշեղենը: Դարակից մի տուփ թխվածքաբլիթ վերցրեց, մի աման մեղր ու նստեց խոհանոցի սեղանի մոտ: Նրա ուշադրությունը գրավեց մեղրի սառած երեսին մնացած գդալի հետքը: Տարօրինակ հետք էր, որ երևի թողել էր Էնթոնի Ուելշն իր

վերջին նախաճաշի ժամանակ: Նա պատկերացրեց հորը՝ բաժակը ձեռքին, միայնակ, այդ հսկա խոհանոցում իր տեղը նստած թերթ կարդալիս: Տեսնես ի՞նչ էր մտածում այդ օրը: Հավերժ հեռացած անցյալի հետաքրքրաշարժ վկայություն... Ու ինչո՞ւ արտաքինից լրիվ անմեղ այս մանրուքը նրան առաջին անգամ ստիպեց գիտակցել, որ հայրը մեռած է: Երբեմն ինչ-որ մանրուք՝ գտնված իր, բույր, վեր է հանում հուշերն այն մարդու մասին, որին կորցրել եք: Ու այս հսկա տարածության մեջ առաջին անգամ նա կարոտեց իր այնքան ատելի մանկությունը...

Դռան կողմից հազի ձայն լսվեց: Ջուլիան բարձրացրեց գլուխը, Էնթոնի Ուելշը ժպտում էր նրան:

– Կարելի՞ է,– ասաց նա՝ տեղավորվելով աղջկա դիմաց:

– Քեզ զգա ինչպես քո տանը:

– Ֆրանսիայից եմ բերել տվել, լավանդի մեղր է: Ժամանակին շատ էիր սիրում, իսկ հիմա՞:

– Ոնց տեսնում ես՝ բաներ կան, որ նույնն են մնացել:

– Ի՞նչ էր ասում նամակում:

– Քո գործը չի:

– Ի՞նչ որոշեցիր:

– Իսկ ի՞նչ պետք է որոշեի:

– Ինձնից լավ գիտես: Հիմա ի՞նչ, կպատասխանե՞ս, թե՞ չէ:

– Քսան տարի հետո մի քիչ ուշ չի՞ պատասխանելու համար:

– Հիմա դու ի՞նձ ես հարցնում, թե՞ ինքդ քեզ:

– Թոմասը հաստատ հիմա ամուսնացել է, երեխաներ ունի: Ես ի՞նչ իրավունք ունեմ խցկվել նրա կյանքի մեջ:

– Աղջի՞կ, տղա՞, թե՞ զույգեր են:

– Ի՞նչ:

– Ասում եմ՝ քարտերդ ցույց չե՞ն տալիս նրա ընտանիքը, տեսնենք՝ ինչի է նման: Հիմա ի՞նչ, աղջի՞կ է, թե՞ տղա:

– Ի՞նչ ես, է, խոսում,– բացականչեց Ջուլիան:

– Առավոտյան վստահ էիր, որ նա մեռած է, հիմա էլ երևակայությանդ զոռ ես տալիս՝ նկարելով նրա կյանքը:

– Աստծու սիրուն, քսան տարի է անցել, ոչ թե վեց ամիս:

– Տասնյոթ: Լրիվ կհասցներ մի քանի անգամ ամուսնանար-բաժանվեր, եթե քո ընկերոջ պես օրիենտացիան չի փոխել: Անունն ինչ էր, է՞: Սթենլի՞: Հա՛, հա, Սթենլի էր:

– Ու դու դեռ կատակելու հավե՞ս ունես:

– Ախ, կատակը... Կատակը չգիտես որտեղից գլխիդ ընկած իրականությունից փախչելու հրաշալի միջոց է: Չգիտեմ էլ, թե ով է ասել, բայց ճիշտ է ասել: Կրկնում եմ հարցս, սիրելիս, ինչ-որ բան որոշեցի՞ր:

– Ես որոշելու բան չունեմ, արդեն շատ ուշ է՝ ինչքան ասեմ... Համ էլ դու պետք է որ ուրախանաս, չէ՞:

– Շատ ուշ է լինում էն ժամանակ, երբ ամեն ինչ դառնում է անդառնալի: Արդեն շատ ուշ է, իսկ ես էնքան բան կուզեի մորդ ասած լինել, բայց չհասցրի, ու ինչքան կուզեի, որ նա էլ ինձ գրեր դատողությունը կորցնելուց առաջ: Ինչ վերաբերում է ինձ ու քեզ, մեզ համար շատ ուշ կլինի շաբաթ օրը, երբ ես մարած մարտկոցներով խաղալիքի պես կհանգչեմ: Բայց եթե Թոմասը դեռ ողջ է, ապա, կներես, որ պետք է հակաճառեմ, բայց շատ ուշ չէ: Ու եթե մի պահ հիշես քո արձագանքը, երբ երեկ տեսար Թոմասի նկարը, որի պատճառով մենք առավոտյան հետ եկանք, էլ սուտ պատրվակ չես բերի, իբր արդեն շատ ուշ է: Ուրիշ պատճառաբանություն գտիր գոնե:

– Ասա տեսնեմ՝ ուզածդ ի՞նչ է:

– Ես ոչ մի բան չեմ ուզում, աղջիկս, իսկ այ դու, դու ուզում ես քո Թոմասին, եթե...

– Եթե ի՞նչ:

– Հեչ, կներես, ես խոսում եմ, խոսում եմ, իսկ դու ճիշտ ես...

– Օ՛, առաջին անգամ եմ քեզնից լսում, որ ինչ-որ բանում ես ճիշտ եմ, ու շատ կուզեի իմանալ, թե ինչում:

– Չէ, հավատացնում եմ՝ անիմաստ է: Շատ ավելի հեշտ է ողբալ, լացել մի բանի համար, որ կարող էր լինել, բայց չեղավ: Ոնց որ թե արդեն լսում եմ՝ «ինչ անեմ, ճակատիս էդ էր գրած» կամ ավելին՝ «հայրս է մեղավոր ամեն ինչում, նա է իրականում փչացրել իմ կյանքը»: Ամբողջ կյանքում ողբալն էլ, ասեմ քեզ, կյանքի ձև է:

– Վախ քո, ես էլ վախեցա: Քիչ մնաց հավատայի, որ ինձ սկսել ես լուրջ ընդունել:

– Հաշվի առնելով քո պահվածքը՝ առանձնապես մի ռիսկի չենք գնում:

– Նույնիսկ եթե մեռնեմ Թոմասին գրելու ցանկությունից, նույնիսկ եթե հաջողեցնեմ ինչ-որ հասցե գտնել, ու տասնյոթ տարի հետո նամակս տամ նրան, ես երբեք այդպես չեմ ցավացնի Ադամին: Չե՞ս կարծում, որ էս շաբաթվա սուտն արդեն նրա համար շատ էր:

– Միանգամայն համաձայն եմ,– հեգնեց Էնթոնին:

– Հիմա ուզածդ ի՞նչ է:

– Դու ճիշտ ես: Խաբել սխալվելով ավելի լավ է ու ավելի ազնիվ: Հետո այն ձեզ իրար հետ ինչ-որ բան կիսելու հնարավորություն կտա: Նա միակը չի լինի, ում խաբում ես:

– Կարո՞ղ եմ իմանալ, թե ում նկատի ունես:

– Քեզ: Ամեն երեկո, Ադամի կողքին քնելուց առաջ, ոնց լինի՝ մի քանի վայրկյան կմտածես արևելքցի քո ընկերոջ մասին. արդեն մի քիչ կխաբես, ոնց լինի՝ մի քանի վայրկյան կափսոսաս, ու հոպ, երկրորդ սուտն արդեն պատրաստ է: Ու ամեն անգամ, երբ դու քեզ հարց կտաս, թե արդյոք պե՞տք էր խղճիդ հանգստության համար

վերադառնալ Բեռլին, էլի կխաբես: Սպասիր, թող հաշվեմ, ես մաթեմատիկայից միշտ լավ եմ եղել: Թող լինի շաբաթական երեք փոքրիկ սուտ, երկու ցավացնող հիշողություն ու երեք համեմատություն Թոմասի ու Ադամի միջև՝ քեզ արեց՝ երեք գումարած երկու գումարած երեք, ի՞նչ ստացվեց, ո՞ւթ, հետո բազմապատկենք հիսուներկու շաբաթով, հետո ամուսնական կյանքի երեսուն տարով (հա, հա, մի քիչ լավատես եմ, բայց պատկերացրու...), ստանում ենք տասներկու հազար չորս հարյուր ութսուն սուտ: Ոնց որ մի քիչ շատ է, հը՞, մի զույգի համար...

– Հիմա դու քեզնից գո՞հ ես,– ցինիկաբար ծափահարեց Ջուլիան:

– Իսկ դու կարծում ես, Ջուլիա, թե հե՞շտ է ապրել ինչ-որ մեկի հետ՝ վստահ չլինելով քո սեփական զգացմունքներում: Քո կարծիքով՝ դա դավաճանություն չէ՞: Գոնե գաղափար ունե՞ս, թե ինչ կտտանքների է վերածվում կյանքը, երբ կողքիդ քնող մարդը դառնում է օտար:

– Դու սեփական փորձից գիտես, հա՞:

– Կյանքի վերջին երեք տարում մաման ինձ «պարոն»-ով էր դիմում, ու երբ սենյակ էի մտնում, զուգարանի տեղն էր ցույց տալիս. կարծում էր՝ խողովակագործ եմ: Մատիտներդ կտա՞ս՝ մի բան նկարեմ:

– Մաման քեզ իրո՞ք «պարոն»-ով էր դիմում:

– Երբ լավ էր լինում՝ հա, իսկ մնացած դեպքերում ոստիկան էր կանչում, որ բռնեին իր տուն մտած գողին...

– Դու իրո՞ք կուզեիր, որ նա քեզ գրեր մինչև....

– Մի վախեցիր իրերն իրենց անունով կոչելուց: Խելքը կորցնելուց առա՞ջ: Մինչև խենթության անդունդը գլորվե՞լը: Պատասխանը դրական է, բայց հիմա մորդ մասին խոսելու ժամանակը չի:

Էնթոնին երկար նայեց աղջկան:

– Հը՞, մեղրը լա՞վն էր:

– Ըհը,– պատասխանեց նա՝ թխվածքը կծելով:

– Մի քիչ սովորականից թանձր է ոնց որ, չէ՞:

– Հա, մի քիչ թանձր է:

– Ինչ տնից գնացել ես, մեղուները թամբալացել են:

– Հնարավոր է,– ժպտալով պատասխանեց Ջուլիան,– հիմա ի՞նչ, ուզում ես խոսենք մեղուների՞ց:

– Իսկ ինչո՞ւ՝ ոչ:

– Շա՞տ ես կարոտում նրան:

– Ի՜նչ անիմաստ հարց, իհարկե շատ...

– Նրա՞ համար էիր ցատկել ջրափոսի մեջ:

Էնթոնին փորփրեց պիջակի ներքին գրպանը, մի ծրար հանեց ու սեղանին դնելով՝ հրեց դեպի Ջուլիան:

– Էս ի՞նչ է:

– Երկու տոմս՝ Փարիզով Բեռլին. մինչև հիմա ուղիղ չվերթ չկա: Թռիչքը ժամը հինգին է, կարող ես մենակ թռնել, կարող ես ընդհանրապես չթռնել, եթե կուզես՝ կարող եմ հետդ գալ: Դու որոշիր. էս էլ է, չէ՞, նորություն:

– Ինչի՞ համար է էս ամենը:

– Ի՞նչ եղավ էն թղթի կտորը:

– Ի՞նչ թղթի կտոր:

– Թոմասի տված թղթի կտորը, որ միշտ մոտդ էիր պահում, ու որ ամեն անգամ գրպաններդ դատարկելիս հրաշքով դուրս էր ընկնում: Թղթի էդ ճմռթած կտորն ամեն անգամ ինձ հիշեցնում էր իմ արած սխալի մասին:

– Կորցրել եմ...

– Իսկ մեջն ի՞նչ էր գրած: Այսինքն՝ կարող ես չպատասխանել: Սեր կոչվածն ահավոր տափակ բան է: Իսկականի՞ց կորցրել ես:

– Արդեն ասեցի:

– Չեմ հավատում, էդ կարգի բաները երբեք միանգամից չեն անհետանում: Մի օր դուրս են պրծնում հոգու խորքից: Դե ինչ, դստրիկս, գնա պատրաստվելու:

Էնթոնին վեր կացավ ու դուրս եկավ սենյակից: Դռան մոտ շրջվեց ու ասաց.

– Շտապիր: Տուն գնալու կարիք չունես: Եթե ինչ-որ բան պետք լինի, տեղում կառնենք: Շատ ժամանակ չունենք: Սպասում եմ դրսում, մեքենան արդեն պատվիրել եմ: Համ ասում եմ, համ էլ մոտս տարօրինակ դեժավյու է...

Ու հոր ոտնաձայները կամաց-կամաց անհետացան տան խորքում...

Ջուլիան երկու ձեռքով բռնեց գլուխն ու հառաչեց: Նա մատների արանքից նայում էր սեղանին դրված մեղրի ամանին: Պետք է մեկներ Բեռլին ոչ այնքան Թոմասի հետքերը գտնելու, որքան հոր հետ ժամանակ անցկացնելու համար: Ու նա ինքն իրեն անկեղծորեն երդվեց, որ սա ոչ պատրվակ է, ոչ էլ արդարացում, և որ Ադամը մի օր անպայման կհասկանա իրեն:

Ջուլիան վերադարձավ սենյակ ու երբ բարձրացնում էր մահճակալի ոտքերի մոտ թողած պայուսակը, աչքն ընկավ դարակաշարին: Նռնագույն կազմով պատմության դասագիրքը դուրս էր պրծել ընդհանուր շարքից: Նա մի պահ վարանեց, հետո վերցրեց այն ու միջից հանեց իր թաքցրած կապույտ ծրարը: Խնամքով դրեց պայուսակը, փակեց պատուհանն ու դուրս եկավ սենյակից:

***

Էնթոնին ու Ջուլիան հասան վերջին րոպեին: Ուղեկցորդուհին նրանց տվեց նստեցման կտրոններն ու հորդորեց շտապել: Հակառակ դեպքում չէր կարող երաշխավորել, որ կհասցնեին նստել:

– Իմ ոտքով հաստատ կհասնեմ,– հայտարարեց Էնթոնին՝ տխուր նայելով նրան:

– Խնդիր ունե՞ք տեղաշարժվելու հետ, պարոն,– անհանգստացած հարցրեց երիտասարդ ուղեկցորդուհին:

– Իմ տարիքում, օրիորդ, սա, ցավոք, տարածված երևույթ է,– հպարտությամբ պատասխանեց Էնթոնին՝ միաժամանակ ներկայացնելով կարդիոստիմուլյատորի փաստաթղթերը:

– Մի որպե սպասեք,– ասաց նա ՝ գրպանից հանելով հեռախոսը:

Մի քանի վայրկյան անց մի էլեկտրամեքենա մոտեցավ ու նրանց հասցրեց Փարիզի ինքնաթիռի նստեցման մուտքի մոտ: Կազմակերպության ներկայացուցչի օգնությամբ անվտանգության հսկիչ կետն այս անգամ շատ հեշտ անցան:

– Էլի մոտդ կարծ միացո՞ւմ էր,– հարցրեց Ջուլիան, մինչ նրանք սլանում էին օդանավակայանի երկար միջանցքներով:

– Ձայնդ կտրիր, Աստծու սիրուն,– շշնջաց Էնթոնին,– թե չէ մեզ բռնել կտաս: Ոտքս ոչ մի խնդիր էլ չունի:

Ու նա շարունակեց խոսակցությունը վարորդի հետ, ասես նրա կյանքն իրեն ամենից շատ էր հետաքրքրում: Տասը որպե էլ չէր անցել, Էնթոնին ու դուստրը ինքնաթիռ նստեցին: Առաջինը:

Մինչ երկու ուղեկցորդուհիներն Էնթոնիին օգնում էին տեղավորվել՝ մեկը մեջքի տակ բարձեր դնելով, մյուսը՝ ծածկոց առաջարկելով, Ջուլիան վերադարձավ ինքնաթիռի դռան մոտ: Նա ուղեկցորդին խնդրեց մի զանգ էլ անել: Հայրն արդեն ինքնաթիռի մեջ էր, ինքն էլ մի քանի վայրկյանից հետ կգա: Նա հետ գնաց դեպի օդանավասանդուղք ու հանեց հեռախոսը:

– Եվ ո՞ւր հասանք մեր կանադական խորհրդավոր շրջագայությամբ,– հեռախոսը վերցնելով՝ հարցրեց Սթենլին:

– Ես օդանավակայանում եմ:

– Արդեն հե՞տ ես գալիս:

– Գնում եմ:

– Ոնց որ, ջանիկս, մի սերիա բաց եմ թողել:

– Առավոտյան հետ էի եկել, ժամանակ չեղավ գալ ու քեզ տեսնել, բայց չես պատկերացնի, ոնց ունեմ քո կարիքը...

– Իսկ կարո՞ղ եմ հարցնել, թե այս անգամ ուր ես չվում՝ Օկլահոմա՞, թե՞ Վիսկոնսին:

– Սթենլի, եթե դու մի նամակ գտնեիր Էդուարդից՝ իր իսկ ձեռքով գրած, մահվանից անմիջապես առաջ, բայց որն այդպես էլ չէիր կարդացել, կբացեի՞ր:

– Արդեն ասել եմ քեզ, Ջուլիաս, նա վերջին շնչում ասաց, որ սիրում է ինձ: Էլ ի՞նչ պետք է հայտնաբերեի: Ափսոսա՞նք, արդարացո՞ւմ: Էդ երեք բառն արժեր աշխարհի բոլոր բառերը, որ մենք մոռացել էինք իրար ասել:

– Ուրեմն դու ծրարը տե՞ղը կդնեիր:

– Կարծում եմ՝ անպայման, թեկուզ երբեք մեր բնակարանում Էդուարդից ոչ մի բառ չեմ գտել: Նա գրելու մեծ սիրահար չէր, գիտե՞ս, նույնիսկ առևտրի ցուցակ չէր գրում, ամեն ինչի մասին ես պետք է հոգ տանեի: Չես էլ պատկերացնի, թե դա ոնց էր ինձ ժամանակին կատաղեցնում, իսկ հիմա, քսան տարի անց, ամեն անգամ շուկա գնալուց առնում եմ նրա սիրած յոգուրտը: Ծիծաղելի է, չէ՞, որ էսքան ժամանակ հետո դեռ էդպիսի բաներ եմ հիշում:

– Երևի...

– Թոմասից նամա՞կ ես գտել, հա՞, արևս: Դու ամեն անգամ սկսում ես Էդուարդից խոսել, երբ Թոմասի մասին ես մտածում... Բաց նամակը:

– Ինչո՞ւ, դու ասացիր, չէ՞, որ չէիր բացի:

– Ափսոս, որ քսան տարվա ընկերությունից հետո էդպես էլ չհասկացար, որ ես քեզ համար ամեն ինչ կարող եմ լինել, բացի լավ օրինակից: Ուզում ես բաց էսօր, բայց կարդա վաղը, ու հանկարծ չշպրտես: Համ էլ խաբել եմ. եթե Էդուարդն ինձ նամակ թողներ, ես կկարդայի հարյուր անգամ, ժամերով, որ հասկանայի, զգայի յուրաքանչյուր բառը, զգայի նրա ներկայությունը, նույնիսկ եթե շատ լավ գիտեմ, որ նա երբեք ժամանակ չէր կորցնի ինձ նամակ գրելու համար: Իսկ հիմա կասե՞ս ինձ, սիրելիս, թե ո՞ւր ես գնում: Անհամբերությունից մեռնում եմ, ուզում եմ իմանալ, թե ինչ կոդով պետք է զանգեմ քեզ երեկոյան:

– Երևի թե վաղը զանգես, ու պետք է հավաքես 49:

– Արտասահման ես գնում, հա՞:

– Ըհը, Բեռլին, Գերմանիա:

Մի պահ լռություն իջավ: Սթենլին խոր հոգոց հանեց խոսակցությունը վերսկսելուց առաջ:

– Ոնց հասկացա՝ նամակն արդեն բացել ես: Ի՞նչ էր գրած:

– Նա չի մահացել:

– Դե բնականաբար,– հառաչեց Սթենլին,– ու դու ինձ զանգում ես օդանավակայանից, որ հարցնես, թե արդյոք ճի՞շտ ես անում, որ գնում ես նրան փնտրելու, ճի՞շտ եմ:

– Օդանավասանդուղքից... ու դու արդեն պատասխանեցիր:

– Դե ուրեմն վազիր, ախմախի մեկը, որ ինքնաթիռը բաց չթողնես:

– Սթենլի...

– Հը՞, հիմա ինչ կա:

– Զղայնանո՞ւմ ես:

– Չէ՛, չէ, ուղղակի նեղվում եմ, որ ինձնից էդքան հեռու ես: Ուրիշ հիմար հարց ունե՞ս:

– Ո՞նց ես անում, որ...

– Պատասխանում եմ քո հարցերին, մինչև դրանց տա՛լը: Չար լեզուներն ասում են, որ ես քեզնից ավելի լավ աղջիկ եմ, սրտիկս, բայց դու հո գիտես, որ ես ընդամենը քեզ շատ եմ սիրում: Իսկ հիմա ռադ եղիր, քանի դեռ չեմ գիտակցել, որ քեզ ահավոր կարոտելու եմ:

– Խոստանում եմ, հենց հասնեմ՝ կզանգեմ:

– Հա՛, հա, քո ասածն է:

Ուղեկցորդուհին նշան արեց, որ օդանավ բարձրանալու ժամանակն է, անձնակազմը նրան է սպասում, որ դուռը փակի: Ու մինչ Սթենլին փորձեց հարցնել, թե ինչ պատասխանի Ադամին, եթե նա հանկարծ զանգի, Զուլիան անջատեց հեռախոսը:

## 14

Սկուտեղները հավաքելուց հետո ուղեկցորդուհին թուլացրեց լույսը, և ինքնաթիռի սրահն ընկղմվեց կիսախավարի մեջ: Ճամփորդության առաջին օրվանից հայրը բան չէր դրել բերանը ու ոչ էլ հանգստացել էր: Երևի թե դա բնական էր մեքենայի համար, որքան էլ դժվար լիներ ընդունելը: Մանավանդ միակ բանն էր, որ հիշեցնում էր Զուլիային, թե այս ճանապարհորդությունը հավերժությունից ևս երկու օր պոկելու վերջին հնարավորությունն է: Ուղևորների մեծ մասը քնած էր, ոմանք փոքրիկ էկրաններին ֆիլմ էին նայում, վերջին շարքում մի տղամարդ թերթում էր գիշերային լույսերի կատալոգը: Էնթոնին ինչ-որ ամսագիր էր թերթում, Զուլիան պատուհանից նայում էր ինքնաթիռի թևին փայլող լունի արծաթագույն շողերին և կապույտ գիշերում ծփացող օվկիանոսին:

***

Գարնանը որոշեցի, որ կթողնեմ ուսումս ու էլ երբեք չեմ վերադառնա Փարիզ: Կաշվիցդ դուրս եկար ինձ մտափոխելու համար, բայց որոշումս կայացրել էի. ես էլ քեզ պես ուզում էի լրագրող դառնալ ու քեզ պես առավոտները գնում էի աշխատանք փնտրելու, թեկուզ ամերիկացու համար դա համարյա անհույս էր: Արդեն մի քանի օր էր՝ տրամվայները նորից սկսել էին սլանալ քաղաքի մի ծայրից մյուսը. շուրջբոլորը մարդիկ ալեկոծված էին, խոսում էին երկիրդ միավորելու մասին, որ այն կրկին մեկ ամբողջական դառնա, ինչպես Սառը պատերազմից առաջ, երբ կյանքը լրիվ այլ հունով էր հոսում: Գաղտնի ոստիկանության համար ծառայածներն ասես հոդս էին ցնդել, իրենց արխիվներն էլ՝ հետները: Մի քանի ամիս առաջ արդեն սկսել էին ոչնչացնել վարկաբեկող փաստաթղթերը, բոլոր գործերը, որ հասցրել էին «սարքել» քո միլիոնավոր հայրենակիցների գլխին, և դու էլ առաջիններից էիր, որ փորձեցիր ապստամբել ու խանգարել նրանց:

Տեսնես քո վրա՞ էլ էին գործ բացել: Կարո՞ղ է՝ շպրտած է ինչ-որ տեղ՝ գաղտնի արխիվներում, մեջը քո լուսանկարները, որ արել էին գաղտնի՝ փողոցում կամ գործիդ տեղում, այն մարդկանց անունները, որոնց հետ հաճախ էիր հանդիպում, ընկերներիդ անունները, տատիկիդ անունը: Տեսնես ձեր ջահելությունը կասկածելի՞ էր ղեկավարության համար: Ո՞նց կարողացանք թույլ տալ այս ամենը՝ պատերազմի փված դասերը մոռանալով: Տեսնես աշխարհը վրեժ լուծելու այլ տարբերակ չունե՞ր: Ես ու դու բավական ուշ էինք ծնվել, որ միմյանց ափեինք, ու շատ բան ունեինք անելու: Երեկոները ձեր թաղամասով զբոսնելիս տեսնում էի, որ մեջդ դեռ վախ

կա: Հենց համազգեստով մարդ էր երևում, կամ ինչ-որ մեքենա, ըստ քեզ, շատ դանդաղ էր գնում, ասում էիր. «Արի, արի մի քիչ սպասենք, անցնի», ու ինձ քաշում էիր առաջին իսկ նեղ արանքը կամ ասֆիճանի տակ, որ կարողանայինք թաքնվել, ազատվել անտեսանելի թշնամուց: Իսկ երբ վրադ ծիծաղում էի, գժվում էիր, ասում էիր, որ ես ոչ մի բան չեմ հասկանում ու պատկերացում անգամ չունեմ, թե նրանք ինչի են ընդունակ: Քանի անգամ եմ ֆիքսել քո հայացքը, որ շրջում էր ռեստորանում, ուր քեզ քարշ էի տալիս ճաշելու: Քանի անգամ ես ասել՝ արի գնանք, երբ ինչ-որ մռայլ հաճախորդ էիր տեսնում, որը քեզ հիշեցնում էր տագնապներով լի անցյալդ: Կներես, Թոմաս, դու ճիշտ էիր, ես գաղափար անգամ չունեի, թե ինչ է վախը: Կներես, որ ծիծաղում էի, երբ ինձ սպիպում էիր թաքնվել կամրջի տակ, որովհետև զինվորական ավտոշարասյունն անցնում էր կամրջի վրայով: Ես չգիտեի, ո՛չ ես կարող էի հասկանալ, ո՛չ էլ ինչ-որ մեկն իմ շրջապատից:

Ու երբ տրամվայում հայացքով ցույց էիր տալիս ինչ-որ մեկին, հասկանում էի, որ գաղտնի ոստիկանության աշխատակցի ես ճանաչել:

Ձերբազատվելով իրենց համազգեստից, հեղինակությունից ու գոռոզությունից՝ ԳԴՀ ՊԱՆ-ի նախկին անդամները ձուլվել էին քաղաքում, համակերպվել մարդկանց առօրյային, որոնց դեռ երեկ հետևում էին, հալածում, դատում ու նույնիսկ կտրանքների ենթարկում, և ոչ թե մեկ կամ երկու օր, այլ տարիներ շարունակ: Պատի փլուզումից ի վեր ոմանք իրենց համար անցյալ էին հնարել, որ ձուլվեն ամբոխին, ոմանք հանգիստ շարունակում էին իրենց գործը, ու ժամանակի ընթացքում նաև ձերբազատվեցին մեղքի զգացումից ու գործած ոճրագործությունների հիշողություններից:

Հիշո՞ւմ ես, որ տեսանք Քնապին: Երեքով զբոսնում էինք պուրակում: Քնապն անդադար հարցեր էր տալիս՝ չիմանալով, թե ինչ ցավ է քեզ պատճառում պատասխանելը: Նա պնդում էր, որ Բեռլինի Պապի սրվերը փռվել էր մինչև Արևմուտք, ուր իր տունն էր, իսկ դու գոռում էիր, որ դու ապրել ես Արևելքում, ու որ քեզ բանտարկել էին բեկոնե պատի հետևում: Ինչպե՞ս կարող էիք հարմարվել էդ կյանքին, շարունակում էր Քնապը: Դու ժպտում էիր. իրո՞ք նա ամեն ինչ մոռացել է: Քնապը վրա տվեց, դու հանձնվեցիր ու սկսեցիր պատասխանել նրա հարցերին: Համբերությամբ պատմում էիր մի կյանքի մասին, որտեղ ամեն ինչ կազմակերպված էր, ապահով, որտեղ պատասխանատվություն չէիր վերցնում վրադ, իսկ սխալ գործելու հավանականություն գրեթե չկար: «Մենք լրիվ զբաղված էինք, պետությունը քիթն ամեն տեղ խոթում էր»,– ուսերդ թոթվելով՝ ասացիր դու: «Հենց դրա վրա էլ հիմնված է դիկտատուրան»,– եզրակացրեց Քնապը: Էդ շատերին էր ձեռք տալիս, ազատությունը խաղադրույքի նման է. մարդկանց մեծ մասը ձգտում է ազատության, բայց չգիտի, թե ինչպես այն օգտագործի: Ես դեռ լսում եմ, թե ինչպես էիր Արևմտյան Բեռլինի սրճարանում պատմում, որ արևելքցիներն, իրենց տաքուկ բնակարաններում նստած, ամեն մեկն իր ձևով նորից գծում էր իր կյանքը: Խոսակցությունը բորբոքվեց, երբ ընկերդ հարցրեց, թե, ըստ քեզ, քանի հոգի է մռայլ տարիների ընթացքում համագործակցել իշխանությունների հետ. ու էդպես էլ ընդհանուր հայտարարի չեկաք: Դու արդարացնում էիր քո անտեղյակությունը. ինչ իմանայիր, եթե երբեք չես համագործակցել անվտանգության նախարարության հետ:

Կներես, Թոմաս, կներես, դու ճիշտ էիր, ես պետք է դեռ երկար սպասեի, մինչև անցնեի քո ճանապարհով ու զգայի քո զգացած վախը...

***

– Ինչո՞ւ ինձ չհրավիրեցիր հարսանիքիդ,– հարցրեց Էնթոնին՝ ամսագիրը ծնկներին դնելով:

Ջուլիան վեր թռավ:

– Վա՛յ, կներես, չէի ուզում վախեցնել: Մտքերով հեռո՞ւ էիր:

– Ոչ, ընդամենը դուրս էի նայում:

– Դրսում մութ գիշեր է,– նկատեց Էնթոնին՝ պատուհանից նայելով:

– Բայց լիալուսին է:

– Մի քիչ բարձր է, չէ՞, ջրի մեջ ցատկելու համար:

– Ես քեզ հրավիրատոմս ուղարկել եմ:

– Ինձ և ուրիշ երկու հարյուր հոգու, Ջուլիա: Հորն էդպես չեն հրավիրում: Օրենքով ես պետք է քեզ ուղեկցեի եկեղեցի, երևի արժե, որ նստենք ու խոսենք:

– Իսկ մենք ի՞նչ ենք խոսել իրար հետ վերջին քսան տարում: Ես սպասել եմ քո զանգին, հույս ունեի, որ կուզեիր ապագա ամուսնուս հետ ծանոթանալ:

– Բայց ինչքան գիտեմ՝ մենք արդեն հանդիպել էինք:

– Պատահաբար, «Բլումինգդեյլիզի» շարժասանդուղքի վրա: Դու դա ծանոթությո՞ւն ես համարում: Հեչ չէի ասի, որ հետաքրքրված էիր ինձնով կամ Ադամով:

– Հա՞, եթե չեմ սխալվում՝ իրար հետ թեյ էլ ենք խմել:

– Որովհետև Ադամն առաջարկեց, որովհետև նա ուզում էր քեզ ճանաչել: Նստեցինք քսան րոպե, որի ընթացքում մենակ դու էիր խոսում:

– Բայց նա շատախոս չէր, սահմանափակ աուտիկի էր նման, ինձ նույնիսկ թվաց, որ լեզու չունի:

– Իսկ դու նրան գոնե մի հարց տվեցի՞ր:

– Իսկ դու, դու էլ, չէ՞, Ջուլիա, երբեք հարցեր չես տալիս: Մի անգամ մի խորհուրդ հարցրե՞լ ես, հը՞:

– Ի՞նչ իմաստ ուներ: Որ ժամերով բացատրեիր, թե այ, իմ տարիքում դու ինչեր էիր անում, ինչերի էիր հասել, ու կամ էլ թե ինչ պետք է ես անեի՞: Ես պատրաստ էի հուր հավիտյան ձայնս կտրել, որ դու վերջապես հասկանայիր, որ ես չեմ ուզել քեզ նման լինել:

– Երևի լավ կանես՝ քնես,– ասաց Էնթոնի Ուելշը,– վաղը մեզ ծանր օր է սպասվում: Պետք է հասնենք Փարիզ, հետո ուրիշ ինքնաթիռ նստենք:

Նա Ջուլիայի ծածկոցը քաշեց, ծածկեց ուսերը և շարունակեց կարդալ իր ամսագիրը:

***

Ինքնաթիռը վայրէջք կատարեց Շառլ դը Գոլ օդանավակայանում: Էնթոնին ժամացույցն ուղղեց Փարիզի ժամանակով:

– Երկու ժամ դեռ կա, ժամանակի հետ խնդիր չունենք:

Էնթոնին դեռ չգիտեր, որ իրենց ինքնաթիռը, որը պետք է ժամաներ տերմինալ E, ուղղորդվել է տերմինալ F, քանի որ այս տերմինալի անցման գոտին չէր համապատասխանում իրենց ինքնաթիռին. ամեն դեպքում, այդպես բացատրեց ուղեկցորդուհին՝ ավելացնելով, որ ժամանած ավտոբուսը նրանց կտեղափոխի տերմինալ B:

Էնթոնին ձեռքը բարձրացրեց և ավագ ուղեկցորդին խնդրեց մոտենալ:

– Տերմինալ E,– ասաց նա վերջինիս:

– Կներեք, չհասկացա ձեզ,– ասաց ուղեկցորդը:

– Մենք պետք է գնանք տերմինալ E, իսկ դուք հայտարարեցիք տերմինալ B:

– Հնարավոր է,– պատասխանեց ուղեկցորդը,– մենք ինքներս էլ ենք երբեմն խառնում:

– Գոնե այս մի կասկածս փարատեք. մենք Շառլ դը Գոլի օդանավակայանո՞ւմ ենք:

– Եթե այստեղ երեք տարբեր մուտքեր կան, չկա համապատասխան անցման գոտի, իսկ ավտոբուսները դեռ չեն ժամանել, ուրեմն մենք ճիշտ տեղում ենք, մի անհանգստացեք:

Վայրէջքից քառասունհինգ րոպե անց վերջապես իջան ինքնաթիռից: Մնում էր անցնել անձնագրային կետն ու գտնել Բեռլին թռչելու համար համապատասխան տերմինալը:

Երեք տարբեր չվերթների հարյուրավոր ուղևորների անձնագրերն ընդամենը երկու ոստիկան էին ստուգում: Էնթոնին անհանգիստ նայեց չվատախտակի ժամացույցին:

– Մեզնից առաջ դեռ երկու հարյուր հոգի կա, վախենամ՝ չհասցնենք:

– Հաջորդը կնստենք:

Անձնագրային կետն անցնելուց հետո անցան միջանցքների ու վազքուղիների մի անվերջություն:

– Էնքան քայլեցինք, Նյու Յորքից ոտքով կգայինք, կհասնեինք,– դժգոհեց Էնթոնին:

Ու խոսքը բերանին՝ տապալվեց գետնին:

Ջուլիան փորձեց բռնել նրան, բայց ամեն ինչ այնքան արագ տեղի ունեցավ, որ ոչինչ չհասցրեց անել: Վազքուղին շարունակում էր շարժվել՝ իր հետ տանելով հասակով մեկ մեջքի վրա պառկած Էնթոնիին:

– Պա՛, պապա, ուշքի արի,– խառնված գոռաց Ջուլիան՝ թափ տալով հորը:

Հոդերի զրնգոցը դուրս եկավ:

Ուղևորներից մեկը շտապեց օգնել Ջուլիային: Նրանք բարձրացրին Էնթոնիին ու տեղավորեցին մի քիչ ավելի հեռու: Տղամարդը հանեց իր պիջակն ու դրեց դեռ

անշարժ Էնթոնիի գլխի տակ: Նա առաջարկեց օգնություն կանչել:

– Ոչ, ոչ, շնորհակալություն, կարիք չկա,– համառեց Ջուլիան,– ուղղակի մի քիչ վատառողջ է, ես սովոր եմ:

– Վստա՞հ եք: Ձեր ամուսնու գույնը տեղը չէ:

– Նա իմ հայրն է: Ու նա դիաբետիկ է,– խաբեց Ջուլիան:– Պա, պապա, ուշքի արի,– Ջուլիան նորից սկսեց ցնցել հորը:

– Սպասեք ստուգեմ զարկերակը:

– Ոչ, ոչ, ձեռք մի տվեք,– վախեցած գոռաց Ջուլիան:

Էնթոնին բացեց մի աչքը:

– Որտե՞ղ ենք,– հարցրեց նա՝ փորձելով ուղղվել:

Օգնություն առաջարկած տղամարդը ոտքի կանգնեց: Էնթոնին հենվեց պատին, մինչև որ կվերականգներ հավասարակշռությունը:

– Ժամը քանի՞սն է:

– Վստա՞հ եք, որ ընդամենը իրեն վատ է զգում, կարծես գիտակցությունն էլ տեղը չէ:

– Լավ, էլի, խնդրում եմ, էլ մի չափազանցրեք,– ընդմիջեց Էնթոնին՝ վերգտնելով իր կայտառությունը:

Տղամարդը վերցրեց պիջակն ու հեռացավ:

– Գոնե շնորհակալություն հայտնեիր,– հանդիմանեց Ջուլիան:

– Ինչի՞ համար, որ խղճալի կերպով փորձում էր քեզ սիրահետել՝ ձև տալով, թե ինձ է օգնում: Էլ ինչի՞ համար:

– Իրոք որ անտանելի ես, լավ վախեցրիր ինձ:

– Իզուր տեղը, ինձ ի՞նչ կարող է լինել, ես արդեն մեռած եմ,– եզրակացրեց Էնթոնին:

– Կասե՞ս հիմա, թե ինչ եղավ քեզ:

– Ինձ թվում է՝ կարծ միացում տվեց կամ էլի ինչ-որ բան: Պետք է նրանց զգուշացնել: Կամ էլ ինչ-որ մեկը կողքս անջատեց իր բջջայինը, ասեմ քեզ՝ տհաճ էր:

– Մեկին որ պատմես՝ չի հավատա,– ուսերը թոթվելով՝ ասաց Ջուլիան:

– Դու ինձ նոր «պապա» ասեցի՞ր, թե՞ երազ էի տեսնում:

– Երազ էր,– պատասխանեց Ջուլիան, մինչ հայրը նրան քարշ էր տալիս նստեցման մուտքի կողմը:

Հազիվ տասնհինգ րոպե էր մնում, դեռ պետք է անցնեին անվտանգության հսկիչ կետը:

– Վախ քո,– բացականչեց Էնթոնին՝ անձնագիրը բացելով:

– Հը՞, հիմա՞ ինչ եղավ:

– Կարդիոստիմուլյատորի վկայականը... չեմ գտնում:

– Գրպաններումդ նայիր:

– Ամեն տեղ փորփրեցի, չկա ու չկա:

Սրտնեղած՝ նա նայեց մագնիսական դետեկտորին:

– Եթե հիմա անցնեմ, օդանավակայանի ամբողջ ոստիկանական անձնակազմը ոտքի կհանեմ:

– Ուրեմն էլի ման արի,– անհամբեր վրա տվեց Ջուլիան:

– Ինչ ասեմ, ասում եմ քեզ՝ կորցրել եմ, երևի ընկել է, երբ պիջակս տվեցի ուղեկցորդուհուն: Կներես, սիրելիս, անօգուտ է:

– Հիմա ինչ, եկել հասել ենք էստեղ, որ հետ գնանք Նյու Յո՞րք: Ու հետ ո՞նց կգնանք:

– Արի մեքենա վարձենք ու գնանք քաղաք: Մինչև էդ մի բան կմտածեմ:

Էնթոնին դստերն առաջարկեց հյուրանոցում համար վերցնել՝ գիշերն անցկացնելու համար:

– Երկու ժամից Նյու Յորքը կարթնանա, կզանգենք բուժող բժշկիս, պատճենը կուղարկի:

– Բժիշկդ չգիտի՞, որ մահացել ես:

– Վայ, հա, մոռացել էի տեղեկացնել:

– Տաքսի բռնե՞նք,– հարցրեց Ջուլիան:

– Տաքսի՞, Փարիզո՞ւմ: Դու էս քաղաքը չես ճանաչում:

– Իսկ դու բոլոր հարցերի պատասխաններն արդեն ունես:

– Լավ, կռվելու ժամանակը չի: Տես, Ջուլիա, ավտովարձույթների սեղանիկները. մեզ փոքր մեքենան հերիք է, չէ՞: Բայց չէ, ավելի լավ կլինի սեդան վերցնել. պատվի հարց է:

Ջուլիան հանձնվեց: Կեսօրն անց էր, երբ Ջուլիան թեքվեց դեպի գլխավոր՝ Ա1 մայրուղի տանող խաչմերուկ: Էնթոնին հակվել էր դիմապակուն և ուշադիր ուսումնասիրում էր ճանապարհային ցուցանակները:

– Աջ մտիր,– հրամայեց նա:

– Փարիզը ձախ կողմում է, մեծ տառերով գրված է:

– Շնորհակալ եմ, բայց կարդալս դեռ չեմ մոռացել, ասում եմ քեզ՝ մտիր աջ,– գոռաց Էնթոնին՝ նրան ստիպելով պտտել ղեկը:

– Գի՞ժ ես, ի՞նչ է, էս ինչ ես անում,– բացականչեց Ջուլիան՝ հազիվ հասցնելով շրջադարձ անել:

Արդեն շատ ուշ էր նորից շարք փոխելու համար: Ազդանշանների տարափի տակ Ջուլիան բռնեց հյուսիս գնացող ճամփան:

– Դու դեմք ես. մենք Բրյուսելի կողմ ենք գնում: Փարիզը հետևում մնաց:

– Գիտեմ, գիտեմ: Ու եթե շատ հոգնած չես, Բրյուսելից հետո վեց հարյուր կիլոմետր էլ կքշենք ու, իմ մոտավոր հաշվարկներով, ինը ժամից կհասնենք Բեռլին: Վատագույն դեպքում ճանապարհին մի տեղ կկանգնենք, որ մի քիչ քնես: Մայրուղիների վրա մագնիսական դետեկտորներ չկան, մեր խնդիրը, գոնե մի որոշ ժամանակ, դադարում է խնդիր լինելուց, իսկ ժամանակ մենք շատ չունենք: Ընդամենը չորս օր, մինչև ինձ հետ ուղարկես, ու եթե մինչև էդ չփչանամ:

– Դու դա մեքենան վերցնելուց առաջ էիր, չէ՞, արդեն որոշել: Հենց դրա համար էլ սեդան վերցրիր:

– Ուզո՞ւմ ես Թոմասին տեսնել, թե՞ չէ: Ուրեմն քշիր, ճանապարհը ցույց տալու կարիք չկա, չէ՞, հիշում ես:

Ջուլիան միացրեց ռադիոն, ձայնը մինչև վերջ բարձրացրեց ու ոտքը դրեց ոտնակին:

***

Քսան տարվա ընթացքում ճանապարհի դիմագիծը փոխվել էր: Երկու ժամ անց նրանք արդեն Բրյուսելում էին: Էնթոնին գրեթե չէր խոսում: Միայն ժամանակ առ ժամանակ ինչ-որ բան էր մռթմռթում՝ ուսումնասիրելով բնապատկերը: Ջուլիան, օգտվելով հոր անուշադրությունից, հայելին այնպես շրջեց, որ կարողանար աննկատ հետևել նրան: Էնթոնին ցածրացրեց ռադիոյի ձայնը:

– Արվեստի դպրոցում երջանի՞կ էիր,– լռությունը խախտեց նա:

– Երկար չեմ մնացել էնտեղ, բայց ապրածս տեղն անկրկնելի էր, մենակ տեսնեիր՝ պատուհանից ինչ չքնաղ տեսարան էր բացվում դեպի աստղադիտարան:

– Ես էլ եմ գժվում Փարիզի համար: Լիքը լավ հիշողություններ ունեմ: Կարծում եմ՝ դա հենց էն քաղաքն է, որտեղ կուզենայի մեռած լինել:

Ջուլիայի հազը բռնեց:

– Հը, ի՞նչ եղավ,– հարցրեց Էնթոնին,– մենակ դեմքդ տեսնես: Էլի սխալ բա՞ն ասեցի:

– Չէ, հաստատ չէ:

– Ոնց չէ: Հո տեսնում եմ, որ մի տեսակ ես:

– Ախր... չգիտեմ էլ, թե ոնց ասեմ, ախր էնքան անհավանական է...

– Ուզում ես՝ աղաչե՞մ, դե ասա:

– Պա, դու մահացել ես Փարիզում:

– Ա՛հ...– բացականչեց Էնթոնին,– չգիտեի էլ...

– Ոչինչ չե՞ս հիշում:

– Ծրագրային հիշողությունս Եվրոպա մեկնելովս է սահմանափակվում: Էդ օրվանից հետո հսկայական սև խոռոչ է: Երևի թե էսպես ավելի լավ է. չեմ կարծում, որ սեփական մահվան մասին հիշողությունները հաճույք պատճառեին: Եվ, ի վերջո, պետք գիտակցել, որ էս մեքենային հատկացված ժամանակային սահմանափակումն անհրաժեշտ չարիք է: Ու ոչ միայն ընտանիքների համար:

– Հասկանում եմ,– նեղված պատասխանեց Ջուլիան:

– Շատ կասկածում եմ: Հավատա, էս իրավիճակն ինձ համար էլ է տարօրինակ, ու ինչքան ժամանակն անցնում է, էնքան ամեն ինչ խճճվում է: Էսօր ի՞նչ օր է:

– Չորեքշաբթի:

– Ուրեմն երեք օր, ապա պատկերացրու ժամացույցի վայրկենասլաքի անիծյալ թխթխկոցը գլխիդ մեջ: Իսկ դու գիտե՞ս, թե ես ինչպես եմ...

– Սրտի կանգից՝ կարմիր լույսի տակ:

– Ինչ լավ է, գոնե կանաչ չի եղել, թե չէ մի քանի հոգի վրայովս կանցներ...

– Կանաչ է եղել,– շշնջաց Ջուլիան:

– Վախ քո...

– Վթար չի եղել, եթե դա քեզ կհանգստացնի:

– Անկեղծ ասած՝ այնքան էլ չհանգստացրեց: Իսկ ես տանջվե՞լ եմ:

– Ոչ, ինձ վստահեցրել են, որ դա մի վայրկյան է տևել:

– Դե հա, միշտ փորձում են ընտանիքներին էդպես հանգստացնել: Համ էլ՝ հիմա էլ ոչ մի բան կարևոր չէ: Ինչ եղել է՝ եղել է: Անցած: Թե չէ՝ ո՞վ է հիշում, թե ոնց են մեռել մարդիկ: Լավ է՝ գոնե հիշում են, թե ոնց են ապրել:

– Թեման փոխե՞նք,– խնդրեց Ջուլիան:

– Ոնց կուզես: Ինչ-որ մեկի հետ սեփական մահվան մասին խոսելը մի տեսակ ծիծաղելի է:

– Էդ *ինչ-որ մեկը* սեփական աղջիկդ է, իսկ դու ոնց որ էս ամեն ինչից էնքան էլ չես ուրախանում:

– Արի չսկսենք, խնդրում եմ:

Մեկ ժամ անց մեքենան անցավ հոլանդական սահմանը. մինչև Գերմանիա մնաց յոթանասուն կիլոմետր:

– Ցնցող է, չէ՞,– վերսկսեց Էնթոնին,– էլ սահման չկա, քեզ համարյա թե ազատ ես զգում: Եթե դու Փարիզում երջանիկ էիր, ինչո՞ւ գնացիր:

– Տաք գլխով, գիշերվա կեսին. ինձ թվաց, թե ամենաշատը մի քանի օր կտևի: Ամենասկզբում դա ընդամենը ընկերական ճամփորդություն էր:

– Դու նրանց վաղո՞ւց էիր ճանաչում:

– Մի տասը րոպե:

– Ու ինչո՞վ էին զբաղվում էդ «հարյուր տարվա» ընկերներդ, Ջուլիա:

– Ինձ պես ուսանող էին, ուղղակի Սորբոնում էին սովորում:

– Հասկացա: Իսկ ինչո՞ւ Գերմանիա: Իսպանիայում կամ Իտալիայում ավելի ուրախ չէ՞ր լինի:

– Հեղափոխությունից ոգեշնչված: Անտուանն ու Մաթիասը պատմում էին պատի փլուզման մասին: Երևի անխոհեմություն էր, բայց ինչ-որ շատ կարևոր բան էր տեղի ունենում, ու մենք ուզեցինք ամեն ինչ մեր աչքով տեսնել:

– Տեսնես քո դաստիարակության մեջ ինչ եմ բաց թողել, որ դու հեղափոխությունների հանդեպ էդպիսի մեծ սիրով ես համակվել,– ասաց Էնթոնին՝ ծնկներին թփթփացնելով:

– Դու կապ չունես, միակ բանը, որ մոտդ իրոք ստացվել է, իմ դաստիարակությունն է:

– Դա քո տեսակետն է,– մրմնջաց Էնթոնին ու նորից շրջվեց դեպի պատուհանը:

– Ինչո՞ւ ես էս հարցերը հիմա տալիս:

– Որովհետև դու ինձ ոչ մի հարց չես տալիս: Ես սիրում եմ Փարիզը, որովհետև էստեղ եմ առաջին անգամ գրկել ու համբուրել մորդ: Ու ասեմ քեզ, հեչ հեշտ գործ չէր:

– Մանրամասները պետք չեն...

– Եթե իմանայիր, թե ի՛նչ սիրուն էր: Ու մենք քսանհինգ տարեկան էինք...

– Բա ոնց էիր կարողացել հասնել Փարիզ: Ինչքան գիտեմ՝ ջահել ժամանակ գրպանումդ մի գրոշ չես ունեցել:

– 1959-ին ես ծառայում էի Եվրոպայում, ինչ-որ ռազմաբազայում:

– Իսկ ավելի կոնկրե՞տ:

– Բեռլինում: Ու հեչ լավ հիշողություններ չունեմ:

Էնթոնին կրկին սկսեց նայել իրար հետևից լողացող բնապատկերներին:

– Ես կողքիդ եմ, կարիք չկա պատուհանի մեջ նայել արտացոլանքիս,– ասաց Ջուլիան:

– Իսկ դու հայելին ուղղիր, Ջուլիա, որ կարողանաս հերթական բեռնատարին վազանցելուց առաջ տեսնել հետևիցդ եկող ավտոները:

– Մամային Բեռլինո՞ւմ ես հանդիպել:

– Ոչ, մենք ծանոթացել ենք Ֆրանսիայում: Ջորացրվելուց հետո նստեցի Փարիզ մեկնող գնացքը: Երազում էի տուն վերադառնալուց առաջ տեսնել Էյֆելյան աշտարակը:

– Միանգամից սիրեցի՞ր:

– Վատիկը չէր, մենակ թե ավելի փոքր էր, քան մեր երկնաքերները:

– Մամայի մասին եմ հարցնում:

– Նա պարում էր մի հայտնի կաբարեում: Ասեմ քեզ՝ իռլանդական արմատներով ամերիկյան զինվորն ու Ֆրանսիայի հպարտ դուստրն ահավոր սիրուն էին նայվում:

– Մաման պարո՞ւմ էր:

– Bluebell Girl-ում: Խումբը Շանզ Էլիզեում՝ «Լիդոյում», համերգների էր: Ընկերներիցս մեկն էր տոմս գտել: Մամադ ռեվյուի մենակատարուհին էր: Պետք է միայն տեսնեիր նրան բեմի վրա՝ դոփապարի ժամանակ. հա-վատա, Ջինջեր Ռոջերսը գլուխը պատով էր տվել:

– Իսկ ինչո՞ւ երբեք ինձ չի պատմել:

– Մենք շատախոսությամբ չենք տառապել, դու էլ մեզնից հեռու չես:

– Բա ոնց համոզեցի՞ր:

– Բա ասում էիր՝ մանրամասները հետաքրքիր չեն: Եթե մի քիչ դանդաղ քշես՝ կպատմեմ:

– Բայց ես արագ չեմ քշում,– պատասխանեց Ջուլիան՝ նայելով արագաչափի սլաքին, որը 140 կմ/ժամը չէր անցնում:

– Չէի ասի, չէի ասի... Ես սովոր եմ մեր մայրուղիներին, երբ ճանապարհին ժամանակ ես ունենում հիանալ տեսարաններով: Եթե նույն արագությամբ սլանաս, մատներս դռան բռնակից պոկելու համար աքցան պետք կգա:

Ջուլիան ոտքը վերցրեց գազի ոտնակից, և Էնթոնին հանգիստ շունչ քաշեց:

– Ես նստած էի բեմին կպած մի սեղանի մոտ: Նրանք տասը օր իրար վրա ներկայացում տվեցին: Ոչ մեկը բաց չեմ թողել, Ջուլիա, նույնիսկ կիրակի օրերը, երբ կեսօրին

էին պարում: Տոմս վաճառողին ամեն անգամ թեյավճար էի տալիս, որ միշտ նույն տեղում նստեի:

Ջուլիան անջատեց ռադիոն:

– Վերջին անգամ եմ ասում, ուղղիր հայելին ու հետևիր ճանապարհին,– հրամայեց Էնթոնին:

Ջուլիան հնազանդվեց:

– Վեցերորդ օրը մայրդ վերջապես նկատեց ինձ: Երդվում էր, թե չորրորդ օրն արդեն նկատել էր, բայց վստահ եմ, որ ինչ եղել է՝ վեցերորդ օրն է եղել: Ամեն դեպքում, ներկայացման ժամանակ մի քանի անգամ զգացել եմ նրա հայացքը: Գլուխ չգովեմ, բայց մի անգամ նույնիսկ քիչ մնաց՝ սխալ քայլ աներ: Էդ անգամ էլ էր երդվում, թե պատահականություն էր ու ոչ մի կերպ կապված չէր ինձ հետ: Ակնհայտը ժխտելը նրա դեպքում կոկետության դրսևորում էր: Հետո ծաղիկներ պատվիրեցի, ուղարկեցի գրիմի սենյակ, որ ներկայացման ավարտից հետո տեսնի. ու ամեն օր ուղարկում էի վարդերի մի փոքրիկ փունջ՝ առանց անունս նշելու:

– Ինչո՞ւ:

– Եթե չընդհատես՝ կհասկանաս... Վերջին ներկայացման ժամանակ մուտքի մոտ սպասեցի, որ դերասանները դուրս գան: Կոճականցքիս մեջ՝ սպիտակ վարդի մի գլուխ:

– Հավատս չի գալիս, որ նման բան արած լինես,– ծիծաղից պայթելով՝ նետեց Ջուլիան:

Էնթոնին դարձյալ շրջվեց պատուհանի կողմն ու էլ ոչ մի բառ չարտաբերեց:

– Լավ, իսկ հետո՞,– չհանձնվեց Ջուլիան:

– Էլ ոչ մի բան:

– Ոնց թե ոչ մի բան, վե՞րջ:

– Դե, դու ձեռ ես, չէ՞, առնում, ուրեմն վերջ:

– Ամենևին էլ ձեռ չեմ առնում:

– Բա ինչի՞ համար էր էդ հիմար ծիծաղդ:

– Ասեմ. հակառակը, ուղղակի քեզ չէի պատկերացնում երիտասարդ կրքոտ ռոմանտիկի դերում:

– Կանգնեցրու հաջորդ բենզալցակայանում, ես ոտքով կշարունակեմ,– բացականչեց Էնթոնին՝ ձեռքերը կրծքին խաչելով ու մռայլվելով:

– Կամ շարունակում ես պատմել, կամ ես ոտքս դնում եմ գազին:

– ...մայրդ սովոր էր, որ երկրպագուները նրան սպասում էին միջանցքի ծայրին, թիկնապահը պարուհիներին ուղեկցում էր մինչև ավտոբուս, որն էլ նրանց տեղափոխում էր հյուրանոց: Ես էլ էի էնտեղ. ինձ հրահանգեցին մի կողմ քաշվել, իմ կարծիքով՝ բավական հրամայական տոնով: Ու ես թափահարեցի բռունցքներս:

Ջուլիան բռնկվեց անզուսպ ծիծաղով:

– Գերազանց է,– գազազած շպրտեց Էնթոնին,– էլ ոչ մի բառ, վերջ:

– Պա՛պ,– զվարթ գոչեց Ջուլիան,– խնդրում եմ, կներես, բայց էլ դիմանալու չէր...

Էնթոնին շրջեց գլուխն ու ուշադիր նայեց նրան:

– Էս անգամ հաստատ երազ չէր, դու ինձ «պապա» ասեցի՞ր:

– Երևի,– ասաց Ջուլիան՝ աչքերը չորացնելով:– Շարունակիր:

– Զգուշացնում եմ, Ջուլիա, եթե ժպիտի ստվեր անգամ տեսնեմ, էլ ծպտուն չեմ հանի: Համաձա՞յն ես:

– Երդվում եմ,– ասաց Ջուլիան՝ աջ ձեռքը բարձրացնելով:

– ...Մամադ մեջ ընկավ, ինձ մի կողմ քաշեց, ավտոբուսի վարորդին խնդրեց մի քիչ սպասել: Հետո ինձ հարցրեց, թե ինչ եմ անում բոլոր ներկայացումների ժամանակ՝ նույն սեղանի մոտ նստած: Կարծում եմ՝

կրծքիս սպիտակ վարդը դեռ աչքով չէր ընկել, հանեցի ու տվեցի նրան: Մամադ ապշեց՝ հասկանալով, որ ես էի երեկոները ծաղիկներ ուղարկում, իսկ ես օգտվեցի առիթից՝ նրա հարցին պատասխանելու համար:

– Ու ի՞նչ ասեցիր:

– Որ եկել եմ նրա ձեռքը խնդրելու:

Ջուլիան շրջվեց հոր կողմը. վերջինս նրան հրահանգեց կենտրոնանալ ճանապարհի վրա:

– ...Նա սկսեց ծիծաղել, նույն զրնգուն ծիծաղով, ինչ որ դու, երբ ինձ ձեռ էիր առնում: Հետո, երբ հասկացավ, որ ես իրոք պատասխանի եմ սպասում, վարորդին նշան արեց, որ առանց իրեն մեկնեն, ու առաջարկեց, որ ես նախևառաջ նրան հրավիրեմ ընթրիքի: Մենք քայլեցինք մինչև Շանզ Էլիզեի փոքրիկ սրճարանները: Ասեմ քեզ, որ նրա կողքին քայլելով աշխարհի ամենասիրուն պողոտաներից մեկով՝ հպարտությունից տրաքվում էի: Պետք է տեսնեիր, թե ի՛նչ հայացքով էին բոլորը նրան նայում... Ամբողջ ընթրիքին խոսեցինք, բայց վերջում հայտնվեցի մի էնպիսի խայտառակ իրավիճակում, որ սկսեցի հավատալ, թե իմ բոլոր հույսերը հօդս են ցնդում:

– Մի շնչով ամուսնանալու առաջարկությունից հետո էլ ի՞նչ ահավոր բան կարող էիր անել:

– Ահավոր անհարմար ստացվեց, բայց ես փող չունեի հաշիվը փակելու, լա՛վ փորփրեցի գրպաններս. ոչ մի սու: Ջինվորականի իմ համեստ խնայողությունները մաշվել էին Լիդոյի տոմսերի ու ծաղկեփնջերի վրա:

– Ու ո՞նց տակից դուրս եկար:

– Պատվիրեցի յոթերորդ բաժակ սուրճը, սրճարանը փակվում էր, մաման գնացել էր շպարը թարմացնելու: Կանչեցի մատուցողին՝ մեղանչելու, որ մոտս գումար չկա, որ աղաչեմ-պաղատեմ՝ ինձ չխայտառակի, փոխարենը նրան առաջարկեմ ժամացույցս ու փաստաթղթերս,

խոստանալով վերադառնալ ու հաշիվը փակել առաջին իսկ հնարավորության դեպքում, ամենաուշը՝ շաբաթվա վերջում: Նա ինձ մեկնեց մանրադրամի բաժակը, մեջը՝ հաշվի փոխարեն՝ մորդ երկտողը: Պատկերացնո՞ւմ ես:

– Ու ի՞նչ էր գրած:

Էնթոնին բացեց դրամապանակը, հանեց խունացած թղթի մի կտոր, բացեց ու հանգիստ ձայնով կարդաց.

*– Երբեք չեմ սիրել հրաժեշտ տալը, կարծում եմ՝ դուք էլ: Շնորհակալություն այս հրաշք երեկոյի ու իմ ամենասիրելի վարդերի համար: Փետրվարի վերջին Մանչեստրում համերգ ունենք, ու ես անչափ ուրախ կլինեմ ձեզ տեսնել դահլիճում: Եթե գաք, ձեզ թույլ կտամ ինձ հրավիրել ընթրիքի:* Տեսնո՞ւմ ես,– թուղթը Ջուլիային ցույց տալով՝ ամփոփեց Էնթոնին,– տակը նրա ստորագրությունն է:

– Տպավորիչ է,– հառաչեց Ջուլիան,– տեսնես ինչո՞ւ է էդպես արել:

– Որովհետև միանգամից հասկացել էր, թե ինչ է կատարվում:

– Բայց ո՞նց:

– Պատկերացրու, Ջուլիա, մեկին, որ գիշերվա ժամը երկուսին յոթերորդ բաժակ սուրճն է պատվիրում, իսկ սրճարանի լույսերն արդեն սկսում են հանգցնել, իսկ նա նստել է բերանը ջուր առած ու չգիտի ինչ ասի...

– Ու գնացի՞ր Մանչեստր:

– Սկզբում անցա գործի, որ ձեռքս մի քիչ փող ընկնի: Ձեռքիս տակն ինչ ընկներ՝ անում էի: Առավոտյան ժամը հինգին Կենտրոնական շուկայում արկղեր էի բեռնաթափում, հենց վերջացնում էի՝ վազում էի տեղի սրճարանը և մատուցող աշխատում: Կեսօրին գոգնոցս փոխում էի մթերավաճառի հագուստի հետ: Հինգ կիլո նիհարեցի, բայց բավական գումար աշխատեցի,

որ գնամ Անգլիա՝ մի տոմս առնելու էն թատրոնում, որտեղ մամադ պարում էր, ու ամենակարևորը՝ նրան հրավիրեցի իրեն արժանի ընթրիքի: Ես հաղթահարեցի իմ դեմ դրած անհնարինն ու հայտնվեցի առաջին շարքում: Վարագույրը բացվեց. նա լայն ժպտաց ինձ:

Ներկայացումից հետո հայտնվեցինք քաղաքի հին փաբերից մեկում: Ես քամված էի: Ամոթ է ասելը, բայց փաբում աչքս մի պահ կպել էր, ու մայրդ դա նկատել էր: Ու էդ երեկո համարյա չենք խոսել: Շփվել ենք լուռ, ու երբ մատուցողին նշան արեցի, որ հաշիվը մոտեցնի, մայրդ անթարթ նայեց վրաս ու ասաց՝ «Այո»: Աչքերս զարմանքից չռվեցին, իսկ նա կրկնեց՝ այո, էնքան հստակ ձայնով, որ մինչև հիմա զրնգում է ականջներումս: «Այո, ես համաձայն եմ Ձեզ հետ ամուսնանալ»... Ռեվյուն երկու ամիս բեմադրվում էր Մանչեստրում: Հետո մայրդ հրաժեշտ տվեց թատերախմբին, ու մենք նավ նստեցին՝ տուն վերադառնալու համար: Հասնելուն պես՝ ամուսնացանք: Ներկա էր միայն քահանան ու երկու վկա, որոնց հենց տեղում բռնեցրինք: Մեր ընտանիքի անդամներից և ոչ մեկը մեզ չհարգեց իր ներկայությամբ: Հայրս ինձ այդպես էլ չներեց, որ պարուհու հետ եմ ամուսնացել...

Մեծ զգուշությամբ Էնթոնին խունացած թղթի կտորը հետ դրեց տեղը:

– Վա՛յ, մի տես, է, կարդիոստիմուլյատորիս վկայականը: Ինչ ապուշն եմ ես: Փոխանակ անձնագրիս մեջ պահեի, հիմարաբար դրել եմ դրամապանակիս մեջ:

Ջուլիան կասկածամտորեն շարժեց գլուխը:

– Բեռլին հասնելը մեր ճանապարհորդությունը երկարաձգելու տարբերա՞կ էր:

– Եթե դու ինձ գոնե մի քիչ ճանաչում ես, Ջուլիա, էլ ինչո՞ւ ես նման հարց տալիս:

– Վարձու մեքենան, քո իբր թե կորած վկայականը, դու ամեն ինչ դիտմամբ արեցիր, որ իրար հետ ճամփա՞ գնանք:

– Եթե նույնիսկ դիտմամբ էր, վատ չտացվեց, հը՞, աղջիկս, ի՞նչ կասես:

Ցուցանակը հուշեց, որ մտնում են Բեռլին: Մթագնած Զուլիան ուղղեց դիտահայելին:

– Հը՞, ինչ եղավ, էլ բան չունե՞ս ասելու,– հարցրեց Էնթոնին:

– Էն օրվա նախօրեին, երբ դու ներխուժեցիր մեր սենյակ ու ջարդեցիր Թոմասին, մենք որոշել էինք ամուսնանալ: Բայց չամուսնացանք, որովհետև հայրս չհանդուրժեց, որ ես ընտրել էի մեկին, ով իր աշխարհից չէր:

Էնթոնին շրջվեց դեպի պատուհանը:

## 15

Գերմանիայի սահմանը հատելուց ի վեր Էնթոնին ու Զուլիան բառ չէին փոխանակել: Ժամանակ առ ժամանակ Զուլիան բարձրացնում էր ռադիոյի ձայնը, Էնթոնին՝ անմիջապես իջեցնում: Հեռվում նշմարվեց սոճիների անտառը: Անտառի փեշին բետոնե արգելապատնեշները փակում էին մոռացված մի ճանապարհ: Զուլիան հեռվում ճանաչեց Մարիենբորնի սահմանապահ ուղեկալի հին շինությունները, որոնք հուշահամալիրի էին վերածվել:

– Ո՞նց արեցիք, որ սահմանն անցաք,– հարցրեց Էնթոնին՝ ուսումնասիրելով աջ կողմում ցցված սահմանապահ դիտակետերը:

– Վայ, չասեմ... Մեզ հետ ճանապարհորդողներից մեկը դիվանագետի տղա էր, մենք էլ ձևացրինք, թե այցելում ենք մեր բարեկամներին՝ Արևմտյան Բեռլին:

Էնթոնին սկսեց քրքջալ:

– Ինչ վերաբերում է քեզ, կարծում եմ, շատ բնական է ստացվել:

Նա ձեռքերը դրեց ծնկներին:

– Կներես, որ մտքովս ավելի շուտ չէր անցել նամակը քեզ տալ, Ջուլիա:

– Դու հիմա անկե՞ղծ ես:

– Ոնց ասեմ... ամեն դեպքում, ասելուց հետո մի տեսակ թեթևացած եմ ինձ զգում: Կկանգնե՞ս, հենց որ հարմար լինի:

– Ինչի՞ համար:

– Վնաս չէր տա, որ մի քիչ հանգստանայիր: Ոտքերիս թմրածությունն էլ կանցնի:

Ցուցանակը հուշում էր, որ մոտ տասը կիլոմետրի վրա կայարան կա: Ջուլիան խոստացավ այնտեղ կանգ առնել:

– Իսկ մամայի հետ ինչո՞ւ էիք գնացել Մոնրեալ:

– Մենք շատ փող չունեինք, հատկապես ես, մայրդ գոնե մի քիչ ուներ հետ գցած, որը շատ շուտ սպառվեց: Կյանքը Նյու Յորքում ավելի ու ավելի էր բարդանում: Մենք էնտեղ երջանիկ ենք եղել, գիտե՞ս: Մեկ-մեկ նույնիսկ մտածում եմ, որ դրանք մեր ամենալավ տարիներն էին:

– Հիմա հպարտանում ես, չէ՞,– մեղմ ցավով հարցրեց Ջուլիան:

– Ինչո՞վ:

– Որ դատարկ գրպանով գնացել ու հետո ոտքի ես կանգնել:

– Իսկ դու չե՞ս հպարտանում: Չե՞ս հպարտանում քո անվախությամբ: Չե՞ս հպարտանում, երբ տեսնում ես,

թե ոնց են երեխաները խաղում քո հորինած փափուկ խաղալիքով: Երբ շրջում ես առևտրի կենտրոնով ու կինոթատրոնի մուտքի մոտ տեսնում ես էն ֆիլմի պաստառը, որը դու ես հնարել, չե՞ս հպարտանում:

– Ես երջանիկ եմ, ու էդ արդեն հերիք է:

Մեքենան թեքվեց դեպի հանգստի գոտի: Ջուլիան տեղավորվեց հսկայական կանաչ տարածքը եզերող մայթի երկայնքով: Էնթոնին դուռը բացեց ու իջնելուց առաջ ոտքից գլուխ չափեց դստերը:

– Դու ինձ ցնդեցնում ես, Ջուլիա,– հեռանալով՝ ասաց նա:

Ջուլիան անջատեց շարժիչն ու գլուխը դրեց մեքենայի ղեկին:

– Ա՛խ, էստեղ ինչ եմ կորցրել...

Էնթոնին կտրեց-անցավ մանկական խաղահրապարակն ու մտավ լցակայանի խանութ: Դուրս եկավ մի քանի րոպե անց՝ մթերքով լի պայուսակով, բացեց մեքենայի դուռն ու գնումները դրեց նստարանին:

– Գնա մի քիչ թարմացիր, Ջուլիա: Մի քանի բան եմ վերցրել, որ ուժ հավաքես: Ես կհետևեմ մեքենային:

Ջուլիան լուռ հնազանդվեց: Նա անցավ ճոճանակների, հետո ավազամանի մոտով ու մտավ լցակայան: Երբ դուրս եկավ, հայրը պառկած էր սղարանին՝ աչքերը երկինք հառած:

– Լա՞վ ես,– անհանգստացած հարցրեց նա:

– Ի՞նչ ես կարծում, ես հիմա վերևո՞ւմ եմ:

Հարցից շփոթված՝ Ջուլիան նստեց խոտերին, հենց նրա կողքին: Ու իր հերթին սկսեց նայել երկնքին:

– Եսիմ... Ես շատ երկար եմ Թոմասին փնտրել ամպերի մեջ: Վստահ էի, որ մի քանի անգամ նույնիսկ ճանաչել եմ, բայց, ոնց պարզվեց, նա ողջ է:

– Ես Աստծուն հավատում էի, մայրդ՝ ոչ: Հիմա, քո կարծիքով, ես դրախտո՞ւմ եմ, թե՞ չէ:

– Կներես, բայց պատասխան չունեմ: Չեմ կարողանում...

– Հավատալ Աստծո՞ւն:

– Համակերպվել գաղափարի հետ, որ դու էստեղ ես, կողքիս, խոսում եմ հետդ, մինչդեռ...

– Մինչդեռ ես մեռած եմ: Ասել եմ քեզ արդեն, Ջուլիա, բառերից մի վախեցիր: Ճիշտ բառերը շատ կարևոր են: Օրինակ, եթե դու ավելի շուտ երեսիս շպրտեիր, որ՝ պապա, դու հիմար տականքի մեկն ես, որն էդպես էլ իմ կյանքից բան չհասկացավ, եսասերի մեկը, որն ուզում էր իմ գոյությունն իր ցանկություններին համապատասխանեցնել, դու ոչ մի բանով չես տարբերվում էն մյուս հայրերից, որ ամեն ինչ անում են քո «լավի» համար, մինչդեռ մտածում են միայն իրենց մասին, երևի թե տեղ հասներ: Երևի թե մենք ժամանակ չկորցնեինք, լավ ընկերներ դարձած կլինեինք: Պատկերացնում ես, թե ինչ զիլ կլիներ, եթե մենք ընկերանայինք:

Ջուլիան շարունակում էր լուռ մնալ:

– Տես, շատ ճիշտ բառեր են. մոտս չստացվեց լավ հայր լինել, գոնե լավ ընկեր լինեմ:

– Մենք պետք է ճանապարհ ընկնենք,– հոգնած ձայնով ասաց Ջուլիան:

– Արի մի քիչ էլ սպասենք: Կարծում եմ՝ էներգիայի իմ պաշարները չեն համապատասխանում պիտակներին: Եթե ես շարունակեմ ծախսել նույն արագությամբ, վախենամ, որ մեր ճամփորդությունն ավելի կարճ տևի, քան նախատեսել էի:

– Կսպասենք էնքան, ինչքան պետք է: Բեռլինն էդքան էլ հեռու չէ, ու համ էլ՝ քսան տարի սպասելուց հետո մի քանի ժամը բան չի փոխի,– ասաց Ջուլիան:

– Տասնյոթ տարի, ոչ թե քսան:

– Շատ բան չի փոխվում:

– Կյանքի երեք տարի՞ն... Չէ, չէ, շատ բան է փոխվում, հավատա, ես հո հաստատ գիտեմ:

Հայր ու դուստր այդպես էլ մնացին պառկած՝ անշարժ, աչքերը անթարթ երկինք հառած, ձեռքները գլխների տակ խաչած. Ջուլիան՝ խոտերի մեջ, Էնթոնին՝ սղարանի մոտ:

Մի ժամ անցավ: Ջուլիան նիրհում էր, իսկ Էնթոնին լուռ հետևում էր նրան: Ասես ոչինչ չէր խանգարում աղջկա քունը: Միայն մեկ-մեկ, երբ քամին մազերը թափում էր երեսին, Ջուլիան քնի մեջ կիտում էր հոնքերը: Էնթոնին զգույշ հետ էր տանում մազափունջը: Երբ Ջուլիան բացեց աչքերը, երկինքն արդեն լուսավորվել էր երեկոյան գույներով: Հայրը կողքին չէր: Նա փնտրող հայացքով չափեց հորիզոնն ու հեռվում ճանաչեց հոր կերպարը՝ մեքենայի դիմաց նստած: Ջուլիան հագավ կոշիկները՝ առանց հիշելու անգամ, թե երբ էր ոտքերից հանել, ու վազեց դեպի ավտոկայանատեղի:

– Երկա՞ր եմ քնել,– հարցրեց նա՝ մեքենան տեղից պոկելով:

– Մի երկու ժամ կամ մի քիչ ավելի: Չեմ հաշվել:

– Իսկ դո՞ւ ինչ էիր անում:

– Սպասում էի:

Մեքենան դուրս եկավ հանգստի գոտուց և մտավ մայրուղի: Մինչև Պոտսդամ մնում էր ութսուն կիլոմետր:

– Մինչև հասնենք՝ մութը կընկնի,– ասաց Ջուլիան:– Գաղափար անգամ չունեմ, թե ոնց կարելի է Թոմասի հետքի վրա ընկնել: Չգիտեմ էլ՝ դեռ նույն տեղո՞ւմ է ապրում, թե՞ չէ: Էս ինչ պատմության մեջ ինձ քաշեցիր... Նա գուցե արդեն Բեռլինում էլ չի ապրում:

– Իրականում՝ հա, շատ հնարավոր է, եթե հաշվի առնենք, թե ոնց են բարձրացել բնակարանների գները, էն, որ նա ունի կին, երեք երեխա, աներ-զոքանչ, որ

ապրում են նրանց հետ, նրանք երևի տեղափոխվել են ինչ-որ սեփական տուն՝ քաղաքից դուրս:

Զուլիան կատաղած նայեց հորը, որը ձեռքով նշան արեց կենտրոնանալ ճանապարհի վրա:

– Զարմանալի է, թե ինչպես է վախը կարողանում խոչընդոտել ոգու թռիչքը:

– Ի՞նչ նկատի ունես:

– Հեչ, բարձրաձայն մտածում եմ: Իմիջիայլոց, չեմ ուզում ինձ չվերաբերող բաներին խառնվել, բայց երևի ժամանակն է, որ մի լուր տաս Ադամին: Գոնե հանուն ինձ, ես էլ ի վիճակի չեմ Գլորիա Գեյնորի ձայնը լսել. քնածդ ժամանակ ոչ մի վայրկյան պայուսակիդ միջից ձայնը չկտրեց:

Էնթոնին ամբողջ կոկորդով մեկ սկսեց երգել «I will Survive»-ը: Զուլիայից մեծ ճիգեր պահանջվեցին լուրջ մնալու համար, բայց ինչքան Էնթոնին բարձրացնում էր ձայնը, այնքան Զուլիան ավելի էր զվարճանում: Բեռլինի արվարձաններին հասնելուց երկուսն էլ քրքջում էին:

Էնթոնին Զուլիային ցույց տվեց «Brandenburger Hof» հյուրանոց տանող ճանապարհը: Մեքենայի կանգ առնելուն պես հյուրանոցի դռնապանը առաջ շտապեց՝ ողջունելով մեքենայից իջնող Էնթոնիին: «Բարի երեկո, պարոն Ուելշ»,– իր հերթին ողջունեց բարապանը՝ պտտադուռը պահելով: Էնթոնին անցավ սրահն ու ուղղվեց դեպի ընդունարան, որտեղ մատենավարը նրան անունով ողջունեց: Չնայած նրանք նախօրոք չէին ամրագրել, ու տարվա այս սեզոնին հյուրանոցը լեփ-լեցուն էր, ադմինիստրատորը վստահեցրեց, որ ամենալավ դասի երկու սենյակ նրանց է սպասում: Միակ անհարմարությունն այն էր, որ սենյակները գտնվում էին տարբեր հարկերում: Էնթոնին շնորհակալություն հայտնեց՝ ավելացնելով, որ դա ամենևին էլ խնդիր չէ: Բանալիները

մեկնելով սպասավորին՝ մատենավարը հարցրեց՝ պարոն Ուելշը արդյոք չի՞ ցանկանում, որ հյուրանոցի ռեստորանում նրանց համար սեղան ամրագրեն:

– Կուզե՞ս՝ էստեղ ճաշենք,– Ջուլիային հարցրեց Էնթոնին:

– Դու, ի՞նչ է, էս հյուրանոցի բաժնետե՞ր ես:

– Եթե ոչ, տասը քայլի վրա մի հիասքանչ ասիական ռեստորան գիտեմ: Դեռ սիրո՞ւմ ես չինական ուտեստներ:

Ու քանի որ Ջուլիան չպատասխանեց, Էնթոնին խնդրեց ադմինիստրատորին, որ «China Garden»-ում երկու տեղ պահեն:

Փոխվելուց ու հանգստանալուց հետո Ջուլիան իջավ ներքև, և հայր ու աղջիկ ոտքով ճամփա ընկան:

– Սրտնեղա՞ծ ես:

– Գժվել կարելի է, ո՞նց է ամեն ինչ փոխվել,– պատասխանեց Ջուլիան:

– Ադամի հետ կապվեցի՞ր:

– Հա, իհարկե, սենյակից զանգեցի:

– Ու ի՞նչ ասաց:

– Որ արդեն ինձ կարոտում է, որ չի հասկանում, թե ինչու էսպես վերցրի ու գնացի, ու թե ինչի հետևից եմ ընկել, որ եկել էր Մոնրեալ ինձ գտնելու, բայց մի ժամվա տարբերությամբ իրար չհանդիպեցինք:

– Պատկերացնո՞ւմ ես Ադամի դեմքը, եթե մեզ երկուսով տեսներ...

– Ու չորս անգամ երդվել տվեց, որ ես մենակ եմ:

– Ե՞վ:

– Էլ ինչ «և». չորս անգամ խաբեցի:

Էնթոնին հրեց ռեստորանի դուռն ու ներս թողեց դստերը:

– Տես, հա, շատ հավեսի չընկնես,– ծիծաղելով ասաց նա:

– Ոչ մի ծիծաղելի բան չեմ տեսնում:

– Ծիծաղելի է, որ մենք երկուսով Բեռլինում փնտրում ենք քո առաջին սիրուն, ու որ դու քեզ տանջում ես, որովհետև չես կարողանում փեսացուիդ խոստովանել, որ Մոնրեալ գնացել էիր հորդ հետ: Երևի թե սխալվում եմ, բայց իրոք զվարճալի է, Ջուլիա, մի քիչ կանացի, բայց զվարճալի:

Ուտելու ընթացքում Էնթոնին գծեց հետագա գործողությունների պլանը: Արթնանալուն պես կգնան լրագրողների արհմիություն՝ պարզելու, թե արդյոք ոմն Թոմաս Մայեր դեռևս գրանցվա՞ծ է նրանց մոտ: Վերադառնալիս Ջուլիան հորը քարշ տվեց Թիրգարթեն զբոսայգի:

– Ա՛յ, էնտեղ քնել եմ,– ասաց նա՝ մատնացույց անելով հեռվում կանգնած ծառը:– Ոնց որ երեկ լիներ...

Էնթոնին խորամանկորեն նայեց դստերը, հետո ձեռքերը միացրեց ու պարզեց Ջուլիայի կողմը:

– Ի՞նչ ես անում:

– Քեզ համար աստիճան եմ սարքում, դե շուտ արա, քանի ոչ ոք չի տեսել:

Ջուլիան չթողեց, որ երկար խնդրեն. հենվեց հոր ձեռքերին ու թռավ, անցավ ցանկապատի վրայով:

– Բա դո՞ւ,– հարցրեց նա՝ ուղղվելով:

– Ես դարպասով կմտնեմ, Ջուլիա,– պատասխանեց վերջինս՝ ցույց տալով մի քիչ այն կողմ գտնվող մուտքը,– այգին փակվում է կեսգիշերին, համ էլ իմ տարիքում էսպես ավելի հեշտ կլինի:

Էնթոնին միացավ Ջուլիային, ուղեկցեց նրան դեպի սիզամարգ, և երկուսով նստեցին Ջուլիայի ցույց տված հսկայական լորենու տակ:

– Գիտե՞ս՝ ինչն է հետաքրքիր, աղջիկս. ես էլ եմ ջահել ժամանակ Գերմանիա գալիս մի քանի անգամ

աչքս կպցրել էս ծառի տակ: Իմ սիրած տեղն էր: Ամեն առիթով գալիս էի, գիրքը ձեռքիս նստում ծառի տակ ու հետևում, թե ինչպես են աղջիկները շրջում ծառուղի-ներով: Երկուսս էլ նույն տարիքում նստել ենք նույն ծառի տակ, ուղղակի մի քանի տասնամյակ տարբերությամբ: Մոնրեալն էլ եթե հաշվենք՝ հիմա մենք ունենք երկու տեղ, որոնց մասին կարող ենք հիշել ու պատմել: Ու ես շատ ուրախ եմ դրա համար:

– Ես Թոմասի հետ էի միշտ գալիս էստեղ,– ասաց Ջուլիան:

– Ոնց որ թե կամաց-կամաց սկսում եմ սիրել էդ տղային:

Հեռվից լսվեց փղի ձայնը: Բեռլինի կենդանաբա-նական այգին նրանցից ընդամենը մի քանի մետր այն կողմ էր՝ այգու վերջում:

Էնթոնին վեր կացավ ու դստերը հրահանգեց հետևել իրեն:

– Երբ փոքր էիր, ատում էիր կենդանաբանական այ-գիները: Նեղվում էիր, որ կենդանիներին փակում են վանդակներում: Էդ ժամանակ ուզում էիր անասնաբույժ դառնալ: Երևի չես հիշում. վեց տարեկանում ծնունդիդ մի մեծ, փափուկ խաղալիք նվիրեցի, եթե չեմ սխալվում՝ ջրասամույր էր: Երևի լավ չէի ընտրել, նա անընդհատ հիվանդանում էր, ու դու օրուգիշեր բուժում էիր:

– Ուզում ես ասել՝ քո շնորհի՞վ է, որ ես նկարել եմ իմ...

– Ի՛նչ հետաքրքիր գաղափար է: Ո՞վ ասեց, որ մեր մանկության հուշերը ինչ-որ դեր են խաղում մեր հասուն կյանքում... Դու ինձ արդեն էնքան բանում ես մեղադրում, Ջուլիա, մեկով ավելի, մեկով պակաս՝ բան չի փոխի:

Էնթոնին խոստովանեց, որ ուժերը լքում են իրեն անհանգստացնող արագությամբ: Տաքսի կանչեցին, որ հետ գնան:

Հյուրանոց վերադառնալով՝ Էնթոնին հրաժեշտ տվեց վերելակից դուրս եկող Ջուլիային ու շարունակեց բարձրանալ դեպի վերջին հարկ, որտեղ գտնվում էր իր սենյակը:

Մահճակալին պառկած՝ Ջուլիան երկար ժամանակ թերթում էր բջջային հեռախոսի համարները: Որոշեց զանգահարել Ադամին. միացավ ինքնապատասխանիչը: Ջուլիան անջատեց ու զանգահարեց Սթենլիին:

– Հը, սիրունս, գտա՞ր՝ ինչ որ ման էիր գալիս,– հարցրեց Սթենլին:

– Դեռ ոչ, հենց նոր եմ տեղ հասել:

– Ոտքո՞վ ես գնացել:

– Մեքենայով՝ Փարիզից: Երկար պատմություն է:

– Ինձ գոնե մի քիչ կարոտո՞ւմ ես,– լսվեց հեռախոսի մյուս ծայրից:

– Չես հավատա, չէ՞, բայց զանգել եմ, որ պատմեմ ինչ կա՝ չկա:

Սթենլին խոստովանեց, որ աշխատանքից վերադառնալիս անցել է նրա տան մոտով: Իր ճանապարհին չէր, բայց ենթագիտակցորեն քայլերը նրան տարել էին Հորացիո և Գրինիչ փողոցների խաչմերուկ:

– Քո թաղերն առանց քեզ շատ տխուր էին:

– Բայց ինչ շողոքորթն ես, Սթենլի...

– Հանդիպել եմ հարևանիդ՝ կոշիկ վաճառողին:

– Շփվել ես պարոն Ջիմուրի հե՞տ:

– Հա բա, եթե հիշենք, թե ինչեր ենք հանել գլխին, արևս... Դռան մոտ կանգնած էր, ինքը բարև տվեց, ես էլ բարևն առա:

– Քեզ մենակ թողնել չի կարելի: Մի քանի օր է՝ բացակայել եմ, արդեն սկսել ես ում հետ ասես շփվել:

– Էլ մի օձություն արա... ու վերջապես, գիտե՞ս, նա էնքան էլ զզվելի մարդ չի:

– Սթենլի, ոնց որ թե ինչ-որ բան ես ուզում ինձ ասել, հա՞:

– Է՞լ ինչ կասես:

– Ես քեզ բոլորից լավ եմ ճանաչում: Արդեն կասկածելի է, երբ դու հանդիպում ես մեկին, որն առաջին հայացքից քեզ զզվելի չի թվում, իսկ եթե արդեն պարոն Ջիմուրն է «հաճելի», ուրեմն ես պետք է վազելով հետ գամ:

– Ուրիշ պատճառ ման արի, սիրելիս, մենք իրար բարևեցինք, ու վերջ: Հա, համ էլ Ադամն էր եկել...

– Օ՛, ոնց որ թե ոչ մի օր առանց իրար չեք կարողանում:

– Լո՞ւրջ: Բայց ոնց որ դու առանց նրա լավ էլ ապրում ես: Հետո՝ ես չեմ մեղավոր, որ նա իմ խանութից մի քանի փողոց էն կողմ է ապրում: Ու եթե դա դեռ քեզ հետաքրքրում է, ջանիկս, ասեմ, որ հեչ լավ տեսք չուներ: Ամեն դեպքում, էն փաստը, որ նա եկել էր մոտս, հենց դրա մասին է վկայում: Նա կարոտում է քեզ, Ջուլիա, անհանգստանում է, իսկ ես կարծում եմ, որ նա դրա բոլոր պատճառներն ունի:

– Սթեն, երդվում եմ, որ ոչ մի բան չկա: Հակառակը...

– Վա՛յ, չէ, պետք չէ երդվել: Գոնե ասածիդ հավատո՞ւմ ես:

– Հավատում եմ,– չվարանեց Ջուլիան:

– Գժվում եմ, երբ սկսում ես քեզ էսպես պահել: Հաստատ գիտե՞ս, թե ուր է քեզ տանում քո խորհրդավոր ճանապարհորդությունը:

– Չէ...– հեռախոսի մեջ մրմնջաց Ջուլիան:

– Բա ո՞նց ես ուզում, որ նա իմանա: Լավ, գնացի, ժամը յոթն է, պետք է հավաքվեմ, ընթրիքի եմ:

– Ո՞ւմ հետ:

– Իսկ դո՞ւ, ո՞ւմ հետ ես դու ընթրում, ջանիկս:

– Մեն-մենակ, Սթենլի:

– Քանի որ ես հարյուր տոկոս վստահ եմ, որ խաբում ես, հեռախոսն անջատում եմ: Զանգիր վաղը: Գրկում եմ:

Ջուլիան չհասցրեց մի բառ ավելացնել. Սթենլին արդեն անջատել էր հեռախոսն ու երևի շտապել հանդերձարան:

***

Զանգի ձայնն արթնացրեց Ջուլիային: Նա ձգվեց մարմնով մեկ, վերցրեց հեռախոսը, բայց լսեց միայն համաչափ ազդանշաններ: Վեր թռավ, գնաց դեպի դուռը, հետո գիտակցեց, որ ամբողջովին մերկ է, մահճակալի ծայրից վերցրեց երեկոյան թողած խալաթն ու անմիջապես գցեց վրան:

Սպասավորը կանգնած էր դռան հետևում: Երբ Ջուլիան բացեց, նա ներս հրեց առավոտվա «Կոնտինենտալ» նախաճաշով ու երկու թերխաշ ձվով անվավոր սեղանիկը:

– Ես ոչինչ չեմ պատվիրել,– ասաց նա երիտասարդին, մինչ նա նախաճաշը դասավորում էր ցածր սեղանիկին:

– Երեքուկես րոպե, հենց այդքան ժամանակ եք նախընտրում, որ ձուն եփվի, այդպես չէ՞:

– Հենց այդքան,– պատասխանեց Ջուլիան՝ խառնելով մազերը:

– Պարոն Ուելշն է հանձնարարել:

– Բայց ես սոված չեմ...– ավելացրեց նա՝ մինչ սպասավորը զգուշությամբ մաքրում էր ձվի կճեպը:

– Պարոն Ուելշը զգուշացրեց, որ հենց այդպես էլ կասեք: Եվ պետք է նաև զգուշացնեմ, օրիորդ, որ նա ձեզ կսպասի հյուրանոցի սպասասրահում ժամը ութին, այսինքն՝ երեսունյոթ րոպեից,– ավելացրեց նա՝ ժամացույցը

ստուգելով:– Ձեզ լավ օր եմ ցանկանում, օրիորդ Ուելշ, սքանչելի եղանակ է, բարի ժամանց Բեռլինում:

Եվ դուրս սահեց Ջուլիայի ապշահար հայացքի ներքո:

Ջուլիան նայեց սեղանին, նարնջի հյութին, փաթիլներին, թարմ հացին. ամեն ինչ հաշվի էր առնված: Որոշելով անտեսել նախաճաշը, նա ուղղվեց դեպի լոգասենյակ, հետո կեսից շրջվեց ու նստեց բազմոցին: Մատը մտցրեց ձվի մեջ և ի վերջո կերավ-սրբեց սեղանի եղած-չեղածը:

Հետո արագ ցնցուղ ընդունեց, հագնվեց, ոտքի վրա չորացրեց մազերը, հընթացս ոտքերը մտցրեց կոշիկների մեջ ու մի ոտքի վրա ցատկելով՝ դուրս եկավ սենյակից: Ուղիղ ժամը ութն էր:

Էնթոնին ընդունարանի մոտ նրան էր սպասում:

– Ուշանում ես,– ասաց նա, երբ Ջուլիան դուրս էր գալիս վերելակից:

– Երեքուկես րոպե՞,– կասկածամտորեն հարցրեց Ջուլիան:

– Դու էդպես ես սիրում ձուն, ճիշտ չե՞մ: Արագացրու, կես ժամից հանդիպում ունենք, ու էս խցանումների մեջ հազիվ էլ հասնենք:

– Որտե՞ղ ենք հանդիպման և ո՞ւմ հետ:

– Գերմանիայի լրագրողների արհմիության գլխավոր գրասենյակում: Ինչ-որ մի կետից պետք է սկսել, չէ՞:

Էնթոնին դուրս եկավ ու խնդրեց տաքսի կանչել:

– Ո՞նց հաջողեցրիր,– հարցրեց Ջուլիան՝ տեղավորվելով դեղին Մերսեդեսի մեջ:

– Ջանգեցի վաղ առավոտյան, երբ դու դեռ քնած էիր:

– Դու գերմաներեն գիտե՞ս:

– Թույլ տուր նշեմ, որ տեխնոլոգիական հրաշքները, որոնցով ես հիմա լիքն եմ, նաև հնարավորություն են

տալիս ազատ խոսել մի տասնհինգ լեզվով. սա քեզ կզարմացնի, թե չէ, բայց բավարարվիր նրանով, որ ես մի քանի տարի աշխատել եմ էստեղ, եթե, իհարկե, դեռ չես մոռացել: Մի քանի խոսակցական հնարքներ մտապահել եմ, որ ինձ օգնում է անհրաժեշտության դեպքում տակից դուրս գալ: Իսկ դո՞ւ, որ որոշել էիր կյանքդ դասավորեիր էստեղ, մի քիչ գոնե սովորե՞լ էիր Գյոթեի լեզուն:

– Արդեն մոռացել եմ:

Տաքսին սլացավ դեպի Շտյուլերշտրասե: Հաջորդ խաչմերուկից թեքվեց ձախ, կտրեց անցավ այգին: Հսկա լորենու ստվերը փռվել էր կանաչազարդ սիզամարգի վրա:

Մեքենան սլանում էր Շփրեե գետի վերանորոգված պատնեշների մոտով: Գետի երկու կողմերում մեկը մեկից ժամանակակից ու նոր շինությունները՝ վազող ժամանակի վկաները, մրցում էին թափանցիկության ճարտարապետական լուծումներով: Թաղամասի հարևանությամբ ժամանակին բարձրանում էր քաղաքը բաժանող մռայլ պատը: Բայց այդ ժամանակաշրջանից էլ բան չի մնացել: Նրանց դիմաց հսկայական ապակե գմբեթի տակ տեղակայված էր Congres Centrum-ի[1] դահլիճը: Քիչ այն կողմ՝ գետի երկու ափերին, մեկ այլ՝ ավելի մեծ ու կարևոր համալիր էր վեր խոյանում, ուր կարող էիր հասնել թեթև, սպիտակ կամրջակով: Նրանք հրեցին դուռն ու ուղղվեցին դեպի լրագրողների արհմիության գրասենյակ: Մի աշխատակից նրանց դիմավորեց

[1] Համալիր Բեռլինում՝ նախատեսված մեծ կոնֆերանսների, ցուցահանդեսների, հաերգների և թատերական ներկայացումների համար:

ընդունարանում: Պարզ գերմաներենով Էնթոնին բացատրեց, որ իրենք փնտրում են ոմն Թոմաս Մայերի:

– Ի՞նչ հարցով,– հարցրեց աշխատակիցը՝ առանց գլուխը թղթերից բարձրացնելու:

– Ես տեղեկություն ունեմ, որ կարող եմ միայն պարոն Մայերին փոխանցել,– սիրալիր տոնով պատասխանեց Էնթոնին:

Եվ քանզի վերջին բառերն ի վերջո գրավեցին զրուցակցի ուշադրությունը, Էնթոնին անմիջապես ավելացրեց, որ անսահման երախտապարտ կլինի, եթե արհմիությունը կարողանա հուշել պարոն Մայերի գտնվելու վայրը: Ոչ մի անձնական տվյալ, իհարկե, այլ ընդամենը այն կազմակերպության հասցեն, որտեղ նա աշխատում է:

Ընդունարանի աշխատակիցը խնդրեց սպասել, իսկ ինքը գնաց ղեկավարի մոտ:

Փոխտնօրենն Էնթոնիին ու Ջուլիային հրավիրեց իր գրասենյակ: Նստելով բազմոցին՝ ամենայն հավանականությամբ, սենյակի տիրոջ հսկայական լուսանկարի տակ, որն անթաքույց հպարտությամբ ի ցույց էր դրել իր բռնած ձկնեղենը, Էնթոնին բառ առ բառ կրկնեց իր ճառը: Մարդը քննադատող հայացքով չափեց Էնթոնիին:

– Դուք այդ Թոմաս Մայերին փնտրում եք, որ ի՞նչ կարգի տեղեկություն հայտնեք նրան,– բեղերի հետ խաղալով՝ հարցրեց նա:

– Իրավունք չունեմ ձեզ ասելու, կներեք, բայց հավատացեք, որ այն շատ կարևոր է պարոն Մայերի համար,– ամենայն անկեղծությամբ խոստովանեց Էնթոնին:

– Ես չեմ հիշում ոչ մի ակնառու հոդված, որ հրապարակված լիներ ոմն Թոմաս Մայերի կողմից,– կասկածամտորեն ասաց փոխտնօրենը:

– Եվ հենց դա մենք կարող ենք փոխել, եթե ձեր շնորհիվ կարողանանք կապ հաստատել նրա հետ:

– Իսկ օրիո՞րդն ինչ կապ ունի այս ամբողջ պատմության հետ,– հարցրեց փոխտնօրենը՝ բազկաթոռը դեպի պատուհանը պտտելով:

Էնթոնին դարձավ դեպի Ջուլիան, որը ժամանելուց ի վեր ոչ մի բառ չէր արտասանել:

– Ոչ մի կապ,– պատասխանեց նա,– օրիորդ Ջուլիան իմ օգնականն է:

– Ես իրավունք չունեմ ձեզ տալ ցանկացած կարգի տեղեկություն արիմիության անդամներից որևէ մեկի մասին,– տեղից վեր կենալով՝ ամփոփեց փոխտնօրենը:

Էնթոնին իր հերթին վեր կացավ, մոտեցավ նրան ու ձեռքը դրեց ուսին:

– Այն, ինչ պատրաստվում եմ ասել պարոն Մայերին և միայն պարոն Մայերին,– հեղինակավոր տոնով պնդեց նա,– կարող է հիմնովին փոխել նրա կյանքը՝ լավ, շատ լավ իմաստով: Մի ստիպեք մտածել, որ արիմիության՝ ձեզ նման պաշտոնյան կարող է խանգարել իր անդամներից մեկի առաջխաղացմանը: Այս դեպքում ես չեմ հապաղի նման վերաբերմունքի մասին տեղյակ պահել հասարակությանը:

Փոխտնօրենը ոլորեց բեղն ու հետ նստեց: Նա կտկտացրեց իր համակարգչի ստեղնաշարին և էկրանը պտտեցրեց դեպի Էնթոնին:

– Տեսեք, ոչ մի Թոմաս Մայեր մեր ցուցակներում չկա: Ցավում եմ: Նույնիսկ եթե նա անդամության քարտ չունի, որը չի բացառվում, նրա անունը չկա լրագրողների կատալոգում: Կարող եք ինքներդ հավաստիանալ: Իսկ հիմա, կներեք, ես պետք է աշխատեմ, ու եթե, այդ պարոն Մայերից բացի, ոչ ոք չի կարող ստանալ ձեր թանկարժեք տեղեկությունը, ստիպված եմ հրաժեշտ տալ ձեզ:

Էնթոնին վեր կացավ և Ջուլիային նշան արեց հետևել իրեն: Նա ջերմորեն շնորհակալություն հայտնեց զրուցակցին՝ տրամադրած ժամանակի համար, և դուրս եկան:

– Դու հաստատ ճիշտ էիր,– մռթմռթաց նա՝ մայթով բարձրանալով:

– Քո օգնակա՞նը,– հարցրեց Ջուլիան՝ հոնքերը կիտելով:

– Լավ, էլի, խնդրում եմ, էդ դեմքը մի ընդունիր, պետք է, չէ՞, մի բան հնարեի:

– Օրիորդ Ջուլիա... Էլ ինչ կար...

Էնթոնին ձեռքով արեց փողոցի մյուս կողմով անցնող տաքսուն:

– Թոմասդ երևի փոխել է մասնագիտությունը:

– Հաստատ՝ չէ: Լրագրությունը նրա համար ոչ թե մասնագիտություն էր, այլ կոչում: Չեմ էլ պատկերացնում, որ կյանքում ուրիշ բանով կարող է զբաղվել:

– Նա երևի պատկերացնում է: Ապա մի հիշեցրու էն նողկալի փողոցի անունը, որտեղ ապրում էիք երկուսով,– հարցրեց նա աղջկան:

– Կոմենիուսպլաց, Կարլ Մարքսի պողոտայի հետևի փողոցն է:

– Դե...

– Ի՞նչ «դե», ի՞նչ կա...

– Հեչ, միայն շատ լավ հուշեր, միայն լավ հուշեր...

Էնթոնին հասցեն փոխանցեց վարորդին: Մեքենան սլանում էր քաղաքով: Արդեն չկային պահակակետեր, պատի հետքերը, ոչինչ չէր հիշեցնում, թե որտեղ է վերջանում Արևմուտքն ու սկսվում Արևելքը: Նրանք անցան հեռուստաաշտարակի՝ գմբեթն ու անտենան երկինք մխրճած վայելչագեղ նետի մոտով: Ինչքան առաջանում էին, այնքան շուրջն ամեն ինչ փոխվում էր: Երբ տեղ

հասան, Ջուլիան ամենևին չճանաչեց այն թաղամասը, որտեղ ապրել էր: Ամեն ինչ այնքա՜ն փոխված էր, որ նրան թվաց, թե իր հիշողություններն այլ կյանքից են:

– Հենց էս հրաշալի վայրո՞ւմ են անցել քո աղջկական կյանքի ամենաերջանիկ պահերը,– սարկազմով հարցրեց Էնթոնին,– խոստովանեմ, որ ինչ-որ հմայք կա:

– Հերիք եղա՛վ,– գոռաց Ջուլիան:

Էնթոնին քարացավ՝ դստեր այդքան անսպասելի բարկությունից:

– Հիմա՞ ինչ ասեցի:

– Աղաչո՛ւմ եմ, ձայնդ կտրիր:

Փողոցի հին շինություններին ու տներին փոխարինել էին վերջերս կառուցած շենքերը: Այն ամենը, ինչ գամված էր նրա հիշողություններում, անհետացել էր. մնացել էր միայն հասարակական այգին:

Նրանք առաջ գնացին մինչև Կոմենիուսպլաց փողոցի 2 համարի տունը: Ժամանակին այստեղ մի հին շենք էր կանգնած: Կանաչ դռան հետևում փայտե աստիճաններ էին վեր բարձրանում. Ջուլիան միշտ օգնում էր Թոմասի տատիկին հաղթահարել վերջին աստիճանները: Նա փակեց աչքերն ու ընկավ հիշողությունների գիրկը. գզրոցին դրված մեղրամոմի հոտը, միշտ քաշած վարագույրները, որ թույլ լույս էին ներս թողնում և պաշտպանում կողմնակի հայացքներից, սեղանի անփոխարինելի բրդյա սփռոցը, հյուրասենյակի երեք աթոռը, մի քիչ ավելի հեռու՝ կիսամաշ բազմոցը՝ սևուսպիտակ հեռուստացույցի դիմաց: Թոմասի տատիկն այն չէր միացրել այն օրից, ինչ սկսել էր հեռարձակել «լավ» նորությունները, որ հայտնում էր կառավարությունը: Իսկ հետևում՝ բարակ միջնորմը, որը նրանց ննջասենյակը բաժանում էր հյուրասենյակից: Քանի՜-քանի անգամ էր Թոմասը փորձել բարձով «խեղդել»

Ջուլիային, երբ նա սկսում էր քրքջալ իր անճարպիկ փաղաքշանքներից:

– Էն ժամանակ մազերդ երկար էին, Ջուլիա,– ասաց Էնթոնին՝ փորձելով նրան կտրել հուշերից:

– Ի՞նչ,– շրջվելով հարցրեց Ջուլիան:

– Տասնութ տարեկանում մազերդ ավելի երկար էին:

Էնթոնին հայացքով չափեց հորիզոնը:

– Շատ բան չի մնացել...

– Կարելի է ասել՝ ոչինչ չի մնացել,– կմկմաց Ջուլիան:

– Արի, արի գնանք նստենք էն նստարանին, երեսիդ գույն չկա, պետք է մի քիչ ուշքի գաս:

Նրանք նստեցին սիզամարգի ծայրի նստարանին, որի խոտն արդեն դեղնել էր երեխաների ոտքերի տակ:

Ջուլիան լուռ էր: Էնթոնին ձեռքը բարձրացրեց, ասես ուզում էր գրկել նրան, բայց նորից ձեռքը դրեց նստարանի թիկնակին:

– Գիտե՞ս, էստեղ ուրիշ տներ էլ կային: Դրանց ճակատամասերը քայքայված էին, բայց ներսում էնքա՛ն տաքուկ էր...

– Երևի, բայց դրանք մնացել են քո հուշերում,– վստահեցնող տոնով ասաց Էնթոնին:– Հիշողությունը տարօրինակ նկարիչ է, նա վերանկարում է կյանքի գույները, ջնջում միջակություններն ու թողնում ամենագեղեցիկ գծերն ու ամենահուզիչ պահերը:

– Ճանապարհի վերջում էն ահավոր գրադարանի փոխարեն մի փոքրիկ սրճարան կար: Ավելի խղճուկ բան երբեք չէի տեսել. մոխրագույն սրահ, առաստաղից կախված նեոնային լույսեր, լամինատից սեղաններ, որոնցից մեծ մասը կաղում էր, բայց եթե իմանայիր, թե ոնց էինք ծիծաղում էդ կեղտոտ բիստրոյում, ինչ երջանիկ էինք... Մենակ օղի ու գարեջուր էին վաճառում: Հաճախ, երբ շատ մարդ էր լինում, օգնում էի տիրոջը.

կապում էի գոգնոցն ու սպասարկում: Տես, ա՛յ էնտեղ էր,– ավարտեց Ջուլիան՝ ցույց տալով գրադարանը, որ խոյացել էր փոքրիկ սրճարանի տեղում:

Էնթոնին հազաց.

– Իսկ դու վստա՞հ ես, որ էդ փողոցի մյուս կողմում չէր: Ոնց որ թե մի փոքրիկ բիստրո եմ տեսնում, որ շատ նման է քո պատմածին:

Ջուլիան շրջեց գլուխը: Բուլվարի անկյունում, իր ցույց տված տեղին դեմ հանդիման, թոշնած ֆասադի վրա անջատվում-միանում էր հին բարի լուսային ցուցանակը:

Ջուլիան տեղից վեր կացավ, Էնթոնին հետևեց նրան: Նա բարձրացավ փողոցով, արագացրեց քայլերն ու սկսեց վազել. այդ մի քանի մետրն անվերջ էր թվում: Ինչասպառ՝ նա հրեց բարի դուռն ու ներս մտավ:

Սրահի գույնը փոխված էր, երկու հսկա ջահ փոխարինել էին նեոններին, հին, լամինատե սեղանները տեղանքին ռետրո ոճ էին տալիս: Դարավոր վաճառասեղանի հետևում կանգնած ճերմակահեր մարդը միանգամից ճանաչեց նրան:

Բարում մի հաճախորդ կար՝ նստած սրահի խորքում: Հետևից երևում էր, որ նա ամսագիր է կարդում: Շունչը պահած՝ Ջուլիան մոտեցավ նրան:

– Թոմա՞ս...

## 16

Հռոմում իտալական կառավարության ղեկավարը հենց նոր հրաժարական էր տվել: Մամլո ասուլիսը վերջացավ, ու նա վերջին անգամ որոշեց «կեցվածք ընդունել» լուսանկարիչների համար: Ֆոտոխցիկների

լույսերը ճարճատում էին՝ լուսավորելով բեմը: Սրահի խորքում մի մարդ, ջեռուցման մարտկոցին հենված, դասավորում էր իր սարքավորումները:

– Չես անմահացնո՞ւմ բեմը,– հարցրեց կողքի երիտասարդ կինը:

– Ոչ, Մարինա, ինձ համար հետաքրքիր չէ մի լուսանկար, որը հիսուն հոգի նկարում է: Սա չեղավ իսկական ռեպորտաժ:

– Զզվելի բնավորություն ունես, բայց բախտդ բերել է՝ սիրուն մռութովդ տակից դուրս ես գալիս:

– Էս էլ մի տարբերակ է՝ ասելու, որ ես ճիշտ եմ: Իսկ ի՞նչ կլինի, որ բարոյականության դասերի փոխարեն քեզ տանեմ ճաշելու:

– Մտքիդ ինչ-որ տեղ կա՞:

– Իմ՝ չէ, բայց դու, վստահ եմ, մի տեղ կիմանաս:

RAI[1]-ի լրագրողներից մեկն անցավ նրանց կողքով ու համբուրեց Մարինայի ձեռքը:

– Սա ո՞վ էր:

– Հիմարի մեկը,– պատասխանեց Մարինան:

– Հիմար է, հիմար չէ՝ քո նկատմամբ անտարբեր չէ:

– Հենց դա էլ նկատի ունեի, գնացի՞նք:

– Թղթերս վերցնեմ մուտքի մոտից, ու թռնենք:

Ձեռք ձեռքի՝ նրանք դուրս եկան ասուլիսների սրահից ու միջանցքով ուղղվեցին դեպի ելքը:

– Ի՞նչ պլաններ ունես,– հարցրեց Մարինան՝ անվտանգության աշխատողին ներկայացնելով անցաթուղթը:

– Լուրի եմ սպասում խմբագրությունից: Երեք շաբաթ է՝ զբաղվում եմ անհետաքրքիր բաներով, ինչպես,

[1] RAI – Radiotelevisione Italiana – իտալական ռադիոհեռուստատեսություն:

ասենք, էսօր՝ ամեն օր հույս ունենալով, որ կանաչ լույս կտան Սոմալիի համար:

– Երնեկ ինձ:

Լրագրողն իր հերթին անվտանգության աշխատողին փոխանցեց անցաթուղթը՝ անձնագիրը հետ վերցնելու համար, որ ցանկացած այցելու պարտավոր է թողնել մուտքի մոտ՝ Մոնտեչիտորիոյի պալատ[1] մտնելու համար:

– Պարոն Ուլմա՞ն,– հարցրեց աշխատակիցը:

– Այո, այո, գիտեմ, իմ լրագրողական անունը տարբերվում է անձնագրայինից, բայց նայեք՝ լուսանկարն էլ, անունն էլ, նույնն են:

Աշխատակիցը ստուգեց դեմքերի նմանությունը և առանց լրացուցիչ հարց տալու անձնագիրը վերադարձրեց տիրոջը:

– Ինչո՞ւ որոշեցիր հոդվածներդ քո անունով չստորագրել: Աստղային թիթիզությո՞ւն է:

– Չէ, ամեն ինչ ավելի բարդ է,– պատասխանեց լրագրողը՝ Մարինայի մեջքը գրկելով:

Ճռճռացող արևի տակ նրանք կտրեցին-անցան Կոլոնայի հրապարակը: Մեծաթիվ զբոսաշրջիկները զովանում էին պաղպաղակ ուտելով:

– Լավ է՝ գոնե անունդ պահել ես:

– Թե չէ ինչ կփոխվեր...

– Ես սիրում եմ «Թոմասը»... Ոնց որ քո հագով կարած լինի, համ էլ դու իսկական Թոմասի դեմք ունես:

– Պահո՛: Փաստորեն անունները հիմա դե՞մք ունեն: Ի՛նչ տարօրինակ մտքեր են:

– Հրաշալի,– շարունակեց Մարինան,– դու չէիր կարող ուրիշ անուն ունենալ. դու չէիր կարող լինել Մասսիմո կամ Ալֆրեդո, կամ Կարլ: Թոմասն իսկ և իսկն է:

[1] Իտալիայի խորհրդարանի պատգամավորների նստավայրը:

– Հիմարություն ես դուրս տալիս: Հիմա ո՞ւր ենք գնում:

– Նայելով էս շոգին ու պաղպաղակ ուտող մարդկանց՝ գրանիտա ուզեցի: Արի գնանք «Տացցա Դ'Օրո»՝ Պանթեոնի հրապարակ, էստեղից շատ հեռու չէ:

Թոմասը կանգ առավ Անտոնինիոս Պիոսի սյան մոտ: Բացեց պայուսակում գտնվող տուփիկը, հանեց համապատասխան օբյեկտիվը, ծնկեց ու լուսանկարեց Մարինային, որն ուսումնասիրում էր Մարկուս Ավրելիուսի փառքը գովերգող խորաքանդակները:

– Ի՞նչ է, հիսուն հոգի չի՞ նկարում էս նույն նկարը,– ծիծաղելով հարցրեց նա:

– Չգիտեի, որ հիսուն երկրպագու ունես,– ժպտաց Թոմասը՝ կրկին սեղմելով ֆոտոխցիկի ստեղնը՝ ավելի լավ կադր ստանալու համար:

– Ես սյունը նկատի ունեի: Ի՞նչ է, ի՞նձ էիր նկարում:

– Սյունը նման է Բեռլինի Հաղթանակի սյանը, իսկ դու միակն ես:

– Ըհը, ինչ էի ասում. լեզուդ օձը բնից հանում է. դու պաթետիկ սիրահար ես, Թոմաս, Իտալիայում դու շանս չունես... Արի գնանք, էստեղ անտանելի շոգ է:

Մարինան բռնեց Թոմասի ձեռքը, և նրանք հեռացան Անտոնինիոսի սյան մոտից:

***

Ջուլիան նայում էր դեպի երկինք ձգվող Հաղթանակի սյանը: Պատվանդանին նստած Էնթոնին թոթվեց ուսերը:

– Առաջին փորձը միշտ ձախողվում է,– հոգոց հանեց նա:– Պատկերացնո՞ւմ ես՝ բարում նստած էդ տիպը Թոմասդ լիներ, ինչ տարօրինակ պատահականություն կլիներ:

– Գիտեմ, սխալվեցի, էդքան բան: Անցած...

– Երևի դու շատ կուզեիր, որ *նա* լիներ:

– Հետևից նույն մեջքն էր, նույն մազերը, ամսագիրը թերթելու նույն ձևը՝ հակառակ կողմից:

– Տեսնես ինչո՞ւ բարի տերն էդպես դեմք ընդունեց, երբ հարցրիր՝ արդյոք հիշո՞ւմ է Թոմասին: Երբ խոսում էիր ձեր լավ հիշողություններից, շատ սիրալիր էր:

– Ամեն դեպքում ուրախացա, երբ ասեց, որ չեմ փոխվել. մտքովս էլ չէր անցնի, որ կճանաչի ինձ:

– Քեզ ո՞վ կմոռանար, աղջիկս:

Ջուլիան թեթև խփեց հորը:

– Վստահ եմ, որ նա մեզ խաբեց ու շատ լավ էլ հիշում է Թոմասիդ. երբ անունը տվեցիր, նրա դեմքն ասես քար կտրեց:

– Հերիք է ասես «Թոմասդ, Թոմասիդ»: Ես ոչ գիտեմ, թե ինչ ենք անում էստեղ, ոչ էլ՝ թե ում է պետք էս ամենը:

– Ոնց թե, եկել ենք, որ մի անգամ ևս ինքս ինձ ապացուցեմ, որ մահվանս օրը պատահական չեմ ընտրել:

– Վերջացրու, էլի... Եթե քեզ թվում է, որ Ադամին թողնելու եմ ինչ-որ մի ուրվականի հետևից վազելու համար, չարաչար սխալվում ես:

– Իմ պուճուր աղջիկ, մի բան ասեմ՝ չբարկանաս, բայց քո կյանքի միակ ուրվականը ես եմ: Դու բազմիցս ինձ դա լսեցրել ես, էնպես որ, հիմա չես կարող ինձ զրկել էդ առավելությունից:

– Հեչ ծիծաղելու չի...

– Իհարկե՝ ծիծաղելու չի, ուղղակի ամեն անգամ, հենց բերանս բացում եմ, խոսքս կտրում ես... Լավ, համաձայն եմ, դրա ժամանակը չէ, դու էլ տրամադրված չես լսել ինձ, բայց դատելով բարում քո ռեակցիայից, երբ քեզ թվաց, թե ճանաչեցիր Թոմասին, ես չէի ուզի լինել Ադամի տեղում: Հը, դե ասա, որ սխալվում եմ:

– Սխալվում ես:

– Դե ինչ, ուրեմն էդ մի բնավորությունս էլ չեմ փոխել,– ձեռքերը խաչելով՝ քմծիծաղեց Էնթոնին:

Ջուլիան ժպտաց:

– Է՞լ ինչ եմ արել:

– Ոչ մի բան, ոչ մի բան...– պատասխանեց Ջուլիան:

– Էլ մի, ասա:

– Քո մեջ ինչ-որ հնաոճ բան կա, որ մինչև հիմա չեմ նկատել:

– Խնդրում եմ, վիրավորել պետք չէ,– վեր կենալով՝ նետեց Էնթոնին:– Վեր, վեր քեզ տանեմ մի բան ուտելու, ժամը երեքն է, առավոտվանից բերանդ փշուր չես դրել:

***

Գրասենյակի ճանապարհին Ադամը կանգ առավ գինիների խանութի մոտ: Գինեվաճառն առաջարկեց առաջին հնացմամբ, հրաշալի տանինով, մուգ գույնի ու թափանցիկության չքնաղ համադրությամբ, մի քիչ թունդ կալիֆոռնիական գինի: Գաղափարն Ադամին գայթակղիչ թվաց, բայց նա փնտրում էր ինչ-որ ավելի նուրբ բան, որ կհամապատասխանի այն մարդուն, որի համար նախատեսված էր շիշը: Ընբռնելով հաճախորդի ցանկությունը՝ գինեվաճառը գնաց ներս և հետ եկավ բորդոյի մի մեծ շշով: Այսպիսի հազվագյուտ հնացման շիշն ավելի բարձր գնային դասի է, բայց արժե, այդպես չէ՞: Չէ՞ որ Ջուլիան ասել էր. իր ամենամոտ ընկերը չի կարողանում դիմակայել լավ գինու հրապուրանքին, իսկ եթե այն հազվագյուտ է, Սթենլին անուն-ազգանունը մոռանում է: Երկու շիշը բավարար է հարբեցնելու համար, ու Սթենլին, ուզի թե չուզի, կխոստովանի, թե որտեղ է Ջուլիան:

***

– Արի սկսենք զրոյից, Ջուլիա,– ասաց Էնթոնին՝ տեղավորվելով սենդվիչանոցի պատշգամբում:– Մենք փորձեցինք արիմիությունում, նա ոչ մի տեղ գրանցված չէ: Դու վստահ ես, որ նա դեռ լրագրությամբ է զբաղվում, ուրեմն արի հետևենք քո բնազդին, նույնիսկ եթե խաբի: Մենք գնացինք նրա ապրած տեղը. տունը քանդած էր: Ոնց որ մաքրած լինի անցյալի հետ կապող բոլոր հետքերը: Սկսում եմ մտածել, որ ամեն ինչ նախամտածված է:

– Հասկացա: Բայց ո՞ւր ես տանում: Որ Թոմասն այրել է բոլոր կամուրջները էն ժամանակաշրջանի հետ, որ անցկացրել ենք միասի՞ն: Դե արի հետ գնանք, եթե էդ նկատի ունես,– բարկացած գոչեց Ջուլիան՝ մի կողմ հրելով կապուչինոն, որ բերել էր մատուցողը:

Էնթոնին նշան արեց բաժակը դնել սեղանին:

– Ես գիտեմ, որ դու սուրճի սիրահար չես, բայց էստեղինը շատ համով է:

– Իսկ եթե ես թե՞յ եմ սիրում, էդ քո համար խնդի՞ր է:

– Չէ հա, ինձ ուղղակի հաճույք կպատճառի, եթե դու մի փոքր ջանք գործադրես, ուզածս մեծ բան չէ:

Ջուլիան մի կում արեց՝ ծամածռելով դեմքը:

– Մի փորձիր դեմքդ ծամածռել, հո հասկացա, որ դուրդ եկավ, բայց ոնց որ ասեցի, մի օր դու կհաղթահարես դառնությունը, որը քեզ խանգարում է գնահատել կյանքի իրական համն ու հոտը: Համ էլ՝ եթե կարծում ես, որ Թոմասդ ամեն ինչ արել է ձեր պատմության հետքերը մաքրելու համար, ուրեմն քեզ մեծ բանի տեղ ես դրել: Նա մաքրել է *իր անցյալի* հետքերը, ոչ թե ձեր: Ես չեմ կարծում, որ դու ստիպված ես եղել հաղթահարել նույն դժվարությունները, ինչ նա՝ հարմարվելով մի աշխարհի,

որտեղ ամեն ինչ հակասել է իր ճանաչած կյանքին. մի համակարգի, որտեղ ազատության ամեն կաթիլ ձեռք է բերվել իր մանկության արժեքների ժխտման հաշվին:

– Հիմա դու նրա՞ն ես պաշտպանում:

– Մենակ հիմարները կարծիք չեն փոխում: Օդանավակայան հասնելը երեսուն րոպե է, կարող ենք մտնել հյուրանոց, վերցնել եղած-չեղածն ու հասնել վերջին թռիչքին: Էս գիշեր կքնես Նյույորքյան քո սքանչելի բնակարանում: Հանդգնում եմ կրկնել, որ միայն հիմարները կարծիք չեն փոխում: Էնպես որ, լավ կանես՝ մի անգամ էլ մտածես, քանի շատ ուշ չի: Հիմա ի՞նչ, ուզում ես վերադառնա՞լ, թե՞ շարունակենք փնտրտուքը:

Ջուլիան վեր կացավ, մի շնչով կուլ տվեց կապուչինոն՝ այս անգամ առանց դեմքը ծամածռելու, ձեռքի հակառակ կողմով սրբեց բերանն ու բաժակը շրխկոցով դրեց սեղանին:

– Դե ինչ, Շերլոք, նոր խա՞յծ ունես:

Էնթոնին մի քանի մանրադրամ գցեց բաժակի մեջ ու վեր կացավ:

– Հիշո՞ւմ ես, պատմում էիր Թոմասի մոտ ընկերոջ մասին, որի հետ ժամանակ էիք անցկացնում:

– Քնապի՞: Հա, նա Թոմասի ամենամոտ ընկերն էր, բայց չեմ հիշում, որ քեզ պատմած լինեմ:

– Լավ, արի ասենք, որ իմ հիշողությունն ավելի սուր է, քան քոնը: Իսկ ինչո՞վ էր զբաղվում Քնապը: Էլի լրագրո՞ղ էր:

– Հա, իհարկե:

– Մտքովդ չանցա՞վ առավոտյան անունը տայիր, երբ նայում էինք մասնագետների անունները:

– Հա, չանցավ մտքովս...

– Ըհը, ճիշտ էի ասում... Գնալով խելքդ գցում ես: Արի, գնացինք:

– Ո՞ւր, արիմիությո՞ւն:

– Հաստատ խելքդ գցել ես,– աչքերն երկինք դարձնելով՝ ասաց Էնթոնին:– Չեմ կարծում՝ մեզ էնտեղ սպասող կա:

– Ուրեմն ո՞ւր:

– Ու իմ նման ծերո՞ւկը պետք է առավոտից իրիկուն համակարգչի էկրանին կպած էս երիտասարդ կնոջը պատմի ինտերնետի հրաշքների մասին: Ահավո՛ր հուզիչ է: Արի մոտակայքում ինտերնետ-սրճարան գտնենք, ու աղաչում եմ, մազերդ պոչ կապի, քամին մազերդ խառնում, ծածկում է դեմքդ:

***

Մարինան վրա տվեց, թե ինքը կհյուրասիրի Թոմասին. վերջիվերջո իր երկրում են, իսկ Բեռլինում միշտ Թոմասն էր վճարում: Պատվիրեցին ընդամենը երկու կաֆե գլյասե. Թոմասը զիջեց:

– Էսօր էլի գործ ունե՞ս,– հարցրեց նա:

– Տեսե՞լ ես՝ ժամը քանիսն է, համարյա կեսօրն անց է, համ էլ իմ գործը դու ես: Ոչ մի ֆոտո, ոչ մի հոդված:

– Լավ, ուրեմն ի՞նչ ես ուզում անենք:

– Հաճույքով կքայլեի մինչև երեկո. եղանակը հազիվ լավն է, մենք հին քաղաքում ենք, օգտվենք առիթից:

– Ես պետք է զանգեմ Քնապին՝ քանի դեռ աշխատանքից դուրս չի եկել:

Մարինան ձեռով շոյեց Թոմասի այտը:

– Գիտեմ, որ ամեն ինչի պատրաստ ես ինձնից ինարավորինս շուտ ազատվելու համար, բայց մի անհանգստացիր, դու կգնաս քո Սոմալին: Քնապն էնտեղ քո կարիքն ունի, հարյուր անգամ արդեն բացատրել ես: Արդեն անգիր գիտեմ: Նա ձգտում է գլխավոր խմբագրի պաշտոնին, դու նրա լավագույն լրագրողն ես, ու քո

աշխատանքը նրա առաջխաղացման համար կենսական անհրաժեշտություն է: Նրան ժամանակ տուր պարարտ հող նախապատրաստելու համար:

– Աստծու սիրուն, արդեն երրորդ շաբաթն է՝ հող է նախապատրաստում:

– Նա ավելի զգուշավոր է, որովհետև գնացողը դո՞ւ ես: Եվ ի՞նչ: Հո մեղավոր չի, որ ամենամոտ ընկերն ես: Արի, արի ինձ տար քաղաքում ման գալու:

– Ոնց որ թե դերերը խառնում ես, հը՞,– հարցրեց Թոմասը:

– Ըհը, քեզ հետ սիրում եմ խառնել:

– Ձե՞ռ ես առնում:

– Քավ լիցի,– բացականչեց Մարինան՝ քրքիջից պայթելով:

Ու սկսեց Թոմասին քաշել դեպի Իսպանիայի հրապարակ՝ մատնացույց անելով Տրինիտա դեյ Մոնտի եկեղեցու երկու գմբեթը:

– Տեսնես աշխարհում ավելի սիրուն տեղ կա՞,– հարցրեց Մարինան:

– Բեռլինը,– անվարան պատասխանեց Թոմասը

– Անհնար է... Ու եթե դադարես հիմարություններ դուրս տալ, ես քեզ կտանեմ «Կաֆե Գրեկո», մի բաժակ կապուչինո կխմես ու կասես՝ Բեռլինում էդքան համով կապուչինո կա՞, թե՞ չէ:

***

Աչքերը համակարգչի էկրանին հառած՝ Էնթոնին փորձում էր ապակոդավորել հայտնված ցուցումները:

– Ես գիտեի՝ փայլուն գերմաներեն ես խոսում,– ասաց Ջուլիան:

– Խոսել՝ խոսում եմ, բայց գրել-կարդալ՝ չէի ասի, համ էլ՝ լեզվի խնդիր չէ. ես էս մեքենայից բան չեմ հասկանում:

– Մի կողմ քաշվիր,– հրամայեց Ջուլիան՝ վերցնելով համակարգչի ղեկավարումը:

Նա սկսեց սահուն կտկտացնել ստեղնաշարով և շուտով էկրանին հայտնվեց որոնման պատուհանիկը: Նա հավաքեց Քնապի անունն ու հանկարծ կանգ առավ:

– Ի՞նչ պատահեց:

– Անունը չեմ հիշում, որ ճիշտն ասեմ՝ նույնիսկ չգիտեմ Քնապը նրա անունն է, թե ազգանունը: Մենք նրան էդպես էինք կոչում:

– Մի կողմ կքաշվե՞ս,– իր հերթին հրամայեց Էնթոնին ու Քնապի անվան կողքին ավելացրեց՝ լրագրող:

Էկրանին միանգամից հայտնվեց տասնմեկ անուն: Քնապ ազգանունով յոթ տղամարդ ու չորս կին լրագրող կար:

– Նա է,– բացականչեց Էնթոնին՝ ցույց տալով ցուցակում երրորդ անունը:– Յուրգեն Քնապ:

– Իսկ ինչո՞ւ հենց նա:

– Որովհետև *Chefredakteur* հաստատ նշանակում է գլխավոր խմբագիր:

– Հարյուր տոկո՞ս:

– Եթե վերցնեմ էն ամենը, ինչ դու պատմում էիր նրա մասին, կարծում եմ, որ նա բավական խելացի է՝ քառասուն տարեկանում փայլուն կարիերա ունենալու համար, կամ էլ Թոմասիդ պես փոխած կլիներ մասնագիտությունը: Խրախուսիր իմ խորաթափանցությունը՝ պոզերդ տնկելու փոխարեն:

– Չեմ հիշում, որ հետդ Քնապից խոսացած լինեմ, էլ ուր մնաց՝ էնպիսի բաներ պատմեի, որ օգներ նրա հոգեբանական կերպարը կազմել,– ապշած պատասխանեց Ջուլիան:

– Իրո՞ք ուզում ես, որ քննարկենք քո սուր հիշողությունը: Կհիշեցնե՞ս ինձ, թե փողոցի որ ծայրին էր գտնվում

սրճարանը, որտեղ անցել են կյանքիդ ամենապայծառ պահերը: Քո Քնապն աշխատում է «Tagesspiegel»-ի խմբագրությունում, միջազգային լուրերի բաժնում: Հիմա ի՞նչ ես ասում, գնա՞նք նրան տեսնենք, թե՞ շարունակենք պարապ խոսակցությունները:

***

Աշխատանքային օրվա վերջն էր, ու նրանցից երկար ժամանակ պահանջվեց խցանումներով Բեռլինի մյուս ծայրը հասնելու համար: Տաքսին կանգնեց Բրանդենբուրգյան դարպասների մոտ: Խելագար երթևեկությունը հաղթահարելուց հետո հիմա էլ ստիպված էին ճանապարհ հարթել աշխատանքից տուն շտապող բեռլինցիների և հանրահայտ վայրեր այցելող զբոսաշրջիկների ամբոխի միջով: Հենց այստեղ էր, որ մի օր Ամերիկայի նախագահը պատի մի կողմից կոչ արեց իր սովետական գործընկերոջը խաղաղություն հաստատել, քանդել այդ բետոնե պատը, որ վեր էր խոյանում հսկա կամարի սյուների հետևում: Եվ վերջապես երկու պետությունների ղեկավարները լսեցին ու հասկացան մեկմեկու և վերամիավորեցին Արևելքն ու Արևմուտքը:

Զուլիան արագացրեց քայլերը, Էնթոնին փորձում էր հետևից հասնել: Մի քանի անգամ նա ձայն տվեց Զուլիային՝ կարծելով, որ կորցրել է նրան, բայց ամեն անգամ վերգտնում էր նրա սիլուետը Փարիզերպլացը նվաճած բազմության մեջ:

Զուլիան նրան սպասում էր շենքի մուտքի մոտ: Միասին ներկայացան ընդունարան: Էնթոնին հանդիպում խնդրեց Յուրգեն Քնապի հետ: Ընդունարանի աշխատակցուհին խոսում էր հեռախոսով: Նա մի պահ զանգը սպասման մեջ դրեց, որ ճշտի, թե արդյոք հանդիպում ունեն նշանակած:

– Ոչ, բայց ես վստահ եմ, որ նա ուրախ կլինի մեզ տեսնել,– վստահեցրեց Էնթոնին:

– Ինչպե՞ս ներկայացնեմ ձեզ,– հարցրեց աշխատակցուհին՝ հիանալով սպասասեղանին թիկնած երիտասարդ կնոջ մազերը պահող շարֆիկով:

– Ջուլիա Ուելշ,– պատասխանեց վերջինս:

Երրորդ հարկում՝ իր սեղանի հետևում նստած Յուրգեն Քնապը խնդրեց աշխատակցուհուն մեկ անգամ ևս կրկնել հենց նոր արտասանած անունը: Հետո խնդրեց չանջատել հեռախոսը, լսափողը սեղմեց ձեռքի ափի մեջ և մոտեցավ պատուհանին, որ նայում էր ներքևի հարկերին: Այստեղից հրաշալի տեսարան էր բացվում, հատկապես դեպի սպասասրահ: Երիտասարդ կինը, որ հանել էր իր շարֆիկը մազերը հարդարելու համար, որ շատ ավելի կարճ էին, քան հիշում էր, բնական էլեգանտությամբ այդ կինը, որ հիմա հետ ու առաջ էր անում իր պատուհանների տակ, անկասկած նա էր, ում հանդիպել էր տասնութ տարի առաջ:

Նա լսափողը մոտեցրեց ականջին:

– Ասացեք, որ ես տեղում չեմ, որ այս շաբաթ ճանապարհորդում եմ, ավելի լավ կլինի ասեք, որ կվերադառնամ ամսվա վերջին: Եվ, խնդրում եմ, վստահ խոսեք:

– Շատ լավ,– զգույշ պատասխանեց աշխատակցուհին՝ չտալով խոսակցի անունը:– Ձեզ գծի վրա սպասում են, միացնե՞մ:

– Ո՞վ է:

– Չհասցրի հարցնել:

– Միացրեք:

Աշխատակցուհին անջատեց հեռախոսը՝ իր սուրը փառքով դնելով պատյան:

***

– Յուրգե՞ն:

– Ես եմ, ո՞վ է հարցնում:

– Թոմասն է, էլ ձայնս չե՞ս ճանաչում:

– Կներես, իհարկե ճանաչում եմ, ուղղակի մի քիչ ցրված եմ:

– Հինգ րոպե է՝ սպասում եմ, արտասահմանից եմ զանգում: Նախարարի հետ էիր խոսում, ի՞նչ է, որ էսքան սպասեցրիր:

– Չէ, չէ, կներես, ոչ մի կարևոր բան: Լավ լուր ունեմ քեզ համար, երեկոյան ուզում էի ասել՝ կանաչ լույսդ վառվել է, դու գնում ես Սոմալի:

– Հրաշալի է,– բացականչեց Թոմասը,– վերադառնում եմ Բեռլին ու թռչեմ:

– Կարիք չկա, մնա Հռոմում, էլեկտրոնային տոմս պատվիրել կտամ ու կուղարկենք քեզ, առավոտյան կունենաս:

– Վստա՞հ ես, որ խմբագրություն գալու կարիքը չկա:

– Չկա, հավատա ինձ, բավական երկար ենք սպասել թույլտվությանը, ու էլ ոչ մի օր չպետք է կորցնենք: Թռիչքդ Ֆյումիչինոյի օդանավակայանից է՝ օրվա վերջում: Առավոտյան կզանգեմ, մանրամասները կասեմ:

– Լա՞վ ես, ձայնդ մի տեսակ տարօրինակ է:

– Ամեն ինչ լավ կլինի: Դու ինձ գիտես. կուզեի հետդ նշել մեկնումդ:

– Չգիտեմ էլ, թե ոնց շնորհակալություն հայտնեմ, Յուրգեն: Բայց էնտեղից Պուլիցերյան մրցանակ կբերեմ ինձ համար ու միջազգային բաժնի գլխավոր խմբագրի պաշտոնը՝ քեզ համար:

Թոմասը կախեց լսափողը: Քնապը նայեց Ջուլիային ու նրան ուղեկցող տղամարդուն, որոնք դուրս էին գալիս ամսագրի գրասենյակից:

Վերադարձավ գրասեղանի մոտ ու հեռախոսը դրեց տեղը:

## 17

Թոմասը միացավ Մարինային, որ նստած էր Իսպանիայի հրապարակի ամենավերևի աստիճանին: Հրապարակը լեփ-լեցուն էր:

– Հը՞, խոսեցի՞ր հետը,– հարցրեց Մարինան:

– Արի, էստեղ շատ մարդ կա, ոնց որ խեղդվես, արի մի քանի խանութ անցնենք, ու եթե գտնենք էն խանութը, որտեղ տեսել ես էն՝ աշխարհի բոլոր գույներով գլխաշորը, կառնեմ քեզ համար:

Մարինան արևային ակնոցը քաշեց քթի ծայրին ու առանց մի բառ ավելացնելու՝ վեր կացավ:

– Բուտիկներն էդ կողմի վրա չեն,– ձայնեց Թոմասը Մարինային, որն իջնում էր դեպի շատրվանները:

– Ավելին ասեմ՝ լրիվ հակառակ կողմն են, բայց մեկ է, ինձ պետք չէ քո գլխաշորը:

Թոմասը վազեց հետևից ու բռնեց նրան աստիճանների ներքևում:

– Երեկ երազում էիր:

– Լավ ասեցիր՝ երեկ, իսկ էսօր էլ չեմ ուզում: Կանայք միշտ փոխում են կարծիքները, իսկ դուք՝ տղամարդիկդ, հիմար եք:

– Քե՞զ ինչ եղավ:

– Ասեմ: Եթե իրոք ուզում էիր ինձ նվեր անել, պետք է ինքդ ընտրեիր, սիրուն փաթեթավորեիր, մտածեիր անակնկալ անել, որովհետև դա հենց անակնկալ պետք է լիներ: Դա, Թոմաս, ուշադրության դրսևորում է, էն հազվագյուտ բաներից մեկը, որ կանայք շատ են գնահատում: Բայց վստահեցնում եմ, դա չի նշանակում, որ ուզում ենք անպայման ձեր մատին մատանի դնել:

– Կներես, ես ուզում էի քեզ հաճույք պատճառել:

– Ստացվեց հակառակը: Ինձ պետք չէ մի նվեր, որ անում են ներողություն հայցելու համար:

– Բայց ես ոչ մի սխալ բան չեմ արել:

– Հա՞ որ: Ոնց որ Պինոկիոն լինես, որի քիթը ուր որ է՝ կերկարի: Արի, ավելի լավ է կռվելու տեղը գնանք մեկնումդ նշենք: Էդ էր, չէ՞, Քնապն ասում հեռախոսով: Լավ կլինի հիմա մի լավ սեղան գտնես ու ինձ տանես ընթրիքի:

Ու Մարինան առաջ ընկավ՝ առանց Թոմասին սպասելու:

***

Ջուլիան բացեց տաքսու դուռը: Էնթոնին դուրս եկավ և գնաց հյուրանոց:

– Ինչ-որ մի լուծում պետք է լինի: Թոմասդ չէր կարող հոդս ցնդել: Նա ինչ-որ տեղ է, ու մենք կգտնենք նրան, միայն համբերություն է պետք:

– Քսանչորս ժամո՞ւմ: Մենք մենակ վաղն ունենք, շաբաթ օրը թռչում ենք: Չես մոռացել, չէ՞:

– Իմ ժամերն են հաշված, աղջիկս, քո ամբողջ կյանքն առջևումդ է,– պատասխանեց Էնթոնին,– եթե կուզես մինչև վերջ գնալ, հետո կվերադառնաս, մենակ, բայց կվերադառնաս: Էս ճանապարհորդությունը գոնե մեզ երկուսիս հաշտեցրեց Բեռլինի հետ: Արդեն իսկ վատ չէ:

– Դրա համա՞ր ինձ քարշ տվեցիր, հասցրիր էստեղ: Որ խիղճդ հանգի՞ստ լինի:

– Ոնց կուզես՝ հասկացիր: Ես չեմ կարող քեզ ստիպել ներել ինձ մի բանի համար, որ ես էլի կանեի նույն հանգամանքներում: Բայց արի մի անգամ երկուսս էլ ջանք գործադրենք ու չվիճենք: Մի օրում էլ շատ բան կարող է տեղի ունենալ, հավատա ինձ:

Ջուլիան հայացքը փախցրեց: Նրա ձեռքը հպվեց Էնթոնիի ձեռքին, վերջինս մի պահ վարանեց, հետո կտրեց անցավ սպասասրահին ու կանգ առավ վերելակների մոտ:

– Վախենամ՝ չեմ կարողանա ընթրիքին ընկերակցել քեզ,– հայտնեց նա դստերը:– Չնեղանաս, շատ հոգնած եմ: Ճիշտ կլինի, որ խնայեմ էներգիաս վաղվա համար. երբեք չեմ մտածել, որ էս բառերը կասեմ ուղիղ իմաստով:

– Գնա հանգստացիր, ես էլ եմ քամվել: Մի բան կուտեմ սենյակում: Կհանդիպենք առավոտյան, միասին կնախաճաշենք, եթե դու դեմ չես:

– Շատ լավ,– ժպտալով պատասխանեց Էնթոնին:

Վերելակը վեր սլացավ. Ջուլիան իջավ առաջինը: Երբ դռները փակվեցին, նա ձեռքի շարժումով հրաժեշտ տվեց հորը և մնաց կանգնած աստիճանավանդակին՝ հետևելով գլխավերևում թվացույցի վրա միացող-անջատվող կարմիր թվերին:

Սենյակ հասնելուն պես՝ Ջուլիան բացեց տաք ջուրը, լոգարանի մեջ լցրեց երկու սրվակ եթերային յուղ, վերադարձավ սենյակ, մրգեղենով սկուտեղ ու մի ամբան փաթիլ պատվիրեց: Հետո միացրեց հենց մահճակալի դիմացի պատից կախված պլազմային հեռուստացույցը, վրայից գցեց հագուստն ու մտավ լոգասենյակ:

***

Քնապը երկար ժամանակ նայում էր հայելու մեջ: Նա ձգեց փողկապի հանգույցը և մի վերջին հայացք նետելով՝ դուրս եկավ զուգարանից: Ուղիղ ժամը ութին Լուսանկարների պալատում մշակույթի նախարարը պետք է հայտարարեր իր կազմակերպած ցուցահանդեսի բացումը: Հսկայական, տանջալից աշխատանք էր, բայց կշեռքին դրված էր իր առաջխաղացումը: Եթե երեկոն հաջողեր, եթե ընկերները վաղվա մամուլում գովաբանեն իր ջանքերը, նա շատ շուտով կտեղափոխվի խմբագրության մուտքի մոտ գտնվող մեծ, ապակեպատ գրասենյակ: Քնապը նայեց պատից կախված ժամացույցին. տասնհինգ րոպե դեռ ունի, բավական է, որ ոտքով հասնի Փարիզի հրապարակ, կանգնի աստիճանների ներքևում՝ կարմիր գորգի մոտ ու դիմավորի նախարարին ու լրագրողներին:

***

Ադամը սենդվիչի ցելոֆանե փաթեթը կոլոլեց, գնդակ դարձրեց ու նշան բռնեց լապտերի սյան վրա ամրացրած աղբամանին: Վրիպեց. վեր կացավ, որ հավաքի յուղոտ փաթեթաթուղթը: Հենց մոտեցավ սիզամարգին. մի սկյուռիկ բարձրացրեց գլուխն ու կանգնեց հետևի թաթերի վրա:

– Ներող, բիձուկ,– ասաց Ադամը,– գրպանումս ընկուզեղեն չունեմ, Ջուլիան էլ քաղաքում չէ: Մեզ երկուսիս էլ լքել են:

Գազանիկը նայեց նրան՝ ամեն արտասանած բառի հետ տմբտմբացնելով գլուխը:

– Չեմ կարծում, որ սկյուռիկները երշիկեղեն սիրում են,– ասաց նա՝ սկյուռիկին մեկնելով հացի կտորների միջից դուրս ցցված խամոնից մի կտոր:

Պստիկ կրծողը մերժեց իրեն մեկնած խամոնն ու գնաց ոստոստելու ծառի բունն ի վեր: Մի վազորդուհի կանգ առավ Ադամի գլխավերևում:

– Դուք խոսում եք սկյուռիկների հե՞տ: Ես էլ եմ գժվում, երբ վազելով գալիս են ու մռութիկները շարժում բոլոր ուղղություններով:

– Այո, կանանց համար նրանք անկրկնելի են, մինչ-դեռ ընդամենը առնետների գերմանացի բարեկամներն են,– փնթփնթաց Ադամը:

Նա սենդվիչը նետեց աղբամանն ու հեռացավ՝ ձեռ-քերը գրպաններում:

***

Դուռը ծեծեցին: Ջուլիան վերցրեց լոգասենյակի սրբիչն ու մեծ արագությամբ սրբեց երեսի դիմակը: Դուրս եկավ բաղնիքից, վրան գցեց կախիչից կախված խալաթն ու գնաց դուռը բացելու: Սպասավորին խնդրեց սկահակը դնել մահճակալի վրա: Պայուսակից մի քանի թղթադրամ հանեց, դրեց հաշվի մեջ ու մեկնեց սպա-սավորին: Տղայի դուրս գալուց հետո Ջուլիան հարմար տեղավորվեց մահճակալին ու սկսեց քջուջ անել փաթիլ-ների ափսեի մեջ: Ապա ձեռքն առավ հեռավահանակն ու սկսեց իրար հետևից փոխել ալիքները՝ փորձելով գտնել մեկը, որ գերմաներեն չլինի:

Երեք ալիք իսպանական էին, մեկը շվեյցարական, հետո երկու ֆրանսիական, CNN-ն էլ փոխեց. պատերազ-մական դրվագներ էին հեռարձակում, որ շատ դաժան էին Ջուլիայի համար, «Bloomberg»-ի ֆոնդային բորսայի նորություններն էլ էին անհետաքրքիր (մաթեմատիկա-յից բան չէր հասկանում), RAI-ի հեռուստախաղն էլ. հա-ղորդավարուհին, իր կարծիքով, անչափ գռեհիկ էր... Ու հետո սկսեց նորից:

***

Ավտոշարասյունը մոտեցավ երկու մոտոոստիկանի ուղեկցությամբ: Քնապը կանգնեց մատների ծայրերին: Կողքին կանգնածը փորձեց առաջ մխրճվել, Քնապն արմունկով հրեց ու հետ գրավեց իր տեղը. կոլեգան պետք է չուշանար, եթե լավ տեղ էր ուզում զբաղեցնել: Սև լիմուզինը կանգնեց նրա դիմաց: Թիկնապահը բացեց դուռը, և նախարարն իջավ մեքենայից. ֆոտոխցիկների լույսերը դիմավորեցին նրան: Քնապը ցուցահանդեսի տնօրենի ուղեկցությամբ մի քայլ շարժվեց ու ձգվեց՝ բարևելու բարձրաստիճան պաշտոնյային՝ մինչ նա առաջ կգար կարմիր գորգով:

***

Ջուլիան մտամոլոր աչքի անցկացրեց սկահակը: Փաթիլներով լի ափսեից մի քանի չամիչ էր մնացել, իսկ մրգի ամանի մեջ՝ մի քանի կորիզ: Հիմա՞ ինչն ընտրել. նա դեռ տատանվում էր շոկոլադի ֆոնդյուի, շտրուդելի, փանքեյքների ու քլաբ սենդվիչի միջև: Ամենայն ուշադրությամբ ուսումնասիրեց փորը, կոնքերը և մենյուն շպրտեց սենյակի մյուս ծայրը: Հեռուստանորությունների վերջին կադրերն ինչ-որ ձանձրալի բարձրաշխարհիկ ցուցահանդեսի բացում էին լուսաբանում: Երեկոյան հանդերձանքով կանայք ու տղամարդիկ ճեմում էին կարմիր գորգի վրա՝ ֆոտոխցիկների ճարճատյունների ներքո: Ինչ-որ երգչուհու, թե դերասանուհու (հաստատ բեռլինցի կլիներ) երկար, էլեգանտ զգեստը գրավեց Ջուլիայի ուշադրությունը: Դիմագծերի այդ խաժամուժի մեջ ոչ մի ծանոթ դեմք չկա... բացի մեկից: Ջուլիան վեր թռավ՝ շուռ տալով սկահակն ու գնաց, մտավ հեռուստացույցի մեջ: Նա վստահ էր, որ ճանաչեց *այն մեկին,*

որը հենց նոր սրահ մտավ՝ լայն ժպտալով իրեն ուղղված ֆոտոխցիկներին: Տեսախցիկը թեքվեց Բրանդենբուրգյան դարպասի կողմը...

– Տակա՛նք,– բացականչեց նա ու շտապեց բաղնիք:

***

Դռնապանը Ջուլիային վստահեցրեց, որ նմանատիպ միջոցառումները կարող էին անցկացվել միայն ու միայն Stiftung Brandenburger[1]-ում: Պալատը Բեռլինի ժամանակակից ճարտարապետության կոթողներից մեկն էր, որի աստիճաններից սքանչելի տեսարան էր բացվում դեպի Բրանդենբուրգյան դարպաս: Ջուլիայի նկարագրած ցուցահանդեսը հաստատ «Tagesspiegel»-ն էր կազմակերպել: Օրիորդ Ուելշն այդպես շտապելու կարիք չուներ, լրագրողական լուսանկարների ցուցահանդեսը տևելու էր մինչև Պատի փլուզման տարելիցի հիշատակման օրը, այսինքն՝ ևս հինգ ամիս: Եթե օրիորդ Ուելշը ցանկանա, նա, անշուշտ, կկարողանա վաղը՝ մինչև կեսօր, երկու հրավիրատոմս ձեռք բերել: Բայց միակ բանը, որ Ջուլիան ուզում էր, երեկոյան զգեստն էր, ու շատ արագ:

– Համարյա ժամը ինն է, օրիորդ Ուելշ:

Ջուլիան բացեց պայուսակը, պարունակությունը դատարկեց սեղանին, սիրուն շարեց ինչ որ կար՝ դոլարները, եվրոները, մանրադրամը, նույնիսկ երկու հին գերմանական մարկ գտավ, որոնցից երբեք չէր բաժանվել, հանեց ժամացույցն ու եղած-չեղածն երկու ձեռքով հրեց դեպի դռնապանը՝ ամբողջ ունեցվածքը հաջողության անիվին դրած խաղամոլի պես:

[1] Բեռլինի ժամանակակից արվեստի թանգարան:

– Կարմիր կլինի, կանաչ, թե դեղին, էական չէ, միայն թե, աղաչում եմ, ինչ-որ տեղից մի երեկոյան զգեստ գտեք:

Դռնապանը շփոթված նայեց նրան: Վեր բարձրացրեց ձախ հոնքը: Պրոֆեսիոնալիզմը պարտավորեցնում է. նա չէր կարող պարոն Ուելշի դստերը դժվար կացության մեջ թողնել: Անպայման մի լուծում կգտնի:

– Խնդրում եմ, հավաքեք այս ամենն ու հետևեք ինձ, օրիորդ,– ասաց նա՝ Ջուլիային դեպի լվացքատուն առաջնորդելով:

Նույնիսկ այդ կիսախավարում դռնապանի ցույց տված զգեստն աննկարագրելի գեղեցիկ էր: Այն պատկանում էր 1206 համարի սենյակի կենվորուհուն: Մոդայի տունն այնպիսի ժամի էր առաքել զգեստը, որ արդեն անհարմար կլիներ անհանգստացնել նորին գերազանցություն կոմսուհուն՝ բացատրեց հյուրանոցի աշխատակիցը: Ասելն անգամ ավելորդ էր, որ զգեստի վրա ոչ մի կեղտաբիծ չպետք է լիներ, ու Մոխրոտի պես, տասներկուսը չխփած, Ջուլիան վերադարձած պետք է լինի:

Դռնապանը Ջուլիային առաջարկեց իր շորերը կախել կախիչներին ու նրան մենակ թողեց լվացքատանը:

Ջուլիան հանվեց, ամենայն զգուշությամբ հագավ բարձր նորաձևության գլուխգործոցը: Հայելու կամ ապակու հետք անգամ չկար, ու նա ստիպված իրեն նայեց դռան բռնակի մեջ. պողպատե գլանը լրիվ աղավաղեց նրա կերպարը: Քանդեց մազերը, կույր աչոք շպարվեց, պայուսակը, շալվարն ու սվիտերը թողեց տեղում ու մութ միջանցքով ուղղվեց դեպի սպասասրահ:

Դռնապանը նրան մոտենալու նշան արեց: Ջուլիան անձայն հնազանդվեց: Դռնապանի մեջքի հետևում հայելի կար կախած, բայց հենց Ջուլիան ուզեց նայել, դռնապանը չթողեց.

– Ոչ, ոչ, ոչ,– կրկնեց նա, երբ Ջուլիան նորից փորձեց,– եթե թույլ կտաք, օրիորդ...

Ու դարակից հանելով թղթե անձեռոցիկը՝ ուղղեց Ջուլիայի լղոզված շրթներկը:

– Այ, հիմա կարող եք հիանալ ձեր գեղեցկությամբ,– ասաց նա:

Ջուլիան երբեք ավելի չքնաղ բան չէր տեսել, քան այդ զգեստն էր: Շատ ավելի գեղեցիկ, քան այն բոլոր զգեստները, որոնց մասին երազել էր ամենահայտնի դիզայներների պատուհանների մոտ կանգնած:

– Չգիտեմ էլ, թե ինչպես հայտնեմ երախտագիտություն,– ապշած մրմնջաց նա:

– Երախտագիտության կարիք չկա. ստեղծողը պետք է ձեզ շնորհակալ լինի այն կրելու համար: Այն ձեզ հազար անգամ ավելի է սազում, քան կոմսուհուն,– շշնջաց դռնապանը:– Մեքենա եմ պատվիրել, այն ձեզ կսպասի ու հետ կբերի հյուրանոց:

– Տաքսիով կգնայի:

– Նման զգեստով՝ տաքսի՞: Դուք հաստատ կատակում եք: Պատկերացրեք, որ այն ձեր կառքն է, իսկ իմ՝ ապահովության երաշխիքը: Մոխրոտի մասին չեք մոռացել, այնպես չէ՞: Հաճելի երեկո ձեզ, օրիորդ Ուելշ,– վերջացրեց դռնապանը՝ նրան լիմուզինի մոտ ուղեկցելով:

Արդեն դրսում Ջուլիան ձգվեց ոտքի թաթերի վրա և մի համբույր դրոշմեց դռնապանի այտին:

– Օրիորդ Ուելշ, մի խնդրանք ևս...

– Միայն ասեք:

– Բախտներս բերեց, որ զգեստը լա՛վ երկար էր: Բայց աղաչում եմ, էլ փեշերն այդպես չհավաքեք: Ձեր էսպադրիլները զգեստին ընդհանրապես չեն համապատասխանում:

***

Մատուցողը անտիպաստոյի ափսեն դրեց սեղանին: Թոմասը մի քանի խորոված բանջարեղեն հրամցրեց Մարինային:

– Հարցնող լինի, թե ինչո՞ւ ես արևային ակնոց դնում ռեստորանում, ուր լույսն էնքան թույլ է, որ կարդալ էլ չի լինում:

– Որովհետև...– պատասխանեց Մարինան:

– Բացատրությունդ բացատրության կարիք ունի,– ծաղրանքով պատասխանեց Թոմասը:

– Որովհետև չեմ ուզում, որ դու տեսնես *հայացքը*:

– Ի՞նչ հայացք:

– Դե, ՀԱՅԱՑՔԸ...

– Ըհը: Հազար ներողություն, բայց ես քո ասածից ոչ մի բան չհասկացա:

– Դե էն հայացքը, որ դուք՝ տղամարդիկդ տեսնում եք մեր աչքերում, երբ մեզ ձեզ հետ լավ ենք զգում:

– Հա՞, ես չգիտեի, որ էդպիսի հատուկ հայացք կա:

– Իհարկե, ու դու բոլոր տղամարդկանց պես կարողանում ես դա տարբերակել:

– Լավ, լավ, ոնց կասես: Իսկ ինչո՞ւ չպետք է տեսնեմ հայացքդ, որ մատնում է, թե կյանքում մի անգամ քեզ ինձ հետ լավ ես զգում:

– Որովհետև որ վայրկյանին տեսար, իսկույն կսկսես մտածել, թե ինչ սիրուն պատճառ գտնես ինձ թողնելու համար...

– Ի՞նչ ես դուրս տալիս...

– Թոմաս, տղամարդկանց մեծամասնությունը, որոնք իրենց մենակությունը լցնում են ոչինչ չպարտավորեցնող հարաբերություններով, որոնք ինչ քնքուշ բան ասես ասում են, բայց երբեք սիրո խոսքեր չեն արտասանում,

էս բոլոր տղամարդիկ սարսափում են, որ մի օր մեր աչքերում կտեսնեն ՀԵՆՑ ԷՆ ՀԱՅԱՑՔԸ:

– Ի՞նչ հայացք, է՞:

– Է՛Ն ՀԱՅԱՑՔԸ, որ ձեզ ստիպում է հավատալ, որ մենք գժի պես սիրում ենք ձեզ: Որ ավելին ենք ուզում: Հիմար բաներ ենք ուզում, հիմար պլաններ կազմում, ասենք՝ իրար հետ արձակուրդի գնալ, կամ ավելի հիմար բաներ: Իսկ եթե հանկարծ սխալվենք ու երեխա տեսնելուց ժպտանք, ուրեմն վերջ, թքեցինք:

– Ու հիմա սև ակնոցիդ հետևում էդ հայա՞ցքն ես պահում:

– Չարաչար սխալվում ես, սիրելիս, ուղղակի աչքերս ցավում ես, քեզ շատ մի երևակայիր:

– Մարինա, հիմա ինչո՞ւ ես անընդհատ կծում:

– Ե՞րբ ես պատրաստվում ասել, որ Սոմալի ես գնում, տիրամիսուից առա՞ջ, թե՞ հետո:

– Իսկ քեզ ո՞վ ասեց, որ ես տիրամիսու եմ վերցնելու,– հարցրեց Թոմասը:

– Մենք իրար երկու տարի է գիտենք, ու ես երկու տարի է՝ հետևում եմ, թե դու ինչով ես շնչում:

Մարինան ակնոցը հրեց քթի ծայրին, ու այն թխկաց ափսեի մեջ:

– Լավ, լավ, ես վաղը թռչում եմ: Բայց հենց նոր եմ իմացել:

– Վաղն արդեն Բեռլի՞ն ես վերադառնում:

– Քնապը գերադասեց, որ հենց էստեղից թռչեմ Մոգադիշո:

– Դու ուղիղ երեք ամիս սպասել ես սրան, երեք ամիս սպասել, որ հետդ խոսի, իսկ հիմա, հոպ, ճտտացրեց, ու դու թռչո՞ւմ ես,– բացականչեց Մարինան:

– Մենք արդեն շատ ժամանակ ենք սպանել, ու ամեն օրը ոսկի է:

– Հենց *նա* է սպանել քո ժամանակը, իսկ դու նրան մեծ լավություն ես անում: Դու ես նրան պետք առաջ գնալու համար, դու նրա կարիքը չունես մրցանակ ստանալու համար: Դու էնքան տաղանդավոր ես, որ փողոցում չիշիկ անող շանն էլ նկարես, կստանաս քո մրցանակը:

– Ի՞նչ ես ուզում ասել:

– Գտիր քո տեղը կյանքում, Թոմաս, հերիք է կյանքդ վատնես՝ փախչելով քո սիրած մարդկանցից՝ նրանց երես առ երես հանդիպելու փոխարեն: Արի սկսենք ինձնից: Օրինակ՝ ասա, որ զզվեցնում եմ քեզ իմ խոսակցություններով, որ մենք ընդամենը սիրեկաններ ենք, ու ես իրավունք չունեմ գլխիդ ավետարան կարդալ, կամ ասա Քնապին, որ Սոմալի չեն գնում հենց էսպես, փողոցից, առանց տուն մտնելու, եղած-չեղածը հավաքելու և ընկերներին մնաս բարով ասելու: Հատկապես, երբ չգիտես էլ, թե երբ ես հետ գալու:

– Երևի դու ճիշտ ես...

Թոմասը վերցրեց բջջայինը:

– Ի՞նչ ես անում:

– Ոնց որ ասում ես, գրում եմ Քնապին, որ տոմսս վերցնի շաբաթ օրը Բեռլինից:

– Այ երբ ուղարկելու կոճակը սեղմես՝ կհավատամ:

– Ու էդ ժամանակ կտեսնե՞մ ՀԱՅԱՑՔԸ:

– Եսիմ... երևի...

***

Լիմուզինը կանգ առավ կարմիր գորգի մոտ: Ջուլիան ստիպված էր զգուշությամբ իջնել, որ Էսպադրիլները չերևան: Նա բարձրացավ աստիճաններով, ֆոտոխցիկների լույսերը դիմավորեցին նրան:

– Պետք չէ, պետք չէ, ես սովորական մարդ եմ,– ասաց նա օպերատորին, որն անգլերեն չէր հասկանում:

Մուտքի մոտ անվտանգության աշխատակիցը հիացավ Ջուլիայի շքեղ զգեստով: Կուրացած նրա մուտքն անմահացնող տեսախցիկի լույսից՝ դռնապանն անիմաստ համարեց նրանից հրավիրատոմս պահանջել:

Ջուլիան մտավ վիթխարի սրահ: Հայացքով շրջեց ամբոխի մեջ: Հյուրերը, գավաթները ձեռքներին, շրջում էին և հիանում հսկայական լուսանկարներով: Ջուլիան, քաղաքավարությունից դրդված, լարված ժպիտով ողջունեց անծանոթ մարդկանց: Քիչ հեռվում՝ բեմահարթակին նստած տավիղահարը Մոցարտ էր նվագում: Անցնելով խառնիճաղանջ բալետ հիշեցնող մարդկանց խմբերի միջով՝ Ջուլիան սկսեց որոնել իր որսը:

Մոտ երեք մետր բարձրության վրա կախված լուսանկարը հանկարծ գրավեց նրա ուշադրությունը: Արվել էր Կանդահարի լեռներում կամ Տաջիկստանում, կամ գուցե Պակիստանի սահմանի՞ն: Խրամատում ընկած զինվորի համազգեստը ոչ մի բան չէր հուշում, իսկ նրա կողքին նստած երեխան, որ ասես փորձում էր սփոփել վիրավորին, նման էր աշխարհի հազարավոր բոբիկ երեխաներին:

Ինչ-որ մեկը ձեռքը ուսին դրեց. Ջուլիան ցնցվեց:

– Հեչ չես փոխվել... Ի՞նչ գործ ունես էստեղ, Ջուլիա: Անունդ հրավիրյալների ցուցակում չկա: Հաճելի անակնկալ էր... գործո՞վ ես մեզ մոտ,– հարցրեց Քնապը:

– Իսկ դո՞ւ, դո՞ւ ինչ ես անում էստեղ: Չէ՞ որ դու մինչև ամսվա վերջը քաղաքից բացակայում էիր, ամեն դեպքում՝ ինձ էդպես ասեցին, երբ կեսօրին եկա քո գրասենյակ: Հաղորդագրությունս չե՞ս ստացել:

– Նախատեսածիցս շուտ վերադարձա: Օդանավակայանից ուղիղ էստեղ եմ եկել:

– Պարապել է պետք, Քնապ, պարապել, մոտդ խաբելը լավ չի ստացվում: Գիտեմ, ինչ եմ ասում. վերջին օրերին նման հարցերում ահագին փորձ եմ ձեռք բերել:

– Լավ, լավ, ասենք թե... Բայց ես ո՞նց իմանայի, որ դա հենց դու ես: Քսան տարի քեզնից լուր չկար:

– Տասնութ... Իսկ դու, ի՞նչ է, ուրիշ Ջուլիա Ուելշ է՞լ ես ճանաչում:

– Ազգանունդ մոռացել էի, Ջուլիա, անունդ, իհարկե, հիշում էի, բայց մտքովս չանցավ, որ դու կարող է լինես: Ես հիմա որոշ լիազորություններ ունեմ, ու չես պատկերացնի, թե ինչքան մարդ է փորձում ինձ «ծախել» իր տափակ պատմությունները... Ես ստիպված եմ ֆիլտրել այցելուներիս:

– Շնորհակալություն հաճոյախոսության համար:

– Ի՞նչ գործ ունես Բեռլինում, Ջուլիա:

Ջուլիան նայեց գլխավերևում կախված պատկերին: Այն ստորագրված էր՝ Թ. Ուլման:

– Հաստատ Թոմասն է նկարել, լրիվ իր ոճով է,– տխուր ձայնով ասաց Ջուլիան:

– Բավական երկար ժամանակ է արդեն, ինչ նա թողել է լրագրությունը: Նույնիսկ Գերմանիայում էլ չի ապրում: Խաչ է քաշել ամեն ինչի վրա ու գնացել:

Ջուլիայի դեմքին ոչ մի մկան չշարժվեց. նա հերոսաբար ընդունեց հարվածը: Քնապը շարունակեց.

– Նա ապրում է արտասահմանում:

– Որտե՞ղ:

– Իտալիայում, կնոջ հետ, մենք հազվադեպ ենք խոսում, երևի տարին մեկ անգամ, ու էն էլ ոչ ամեն տարի:

– Վիճե՞լ եք:

– Չէ, չէ, ամենևին: Կյանք է: Ես ինչով կարողացա՝ օգնեցի իր երազանքն իրականացնելու համար, բայց

Աֆղանստանից վերադարձած Թոմասն անճանաչելի էր: Դու երևի ամեն ինչ ինձնից լավ գիտես, չէ՞: Մի խոսքով, նա ուրիշ ճանապարհ ընտրեց:

– Ոչ, ես ոչինչ չգիտեմ,– ատամները սեղմելով՝ պատասխանեց Ջուլիան:

– Ըստ վերջին լուրերի՝ նա կնոջ հետ Հռոմում ռեստորան էր աշխատեցնում: Իսկ հիմա, գնամ, մյուս հյուրերովս զբաղվեմ: Ուրախ էի քեզ տեսնել, ու ցավում եմ, որ կարճ տևեց:

– Վաղն առավոտյան,– պատասխանեց Ջուլիան:

– Էդպես էլ չասեցիր, թե ինչ կա Բեռլինում, գործո՞վ ես եկել:

– Ցտեսություն, Քնապ...

Ջուլիան դուրս եկավ՝ առանց հետ նայելու: Նա արագացրեց քայլերը ու հենց դուրս եկավ բարձր ապակեպատ դռներից, սկսեց կարմիր գորգի վրայով վազել դեպի իրեն սպասող մեքենան:

***

Հյուրանոց վերադառնալով՝ Ջուլիան հապշտապ անցավ սպասասրահով և միջանցքով ուղղվեց դեպի լվացքատուն: Նա հանեց զգեստը, կախեց տեղն ու վրան քաշեց իր ջինսն ու սվիտերը: Հանկարծ հետևից հազի ձայն լսվեց:

– Հագնվեցի՞ք,– հարցրեց դռնապանը, որ մի ձեռքով փակել էր աչքերը, իսկ մյուսում պահում էր անձեռոցիկի տուփը:

– Ոչ, ոչ,– բացականչեց Ջուլիան:

Դռնապանը մի անձեռոցիկ հանեց ու ուսի հետևից մեկնեց Ջուլիային:

– Շնորհակալություն,– արձագանքեց վերջինս:

– Քիչ առաջ, երբ անցնում էիք, ինձ թվաց, թե ձեր շապարը մի քիչ լղոզվել է: Երեկոն կարծես թե ձեր սրտո՞վ չէր:

– Դա շատ մեղմ է ասված,– քիթը վեր քաշելով՝ պատասխանեց Ջուլիան:

– Ցավոք՝ երբեմն պատահում է... Հանկարծակի պոռթկումները ռիսկային են...

– Աստծու սիրուն, ախր ոչինչ պլանավորած չէր: Ոչ այս ճամփորդությունը, ոչ այս հյուրանոցը, ոչ այս քաղաքը, ոչ էլ այս անիմաստ իրարանցումը: Ես ինձ համար հանգիստ ապրում էի, տեսնես ինչու...

Դռնապանը մի քայլ արեց դեպի Ջուլիան. ընդամենը այնքան, որ աղջիկը կարողանար գլուխը դնել նրա ուսին, և զգույշ թփթփացրեց նրա մեջքին՝ փորձելով ինչ-որ կերպ սփոփել:

– Չգիտեմ, թե ով է ձեզ վշտացրել, բայց թույլ տվեք ասել... Դուք պետք է ձեր վիշտը կիսեք ձեր հոր հետ, նա հաստատ բառեր կգտնի մխիթարելու համար: Երնեկ ձեզ, որ ձեր հայրը դեռ ձեզ հետ է. դուք երկուսդ այնքա՛ն համահունչ եք... Ես վստահ եմ, որ գիտի լսել:

– Ի՞նչ եք ասում, եթե միայն իմանայիք, թե ինչպես եք սխալվում: Ամեն ինչ լրիվ հակառակն է... ես ու հայրս համահո՞ւնչ: Նա գիտի ուրիշներին լսե՞լ: Երևի թե տարբեր մարդկանց մասին ենք խոսում:

– Ես պատիվ եմ ունեցել մի քանի անգամ սպասարկել պարոն Ուելշին, օրիորդ, և կարող եմ վստահեցնել, որ նա իսկական ջենթլմեն է:

– Նրա նման էգոիստ օրը ցերեկով, լամպի լույսով չես գտնի...

– Ուրեմն հաստատ տարբեր մարդկանց մասին ենք խոսում: Իմ ճանաչած մարդը բարեհոգության մարմնավորում է: Նա ձեր մասին միշտ խոսել է որպես իր ամենամեծ ձեռքբերման:

Ջուլիան պապանձվեց:

– Գնացեք գտեք ձեր հորը, ես վստահ եմ, նա ձեզ կհասկանա:

– Իմ կյանքում էլ ոչ մի բան նույնը չէ: Ամեն դեպքում, նա քնած է, շատ էր սպառվել:

– Վստահ եմ, որ արդեն հանգստացել է, հենց նոր եմ նրան ուտելու բան տարել:

– Հայրս ուտելի՞ք է պատվիրել:

– Ճիշտ այդպես, օրիորդ:

Ջուլիան հագավ կոշիկները և, ի նշան երախտագիտության, կրկին համբուրեց դռնապանի այտը:

– Բնականաբար, այս խոսակցությունը երբեք էլ տեղի չի ունեցել, այդպես չէ՞,– ասաց դռնապանը:

– Մենք իրար չենք էլ տեսել,– պատասխանեց Ջուլիան:

– Իսկ զգեստը հանգիստ կարող եմ կախել պատյանի մեջ՝ առանց կասկածելու, որ վրան ինչ-որ լաքա կա:

Ջուլիան, որպես երդում, բարձրացրեց աջ ձեռքը և ժպտաց դռնապանին, որը նրան նշան արեց դուրս վազել:

Ջուլիան վերելակ նստեց: Վերելակը կանգ առավ յոթերորդ հարկում, Ջուլիան մի պահ կարկամեց և սեղմեց վերջին հարկի կոճակը:

Միջանցքով մեկ լսվում էր հեռուստացույցի ձայնը: Ջուլիան ծեծեց դուռը. հայրն անմիջապես բացեց:

– Զգեստդ սքանչելի էր,– ասաց Էնթոնին՝ պառկելով մահճակալին:

Ջուլիան հեռուստացույցին էր նայում. երեկոյան լուրերով հեռարձակվում էր ցուցահանդեսի բացումը:

– Աչք կտրել չէր լինում: Քեզ երբեք էդքան էլեգանտ չէի տեսել, ու հերթական անգամ հասկացա, որ ժամանակն է դուրս գաս ճղճղած ջինսերիդ մեջից, որոնց համար դու արդեն բավական մեծ ես, Ջուլիա: Եթե ինձ մի

բառ ասած լինեիր պլաններիդ մասին, կգայի հետդ: Մեծ հպարտությամբ կքայլեի նման շքեղ կնոջ կողքով:

– Ոչինչ չէի պլանավորել, ես էլ էի նույն հաղորդումը նայում, տեսա Քնապին ու գնացի:

– Հետաքրքիր է,– ուղղվելով՝ ասաց Էնթոնին:– Ինչ-որ մեկը, ով մինչև ամսվա վերջ բացակայելու էր... կամ մեզ խաբել է, կամ միանգամից մի քանի տեղում լինելու շնորհ ունի: Չհարցնեմ, չէ՞, թե ոնց անցավ ձեր հանդիպումը: Ամեն դեպքում՝ հուսահատ տեսք ունես...

– Ես ճիշտ էի, Թոմասն ամուսնացել է: Դու էլ քո հերթին էիր ճիշտ. էլ լրագրությամբ չի զբաղվում...– բացատրեց Ջուլիան՝ ընկղմվելով բազկաթոռի մեջ: Նա նայեց դիմացը դրած ուտելիքով սկահակին:

– Ընթրի՞ք ես պատվիրել:

– Քեզ համար էի պատվիրել:

– Դու գիտեի՞ր, որ կգամ մոտդ:

– Ես ավելի շատ բան գիտեմ, քան մտածում ես: Հենց որ քեզ բացմանը տեսա, իմանալով քո արհամարհանքը աշխարհիկ միջոցառումների նկատմամբ, միանգամից հասկացա, որ ինչ-որ բան էն չէ: Ես ենթադրեցի, որ Թոմասի հետքի վրա ես ընկել, թե չէ ինչու պետք է էդպես խելապատառ գիշերվա կեսին թռչեիր: Ամեն դեպքում, երբ դռնապանը զանգեց ու քեզ համար լիմուզին պատվիրելու թույլտվություն խնդրեց, կասկածներս փարատեցի: Ու որոշեցի ինչ-որ լավ բան մտածել սփոփելու համար, եթե երեկոդ անհաջող անցնի: Բարձրացրու, բարձրացրու կափարիչը, ընդամենը փանքեյքներ են, դրանք սիրուն չեն փոխարինի, բայց կողքի օշարակով կկարողանաս գոնե մի քիչ դառը կյանքդ քաղցրացնել:

***

Հարևան լյուքսում կոմսուհին ևս հեռուստացույցով դիտում էր ցուցահանդեսի բացումը: Նա ամուսնուն խնդրեց առավոտյան հիշեցնել, որ զանգի իր ընկեր Կարլին ու շնորհավորի: Եվ միաժամանակ պետք է զգուշացնել, որ հաջորդ անգամ, երբ իրեն էքսկլյուզիվ զգեստ առաջարկի, լավ կլինի, որ այն իրոք էքսկլյուզիվ լինի, ու որ չտեսնի ինչ-որ երիտասարդ աղջկա հագին, որի կազմվածքն իրենից հարյուր անգամ ավելի լավն էր: Կարլը, անխոս, կհասկանա, թե ինչու է հետ ուղարկում այդքան շքեղ զգեստը, որն իր համար արդեն ոչ մի արժեք չունի:

***

Ջուլիան ամենայն մանրամասնությամբ հորը պատմեց երեկոյի իրադարձությունները: Անսպասելի մեկնումը անիծյալ պարահանդես, խոսակցությունը Քնապի հետ, իր սրտաճմլիկ վերադարձը՝ առանց հասկանալու, նույնիսկ առանց ինքն իրեն խոստովանելու, թե ինչու է այդպես հուզվել: Հաստատ պատճառը Թոմասի ամուսնությունը չէր. ի սկզբանե չէր էլ կասկածում, և այլ կերպ չէր էլ կարող լինել: Ամենացավալին, չգիտես ինչու, այն էր, որ նա այլևս լրագրությամբ չէր զբաղվում: Էնթոնին լսում էր նրան՝ առանց ընդհատելու և առանց միջամտելու: Փանքեյքի վերջին կտորը կուլ տալով՝ նա շնորհակալություն հայտնեց անակնկալի համար, որը թեև չկարողացավ մտքերն ի մի բերել, բայց փոխարենը ավելացրեց մի քանի կիլո: Այստեղ մնալու իմաստ էլ չէր տեսնում: Կյանքը ինչ նշան էլ ցույց տա, փնտրելու բան այլևս չկա, մնում է մի քիչ կարգավորել իր հետագա գոյությունը: Քնելուց առաջ ճամպրուկները կդասավորի, և

վաղ առավոտյան կկարողանան դուրս գալ: Այս անգամ, ավելացրեց նա դուրս գալուց առաջ, իր մոտ է դեժավյուի տպավորություն, դեժա-դեժա-վյուի՝ եթե ավելի ճիշտ արտահայտվես:

Միջանցքում հանեց կոշիկներն ու ծառայողական աստիճաններով իջավ իր սենյակ:

Հենց Ջուլիան սենյակից դուրս եկավ, Էնթոնին վերցրեց հեռախոսը: Սան Ֆրանցիսկոյում ժամը տասնվեցն էր, խոսակիցը միանգամից պատասխանեց:

– Պիլգեն լսում է:

– Հո չե՞մ խանգարում: Էնթոնին է:

– Հին ընկերները երբեք չեն խանգարում, միշտ ուրախ եմ քեզ լսել: Վաղուց չենք խոսել:

– Մի խնդրանք ունեմ, մի փոքրիկ հետաքննություն, եթե, իհարկե, կարող ես:

– Եթե իմանայիր, թե թոշակի անցնելուց հետո ինչքան եմ ձանձրանում, որ եթե զանգեիր ու ասեիր բանալիներդ է պետք գտնել, հետաքննություն կսկսեի:

– Սահմանապահ զորքերի համարներ ունե՞ս պահած, մեկը վիզաների կենտրոնում, որ կարող է մի քանի բան հոտոտել:

– Ձեռքերս դեռ բավական երկար են, չանհանգստանաս...

– Ընտիր է,– ուրախացավ Էնթոնին:– Ուրեմն ինձ պետք է, որ էլ ավելի երկարացնես: Ուրեմն, լսիր...

Հին ընկերները համարյա կես ժամ զրուցեցին: Տեսուչ Պիլգեն խոստացավ Էնթոնիին, որ հնարավորինս շուտ կգտնի նրա ուզած տեղեկությունը:

***

Նյու Յորքում ժամը քսանն էր: Հնաոճ իրերի խանութի դռան վրայի ցուցանակն ասում էր, որ այն մինչև հաջորդ օրը փակ է լինելու: Ներսում Սթենլին դասավորում էր կեսօրին ստացած 19-րդ դարի գրապահարանի դարակները: Ադամը ծեծեց ցուցափեղկը:

– Տիզն էլի եկավ,– հոգոց հանեց Սթենլին՝ բուֆետի հետևում թաքնվելով:

– Սթենլի, ես եմ, Ադամը: Գիտեմ, որ այստեղ եք:

Սթենլին, շունչը պահելով, ավելի խոր թաքնվեց:

– Երկու շիշ «Շատո-լաֆիտե» եմ բերել...

Սթենլին գլուխը զգույշ դուրս հանեց:

– 1989 թվականի,– փողոցից գոռաց Ադամը:

Խանութի դուռը բացվեց:

– Կներեք, մաքրություն էի անում, ձեր ձայնը չեմ լսել,– ասաց Սթենլին՝ հյուրին ներս թողնելով,– արդեն ընթրե՞լ եք:

## 18

Թոմասը ձգվեց ու դուրս սողաց մահճակալից՝ փորձելով չարթնացնել կողքին քնած Մարինային: Նա պտուտակաձև սանդուղքով իջավ դուպլեքսի առաջին հարկի հյուրասենյակ: Բարի հետևն անցնելով՝ բաժակը դրեց սուրճի մեքենայի ծորակի տակ, սրբիչով ծածկեց, որ խեղդի աղմուկն ու սեղմեց կոճակը: Հետո բացեց ապակեպատ դռները, դուրս եկավ պատշգամբ՝ վայելելու արևի առաջին ճառագայթները, որ արդեն շոյում էին Հռոմի տանիքները: Բազրիքին հենվելով՝ Թոմասը

սկսեց ուսումնասիրել փողոցը: Մարինայի շենքի առաջին հարկում՝ սրճարանի կողքի բանջարեղենի խանութի մոտ, առաքիչը դատարկում էր բանջարեղենով լի արկղերը...

Տաքացրած հացի հոտին հաջորդեց իտալական հայհոյանքների տարափը... Մարինան խալաթով ու մռայլ դեմքով դուրս եկավ պատշգամբ:

– Երկու բան,– հորանջեց նա:– Առաջինը՝ դու տիպտկլոր ես, ու կասկածում եմ, որ հարևաններս նախաճաշելիս հաճույք ստանան քո տեսքից:

– Բա երկրորդը,– հարցրեց Թոմասն առանց շրջվելու:

– Մենք մեր հերթին պետք է նախաճաշենք դրսում. ուտելու բան չունենք:

– Երեկ երեկոյան չիաբատաներ[1] չառա՞նք,– կիսածաղրական հարցրեց Թոմասը:

– Հագնվիր, հա,– պատասխանեց Մարինան՝ ներս մտնելով:

– Համ էլ՝ բարև,– քրթմնջաց Թոմասը:

Փողոցի մյուս կողմից պատշգամբում ծաղիկներ ջրող ծեր կինը նրան ձեռքով ողջունեց: Թոմասը ժպտաց նրան ու ներս գնաց:

Ժամը ութն էլ չկար, բայց արդեն բավական շոգ էր: Սրճարանի տերը դասավորում էր կահ-կարասին. Թոմասը նրան օգնեց հովանոցները դնել: Մարինան նստեց սեղանի մոտ ու թխվածքների զամբյուղից մի կրուասան հանեց:

– Հիմա ամբողջ օրը պատրաստվում ես թթվե՞լ,– հարցրեց Թոմասն՝ իր հերթին մի կրուասան վերցնելով:– Գնալուս պատճառո՞վ ես անտրամադիր:

[1] Իտալական սպիտակ հացի տեսակ:

– Այ հիմա հասկացա, թե ինչն է քո մեջ դուրս գալիս, Թոմաս. ամեն ինչի պատասխանն ունես:

Սրճարանատերը երկու տաք կապուչինո մատուցեց: Նա երկինք նայեց՝ Աստծուն խնդրելով, որ մինչև երեկո անձրև գա: Հետո հաճոյախոսեց Մարինային առավոտյան թարմ տեսքի համար, վերջում աչքով արեց Թոմասին ու ներս մտավ:

– Արի օրներս չփչացնենք,– վերսկսեց Թոմասը:

– Օ՛, իհարկե, փայլուն գաղափար է: Արի արագ կեր կրուասանդ, հետո բարձրանանք վերև, թափով սեքս անենք, հետո մինչ դու մի լավ ցնցուղ կընդունես, ես ինձ էշի տեղ դրած կդասավորեմ քո իրերը: Հետո մի փոքրիկ համբույր դռան շեմին, ու դու կանհետանաս երկու-երեք ամսով կամ էլ հուր հավիտյան: Սպասիր, սպասիր, բան մի ասա, ինչ էլ ասես՝ անիմաստ է:

– Դու էլ արի հետս:

– Ես թղթակից եմ, ոչ թե լրագրող:

– Իրար հետ կգնանք, երեկոն կանցկացնենք Բեռլինում, վաղը ես կթռչեմ Մոգադիշո, դու հետ կգաս Հռոմ:

Մարինան պտտվեց ու սրճարանատիրոջը նշան արեց ևս մեկ գավաթ սուրճ բերել:

– Դու ճիշտ ես, հրաժեշտն օդանավակայանում ավելի սիրուն կնայվի, մի քիչ պաթոսը վնաս չէր տա, չէ՞:

– Վնաս չէր տա, եթե դու հրատարակչությունում էլ երևայիր,– պատասխանեց Թոմասը:

– Սուրճդ խմիր, քանի չի սառել:

– Եթե փնթփնթալու փոխարեն ասեիր՝ հա, քեզ համար էլ տոմս կվերցնեի:

***

Դռան տակ մի ծրար մտցրին: Էնթոնին, ծամածռելով դեմքը, կռացավ, որ վերցնի: Նա բացեց ծրարը և կարդաց իրեն ուղղված նամակը:

«Կներես, դեռ ոչ մի նորություն չունեմ, բայց չեմ էլ հանձնվում: Հուսով եմ՝ շուտով դրական արդյունք կունենամ»: Ներքևում ստորագրված էր՝ ԺՊ՝ Ժորժ Պիլգե:

Էնթոնի Ուելշը նստեց գրասեղանի դիմաց ու երկտող գրեց Ջուլիային: Հետո զանգահարեց դռնապանին, խնդրեց իրեն մեքենա ու վարորդ տրամադրել: Սենյակից դուրս եկավ, իջավ յոթերորդ հարկում, մատների ծայրերին մոտեցավ Ջուլիայի դռանը, երկտողը մտցրեց դռան տակ ու կրնկի վրա հետ դարձավ:

– Կարլ Լիբկնեխտի 31, խնդրում եմ,– ասաց նա վարորդին:

Սև մեքենան իսկույն պոկվեց տեղից:

***

Արագ կուլ տալով թեյի վերջին կումը՝ Ջուլիան զգեստապահարանից բերեց ճամպրուկն ու դրեց մահճակալին: Սկզբում սկսեց իրերը կոկիկ դասավորել, հետո որոշեց ուղղակի լցնել մեջը: Ընդհատելով վաղվա մեկնման պատրաստությունները՝ Ջուլիան մոտեցավ պատուհանին: Քաղաքի վրա մեղմ անձրև էր մաղում: Ներքևում փողոցով հեռանում էր սև լիմուզինը:

***

– Բաղնիքի պայուսակդ բեր, եթե ուզում ես, որ դասավորեմ,– սենյակից ձայն տվեց Մարինան:

Թոմասը գլուխը լոգասենյակից դուրս հանեց:

– Թող, ես ինքս էլ կարող եմ հավաքել իմ պայուսակը:

– Տեսել եմ հավաքածդ: Հավաքելը՝ կհավաքես, բայց շատ վատ: Իսկ ես Սոմալիում չեմ լինի, որ հետո շորերդ արդուկեմ:

– Ի՞նչ է, արդեն արդուկե՞լ ես,– թեթև անհանգստությամբ՝ հարցրեց Թոմասը:

– Չէ, բայց կարող էի, չէ՞:

– Որոշեցի՞ր մի բան:

– Որ հասկանաս՝ քեզ էսօ՞ր եմ թողնելու, թե՞ վաղը: Բախտդ բերել է, որ որոշել եմ, իմ կարիերային զոհ գնալով, գնալ ու ողջունել մեր ապագա գլխավոր խմբագրին: Լավ բան եմ, չէ՞, մտածել, բայց քո Բեռլին գնալու հետ ոչ մի կապ չունի. Էնպես որ, դու հնարավորություն ունես ևս մի երեկո դիմանալ իմ ներկայությանը:

– Երջանկությունից լացս եկավ,– վստահեցրեց Թոմասը:

– Իրո՞ք,– բացականչեց Մարինան՝ փակելով պայուսակի ճարմանդը:– Պետք է մինչև կեսօր դուրս գանք... Դու, ի՞նչ է, լոգասենյակը սեփականաշնորհել ես ամբողջ օրվա համա՞ր, դուրս արի...

– Գիտեի, թե փնթփնթանը ես եմ...

– Եթե տրամադրություն չունես, իմ վրա մի ջարդիր, լա՞վ, սիրելիս...

Մարինան մի կողմ հրեց Թոմասին, մտավ լոգասենյակ, մի կողմ շպրտեց խալաթն ու Թոմասին քաշեց ցնցուղի տակ...

***

Սև մերսեդեսը թեքվեց և կանգ առավ մոխրագույն շենքերի դիմացի ավտոկանգառում: Էնթոնին վարորդին խնդրեց սպասել իրեն. հուսով էր, որ մի ժամից կվերադառնա:

Նա բարձրացավ ծածկապատ աստիճաններով և մտավ շենք, որտեղ հիմա պահվում էին Stasi-ի[1] արխիվները:

Էնթոնին ներկայացավ ընդունարանում և ճանապարհ հարցրեց:

Միջանցքը սահմռկեցուցիչ էր. երկու կողմից ցուցափեղկերում դրված էին տարբեր տեսակի խոսափողեր, տեսախցիկներ, լուսանկարչական սարքավորումներ, նամակները բացող գոլորշու սարքեր ու սարքեր, որ դրանք փակում էր կարդալուց հետո, պատճենահանող ու արխիվացնող սարքավորումներ: Ոստիկանական պետության կողմից մի ամբողջ երկրի բնակչության հանապազօրյա կյանքին հետևելու հազար ու մի տարբերակ: Թռուցիկներ, քարոզչական ձեռնարկներ, տարիների ընթացքում կատարելագործված ականջ դնելու սարքավորումներ... Միլիոնավոր մարդկանց այսպես հետևել են, դատել, կործանել կյանքերը, և այս ամենը՝ հանուն բռնապետական պետության անվտանգության:

Մտքերի մեջ թաղված՝ Էնթոնին կանգ առավ հարցաքննության սենյակի մի լուսանկարի դիմաց:

*Ես գիտեմ, որ սխալվել եմ: Պատը փլուզվեց, պրոցեսն անդառնալի էր, բայց ո՞վ կարող էր երաշխավորել, Ջուլիա, ո՞վ, Պրահայի գարնան[2] ականապեսնե՞րը: Թե՞ մեր դեմոկրատները, որոնք էն ժամանակներից ի վեր էսքան ոճրագործություններ ու անարդարություններ անպատիժ են թողել: Իսկ ո՞վ կարող էր հիմա հավաստիացնել, որ Ռուսաստանն ընդմիշտ ազատվել է*

[1] Շտազի - (Stasi) ԳԴՀ գաղտնի ոստիկանությունը:

[2] Քաղաքական և մշակութային ազատական բարեփոխումների ժամանակաշրջան Չեխոսլովակիայում 1968 թ. հունվարի 5-ից մինչև օգոստոսի 21-ը:

*երեկվա բռնակալներից: Էնպես որ, այո, ես վախեցել եմ, մահու չափ վախեցել, Ջուլիա, որ բռնապետությունը նորից կփակի ազատության՝ հազիվ բացված դռները, ու քեզ կբանտարկի իր տոտալիտար լաբիրինթոսում: Ես վախեցա, որ հավերժ կարող եմ բաժանվել աղջկանից, ոչ թե որովհետև աղջիկս է էդպես ցանկացել, այլ որովհետև համակարգն է որոշել նրա փոխարեն: Ես գիտեմ, դու ինձ երբեք չես ների, բայց եթե ամեն ինչ վատ ընթացք ստանար, ես ինձ երբեք չէի ների, որ չեմ եկել քո հետևից, և ինչ-որ տեղ ուրախանում եմ, որ սխալվել եմ:*

– Կարո՞ղ եմ ձեզ օգնել,– հարցրեց մի ձայն միջանցքի խորքից:

– Արխիվն եմ փնտրում,– կմկմաց Էնթոնին:

– Դուք ճիշտ տեղում եք, պարոն, ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:

Պատի փլուզումից մի քանի օր անց ԳԴՀ-ի քաղաքական ոստիկանության աշխատակիցները, զգալով իրենց համակարգի մոտալուտ փլուզումը, սկսեցին ոչնչացնել իրենց գործողությունների բոլոր վկայությունները: Բայց ինչպե՞ս մեծ արագությամբ ոչնչացնել միլիոնավոր անհատների կյանքի տվյալները, որ վարչակարգը հավաքել էր համարյա քառասուն տարվա ընթացքում: 1989-ի դեկտեմբերին արդեն բնակչությունը, տեղեկանալով այդ գործընթացի մասին, սկսեց գրոհել պետական անվտանգության արխիվի գրասենյակները: Արևելյան Գերմանիայի բոլոր քաղաքներում քաղաքացիները շրջապատում էին Շտազիի հաստատությունները՝ փորձելով խոչընդոտել հարյուր ութսուն կիլոմետր երկարություն ունեցող հաշվետվությունների

ոչնչացմանը, որ այսօր վերջապես հանրության սեփականությունն են դարձել:

Էնթոնին հարցրեց՝ արդյոք կարո՞ղ է տեսնել ոմն Թոմաս Մայերի անձնական գործը, որը մի ժամանակ ապրում էր արևելյան Բեռլինում՝ Կոմենիուսպլաց 2 հասցեում:

– Ավաղ, պարոն չեմ կարող ձեր հարցումը բավարարել,– ներողություն խնդրեց պատասխանատուն:

– Բայց չէ՞ որ օրենքը պահանջում է հեշտացնել քաղաքացիների՝ արխիվից օգտվելու ընթացակարգը:

– Դուք միանգամայն ճիշտ եք, բայց օրենքը նաև պարտավորում է պաշտպանել մեր քաղաքացիներին անձնական կյանքի հանդեպ ցանկացած տեսակի ոտնձգություններից, որոնք կարող են առաջանալ, եթե օգտագործվեն նրանց անձնական տվյալները,– մի շնչով արտասանեց աշխատակիցը՝ կարծես անգիր արած տողերը:

– Ահա թե որտեղ է կարևորվում օրենքի ճիշտ մեկնաբանությունը: Եթե չեմ սխալվում, օրենքի նախնական նպատակն է բոլորի համար դյուրացնել Շտազիի նյութերի օգտագործումը, որպեսզի նրանք հասկանան, թե ինչ ազդեցություն է ունեցել նրանց կյանքի վրա պետական անվտանգության համակարգը, այդպես չէ՞,– պատասխանեց Էնթոնին, իր հերթին կրկնելով շենքի մուտքի մոտ կախված ցուցանակի գրվածքը:

– Այո, իհարկե,– խոստովանեց աշխատակից, որ ոչ մի կերպ չէր հասկանում, թե այցելուն ինչ է ուզում ասել:

– Թոմաս Մայերն իմ փեսան է,– առանց ամաչելու՝ խաբեց Էնթոնին:– Նա վաղուց բնակվում է ԱՄՆ-ում, և ես ուրախ եմ հայտնել, որ շուտով պապիկ եմ դառնալու:

Հասկացեք, նրա համար կարևոր է, որ մի օր կարողանա իր երեխաներին պատմել իր անցյալի մասին: Ո՞վ չի ուզենա դա անել: Դուք երեխաներ ունե՞ք, պարոն...

– Հանս Դիտրիխ,– պատասխանեց ծառայողը,– ես երկու չքնաղ դստրիկ ունեմ՝ Էմման և Աննան, հինգ և յոթ տարեկան:

– Ի՜նչ հրաշալի է,– բացականչեց Էնթոնին,– պատկերացնում եմ՝ ինչպիսի երջանկություն է:

– Աննկարագրելի:

– Խեղճ Թոմաս... Մանկության հուշերի մեջ գամված ողբերգական դեպքերը դեռ բավական թարմ են, որ կարողանա ինքնուրույն զբաղվել այս ամենով: Ես շատ հեռվից եմ եկել, նրա անունից, որպեսզի նրան հնարավորություն ընձեռեմ հաշտվել իր անցյալի հետ, և ով գիտե, գուցե մի օր մեջն ուժ գտնի այստեղ բերել իր դստերը. որպես գաղտնիք ասեմ, որ մենք աղջիկ ենք ունենալու: Գուցե նա կարողանա իր աղջկան բերել այստեղ, որպեսզի կարողանա գտնել կապն իր արմատների հետ: Մեծարգո Հանս,– հանդիսավորությամբ վերսկսեց Էնթոնին,– որպես ապագա պապիկ՝ դիմում եմ երկու չքնաղ աղջնակների հայրիկին, օգնեք ինձ, օգնեք ձեր հայրենակից Թոմաս Մայերի դստերը, դարձեք այն մեկը, ով այս մեծահոգի ժեստով նրան կտա մեր այնքան երազած երջանկությունը:

Հանս Դիտրիխը, հուզված, արդեն չգիտեր՝ ինչ մտածեր:

Այցելուի մշուշոտ աչքերը նրան թևաթափ էին արել: Նա թաշկինակ առաջարկեց Էնթոնիին:

– Ասացիք՝ Թոմաս Մեյե՞ր:

– Ճիշտ այդպես,– պատասխանեց Էնթոնին:

– Համեցեք, նստեք սեղաններից մեկի մոտ, ես տեսնեմ՝ արդյոք մենք ունենք որևէ տեղեկություն նրա մասին:

Քառասունհինգ րոպե անց Հանս Դիտրիխը Էնթոնի Ուելշի սեղանին փաստաթղթերի պողպատե մի պահոցիկ դրեց:

– Կարծում եմ՝ գտել եմ ձեր փեսայի գործը,– զվարթ դեմքով ասաց նա:– Բախտներս բերեց, որ այն չեն հաստրել ոչնչացնել մյուսների հետ, պատառոտած գործերի վերականգնումը երկար ժամանակ է պահանջում, մանավանդ որ մենք դեռ սպասում ենք անհրաժեշտ ֆինանսավորման:

Էնթոնին ջերմորեն երախտագիտություն հայտնեց՝ կեղծ շփոթված հայացքով հասկացնելով, որ հիմա մի քիչ մենակ մնալու կարիք ունի՝ իր փեսայի գործն ուսումնասիրելու համար: Հանսն անմիջապես անհետացավ, և Էնթոնին խորասուզվեց հաստափոր գործի ուսումնասիրության մեջ, որ բացել էին մի երիտասարդի վրա 1980 թվականին ու ինը տարի շարունակ հետևել: Տասնյակ էջեր թվարկում էին փաստեր և գործողություններ, Թոմասի ունակությունները, ելումուտերը, ծանոթների անունները, նախընտրած գրականությունը, ընկերների շրջապատում ու հրապարակային արված հայտարարությունների մանրամասն նկարագրությունը, կարծիքները, նվիրվածությունը պետական արժեքներին: Ձգտումները, հույսերը, առաջին սիրո հույզերը, առաջին փորձն ու առաջին հիասթափությունը, կարճ ասած՝ այն ամենը, ինչ երևան էր բերելու Թոմասի անհատականությունը, հաշվի էր առնված: Քանի որ գերմաներենը կաղում էր, Էնթոնին որոշեց դիմել Հանս Դիտրիխի օգնությանը, որ հասկանա գործի վերջում կցված ամփոփաթերթը, որ վերջին անգամ թարմացվել էր 1989 թ. հոկտեմբերի 9-ին:

Երկկողմանի ծնողազուրկ Թոմաս Մայերը կասկածելի ուսանող էր: Նրա մանկության լավագույն ընկերոջն ու հարևանին հաջողվել էր ճողոպրել Արևմուտք:

Յուրգեն Քնապ անունով երիտասարդը պատից այն կողմ էր անցել, հավանաբար, ինչ-որ մեքենայի մեջ թաքնված և այլևս երբեք ոտք չէր դրել ԳԴՀ: Թոմաս Մայերի հանցակցությունն ապացուցող հանցանշաններ չկային, և անկեղծությունը, որով նա անվտանգության ծառայության աշխատակցին պատմել էր իր ընկերոջ ծրագրերի մասին, միայն վկայում էր դրա մասին: Գործը վարող գործակալը հենց այդպես էր հասկացել փախուստի ծրագրերի մասին, բայց բավական ուշ, որ կարողանար ձերբակալել Յուրգեն Քնապին: Այնուամենայնիվ, Թոմասի սերտ կապը հայրենիքի դավաճանի հետ, և այն փաստը, որ նա նախօրոք չէր մատնել ընկերոջ փախուստի ծրագրերը, թույլ չէին տալիս նրան դիտարկել որպես դեմոկրատական հանրապետության խոստումնալից տարրի: Գործում թվարկված փաստերը հաշվի առնելով՝ նրա դեմ քրեական հետապնդում առաջ չի քաշվել, բայց արդեն պարզից էլ պարզ էր, որ ոչ մի պետական գործի անցնել չէր կարող: Ի վերջո, ամփոփաթերթում նշված էր, որ նրան պետք է մշտական հսկողության տակ պահել, որ հետագայում կապեր չհաստատի նախկին ընկերոջ կամ Արևմուտքի որևէ այլ ներկայացուցչի հետ: Գործը վերանայել կամ փակվել կարող էր միայն փորձաշրջանի ավարտից հետո, երբ Թոմասը դառնար երեսուն տարեկան:

Հանս Դիտրիխը վերջացնում էր ընթերցումը: Չկարողանալով թաքցնել շփոթմունքը՝ նա երկու անգամ ցնցված կարդաց Թոմասի մասին տեղեկություններ հավաքող մատնիչի անունը, որ հավաստիանա, թե չի սխալվում:

– Ո՞վ կարող էր նման բան պատկերացնել,– ասաց Էնթոնին՝ հայացքը հառած թղթի ներքևում գրված անունին:– Ինչպիսի դժբախտություն...

Հանս Դիտրիխը նույնչափ վշտացած էր ու լիովին համաձայն նրա հետ:

Էնթոնին շնորհակալություն հայտնեց Հանսին անգնահատելի օգնության համար:

Ինչ-որ մանրուքի վրա սևեռված արխիվի աշխատակիցը մի պահ վարանեց՝ հայտնաբերածը բարձրաձայնելուց առաջ:

– Ձեր սկսած հետաքննության մեջ պարզություն մտցնելու համար հարկ եմ համարում նշել, որ ձեր փեսան հաստատ հայտնաբերել է նույն տխուր փաստը. գործի լուսանցքում նշված է, որ նա ծանոթացել է գործին:

Էնթոնին Դիտրիխին նորից հայտնեց իր խորին երախտագիտությունն ու վստահեցրեց, որ կմասնակցի արխիվների վերականգնման գործի ծրագրի ֆինանսավորմանը: Այսօր իր համար առավել ևս քան երբևէ պարզ դարձավ, որ ապագան պարզ տեսնելու համար մարդու համար շատ կարևոր է հասկանալ իր անցյալը:

Դուրս գալով՝ Էնթոնին մաքուր օդի անասելի կարիք զգաց՝ սթափվելու համար: Նա մի քանի րոպե նստեց ավտոկայանատեղի մոտ գտնվող փոքրիկ պուրակի նստարանին:

Մտորելով Դիտրիխի ասածի մասին ու աչքերը հառելով երկինք՝ բացականչեց.

– Ո՛նց ավելի շուտ գլխի չէի ընկնել...

Հետո վեր կացավ և գնաց դեպի մեքենան: Նստելով ղեկին՝ վերցրեց հեռախոսն ու հավաքեց Սան Ֆրանցիսկոյի հեռախոսահամարը:

– Արթնացրի՞:

– Իհարկե ոչ, գիշերվա ժամը երեքն է...

– Հազար ներողություն, բայց կարծում եմ՝ կարևոր բան ունեմ ասելու:

Ժորժ Պիլգեն միացրեց գլխավերևի լուսամփոփը, բացեց կողասեղանի դարակն ու սկսեց գրելու թուղթ փնտրել:

– Ուշադիր լսում եմ,– ասաց նա:

– Ես հիմա լիովին վստահ եմ, որ մեր տղան ուզեցել է ձերբազատվել իր ազգանունից, երբեք չօգտագործել այն կամ գոնե երբեք չհիշել դրա մասին:

– Ինչո՞ւ:

– Երկար պատմություն է...

– Գաղափար ունե՞ս, թե նոր անունն ինչ է:

– Չէ, չունեմ:

– Ընտիր է: Շնորհակալություն, որ զանգեցիր գիշերվա կեսին, դու լավ առաջ գցեցիր իմ հետաքննությունը,– քմծիծաղով բացականչեց Պիլգեն զանգն ընդհատելուց առաջ:

Նա անջատեց լույսը, ձեռքերը խաչեց գլխի հետևում ու ապարդյուն փորձեց վերագտնել կիսատ մնացած քունը: Կես ժամ անց կինը նրան հրահրեց գնալ աշխատելու: Ոչինչ, որ լույսը դեռ չի բացվել, նա ցանկանում է քնել, իսկ ամուսինը հոլի պես պտտվում է մահճակալում:

Ժորժ Պիլգեն հագավ խալաթն ու սրտնեղած գնաց խոհանոց: Նախ իր համար սենդվիչ պատրաստեց՝ կարագի հաստ շերտերը հացի երկու երեսին քսելով, քանի դեռ Նատալին այդտեղ չէ, որ գլխին քարոզ կարդա խոլեստերինի վնասների մասին: Հետո վերցրեց պատրաստածն ու գնաց նստեց գրասեղանի մոտ: Որոշ հաստատություններում երբեք չեն քնում. նա վերցրեց հեռախոսն ու զանգեց սահմանային զորքերում աշխատող ընկերներից մեկին:

– Եթե ինչ-որ մեկն օրինական կերպով փոխում է ազգանունն ու հատում մեր սահմանը, նրա հին ազգանունը փաստաթղթերում ֆիքսվո՞ւմ է:

– Ի՞նչ ազգի է,– հարցրեց զրուցակիցը:

– Գերմանացի է, ծնվել է ԳԴՀ-ում:

– Դե, այդ դեպքում, մեր հյուպատոսարաններից մեկում վիզա ձեռք բերելուց անպայման ինչ-որ տեղ նշված կլինի:

– Գրելու բան ունե՞ս,– հարցրեց Ժորժը:

– Համակարգչի դիմաց նստած եմ, ախպերս,– պատասխանեց նրա ընկեր Ռիք Բրեյմը՝ Ջոն Ֆիցջերալդ Քենեդու օդանավակայանի ներգաղթի ծառայության բաժնի սպան:

***

Մերսեդեսն ընթանում էր դեպի հյուրանոց: Էնթոնի Ուելշը նայում էր պատուհանի հետևում վազող տեսարաններին: Դեղատներից մեկի գլխին լուսավորվող վահանակը ժամանակ առ ժամանակ ցույց էր տալիս ամսաթիվը, ժամն ու օդի ջերմաստիճանը: Բեռլինում ժամը 12-ին մոտ էր, 21 աստիճան՝ ըստ Ցելսիուսի:

***

Սպասասրահում Ջուլիան անհանգիստ պտտվում էր գետնին դրված ճամպրուկի շուրջ:

– Վստահեցնում եմ ձեզ, օրիորդ Ուելշ, գաղափար անգամ չունեմ, թե որտեղ կարող է լինել ձեր հայրը: Նա վաղ առավոտյան մեքենա պատվիրեց՝ առանց որևէ բացատրություն տալու: Այլևս մենք նրան չենք տեսել: Փորձեցի կապվել վարորդի հետ, բայց նրա հեռախոսն անջատած է:

Դռնապանը հայացքը նետեց Ջուլիայի ճամպրուկին:

– Պարոն Ուելշը ոչ մի այլ հանձնարարություն չի տվել, ինչպես նաև չի զգուշացրել, որ այսօր մեկնում եք: Դուք վստա՞հ եք, որ նա մտափոխվել է:

– Ես եմ մտափոխվել: Նրա հետ պայմանավորվել էի հանդիպել առավոտյան: Եթե բաց թողնենք ժամը երեքի ինքնաթիռը, ուրեմն չենք հասցնի նաև Փարիզ-Նյու Յորք չվերթին:

– Դուք կարող եք նաև թռչել Ամստերդամով, կարծում եմ՝ բավական ժամանակ կշահեք, իսկ ես մեծ հաճույքով կզբաղվեմ տոմսերով:

– Ուրեմն խնդրում եմ՝ արդեն սկսեք զբաղվել,– պատասխանեց Ջուլիան՝ գրպանները փորփրելով:

Սակայն հուսահատված՝ գլուխը դրեց սպասասեղանին՝ դռնապանի ապշած հայացքի ներքո:

– Ինչ-որ խնդի՞ր կա, օրիորդ:

– Տոմսերը հորս մոտ են մնացել:

– Վստահ եմ, որ նա շուտով կվերադառնա: Մի անհանգստացեք, օրիորդ, եթե դուք անպայման պետք է այսօր երեկոյան լինեք Նյու Յորքում, դեռ ժամանակ ունեք, կհասցնեք:

Սև մերսեդեսը կանգ առավ հյուրանոցի դիմաց, մեքենայից իջավ Էնթոնի Ուելշը և ուղղվեց դեպի պտտադուռը:

– Ո՞ւր էիր կորել,– հարցրեց Ջուլիան՝ նրան ընդառաջ գնալով:– Վախից սիրտս ճաքեց:

– Օ՜, առաջին անգամ եմ տեսնում, որ անհանգստանաս իմ գրաֆիկով, կամ թե՝ որ ինձ կարող է բան պատահած լինել... Ինչպիսի՛ հրաշք...

– Ինձ անհանգստացնում է մենակ էն, որ ինքնաթիռը բաց չթողնենք:

– Ի՞նչ ինքնաթիռ:

– Երեկ երեկոյան պայմանավորվեցինք, որ էսօր հետ ենք գնում, մոռացե՞լ ես արդեն:

Դռնապանն ընդհատեց նրանց խոսակցությունը՝ Էնթոնիին մեկնելով հենց նոր ստացված ֆաքսը: Էնթոնի

Ուելշը բացեց ծրարը, մինչև վերջ կարդաց ու նայեց Ջուլիային:

– Անկասկած, բայց էդ երեկ երեկոյան էր...– զվարթ բացականչեց նա:

Նա հայացքով չափեց Ջուլիայի ուղեբեռը և սպասավորին խնդրեց այն հետ տանել սենյակ:

– Արի, արի քեզ տանեմ նախաճաշի, խոսելու բան կա:

– Ինչի՞ մասին,– անհանգիստ հարցրեց նա:

– Իմ մասին.. Դե լավ, լավ, Ջուլիա, երեսդ էլ մի խառնի, կատակեցի...

Նրանք տեղավորվեցին պատշգամբում:

***

Ջարթուցիչի ձայնը Սթենլիին պոկեց տհաճ երազների ճիրաններից: Աչքը դեռ չբացած՝ անտանելի միգրենը սկսեց ճարճատել՝ հիշեցնելով երեկվա ամոթալի երեկոն, երբ գինին գետի պես հոսում էր: Նա վեր կացավ և ճոճվելով ուղղվեց լոգասենյակ:

Հայելու մեջ իր ուռած դեմքը տեսնելով՝ երդվեց, որ մինչև ամսվա վերջ էլ ոչ մի կաթիլ ալկոհոլ բերանը չի առնի. բավական իրատեսական էր թվում՝ հաշվի առնելով, որ արդեն ամսի 29-ն էր: Չնայած քունքերում տրոփող թմբկահարվածներին, օրը բավական խոստումնալից էր թվում: Նախաճաշի ժամին կարելի է զանգահարել Ջուլիային և առաջարկել միասին քայլել գետափով: Հետո խոժոռվեց՝ հիշելով, որ իր Ջուլիան քաղաքում չէ, և երեկվանից ի վեր նրա ձայնը դուրս չի եկել: Բացի դրանից՝ ոչ մի կերպ չկարողացավ հիշել, թե ինչ է դուրս տվել երեկվա այնքան հարբած ճաշի ընթացքում: Որոշ ժամանակ անց, մի մեծ բաժակ թեյ խմելուց հետո միայն փորձեց մտաբերել, թե Ադամի հետ տետ-ա-տետ ճաշի ընթացքում շատ պատահաբար բերանից

հո բաց չի՞ թողել «Բեռլին» բառը: Ցնցուղ ընդունելուց հետո էլ սկսեց մտածել, թե արդյոք պետք է Ջուլիային տեղեկացնել իր կասկածների մասին: Պետք է զանգահարել երևի... կամ ոչ... դեռ չգիտի...

***

– Խաբողը հա էլ կխաբի,– բացականչեց Էնթոնին՝ մենյուն Ջուլիային մեկնելով:

– Դու ի՞նձ նկատի ունես:

– Դու երկրագնդի կենտրոնը չես, սիրելիս: Ընկերոջդ՝ Քնապին նկատի ունեմ:

Ջուլիան մենյուն դրեց սեղանին ու մատուցողին նշան արեց ավելի ուշ մոտենալ:

– Ի՞նչ նկատի ունես:

– Ի՞նչ պետք է նկատի ունենամ Բեռլինում ռեստորանում քո հետ նախաճաշելիս:

– Ի՞նչ ես պեղել:

– Թոմաս Մայերը նույն ինքն է՝ Թոմաս Ուլմանը, Tagesspiegel-ի լրագրողը, կարող եմ հանգիստ գրազ գալ, որ ամեն օր կապ ունի էդ խաբեբա սրիկայի հետ, որը մեզ հեքիաթներ էր պատմում:

– Քնապի օգուտը ո՞րն էր, որ խաբեր:

– Դու ինքդ կհարցնես: Երևի ինքն էլ իր պատճառներն ունի:

– Բա ո՞նց գլխի ընկար:

– Ես սուպեր-կարողություններ ունեմ: Մեքենա լինելն էլ իր առավելություններն ունի:

Ջուլիան շփոթված նայեց հորը:

– Հա ի՞նչ,– շարունակեց Էնթոնին,– դու կենդանիներ կհորինես, որոնք կխոսեն երեխաների հետ, իսկ ես իրավունք չունե՞մ աղջկաս մոտ գլուխ գովել մի քանի արտասովոր ունակություններով:

Էնթոնին ձեռքը մեկնեց Ջուլիային, հետո փոշմանեց, հետ քաշեց, վերցրեց սեղանին դրված բաժակն ու մոտեցրեց շուրթերին:

– Մեջը ջուր էր...– բացականչեց Ջուլիան:

Էնթոնին վեր թռավ:

– Վախեցա, որ էլեկտրական համակարգերդ շարքից դուրս գան,– շշնջաց աղջիկը՝ նեղված, որ գրավել է շրջապատի ուշադրությունը:

Էնթոնիի աչքերը չռվել էին:

– Փաստորեն հենց նոր կյանքս փրկեցիր,– ասաց նա՝ բաժակը տեղը դնելով,– դե, եթե դա կարելի է «կյանք» անվանել:

– Որտեղի՞ց ես էդ ամենն իմացել,– հարցրեց Ջուլիան:

Էնթոնին մի որոշ ժամանակ նայեց աղջկան և սկսեց պատմել առավոտյան Շտազիի արխիվ իր կատարած այցի մասին: Ի վերջո, կարևորը արդյունքն է, ոչ թե դրան հասնելու ճանապարհները...

– Դու կարող ես փոխել անունդ հոդվածների տակ ստորագրելու համար, բայց սահմանն անցնելիս չես կարող: Մեզ հայտնի նկարը Մոնրեալում էր, ուրեմն նա եղել էր Մոնրեալում, իսկ եթե հասել էր Մոնրեալ, ուրեմն հաստատ Ամերիկայով էլ է անցել:

– Փաստորեն, դու իրոք արտասովոր ունակությունների տեր ես:

– Կարևորը ոստիկանությունում աշխատող լավ ընկեր ունենալն է:

– Շնորհակալ եմ,– մրմնջաց Ջուլիան:

– Ի՞նչ ես պատրաստվում անել:

– Չգիտեմ դեռ: Ես արդեն երջանիկ եմ, որ Թոմասը զբաղվում է իր երազած մասնագիտությամբ:

– Ի՞նչ գիտես:

– Նա միշտ երազել էր լրագրող դառնալ:

– Իսկ նա, ի՞նչ է, ուրիշ երազանք չունե՞ր: Դու իրո՞ք կարծում ես, որ երբ օր գա, և ուզենա հետադարձ հայացք ձգել իր կյանքին, բացելու է լրագրողական լուսանկարների ալբո՞մը: Կարիերան լավ բան է: Բայց եթե միայն իմանայիր, թե քանի՛-քանիսն են միայնակ մնալով գիտակցել, որ այնքան մոտ թվացող հաջողությունը նրանց հեռացրել է իրենց սիրելիներից, օտարացրել իրենց իսկ հետ...

Ջուլիան նայում էր հորը. նա հասկացել էր Էնթոնիի ժպիտի մեջ թաքնված տրտմությունը...

– Հը, Ջուլիա, նորից եմ հարցնում, ի՞նչ ես պատրաստվում անել:

– Բեռլին վերադառնալն ամենախելամիտ բանն է:

– Անմեղ սայթաքում... Դու ասեցիր՝ Բեռլին, բայց ապրում ես Նյու Յորքում...

– Հիմար զուգադիպություն էր...

– Հա, հա, հա... դեռ երեկ կասեիր՝ նշան է:

– Հա, բայց լավ ասեցիր՝ երեկ...

– Սխալ ուղի ես բռնում, Ջուլիա: Մենք չենք ապրում ափսոսանքի վերափոխվող հիշողություններով: Երջանկությունն էլ է ապահովություն պահանջում, թեկուզ մի քիչ: Ընտրության որոշումը քոնն է: Ես այլևս կողքիդ չեմ լինի, որ քո փոխարեն որոշում կայացնեմ, ու դու վաղուց ինքնուրույն մարդ ես, բայց, Ջուլիա, զգուշացիր մենակությունից, մենակությունը վտանգավոր ընկեր է:

– Դու ի՞նչ գիտես մենակությունից...

– Ես նրա հետ շատ եմ երես առ երես մնացել, եթե քեզ դա է հետաքրքրում, ու ամեն անգամ նրան քշելու համար սկսել եմ մտածել քո մասին: Ասեմ՝ որոշ բաներ, իհարկե, ուշ եմ գիտակցել, ու դժգոհելու իրավունք էլ չունեմ. իմ նման բթամիտներից շատերը երբեք չեն ունենա էն հնարավորությունը, որ ինձ է բաժին ընկել,

թեկուզ ընդամենը մի քանի օրով: Լավ, արի ուրիշ բառերով ասեմ. ես կարոտում էի քեզ, Ջուլիա, ու հիմա էլ ոչինչ չեմ կարող անել, որ հետ բերեմ կորցրած տարիները... Ես հիմարի պես դրանք բաց թողեցի, որովհետև պետք է աշխատեի, որովհետև մտածում էի, որ պարտականություններ ունեի ու դերեր, որ պետք է խաղայի, այնինչ իմ կյանքի միակ իսկական թատրոնը դու էիր, Ջուլիա... Դե լավ, բավ է բարբաջենք, դա մեզ սազական չէ: Ես մեծ հաճույքով քեզ հետ կգայի Քնապի մոտ, որ քամակին մի երկու անգամ տայի ու մի քանի խոսք պոկեի, բայց ահավոր հոգնել եմ, համ էլ, էս քո կյանքն է...

Էնթոնին ձգվեց, վերցրեց կողքի սեղանիկին դրված լրագիրը, բացեց ու սկսեց թերթել:

– Դու գերմաներեն կարդա՞լ գիտես,– հարցրեց Ջուլիան՝ կոկորդը մաքրելով:

– Իսկ դու դեռ էստե՞ղ ես,– լրագրի էջը շրջելով՝ հակադարձեց Էնթոնին:

Ջուլիան ծալեց անձեռոցիկը, հրեց աթոռն ու վեր կացավ:

– Հենց հետը խոսեմ, կզանգահարեմ,– նետեց նա՝ հեռանալով:

– Վահ, տես, երեկոյան դեմ պարզ եղանակ են խոստանում,– բացականչեց Էնթոնին՝ ռեստորանի պատուհանից դուրս նայելով:

Բայց Ջուլիան արդեն փողոցում տաքսի էր կանգնեցնում: Էնթոնին ծալեց լրագիրն ու հոգոց հանեց...

***

Մեքենան կանգ առավ Հռոմի Ֆյումիչինո օդանավակայանի մոտ: Թոմասը վճարեց վարորդին և անցավ մեքենայի մյուս կողմը՝ Մարինայի դուռը բացելու: Անցնելով անձնագրային ստուգումն ու անվտանգության կետը՝

Թոմասը պայուսակը գցեց ուսին ու նայեց ժամացույցին: Մարինան թրև էր գալիս խանութների ցուցափեղկերի մոտ. քաշեց նրա ձեռքից ու տարավ բարի մոտ:

– Ի՞նչ ես ուզում երեկոյան անենք,– հարցրեց Թոմասը՝ երկու գավաթ սուրճ պատվիրելով:

– Արի գնանք քեզ մոտ, վաղուց եմ ուզում տեսնել, թե տունդ ինչ տեսք ունի:

– Մի մեծ սենյակ է, պատուհանի մոտ դրված գրասեղանով ու դիմացը՝ պատի տակ դրված մահճակալով:

– Ինձ էդքանն էլ հերիք է, ավել բան պետք չի,– պատասխանեց Մարինան:

***

Ջուլիան հրեց Tagesspiegel-ի դուռն ու ներկայացավ ընդունարանում: Նա ասաց, որ ուզում է հանդիպել Յուրգեն Քնապի հետ: Աշխատակցուհին վերցրեց հեռախոսը:

– Ասացեք, որ ես կսպասեմ այնքան ժամանակ, մինչև գա, նույնիսկ եթե ստիպված լինեմ ամբողջ օրս այստեղ անցկացնել:

Գլուխը հենած առաջին հարկ իջնող ապակե վերելակի պատին՝ Քնապն աչք չէր կտրում իրեն սպասող այցելուից: Ջուլիան հետ ու առաջ էր անում ցուցափեղկերի դիմաց, որոնց վրա փակցված էին այդօրվա հրատարակության էջերը:

Վերելակի դռները բացվեցին: Քնապը մոտեցավ նրան:

– Ինչո՞վ կարող եմ օգնել քեզ, Ջուլիա:

– Սկսիր նրանից, թե ինչու խաբեցիր ինձ:

– Արի մի ավելի հանգիստ տեղ գնանք...

Քնապը նրան առաջնորդեց աստիճանների մոտ: Առաջարկեց նստել կաֆետերիայի փոքրիկ սեղանի մոտ ու սկսեց փորփրել գրպանները:

– Սո՞ւրճ, թե՞յ,– հարցրեց նա՝ մոտենալով ըմպելիքների մեքենային:

– Ոչ մի բան:

– Ի՞նչ ես կորցրել Բեռլինում, Ջուլիա:

– Գլխի չե՞ս ընկնում:

– Շուտով կլինի քսան տարի՝ իրար չենք տեսել, ի՞նչ իմանամ՝ ինչու ես եկել:

– Թոմասի...

– Արի համաձայնիր, որ էսքան տարի հետո, մեղմ ասած, տարօրինակ է...

– Որտե՞ղ է նա:

– Արդեն ասել եմ՝ Իտալիայում:

– Կնոջ ու երեխաների հետ, ու էլ լրագրությամբ չի զբաղվում, հիշում եմ: Բայց էդ չքնաղ հեքիաթն ամբողջությամբ կամ մասամբ սուտ է: Նա փոխել է անունը, բայց զբաղվում է լրագրությամբ:

– Եթե արդեն գիտես, էլ ինչո՞ւ ես ժամանակ կորցնում:

– Եթե ուզում ես հարց ու պատասխան խաղալ, ուրեմն բարի եղիր, նախ պատասխանիր իմ հարցին: Ինչո՞ւ ճիշտը չասացիր:

– Հիմա, ի՞նչ է, անցնում ենք լուրջ հարցերի՞: Լավ, ուրեմն մի քանի հարց էլ ես ունեմ: Իսկ դու քեզ հարցրե՞լ ես՝ Թոմասն ուզո՞ւմ է քեզ տեսնել: Դու ի՞նչ իրավունք ունես վերցնես ու էսպես հարություն առնես: Որովհետև *դու* որոշել ես, որ դրա ժամանակը եկե՞լ է: Թե՞ որովհետև գլխիդ է տվել: Ու հենց էսպես հայտնվել ես ուրիշ դարաշրջանից, բայց էլ պատ չկա քանդելու, հեղափոխություն չկա անելու, չկա էքստազ, հիացմունք կամ խելագարություն: Մնում է մենակ խոհեմության մի կաթիլ, որը հատուկ է այն մարդկանց, որ անում են ամեն ինչ կյանքում ու աշխատանքի մեջ առաջ գնալու համար:

Ռադ եղիր, Ջուլիա, գնա Բեռլինից, գնա տուն, Ջուլիա: Արդեն հասցրել ես ամեն ինչ փչացնել...

– Ես քեզ արգելում եմ ինձ հետ էդ տոնով խոսել,– դողդողացող շուրթերով ընդհատեց Ջուլիան:

– Չէ հա, չլինի՞ իրավունք չունեմ: Շարունակո՞ւմ ենք հարց ու պատասխան խաղալ: Օք: Ո՞ւր էիր դու, Ջուլիա, երբ Թոմասը պայթեց արկի վրա: Դու նրան սպասո՞ւմ էիր ինքնաթիռի աստիճանների մոտ, երբ նա խեղված վերադարձավ Քաբուլից: Թե՞ երևի ամեն առավոտ հետը գնում էիր վերականգնողական սեանսների: Դո՞ւ էիր նրան սփոփում, երբ նա հուսահատված էր: Լավ, մի տանջվիր, կպատասխանեմ քո փոխարեն. քո բացակայությունն էր նրան ամենից շատ տանջում: Դու գաղափար ունե՞ս գոնե, թե ինչ ցավ ես տվել նրան, թե ինչ դատարկության ու մենության ես դատապարտել, գիտե՞ս, թե նա քանի տարի է տառապել... Դու գիտե՞ս, որ էդ կոտրված սրտով հիմարը, մեկ է, տարբերակներ էր գտնում քեզ արդարացնելու և պաշտպանելու համար, մինչդեռ ես անում էի ամեն ինչ, որ նա քեզ ատեր...

Նույնիսկ Ջուլիայի այտերից հոսող արցունքները չկանգնեցրին Քնապին:

– Փորձիր հաշվել, թե քանի՛-քանի տարի էր պետք, որ նա վերջապես կարողանար էջը շրջել, որ կարողանար ձերբազատվել քեզանից: Բեռլինի որ անկյունն էլ գնայինք, ամեն ինչ հիշեցնում էր քեզ՝ սրճարանի մուտքը, պուրակի նստարանը, պանդոկի սեղանը, գետի ափը. ու նա սկսում էր պատմել, պատմել... Դու գիտե՞ս՝ քանի ժամադրություն անիմաստ անցավ, քանի հոգի փորձեց սիրել նրան, բայց բախվեց կամ օծանելիքիդ հոտին, կամ ապուշ արտահայտություններիդ արձագանքին... Կամա թե ակամա, ես քո մասին գիտեմ ամեն ինչ. մաշկիդ նրբությունը, առավոտվա քմահաճույքներդ, որոնց,

էդպես էլ չհասկացա, թե ինչն էր դուրը գալիս, թե ինչ էիր առավոտյան ուտում, ոնց էիր մազերդ սանրում, աչքերդ ներկում, ինչ հագուստ էիր գերադասում, մահճակալի որ կողմում էիր սիրում քնել.... Հազար անգամ եմ լսել, թե չորեքշաբթի օրվա դաշնամուրի դասերիդ ինչ էիր սովորում, որովհետև նա մրմուռով շարունակում էր նվագել դրանք, շաբաթներով, տարիներով... Ես ստիպված նայել եմ բոլոր նկարները, որ նկարել ես ջրաներկով կամ մատիտով, էդ հիմար կենդանիներին, որոնց անուն առ անուն գիտեր: Եթե իմանայիր, թե քանի՜ ցուցափեղկի առաջ եմ ստիպված եղել կանգնել, որովհետև, այ, էս զգեստը դուրդ կգար, որովհետև, այ, էս նկարը կսիրեիր կամ էն ծաղկեփունջը: Ու քանի անգամ եմ ինքս ինձ հարցրել՝ տեսնես ի՞նչ էիր արել, որ քեզ էդքան սիրում ու կարոտում էր... Ու երբ, ի վերջո, նա սկսեց ուշքի գալ, ես վախենում էի, որ փողոցում կտեսնենք մեկին, որ նման է քեզ, մի ուրվականի, որ նրան կստիպեր հետ դառնալ ընտրած ճանապարհից... Դու չես պատկերացնի, թե ի՜նչ երկար էր ազատության ճանապարհը: Ու հիմա դու եկել, հարցնում ես, թե ինչո՞ւ եմ խաբել: Հուսով եմ, որ հիմա գոնե հասկացար...

– Ես երբեք չեմ ուզել նրան ցավեցնել, Քնապ, երբեք, երբեք,– հուզմունքից խեղդվելով՝ կմկմաց Ջուլիան:

Քնապը վերցրեց անձեռոցիկն ու մեկնեց նրան:

– Ինչո՞ւ ես հիմա լացում, Ջուլիա: Քո կյանքում ի՞նչ կա: Ամուսնացե՞լ ես, բաժանվե՞լ երևի: Երեխաներ ունե՞ս: Գործի բերումով Բեռլի՞ն ես տեղափոխվել:

– Էդքան դաժան մի եղիր, Քնապ...

– Օ՜, դաժանությունից գոնե դու մի խոսիր...

– Դու ոչինչ չգիտես...

– Բայց գուշակում եմ: Միտքդ փոխել ես, քսան տարի անց: Բայց արդեն ուշ է: Քաբուլից վերադառնալիս

նա քեզ գրել է, չասես՝ չէ, ես եմ նրան օգնել համապատասխան բառեր գտնել... Ես էնտեղ էի, երբ ամեն ամսվա վերջին օրը նա ջախջախված հետ էր գալիս օդանավակայանից, որտեղ անհույս սպասում էր, որ դու կգաս... Դու արել էիր քո ընտրությունը, Ջուլիա, նա հարգեց էդ՝ առանց երբևէ քեզ դատապարտելու: Հը՞, է՞ս էիր ուզում իմանալ: Դե ինչ, կարող ես հանգիստ խղճով վերադառնալ:

– Ես ոչ մի ընտրություն չեմ արել, Քնապ, իսկ քո ասած նամակը ստացել եմ երեկ չէ առաջին օրը...

***

Ինքնաթիռը սավառնում էր Ալպերի վրայով: Մարինան ննջում էր՝ գլուխը Թոմասի ուսին: Թոմասը քաշել էր օդանավի վարագույրները, փակել աչքերն ու իր հերթին փորձում էր ննջել: Մեկ ժամից հասնում էին Բեռլին:

Հարգելի ընթերցող, այս գիրքը թվայնացրել է 1915.info կայքը իր սեփական միջոցներով: Այս և բազմաթիվ այլ գրքեր կարող եք անվճար ներբեռնել մեր կայքից: Այցելեք՝ https://1915.info Շնորհակալություն:

***

Ջուլիան պատմեց ամեն ինչ. Քնապը նույնիսկ չընդհատեց նրան: Ջուլիան էլ իր հերթին երկար տարիներ ողբացել է իր սիրելիի կորուստը: Պատմությունը վերջացնելով՝ Ջուլիան վեր կացավ, մի վերջին անգամ էլ ներողություն խնդրեց ակամա ու անգիտակից պատճառած չարիքի համար, հրաժեշտ տվեց Թոմասի ընկերոջն ու ստիպեց երդվել, որ երբեք Թոմասին չի պատմի բեռլինյան այս այցի մասին: Քնապը նայում էր, թե նա ինչպես է հեռանում դեպի աստիճանները տանող երկար միջանցքով: Հազիվ էր Ջուլիան ոտք դրել առաջին աստիճանին, Քնապը ձայն տվեց.

– Ես չեմ կարողանա խոստումս պահել, ես չեմ ուզում կորցնել ամենաթանկ ընկերոջս: Թոմասը հիմա ինքնաթիռում է, նա գալիս է Հռոմից, ու մոտ քառասունհինգ րոպեից վայրէջք կկատարի:

## 19

Ջուլիան ուներ երեսունհինգ րոպե օդանավակայան հասնելու համար: Տաքսի նստելով՝ նա վարորդին խոստացավ վճարել կրկնակի, եթե ճիշտ ժամանակին տեղ հասնի: Երկրորդ խաչմերուկում նա բացեց դուռը, որ նստի վարորդի կողքին, քանի դեռ կանաչ լույսը չէր վառվել:

– Ուղևորները պետք է նստեն հետևում,– բացականչեց վարորդը:

– Գուցե, բայց հայելին դիմացի նստարանի համար է նախատեսված,– ասաց Ջուլիան՝ իջեցնելով արևապաշտպան փեղկերը:– Գնացինք, schnell, schnell...

Նա նայեց հայելու մեջ. ահավոր էր: Կոպերն ուռած էին, աչքերն ու քթի ծայրը՝ կարմրած. քսան տարի սպասելուց հետո գալ ու տեսնել այսպիսի մի ալբինոսնապաստակի... համաձայնեք, որ հետ դառնալու ցանկություն կառաջանար: Կտրուկ շրջադարձի պատճառով շպարվելու առաջին փորձն անհաջող անցավ: Ջուլիայի դժգոհ փնթփնթոցին վարորդը պատասխանեց, որ նա կամ պետք է տասնհինգ րոպեում հասնի օդանավակայան, կամ կանգնի ճանապարհի եզրին ու սպասի, որ Ջուլիան վերջացնի շպարվելը:

– Քշում ենք,– գոռաց Ջուլիան՝ անցնելով թարթիչները ներկելուն:

Ճանապարհը խցանված էր: Ջուլիան աղաչում էր վազանցել, թեկուզ և հանդիպակաց գիծ անցնելով: Նման խախտման համար նրան հանգիստ կարող էին զրկել վարորդական իրավունքից, բայց Ջուլիան խոստացավ, որ եթե իրենց հանկարծ կանգնեցնեն, ինքը կձևացնի, թե ծննդաբերում է... Վարորդը նկատեց, որ Ջուլիայի «մասշտաբները» չէին համապատասխանում նման ստի: Ջուլիան ուռեցրեց փորն ու ձեռքերը մեջքին դնելով՝ սկսեց տնքալ ու գոռալ: «Վատ չի, վատ չի...»,– ասաց վարորդն ու ոտքը դրեց գազի ոտնակին:

– Ոնց որ մի քիչ լցվեցի, չէ՞,– հարցրեց Ջուլիան՝ կոնքերին թփթփացնելով: Ժամը տասնութ անց քսաներկուսին նա դուրս թռավ՝ նույնիսկ չսպասելով, որ մեքենան կանգնի: Տերմինալն ամբողջ երկայնքով ձգվում էր նրա առջև...

Ջուլիան հարցրեց, թե որտեղ է գտնվում միջազգային ժամանումների սրահը: Անցնող ստյուարդներից մեկը ցույց տվեց արևմտյան կողմը: Խելահեղ վազքից հետո, նա շնչակտուր նայեց չվացուցակին: Հռոմից եկող ինքնաթիռի մասին ոչինչ չկար: Ջուլիան հանեց կոշիկները և նույն արագությամբ սլացավ հակառակ ուղղությամբ: Այստեղ մի հսկայական ամբոխ դարանել էր ուղևորների ելքը. Ջուլիան սկսեց աջուձախ ճանապարհ հարթել դեպի ճաղաշար: Բարձրացավ առաջին ալիքը. սահող դռները բացվում-փակվում էին՝ ուղեբեռի ստացման սենյակից դուրս թողնելով ուղևորներին:

Զբոսաշրջիկներ, հանգստացողներ, առևտրականներ, գործարար-գործարարուհիներ՝ ամեն մեկը հագնված ըստ հանգամանքի: Ձեռքերը վեր էին բարձրանում, թափահարվում օդում. ոմանք գրկախառնվում էին, ոմանք համբուրվում, մյուսները բավարարվում էին ձեռքսեղմումով, առաջին ալիքը խոսում էր ֆրանսերեն,

հետո իսպաներեն, երրորդը՝ արդեն անգլերեն: Չորրորդ ալիքում վերջապես իտալերեն բառեր լսվեցին...

Երկու ուսանող, ուսապարկերի ծանրության տակ կրիաների պես կքած, քայլում էին ձեռք ձեռքի, ժամագիրքը գրկած հոգևորականը կաչաղակի հայացքով այսուայնկողմ էր նայում, երկրորդ օդաչուն և ուղեկցորդուհին փոխանակեցին հասցեները (ուղեկցորդուհին նախկին կյանքում հաստատ ընձուղտ է եղել), մի կոնգրեսական, բուի պես գլուխը ձգած, իր խումբն էր փնտրում, մի աղջնակ ճպուռի պես թռավ մոր գիրկը, մի ծուռթաթ ամուսին գտավ իր կնոջը... ու հանկարծ հարյուրավոր այլ դեմքերի մեջ հայտնվեց Թոմասի կերպարը՝ անփոփոխ, պայծառ, ինչպես քսան տարի առաջ...

Միայն մի քանի կնճիռ ակոսել էր աչքերի շուրջը, կզակի փոսիկն ավելի էր խորացել, թեթև մորուք էր աճեցրել, բայց աչքերը, ավազի պես փափուկ հայացքը, որ Զուլիային բարձրացրել էր Բեռլինի տանիքներից վեր, լիալուսնի տակ շրջել Թիրգարթենում, նույնն էր: Շունչը պահած՝ Զուլիան բարձրացավ մատների ծայրերին, հենվեց բազրիքին ու ձեռքը վեր բարձրացրեց: Թոմասը շրջեց գլուխն ու ինչ-որ բան ասաց... իրեն գրկած երիտասարդ կնոջը... Նրանք անցան Զուլիայի դիմացով. վերջինիս կրունկները դիպան գետնին: Զույգը դուրս եկավ տերմինալից ու անհետացավ խաժամուժի մեջ...

***

– Հիմա ուզում ես, որ սկզբում ինձ մո՞տ մտնենք,– տաքսու դուռը փակելով՝ հարցրեց Թոմասը:

– Արդեն բան չմնաց որջդ հայտնաբերելուն: Բայց լավ կլինի նախ գնանք հրատարակչություն: Արդեն ուշ է, Քնապը կարող է դուրս գալ, իսկ իմ գործի համար

կարևոր է, որ նա ինձ տեսնի. էս պատճառն էինք, չէ՞, հորինել, որ ես հետդ գայի Բեռլին:

– Պոտսդամերշտրասե,– հրահանգեց Թոմասը վարորդին:

Նրանցից տասը մեքենա հետո տաքսի նստած կինը հրահանգեց գնալ հյուրանոց:

***

Դռնապանը Ջուլիային հայտնեց, որ հայրը բարում իրեն է սպասում: Էնթոնին նստած էր պատուհանի տակ գտնվող սեղանի մոտ:

– Ոնց որ ամեն ինչ վատ է անցել,– վեր կենալով՝ հարցրեց հայրը:

Ջուլիան փլվեց բազկաթոռի մեջ:

– Ավելի ճիշտ կլինի ասել՝ ընդհանրապես չի անցել: Քնապը մասամբ էր խաբել...

– Թոմասին տեսա՞ր:

– Օդանավակայանում, Հռոմից էր գալիս... կնոջ հետ:

– Խոսեցի՞ք:

– Նա ինձ չտեսավ:

Էնթոնին կանչեց մատուցողին:

– Մի բան կխմե՞ս,– հարցրեց Էնթոնին:

– Ուզում եմ տուն գնալ:

– Մատներին մատանի կա՞ր:

– Չգիտեմ, իրար գրկած էին, հո չէի՞ գնալու ամուսնության վկայական պահանջելու:

– Եթե չեմ սխալվում, մի քանի օր առաջ դու էլ էիր մեկի հետ գրկախառնված, Ջուլիա: Քանի որ իմ թաղումն էր, ես չկարողացա տեսնել, թե կոնկրետ ում հետ, բայց ամեն դեպքում մի քիչ ներկա էի... Կներես, ամեն անգամ «թաղումս» հիշելիս ծիծաղս գալիս է...

– Ծիծաղելու ոչ մի բան չեմ տեսնում: Մենք էդ օրը պետք է ամուսնանայինք: Փառք Աստծու, էս անհեթեթ ճամփորդությունը վաղը կավարտվի: Քնապը ճիշտ էր, ես ոչ մի իրավունք չունեմ հայտնվելու նրա կյանքում...

– Գուցե իրավունքը երկրորդ հնարավորությո՞ւն է տալիս:

– Ի՞նձ, քե՞զ, թե՞ Թոմասին: Սա բավական էգոիստական որոշում էր՝ սկզբից հետ ձախողման դատապարտված:

– Ի՞նչ ես մտադիր անել:

– Հավաքել ճամպրուկս ու քնել:

– Նկատի ունեմ՝ մեր վերադարձից հետո:

– Պարզաբանել ամեն ինչ, փորձել սոսնձել իմ իսկ կոտրած սափորը, մոռանալ ամեն ինչ ու վերադառնալ իմ սովորական կյանքին. էս անգամ ես այլընտրանք հաստատ չունեմ:

– Այլընտրանք միշտ էլ կա, խղճիդ հանգստության համար կարող ես գնալ մինչև վերջ...

– Օ՛, փաստորեն դու ինձ հիմա էլ սիրո դասե՞ր ես տալիս:

Էնթոնին ուշադիր նայեց դստերն ու բազկաթոռը մոտ քաշեց:

– Հիշո՞ւմ ես, երբ երեխա էիր, ամեն գիշեր քնելուց առաջ ի՞նչ էիր անում:

– Կարդում էի ծածկոցի տակ՝ գրպանի լապտերով:

– Ինչո՞ւ սենյակիդ լույսը չէիր վառում, Ջուլիա:

– Որ դու մտածեիր, թե քնած եմ...

– Իսկ մտքովդ երբեք չի՞ անցել, որ լապտերիկը կախարդական էր:

– Չէ, իսկ ի՞նչ է, պետք է մտածեի՞:

– Իսկ էդ տարիների ընթացքում հեչ եղե՞լ է, որ լապտերիկդ չվառվի:

– Ոչ,– անհանգիստ պատասխանեց Ջուլիան:

– Բայց չէ՞ որ դու երբեք չես փոխել մարտկոցները... Իմ անգի՛ն Ջուլիա, դու ի՞նչ գիտես սիրո մասին: Դու սիրել ես մենակ նրանց, ով քեզ անդրադարձրել է քո պատկերը: Հիմա նայիր աչքերիս մեջ, ու արի խոսենք քո հարսանիքից, ապագայի քո պլաններից, երդվիր, որ էս չնախատեսված ճանապարհորդությունից բացի՝ ոչինչ չի կարող կասկածի տակ դնել քո սերը Ադամի հանդեպ: Լսիր, իսկ դու ի՞նչ գիտես Թոմասի զգացմունքների մասին, գիտե՞ս՝ որն է նրա կյանքի իմաստը, երբ դու գաղափար չունես, թե որն է քո կյանքի ուղին, ընդամենը որովհետև տեսել ես, որ ինչ-որ կին գրկել է նրան: Ուզո՞ւմ ես՝ ի սրտե զրուցենք, ուրեմն արի մի հարց տամ, բայց խոստացիր, որ կպատասխանես ամենայն անկեղծությամբ: Ինչքա՞ն է տևել քո սիրո ամենաերկար պատմությունը: Խոսքը վերաբերում է ոչ թե Թոմասին կամ պլատոնական զգացմունքներին, այլ իրական ապրած զգացմունքներին: Երկու տարի՞, չո՞րս կամ գուցե հի՞նգ: Էական չէ, ասենք՝ յոթ: Հիմա անկեղծ ասա: Կկարողանա՞ս յոթ տարի նվիրվել ինչ-որ մեկին, անմնացորդ, անսահման, տալ ամեն ինչ, աներկյուղ գիտակցելով, որ մարդը, ում աշխարհում ամենաշատն ես սիրում, կմոռանա ձեր ապրած ամեն ինչը... Կհաշտվե՞ս էն մտքի հետ, որ քո ուշադրության և սիրո դրսևորումները, նվիրվածությունն ու արածդ զոհաբերությունները կջնջվեն նրա հիշողությունից, և դատարկությունից սարսափող բնությունը մի օր էդ ամնեզիան կլցնի հանդիմանություններով ու ափսոսանքի խոսքերով: Իմանալով անխուսափելին՝ քո մեջ ուժ կգտնե՞ս գիշերվա կեսին վեր կենալ, եթե սիրելիդ մի բաժակ ջուր է ուզում կամ ուղղակի տանջվում է սարսափելի երազներից... Մեջդ ցանկություն կմնա՞ ամեն առավոտ նրա համար նախաճաշ պատրաստել, սիրով

լցնել նրա օրը, զվարճացնել, երբ ձանձրանա՝ պատմություններ պատմել, երգեր երգել, հետը դուրս գալ՝ մաքուր օդ շնչելու, նույնիսկ եթե ցուրտը տանում է ոտ ու ձեռք, իսկ հետո, երեկոյան կանտեսե՞ս հոգնածությունդ, կգնաս, կնստե՞ս ոտքերի մոտ, որ փարատես նրա վախերը, խոսես նրա հետ էն անամպ ու խաղաղ ապագայից, որտեղ դու, ամենայն հավանականությամբ, չես լինի: Եթե բոլոր հարցերին դրական պատասխանես, ուրեմն կներես սխալ դատողություններիս համար. դու իրոք գիտես սիրել:

– Մամայի մասի՞ն ես խոսում:

– Ոչ, սիրելիս, քո մասին: Հենց նոր նկարագրածս սերը ծնողի սերն է երեխայի հանդեպ: Եթե իմանայիր, թե քանի օր ու անքուն գիշերներ ենք անցկացրել ձեզ հսկելով, փորձելով պաշտպանել սպառնացող նվազագույն վտանգից, օգնելով մեծանալ, սրբելով ձեր արցունքները, զվարճացնելով, գիտե՞ս, թե քանի կիլոմետր ենք վազել ձմեռային պուրակներով ու ամառային լողափերով, ինչքան ենք կրկնել նույն բանը, ինչքան ժամանակ ենք ձեզ տրամադրել: Բայց, բայց, բայց... Ո՞ր տարիքից են ձեր առաջին մանկական հիշողությունները: Պատկերացրու, թե ինչ ուժով է պետք սիրել՝ միայն հանուն ձեզ ապրել սովորելու համար՝ փայլուն հասկանալով, որ կմոռանաք ամեն ինչ վաղ մանկության տարիների մասին, իսկ ապագայում կսկսեք տառապել էն գաղափարից, որ ինչ-որ բան սխալ ենք արել, ու անպայման կգա էն օրը, երբ դուք մեզ կթողնեք՝ հպարտանալով ձեռք բերած ազատությամբ: Դու երեսովս ես տալիս իմ բացակայությունն՝ը. իսկ դու գիտե՞ս, Ջուլիա, թե ոնց է ցավում հոգիդ, երբ երեխադ գնում է տնից: Կարո՞ղ ես պատկերացնել բաժանման դառնությունը: Արի ասեմ, թե մենք ինչ ենք զգում. մենք ամենավերջին ապուշի պես

դռան շեմին կանգնած նայում ենք ձեր հետևից՝ ինքներս մեզ համոզելով, որ պետք է ուրախանանք ձեր անխուսափելի ճախրանքից, անհոգ ընդունենք ազատության մղումը, որ մեզնից պոկում, տանում է մեր միսն ու արյունը: Դուռը փակելուց հետո պետք է նորից սովորենք ապրել. լցնել դատարկ սենյակները, էլ ականջ չդնենք ոտնաձայներին, մոռանանք աստիճանների ճռռոցը, որ ուշ ժամերին վկայում էր, թե դուք տուն եք վերադառնում, ու վերջապես հանգիստ քնել, և ոչ թե տառապել անքնությունից՝ իզուր, որովհետև դուք էլ հետ չեք գալու: Եվ ամենակարևորը, աղջիկս, ոչ մի հայր կամ մայր սիրո մեջ փառք ու պարծանք չի փնտրել. մենք այլընտրանք չունենք, որովհետև մենք ձեզ սիրում ենք, սիրում ենք անկեղծ ու անմնացորդ... Դու ինձ միշտ կատես, որ քեզ բաժանել եմ Թոմասից, և ես վերջին անգամ քեզնից ներողություն եմ խնդրում նամակը պահելու համար:

Էնթոնին ձեռքը բարձրացրեց ու մատուցողին խնդրեց ջուր բերել: Ճակատին փայլեցին քրտինքի կաթիլները. նա գրպանից հանեց թաշկինակը:

– Ես քեզնից ներողություն եմ խնդրում,– ձեռքը դեռ օդում պահած՝ նորից կրկնեց Էնթոնին,– ներողություն եմ խնդրում, ներողություն եմ խնդրում, ներողություն եմ խնդրում...

– Լավ չե՞ս,– անհանգստացավ Ջուլիան:

– Ներողություն եմ խնդրում,– ևս երեք անգամ կրկնեց Էնթոնին:

– Պապա՞...

– Ներողություն եմ խնդրում, ներողություն եմ խնդրում...

Նա վեր կացավ, ճոճվեց ու ընկավ բազկաթոռին:

Ջուլիան մատուցողին խնդրեց օգնել: Էնթոնին ձեռքով նշան արեց, որ դրա կարիքը չկա:

– Որտե՞ղ ենք մենք,– ապշած հարցրեց նա:

– Բեռլինում՝ հյուրանոցի բարում:

– Բայց մենք հիմա որտե՞ղ ենք: Էսօր ի՞նչ օր է: Ես էստեղ ինչ եմ անում:

– Հերիք է,– խուճապահար աղերսեց Ջուլիան,– էսօր ուրբաթ է, մենք միասին ճամփորդում ենք: Մեկնել ենք Նյու Յորքից չորս օր առաջ, Թոմասին գտնելու համար, հիշեցի՞ր: Մոնրեալում տեսածս էն հիմար նկարի պատճառով: Դու նկարն առար ինձ համար, հետո ուզեցիր, որ գանք էստեղ, հիմա հիշեցի՞ր: Դու ուղղակի շատ ես հոգնել, պետք է խնայենք էներգիադ. ասածներդ եմ կրկնում: Դու ուզում էիր, որ մենք ամեն ինչի մասին խոսենք, իսկ մենք խոսեցինք միայն իմ մասին: Դու պետք է քեզ հավաքես, դեռ երկու օր ունենք, միայն ու միայն մեզ համար, որ իրար ասենք էն ամենը, ինչ չենք հասցրել ասել: Ես ուզում եմ նորից լսել էն ամենը, ինչ մոռացել եմ, նորից լսել բոլոր պատմությունները, որ ժամանակին պատմել եք: Հիշո՞ւմ ես մոլորված օդաչուին, որի օդանավի բենզինը վերջացել էր, ու որը ստիպված վայրէջք էր կատարել Ամազոնի ափերին, ջրասամույրի մասին, որ նրան ճանապարհը ցույց տվեց... Ես նույնիսկ հիշում եմ նրա մորթի գույնը՝ կապույտ էր, գիտե՞ս՝ որ կապույտից, էն, որ միայն դու էիր կարող նկարագրել՝ ասես բառերդ գունավոր մատիտներ լինեին:

Ջուլիան բռնեց հոր ձեռքից, որ սենյակ առաջնորդի:

– Գույնդ հեչ լավը չի, գնա քնիր, մինչև վաղը ուժերդ վերականգնվեն:

Էնթոնին հրաժարվեց պառկել մահճակալին: Պատուհանի կողքի բազկաթոռը իսկ և իսկն էր:

– Գիտես՝ ինչն է սպանում,– նստելով՝ ասաց նա,– որ մենք հազար ու մի պատճառ ենք գտնում, որ ինքներս մեզ արգելենք սիրել՝ տառապելու ու մի օր լքված լինելու

վախից: Բայց ինչքա՜ն ենք մենք սիրում կյանքը՝ շատ լավ իմանալով, որ մի գեղեցիկ օր մեզ թողնելու է...

– Էդպես մի խոսիր...

– Իսկ դու դադարիր ապագայի պլաններ կազմելուց, Ջուլիա: Պետք չէ սոսնձել կոտրած կահկարասին: Պետք է ապրել, ապրել, թեկուզ և հաճախ դեպքերը մեր ուզածի պես չեն ընթանում: Ուղղակի հիշիր, որ կյանքը սլանում է կայծակնային արագությամբ: Հիմա ի՞նչ ես անում էստեղ, ինձ հետ, իմ սենյակում, գնա, գնա շրջիր քո հուշերի հետքերով: Ուզո՞ւմ էիր պարզաբանել ամեն ինչ. դե ինչ, թռի... Դու էստեղ քսան տարի առաջ ես եղել, հիմա գնա, վերագտիր տարիներդ, քանի դեռ ժամանակ կա: Էսօր երեկոյան Թոմասը շրջելու է նույն քաղաքում, ինչ որ դու: Արդեն կարևոր չէ՝ դու նրան կտեսնես, թե ոչ: Դուք նույն օդն եք շնչելու: Դու գիտես, որ նա էստեղ է, շատ մոտ, ավելի մոտ, քան երբևէ: Դուրս վազիր, կանգնիր ամեն մի լուսավորված պատուհանի տակ, բարձրացրու գլուխդ ու տես, թե ինչ կզգաս, երբ քեզ թվա, թե վարագույրների հետևում ճանաչում ես նրան. եթե հասկանաս, որ նա է, գոռա, ձայն տուր, նա անպայման կլսի, կիջնի թե չէ, սեր կխոստովանի, թե հուր հավիտյան գրողի ծոցը կուղարկի՝ գոնե խիղճդ հանգիստ կլինի:

Էնթոնին Ջուլիային խնդրեց իրեն մենակ թողնել: Ջուլիան մոտեցավ հորը.

– Կներես, սիրելիս, որ քեզ մի քիչ առաջ բարում վախեցրի, լավ չստացվեց,– խորամանկ ժպիտով ասաց Էնթոնին:

– Հուսով եմ, որ ձև չէիր թափում...

– Քեզ թվում է՝ ես մորդ չէի՞ զգում, երբ նա սկսեց խենթանալ, հեռանալ մեզանից... Գիտե՞ս, սիրելիս, մենակ դո՛ւ չես նրան կորցրել: Ես չորս տարի ապրել եմ

հետը, իսկ նա գաղափար անգամ չուներ, թե ով եմ ես... Իսկ հիմա, վազիր, սա քո վերջին գիշերն է Բեռլինում:

***

Ջուլիան վերադարձավ սենյակ ու փռվեց մահճակալին: Հեռուստացույցով ոչ մի հետաքրքիր բան չկար, իսկ կողասեղանիկին դրված ամսագրերը գերմաներեն էին: Վեր կացավ և վերջապես որոշեց գնալ ու վայելել երեկոյան զովը: Ինչ իմաստ ուներ մնալ սենյակում, եթե կարելի էր թափառել քաղաքում ու ըմբոշխնել բեռլինյան վերջին ակնթարթները: Նա փորփրեց ճամպրուկը՝ ինչ-որ տաք բան գտնելու համար. խորքում ձեռքն ընկավ կապույտ ծրարը, որ ժամանակին պահել էր իր սենյակում՝ գրադարակին դրված պատմության դասագրքի մեջ: Ջուլիան նայեց ձեռագրին ու նամակը գրպանը դրեց:

Հյուրանոցից դուրս գալուց առաջ բարձրացավ վերջին հարկ ու ծեծեց հոր համարի դուռը:

– Բա՞ն ես մոռացել,– դուռը բացելով՝ հարցրեց Էնթոնին:

Ջուլիան չպատասխանեց:

– Չգիտեմ՝ ուր ես գնում, բայց երևի էսպես ավելի լավ է, ու չմոռանաս, վաղը ժամը ութին քեզ կսպասեմ ներքևում: Մեքենան արդեն պատվիրել եմ, մենք ոչ մի կերպ չենք կարող ինքնաթիռը բաց թողնել. դու ինձ անպայման պետք է հասցնես Նյու Յորք:

– Ի՞նչ ես կարծում, ինչ-որ մի օր մենք կդադարե՞նք սիրուց տառապել,– հարցրեց Ջուլիան դռան շեմից:

– Եթե բախտդ բերի՝ երբեք...

– Ուրեմն ներողություն խնդրելու իմ հերթն է... Ես պետք է ավելի շուտ ամեն ինչ պատմած լինեի: Էդ ինձ էր ուղղված, և ես ուզում էի պահել միայն ու միայն ինձ համար, բայց քեզ էլ է վերաբերում...

– Ի՞նչը...

– Մամայի վերջին նամակը:

Ջուլիան նամակը մեկնեց հորն ու դուրս եկավ:

Էնթոնին հայացքով հետևեց աղջկան: Հետո նայեց իրեն վստահված նամակին և իսկույն ճանաչեց կնոջ ձեռագիրը. Էնթոնի Ուելշը խոր հոգոց հանեց, կծկվեց բազկաթոռի մեջ ու սկսեց կարդալ.

*«Ջուլիա*

*Դու մտնում ես սենյակս, կերպարդ ուրվագծվում է բաց դռնից ընկած լույսի շողի ներքո: Լսում եմ ինձ մոտեցող քայլերիդ ձայնը: Ես անգիր գիտեմ դիմագծերդ, իհարկե, երբեմն դժվարանում եմ հիշել անունդ, բայց ճանաչում եմ հարազատ հոտդ, որից միանգամից սկսում եմ ինձ լավ զգալ: Քո հոտն ինձ պոկում է տագնապի ճիրաններից, որն ինձ տանջում է արդեն երկար ժամանակ: Դու հաստատ այն երիտասարդ աղջիկն ես, որ հաճախ գալիս է մթնշաղին, ու ես գիտեմ, որ եթե մոտենում ես մահճակալիս, ուրեմն արդեն երեկո է: Քո խոսքերն ավելի քնքուշ ու մեղմ են, քան կեսօրներին եկող տղամարդունը: Ես նրան հավատում եմ, երբ ասում է, որ սիրում է ինձ. երևում է, որ անհանգստանում է և ինձ միայն լավն է կամենում: Նրա շարժումները շատ նուրբ են, նա երբեմն վեր է կենում ու գնում դեպի մյուս լույսը, որ փռված է պատուհանից դուրս՝ ծառերի վրա. երբեմն գլուխը դնում է պատուհանին ու լալիս ցավից. ես այդ ցավից ոչինչ չեմ հասկանում: Նա ինձ ինչ-որ անծանոթ անունով է կոչում, ու ես միշտ արձագանքում եմ, որ նա ուրախանա: Պիտի խոստովանեմ, որ ամեն անգամ, երբ այդ անունը տալուց հետո ժպտում եմ, զգում եմ, որ նա մի տեսակ թեթևանում է: Նաև ժպտում եմ, որովհետև նա ինձ կերակրում է, ու ես նրան շնորհակալ եմ:*

*Դու նստեցիր կողքիս՝ մահճակալի ծայրին: Ես նայում եմ ձեռքիդ բարակ, նուրբ մատներին, որ շոյում են ճակատս: Էլ չեմ վախենում: Դու շարունակում ես խոսել հեպս, ու աչքերիդ մեջ կեսնում եմ, որ դու էլ ես ուզում, որ անունդ տամ... Բայց քո աչքերում այլևս կրկմություն չկա, ու ես ուրախանում եմ, որ գալիս ես: Ես փակում եմ աչքերս, երբ դաստակդ հպվում է քթիս: Քո մաշկից իմ մանկության հոտն է գալիս. իսկ գուցե դա քո՞ մանկությունն է: Դու իմ աղջիկն ես, իմ սերը, իմ ամեն ինչը. ես դա գիտեմ, ու կիմանամ ևս մի քանի տոպե: Այնքա՜ն շատ բան ունեմ քեզ ասելու, ու այնքա՜ն քիչ ժամանակ: Ուզում եմ, որ դու ծիծաղես, հոգիս, որ վազես ու լացելու համար պատուհանի հեպևում թաքնված հորդ ասես, որ էլ չլացի, որ ես նրան երբեմն ճանաչում եմ, ասա նրան, որ գիտեմ, թե ով է նա, ասա նրան, որ հիշում եմ, թե ինչպես էինք սիրում միմյանց, ու որ ամեն օր, երբ նա գալիս է մոտս, ես նրան սիրում եմ նորովի:*

*Բարի գիշեր, իմ սեր, ես քնում եմ, որ վաղը դու նորից գաս... սպասում եմ քեզ:*

*Քո մամա»:*

## 20

Քնապը սպասում էր նախասրահում: Թոմասն օդանավակայանից դուրս գալիս զանգել ու զգուշացրել էր, որ գալիս են: Մարինային ողջունելուց ու ընկերոջը գրկելուց հետո, նրանց առաջնորդեց իր աշխատասենյակ:

– Շատ լավ է, որ դու էլ ես եկել,– ասաց նա Մարինային,– կարող ես ինձ էսօր փրկել: Ձեր վարչապետը

երեկոյան լինելու է Բեռլինում, լրագրողը, որ նրա պատվին տրվող գալա երեկոն պետք է լուսաբաներ, հիվանդացել է: Իսկ վաղվա թողարկման մեջ երեք սյունակ ունենք պահած. արի շուտ փոխվիր ու վազիր էնտեղ: Հոդվածդ պետք է հասնի ինձ մինչև գիշերվա ժամը երկուսը, որ հասցնեն խմբագրել: Պետք է հանձնենք տպագրության մինչև ժամը երեքը: Կներես ձեր երեկոյան պլանները փչացնելու համար, բայց սա շատ շտապ է, իսկ գործն ամեն ինչից կարևորն է:

Մարինան վեր կացավ, հրաժեշտ տվեց Քնապին, համբուրեց Թոմասի ճակատն ու շշնջաց՝ Arrivederci, դմբոս, ու հեռացավ:

Թոմասը ներողություն խնդրեց Քնապից ու վազեց Մարինայի հետևից:

– Դու չես պատրաստվում, չէ՞, սուսուփուս հնազանդվել: Իսկ մեր ռոմանտիկ ընթրի՞քը,– հարցրեց Թոմասը

– Իսկ դո՞ւ, դու, ի՞նչ է, սուսուփուս չե՞ս հնազանդվում: Մի հատ հիշեցրու, թե ինքնաթիռդ դեպի Մոգադիշո ժամը քանիսի՞ն էր: Թոմաս, դու ես, չէ՞, ինձ միլիոն անգամ ասել, որ կարիերան ամեն ինչից վեր է: Վաղը դու էլ էստեղ չես լինի, ու Աստված գիտի, թե երբ կվերադառնաս: Զգույշ եղիր: Եթե ճակատագիրը բարի գտնվի, մեր ճանապարհներն ինչ-որ մի օր կխաչվեն ինչ-որ մի քաղաքում:

– Գոնե տանս բանալիները վերցրու, կգնաս, հոդվածդ տանը կգրես:

– Հյուրանոցում ինձ ավելի լավ կզգամ: Վախենամ՝ դժվար կենտրոնանամ, քանի որ քո պալատներն ուսումնասիրելու գայթակղությունը շատ մեծ կլինի:

– Տունս միսենյականոց է, ուսումնասիրությունդ արագ կվերջանա:

– Դու իրոք իմ ամենասիրած դմբոն ես, ես խոսում էի վրեդ թռնելու մասին, ախմախ: Հաջորդ անգամ, Թոմաս, ու եթե միտքս փոխեմ, ինձ կպատճառեմ առավոտ շուտ գալու, դռանդ զանգը տալու և քեզ արթնացնելու հաճույքը: Դե ինչ, չաո:

Մարինան ձեռքով հրաժեշտ տվեց ու անհետացավ...

***

– Լա՞վ է ամեն ինչ,– հարցրեց Քնապը, երբ Թոմասը, դուռը շխկացնելով, մտավ գրասենյակ:

– Բայց դու իրոք անտանելի ես... Մարինայի հետ գալիս եմ Բեռլին, թռչելուց առաջ վերջին գիշերն անցկացնելու համար, ու դու ամեն ինչ փչացնում ես... Հիմա ուզում ես հավատամ, որ ուրիշ մեկին չունեիր ձեռքիդ տա՞կ: Ի՞նչն է պատճառը, գրողը տանի: Դուրդ գալիս է ու խանդո՞ւմ ես: Թե՞ էնքան փառասեր ես դարձել, որ ամսագրից բացի՝ աշխարհ չես տեսնում: Հա՛, երևի ուզում էիր երկուսով անցկացնեինք երեկոն...

– Վերջացրի՞ր,– հարցրեց Քնապը՝ գրասեղանի մոտ նստելով:

– Արի ընդունիր, որ անհամի մեկն ես...– գազազած շարունակեց Թոմասը:

– Հա, ես կասկածում էի, որ իրար հետ կանցկացնենք: Հետդ խոսելու բան ունեմ: Ու հաշվի առնելով, թե ինչ եմ ասելու, լավ կլինի նստես...

***

Թիրգարթենի այգին թաղվել էր երեկոյան կիսախավարի մեջ: Հին լապտերների դեղնավուն լույսը փռվել էր արահետներին: Ջուլիան առաջ գնաց դեպի ջրանցք: Լճակի վրա նավավարներն իրար էին կապել

զբոսանավակները: Կենդանաբանական այգուց քիչ այն կողմ՝ գետի վրայով ձգվում էր կամուրջը: Ջուլիան անցավ անտառակով, չվախենալով մոլորվելուց, ասես այստեղ ամեն արահետ, ամեն ծառ, որի մոտով անցնում էր, հարազատ էր: Առջևում վեր էր խոյանում Հաղթանակի սյունը: Ջուլիան անցավ շրջանաձև բացատը. քայլերն իրենք իրենց տարան Բրանդերբուրգյան դարպասների մոտ: Նա հանկարծ ճանաչեց տեղանքն ու կանգ առավ: Մոտ քսան տարի առաջ այս արահետների շրջադարձին կանգնած էր պատի մի մասը: Հենց այստեղ էր, որ առաջին անգամ տեսավ Թոմասին: Իսկ այսօր լորենու տակ մի սովորական նստարան էր...

– Ես վստահ էի, վստահ էի, որ քեզ էստեղ կգտնեմ...– հետևից ձայն լսվեց:– Քայլվածքդ չի փոխվել...

Ջուլիայի սիրտը կծկվեց. նա ցնցվեց:

– Թոմա՞ս...

– Ախր չգիտեմ էլ, թե ինչ է պետք անել նման իրավիճակում, ձե՞ռք սեղմել, թե՞ համբուրել,– տատանվող ձայնով ասաց նա:

– Ես էլ չգիտեմ,– կմկմաց Ջուլիան:

– Երբ Քնապն ասաց, որ դու Բեռլինում ես, բայց չկարողացավ ասել, թե որտեղ գտնեմ քեզ, նախ որոշեցի զանգահարել քաղաքի բոլոր հյուրատները, հետո նոր հիշեցի, թե ի՛նչ շատ են դրանք: Ու մտածեցի, որ եթե մի քիչ բախտս բերի, քեզ էստեղ կգտնեմ:

– Ձայնդ չի փոխվել, մի քիչ նստել է...– թույլ ժպիտով ասաց Ջուլիան:

Թոմասը մի քայլ արեց դեպի նա:

– Կուզե՞ս էս ծառը բարձրանամ: Կուզե՞ս թռչեմ էն ճյուղից, որ համարյա նույն բարձրությունն ունի, ինչ է՛ն մեկը, որի վրայից ընկա գիրկդ:

Թոմասը մի քայլ էլ առաջ եկավ ու գրկեց նրան:

– Ի՜նչ արագ է վազում ժամանակը, ու միևնույն ժամանակ ինչ դանդաղ,– ասաց նա՝ ավելի ամուր գրկելով Ջուլիային:

– Լալի՞ս ես,– հարցրեց Ջուլիան՝ խտտելով նրա այտը:

– Չէ հա, աչքս փոշի լցվեց: Իսկ դո՞ւ:

– Քո փոշու քույրիկն էլ թռավ ինձ մոտ, թեկուզ քամի չկա...

– Դե, փակիր աչքերդ,– խնդրեց Թոմասը:

Վերհիշելով անցյալի ժեստերը՝ Թոմասը մատների ծայրերով դիպավ Ջուլիայի շուրթերին, իսկ հետո մեղմ համբույրներ դրոշմեց նրա կոպերին:

– Ինձ բարի լույս մաղթելու ամենաչքնաղ տարբերակը...

Ջուլիան դեմքը թաղեց Թոմասի վզի փոսիկի մեջ:

– Նույն հոտն է... քո հոտը, որ ոչ մի վայրկյան չեմ մոռացել...

– Արի, արի,– ասաց Թոմասը,– ցուրտ է, դողում ես:

Թոմասը բռնեց Ջուլիայի ձեռքը, և նրանք քայլեցին դեպի Բրանդերբուրգյան դարպասներ:

– Էսօր եկել էիր օդանավակայա՞ն:

– Հա: Ի՞նչ իմացար:

– Ինչո՞ւ ձայն չտվեցիր:

– Երևի որովհետև ընդհանրապես ցանկություն չունեի կնոջդ բարևելու:

– Նրա անունը Մարինա է:

– Սիրուն անուն է:

– Նա իմ ընկերներից է, որի հետ էպիստոլյար հարաբերություններ ունեմ:

– Երևի էպիզոդի՞կ:

– Հա, մոտավորապես էդպես, ես քո լեզուն դեռ փայլուն չեմ սովորել:

– Բայց լավ էլ տակից դուրս ես գալիս...

Նրանք դուրս եկան այգուց և քայլեցին հրապարակով: Թոմասը նրան առաջնորդեց դեպի սրճարաններից մեկը: Նստեցին ու երկար ժամանակ այդպես մնացին՝ լռության մեջ իրար նայելով, անկարող գտնելու անհրաժեշտ բառերը...

– Ցնդվելիք է, ախր ընդհանրապես չես փոխվել,– խոսակցությունը վերսկսեց Թոմասը:

– Փոխվել եմ, վստահեցնում եմ, որ քսան տարում փոխվել եմ: Եթե դու ինձ տեսնեիր արթնանալիս, միանգամից կհասկանայիր, թե քանի տարի է թռել...

– Կարիք չկա: Ես դրանք հատ-հատ եմ հաշվել:

Մատուցողը բացեց Թոմասի պատվիրած սպիտակ գինու շիշը:

– Թոմաս... քո նամակը... ուզում եմ իմանաս, որ...

– Քնապն ամեն ինչ պատմել է... Հայրդ ամեն ինչ հաշվի էր առել...

Նա բարձրացրեց բաժակն ու թեթևակի չխկացրեց Ջուլիայի բաժակին: Մի զույգ կանգ առավ հրապարակում և սկսեց զմայլվել հրապարակի սյունաշարերով:

– Երջանի՞կ ես:

Ջուլիան չպատասխանեց:

– Ի՞նչ կա քո կյանքում:

– Նստած եմ Բեռլինում, քո կողքին, նույն անորոշ վիճակում, ինչ քսան տարի առաջ:

– Ինչո՞ւ ես հասել էստեղ:

– Հասցեդ չունեի, որ պատասխանեմ: Նամակդ ինձ հասավ քսան տարում, ես էլ չէի վստահում փոստին:

– Ամուսնացա՞ծ ես, երեխաներ ունե՞ս:

– Դեռ ոչ,– պատասխանեց Ջուլիան:

– Դեռ ոչ, ամուսնացած չե՞մ, թե՞ դեռ ոչ, երեխա չունեմ:

– Երկուսն էլ:

– Ի՞նչ պլաններ ունես:

– Դնչիդ վրա ի՞նչ սպի է, էն ժամանակ չկար,– հարցրեց Ջուլիան:

– Էն ժամանակ թռել եմ ծառից, ոչ թե արկի վրա...

– Մի քիչ էլ լցվել ես,– ժպտալով ասաց Ջուլիան:

– Շնորհակալ եմ:

– Կարող ես կոմպլիմենտ համարել, իրոք, քեզ շատ է սազում:

– Լավ ես խաբում, բայց ծերացել եմ, ու դա քննարկումից դուրս է: Սովա՞ծ ես:

– Չէ,– պատասխանեց Ջուլիան՝ հայացքն իջեցնելով:

– Ես էլ: Կուզե՞ս քայլենք:

– Էն տպավորությունն է, որ անընդհատ հիմարություններ եմ դուրս տալիս:

– Չէ՛... համ էլ դու դեռ ոչ մի բան չես պատմել քո կյանքից,– տխուր ասաց Թոմասը:

– Գիտե՞ս, Թոմաս, ես գտել եմ մեր սրճարանը:

– Ես երբեք էնտեղ հետ չեմ գնացել:

– Տերը ճանաչեց ինձ:

– Տեսա՞ր, որ ասում եմ՝ չես փոխվել:

– Քանդել են հին շենքը, որտեղ ապրում էինք, ու տեղը նորն են կառուցել: Մեր փողոցից մնացել է միայն դիմացի փոքրիկ այգին:

– Երևի էդպես ավելի լավ է: Ոչ մի լավ հիշողություն չունեմ էնտեղից, բացի միասին ապրած մի քանի ամիսներից: Հիմա ապրում եմ քաղաքի արևմտյան հատվածում: Շատերի համար դա արդեն ոչ մի բան չի նշանակում, իսկ ես առ այսօր պատուհանից դուրս նայելիս տեսնում եմ սահմանագիծը...

– Քնապն ինձ պատմել է քո մասին,– շարունակեց Ջուլիան:

– Ո՞ւ, ի՞նչ է դուրս տվել:

– Որ Իտալիայում ռեստորան ես աշխատեցնում և ունես զույգ երեխա, որ քեզ օգնում են պիցա թխել,– պատասխանեց Ջուլիան:

– Այ քեզ անխելք... Տեսնես որտեղի՞ց է վերցրել...

– Ես քեզ շատ եմ ցավացրել...

– Ես էլ քեզ. էսքան ժամանակ մտածել ես, որ մեռել եմ...

Թոմասը, աչքերը կկոցելով, նայեց Ջուլիային:

– Ճոռոմ բաներ եմ, չէ՞, ասում:

– Հա, մի քիչ, բայց ճիշտ ես ասում:

Թոմասը բռնեց նրա ձեռքը:

– Յուրաքանչյուրս մեր ճանապարհով ենք գնացել, կյանքն է էդպես որոշել: Հայրդ անմասն չի մնացել, բայց պետք է հավատալ, որ ճակատագիրը չի ուզել, որ մենք միասին լինենք:

– Կամ էլ նա ուզել է մեզ պաշտպանել... հայրս... Երևի մենք սկսեինք մեկս մեկիս չհանդուրժել ու բաժանվեինք, դու կլինեիր էն մարդը, ում կատեի աշխարհում բոլորից շատ, ու էս երեկոն երբեք մեր կյանքում չէր լինի:

– Կլիներ, որ քննարկեինք մեր երեխաների կրթության հարցը: Հետո, կան, չէ՞, զույգեր, որ բաժանվում են, բայց ընկերներ են մնում: Ինչ-որ մեկը կա՞ կյանքումդ: Արի գոնե էս անգամ պատասխանից մի խոռոչիր...

– Խուսափիր...

– Ի՞նչ:

– Ուզում էիր ասել՝ մի խուսափիր պատասխանից: Արի, արի, մի լավ գաղափար ունեմ...

Հարևան սրճարանում ծովամթերք էին մատուցում: Թոմասը իրենց հերթին սպասող տուրիստների զայրացած հայացքների ներքո գրոհով վերցրեց հենց նոր ազատված սեղանիկը:

– Էս ի՞նչ ես անում,– նստելով՝ հարցրեց Ջուլիան,– հեչ սիրուն չստացվեց: Մեզ հիմա դուրս կքշեն:

– Մասնագիտությունս ինձ ճարպիկ է դարձրել: Համ էլ տիրոջը ճանաչում եմ, օգտվեցի առիթից...

Հենց այդ պահին սրճարանի տերը մոտեցավ ողջունելու Թոմասին:

– Հաջորդ անգամ ավելի մեղմ ներխուժիր, թե չէ կփչացնես հարաբերություններս հաճախորդների հետ,– շշնջաց նա:

Թոմասը Ջուլիային ներկայացրեց ընկերոջը:

– Ի՞նչ խորհուրդ կտաս երկու հոգու, որ ընդհանրապես սոված չեն,– հարցրեց նա:

– Նախ մի ման ծովախեցգետին կտամ, իսկ ախորժակը, գիտեք, ուտելիս է բացվում:

Սրճարանի տերն անհետացավ: Խոհանոց մտնելուց առաջ նա շրջվեց, բութ մատը վեր պահեց ու աչքով անելով՝ Թոմասին հասկացրեց, որ Ջուլիան դուրն եկել է:

– Ես դիզայներ եմ:

– Գիտեմ, քո կապույտ ջրասամույրը դուրս շատ է գալիս:

– Տեսե՞լ ես:

– Կխաբեմ, եթե ասեմ, որ բոլոր մուլտերդ նայել եմ, բայց քանի որ, մասնագիտությունից դրդված, շատ բան գիտեմ, դիզայների անունն ականջովս ընկել էր: Մադրիդում էի, կեսօր էր, մի քիչ ազատ ժամանակ ունեի: Աչքովս ընկավ պաստառը, մտա կինոթատրոն, պետք է խոստովանեմ, որ լավ չհասկացա, որովհետև իսպաներենից շատ լավ չեմ, բայց կարծում եմ՝ պատմության բուն թեման հասկացա: Մի հարց կարո՞ղ եմ տալ:

– Ինչ որ կուզես:

– Արջին նկարելուց կարո՞ղ է պատահաբար ինձ ես հիշել:

– Սթենլին էլ ասում էր, որ ոզնին է քեզ ավելի նման:

– Սթենլին ո՞վ է:

– Իմ ամենալավ ընկերը:

– Իսկ ինչի՞ց եզրակացրեց, որ ես նման եմ ոզնուն:

– Երևի շատ կռահող է, խորաթափանց, կամ երևի մոտը քեզնից շատ եմ խոսել:

– Ոնց որ թե շատ լավ մարդ է: Իսկ ի՞նչ ընկեր է,– հետաքրքրվեց Թոմասը:

– Այրի ընկեր, որի հետ շատ բան եմ կիսել:

– Ցավում եմ նրա համար:

– Լավ պահեր էլ ենք ունեցել:

– Ցավալի է կնոջը կորցնելը: Վաղո՞ւց է մահացել:

– Կնոջը չէ, ընկերոջը,– ուղղեց Ջուլիան:

– Ավելի ցավալի է:

– Բայց ինչ ախմախն ես դու, հա...

– Մի բան ասեմ՝ չծիծաղես. հիմա, երբ ասացիր, որ տղամարդկանց է սիրում, ավելի դուրս եկավ: Իսկ ո՞ւմ նման ես նկարել ջրասամույրիդ:

– Մեր ներքևի հարևանի, որը կոշիկի խանութ ունի: Պատմիր էն օրվա մասին, երբ գնացիր մուլտս նայելու: Ի՞նչ օր էր:

– Տխուր, երբ մուլտը վերջացավ:

– Քեզ շատ եմ կարոտել, Թոմաս...

– Ես էլ քեզ, Ջուլիա, ավելի շատ, քան կարող ես պատկերացնել: Բայց արի թեման փոխենք: Փոշու նշույլ անգամ չկա, որ ինչ-որ մեկին դատապարտենք անմաքրության համար...

– Մեղադրենք, Թոմաս, ուզում էիր ասել՝ մեղադրենք:

– Ի՞նչ կարևոր է: Իսպանիայում ապրածս օրերից շատ եմ ունեցել, էստեղ կամ ուրիշ երկրներում, ու դեռ շատ եմ ունենալու: Գիտես, երևի իրոք պետք է ուրիշ բանից խոսենք, թե չէ կսկսեմ ինքս ինձ մեղադրել, որ իմ կարոտով ձանձրացնում եմ քեզ:

– Իսկ Հռոմո՞ւմ:

– Դու քո կյանքից դեռ մի բան անգամ չես ասել, Ջուլիա:

– Քսան տարվա մասին պատմելը հեշտ չէ...

– Դու լսեցի՞ր ինձ, Ջուլիա:

– Չէ, էսօր չէ:

– Իսկ վա՞ղը:

– Վաղը՝ հա: Ես մեկին ունեմ Նյու Յորքում...

– Լո՞ւրջ է:

– Մենք պետք է ամուսնանայինք... անցած շաբաթ օրը:

– Պե՞տք է:

– Հա: Ստիպված եղանք չեղարկել:

– Նրա՞ պատճառով, թե՞ քո:

– Հորս...

– Հաստատ նա հիվանդություն ունի... Հետո՞, ապագա ամուսնուդ ծնոտն է՞լ փշրեց,– ծիծաղեց Թոմասը:

– Չէ, էս անգամ ամեն ինչ ավելի անսպասելի էր:

– Ցավում եմ...

– Ցավելու կարիք չկա, բայց քեզ մեղադրել էլ չեմ կարող,– մրմնջաց Ջուլիան:

– Չէ, հեչ դեմ չէի լինի, որ նշանածիդ քիթ-բերանը ջարդած լիներ... Հիմա անկեղծ ափսոսում եմ ասածիս համար...

Ջուլիան չկարողացավ ծիծաղը պահել ու սկսեց քրքջալ:

– Ի՞նչն էր ծիծաղելու:

– Մենակ դեմքդ տեսնեիր,– շարունակեց Ջուլիան,– ասես երեխա լինես, որին բռնացրել են պահարանից ելակի մուրաբան թռցնելուց: Հիմա ավելի լավ եմ հասկանում, թե ինչու էի ոգևորվել քեզանով իմ կերպարները ստեղծելիս: Մենակ դու կարող ես նման դեմք ընդունել: Վա՛խ, ոնց էի քեզ կարոտել...

– Հերիք կրկնես, Ջուլիա:

– Ինչո՞ւ:

– Որովհետև անցած շաբաթ պետք է ամուսնանա-յիր:

Սրճարանի տերը, մի մեծ սկահակ ձեռքին, մոտեցավ նրանց սեղանին:

– Ձեզ երջանկացնելու տարբերակ եմ գտել,– ուրախ ասաց նա,– թարմ կանաչիով համեմված սոուսով լեզ-վաձկները խորոված բանջարեղենի հետ շատ արագ կբացեն ձեր ախորժակը: Դե, գնամ պատրաստեմ:

– Կներես,– պատասխանեց Թոմասն ընկերոջը,– բայց վեր ենք կենում, հաշիվը բեր, խնդրում եմ:

– Ի՞նչ ես ասում: Չգիտեմ, թե արանքներովդ ինչ կա-տու անցավ մի քանի րոպեում, բայց բացառվում է, որ գնաք առանց իմ ճաշից համտեսելու: Այնպես որ, մի քիչ էլ կռվեք, ինչ մտքներիդ կա՝ իրար ասեք, իսկ ես գնամ այդ երկու սիրունիկներին պատրաստեմ. դուք հաստատ կբարիշեք իմ ձկան շնորհիվ: Օ,՛ ոչ, առարկություններ չեմ ընդունում:

Սրճարանի տերը, աչքը Ջուլիայից ու Թոմասից չկտրելով, հեռացավ դեպի խոհանոց՝ ձկները պատրաս-տելու:

– Ոնց որ թե ճար չունես, ստիպված ես ինձ մի քիչ էլ դիմանալ, թե չէ ընկերդ կգազազի,– ասաց Ջուլիան:

– Ոնց որ թե ճիշտ ես,– ժպիտը թաքցնելով՝ պատաս-խանեց Թոմասը,– կներես, ես չպետք է...

– Հերիք ներողություն խնդրես, քեզ սազական չի: Փորձենք ուտել, հետո գնանք քայլելու. շատ եմ ուզում հետդ ման գալ: Իրավունք ունեմ, չէ՞:

– Այո,– պատասխանեց Թոմասը,– բա է՞ս անգամ հայրդ ոնց խանգարեց ամուսնությանդ:

– Հետո, հիմա արի քեզնից խոսենք:

Թոմասը կցկտուր պատմեց իր կյանքի վերջին քսան տարուց, Ջուլիան էլ՝ իր: Ընթրիքի վերջում սրճարանի տերը նրանց պարտադրեց փորձել իր շոկոլադի սուֆլեն. հատուկ իրենց համար էր պատրաստել, մատուցեց երկու գդալով, բայց Ջուլիան ու Թոմասը մի գդալով կերան:

Երբ դուրս եկան, արդեն ուշ գիշեր էր, ու վերադարձան պուրակով: Լիալուսինը լողում էր լճակի մեջ, որտեղ, կամրջակին կապված, մի քանի նավակ էր ճոճվում...

Ջուլիան Թոմասին մի չինական լեգենդ պատմեց: Թոմասը պատմեց իր ճամփորդությունների մասին՝ բաց թողնելով պատերազմի թեմաները, Ջուլիան պատմեց Նյու Յորքից, իր աշխատանքից, Սթենլիից, բայց ոչ մի բառ ապագայի իր ծրագրերից:

Նրանք դուրս եկան պուրակից ու քայլեցին քաղաքով: Ջուլիան կանգ առավ մի հրապարակում:

– Հիշո՞ւմ ես,– հարցրեց նա:

– Իհարկե, հենց էստեղ՝ ամբոխի մեջ գտանք Քնապին: Ի՜նչ ուրիշ գիշեր էր: Ի՞նչ եղան երկու ֆրանսիացի ընկերներդ:

– Երկար ժամանակ է, ինչ չենք շփվել: Մաթիասը գրադարանավար է, Անտուանը՝ ճարտարապետ: Մեկն ապրում է Փարիզում, մյուսը՝ ոնց որ թե Լոնդոնում:

– Ամուսնացե՞լ են:

– Բաժանվել էլ են հասցրել՝ ըստ վերջին տվյալների:

– Տես, է,– բացականչեց Թոմասը՝ մատնացույց անելով սրճարաններից մեկի ցուցափեղկը,– միշտ էստեղ էինք գալիս Քնապին տեսնելու:

– Գիտե՞ս, ես ի վերջո գտա էն թիվը, որի պատճառով անընդհատ կռվում էիք:

– Ի՞նչ թիվ:

– Շտազիի հետ համագործակցող և նրանց տեղեկություն տվող Արևելքի բնակիչների թիվը: Երկու տարի առաջ եմ պարզել, գրադարանում, երբ Պատի փլուզման մասին մի հոդված էի աչքի անցկացնում:

– Երկու տարի առաջ դեռ հետաքրքրվում էիր նման լուրերո՞վ:

– Ընդամենը երկու տոկոսը. ու գիտես, դու պետք է հպարտանաս քո համաքաղաքացիներով:

– Տատս էդ երկու տոկոսի մեջ էր, ես գնացել ու արխիվում ուսումնասիրել եմ իմ գործը: Ես կասկածում էի, որ Քնապի թռչելու պատճառով մեկին պոչիս դրած կլինեն: Բայց որ սեփական տատս կարող էր ինձ հետևել... ժամերով կարդում էի մանրամասներ կյանքիս, արած-չարածներիս ու ընկերներիս մասին: Մանկության հիշողությունները թարմացնելու մի տեսակ տարօրինակ ձև էր,– հառաչեց Թոմասը:

– Եթե իմանայիր, թե ի՛նչ եմ ապրել վերջին օրերին... Երևի արել է քեզ պաշտպանելու համար, որ ձեռք չտան:

– Ես դա երբեք չեմ իմանա:

– Դրա համա՞ր ես փոխել անունդ:

– Հա, որ բոլոր կապերս խզեմ անցյալիս հետ ու նոր կյանք սկսեմ:

– Ես է՞լ էի էդ անցյալի մի մասը կազմում, որ ուզում էիր ջնջել:

– Հասանք քո հյուրանոց, Ջուլիա...

Ջուլիան բարձրացրեց գլուխը. «Brandenburger Hof»-ի ցուցանակը վառվում էր գլխավերևում: Թոմասը գրկեց նրան ու թախծոտ ժպտաց:

– Էստեղ ոչ մի ծառ չկա, հիմա էս պայմաններում ո՞նց քեզ հրաժեշտ տամ:

– Կարծում ես՝ մեզ մոտ ինչ-որ բան կստացվե՞ր:

– Ո՞վ գիտի...

– Չգիտեմ, թե ոնց հրաժեշտ տամ, Թոմաս, չգիտեմ էլ՝ ուզում եմ, թե չէ:

– Լավ էր, որ քեզ տեսա, Ջուլիա, կյանքը կարողանում է անակնկալներ մատուցել:

Ջուլիան գլուխը դրեց նրա ուսին:

– Հա, շատ լավ էր:

– Մենակ մի հարցիս չպատասխանեցիր, որն ինձ շատ է հուզում. Ջուլիա, դու երջանի՞կ ես:

– Արդեն էլ չէ,– պատասխանեց Ջուլիան:

– Իսկ, դո՞ւ, դո՞ւ ինչ ես մտածում, մեզ մոտ մի բան կստացվե՞ր,– հարցրեց Թոմասը:

– Երևի կստացվեր...

– Ուրեմն փոխվել ես:

– Ինչո՞ւ:

– Որովհետև առաջ, Ջուլիա, քեզ հատուկ սարկազմով կպատասխանեիր, որ մենք ֆիասկո կապրենք, որ դու չես դիմանա, եթե ես ծերանամ, չաղանամ, անընդհատ դրսերում լինեմ..

– Հա, բայց հիմա սովորել եմ խաբել...

– Այ, հիմա դու էն Ջուլիան ես, որին երբեք չեմ դադարել սիրել...

– Մի վստահելի ձև գիտեմ պարզելու համար՝ կստացվե՞ր, թե՞ չէ:

– Ի՞նչ ձև:

Ջուլիան ձգվեց ու համբուրեց Թոմասի շուրթերը: Համբույրը երկար էր, ինչպես համբույրն այն երկու դեռահասների, որոնց սերը մոռացնել էր տալիս աշխարհում ամեն ինչ: Նա բռնեց Թոմասի ձեռքն ու տարավ դեպի հյուրանոց: Դռնապանը նիրհում էր աթոռին նստած: Ջուլիան Թոմասին առաջնորդեց դեպի աստիճանները: Սեղմեց վերելակի կոճակը, ու նրանց համբույրը երկարեց, ձգվեց մինչև յոթերորդ հարկ:

Ինչպես ամենաթանկ ու գաղտնի հիշողություններում, նրանց մարմինները միաձուլվեցին՝ խառնվելով կրքից խոնավացած սավանների տամկությանը: Ջուլիան փակել էր աչքերը: Թոմասի ձեռքը մեղմ սահում էր նրա փորն ի վար, Ջուլիան երկու ձեռքով գրկել էր նրա պարանոցը: Նրա վառվող շուրթերն անհագուրդ շոյում էին Ջուլիայի ուսերը, պարանոցը, կրծքերի արանքի փոսիկը. Ջուլիան մատներով կառչել էր նրա մազերից: Ինչքան նրա լեզուն ներքև էր սահում, այնքան փոթորկվում էր հաճույքի օվկիանոսը՝ հարություն տալով աննկարագրելի հաճույքի հիշողություններին: Ոտքերը միահյուսվել էին, մարմիններն ընկղմվել մեկը մյուսի մեջ. աշխարհում էլ ոչինչ չէր կարողանա նրանց բաժանել: Շարժումներն անեղծ էին, երբեմն անճարակ, բայց միշտ շատ քնքուշ...

Րոպեները վերածվեցին ժամերի, և արևածագը նրանց բռնացրեց նվաղած, անկողնու ջերմությամբ պարուրված...

***

Հեռվում եկեղեցու զանգերը խփեցին ութ անգամ: Թոմասը վեր կացավ ու մոտեցավ պատուհանին: Ջուլիան նստեց անկողնում ու սկսեց նայեց նրա՝ լույսով ու ստվերով ողողված կերպարանքին:

– Ի՞նչ սիրուն ես դու,– շրջվելով՝ ասաց Թոմասը:

Ջուլիան ոչինչ չպատասխանեց:

– Բա հիմա՞...– մեղմ հարցրեց Թոմասը:

– Ես սոված եմ:

– Հավաքած պայուսակդ դրած է աթոռին:

– Ես թռչում եմ... առավոտյան,– կմկմալով պատասխանեց Ջուլիան:

– Տասը տարի փորձում էի քեզ մոռանալ, ու ոնց որ թե հաջողվել էր: Ինձ թվում էր, թե անցել եմ աշխարհի բոլոր

վախերի միջով, բայց սխալվում էի... Էս սենյակում էդ բոլոր վախերը քեզ նորից կորցնելու անսահման վախի դեմ ոչինչ են...

– Թոմաս...

– Ի՞նչ ես ուզում ասել, Ջուլիա, որ մեր արածը սխա՞լ էր: Գուցե: Երբ Քնապը խոստովանեց, որ քաղաքում ես, հանկարծ պատկերացրի, որ ժամանակը ջնջել է մեր՝ արևմուտքից եկած աղջկա ու արևելքցի տղայի միջև եղած բոլոր տարբերությունները: Ես հույս ունեի, որ տարիքը մեզ գոնե ինչ-որ բան սովորեցրած կլիներ: Բայց մեր կյանքի ուղղությունները, մեկ է, տարբեր են, ճիշտ չե՞մ:

– Ես նկարիչ եմ դարձել, դու՝ լրագրող, մենք իրականացրել ենք մեր երազանքը...

– Ոչ ամենակարևորը, համենայն դեպս՝ իմ դեպքում: Դու էդպես էլ չասեցիր, թե ինչու է հայրդ հարսանիքդ չեղարկել տվել: Կարո՞ղ է հիմա նորից մխրճվի սենյակ ու քիթ-բերանս ջարդի:

– Ես տասնութ տարեկան էի, Թոմաս, անչափահաս, ու նրան հետևելուց բացի, ուրիշ տարբերակ չունեի: Ինչ վերաբերում է հորս, նա մահացել է: Նրան թաղեցինք նույն օրը, երբ պետք է լիներ հարսանիքս... Հիմա արդեն գիտես պատճառը...

– Ցավում եմ նրա համար, քո համար, դժվար է...

– Ցավալն էլ անօգուտ է, Թոմաս...

– Ի՞նչ ես անում Բեռլինում:

– Շատ լավ գիտես՝ ինչ եմ անում, Քնապը հաստատ ամեն ինչ պատմել է: Նամակդ երեկ չէ առաջին օրն եմ ստացել, ավելի արագ չէի կարող հասնել...

– Ու չէիր կարող ամուսնանալ առանց համոզվելու, էդպես չէ՞:

– Էդքան չար մի եղիր, Թոմաս...

Թոմասը նստեց մահճակալի եզրին:

– Ես ընտելացել եմ մենակությանը. չես պատկերացնի՝ ինչ համբերություն պահանջվեց, Ջուլիա, ինչ դժվար էր: Ես աշխարհի չորս ծայրերում փնտրել եմ էն օդը, որը դու ես շնչել: Ասում են՝ իրար սիրող սրտերի մտքերն ի վերջո հանդիպում են, ու ես հաճախ քնելուց առաջ ինքս ինձ հարց էի տալիս՝ տեսնես դու երբեմն զգո՞ւմ էիր, որ մտածում եմ քո մասին, տեսնես դու մտածո՞ւմ էիր իմ մասին... Ես թռա Նյու Յորք, թափառում էի փողոցներով՝ հույսով՝ տեսնել քեզ, միաժամանակ սարսափելով էդ հանդիպումից: Հազար անգամ թվացել է, թե տեսնում եմ քեզ, ու ամեն անգամ, երբ քեզ նման մեկին տեսնում էի, սիրտս ասես կանգ էր առնում, ընկնում անդունդը: Ես ինձ երդվել էի էլ երբեք, երբեք չսիրել, չսիրել նույն սիրով, էդ խենթություն էր, աներևակայելի ինքնահրաժարում: Ժամանակն անցավ, մենք էլ մեր ժամանակն ենք բաց թողել, չե՞ս կարծում: Ինքնաթիռ նստելուց առաջ դու քեզ էդ հարցը տվե՞լ ես, Ջուլիա:

– Հերիք է, Թոմաս, մի փչացրու ամեն ինչ: Ի՞նչ ես ուզում ասել: Օր ու գիշեր աչքս երկնքին է եղել, ես վստահ էի, որ դու էնտեղից հետևում ես ինձ... Էնպես որ՝ ոչ, ես ինձ նման հարց չեմ տվել ինքնաթիռ նստելուց առաջ:

– Ո՞ւ: Հիմա ի՞նչ ես առաջարկում, ընկերնե՞ր մնանք: Ամեն Նյու Յորք գալուցս զանգե՞մ քեզ: Կգնանք մի-մի բաժակ կխմենք՝ ի հիշատակ մեր լավ օրերի, որոնց մասին խոսելն արգելված է: Դու ցույց կտաս երեխաներիդ նկարները, որոնք մերը չեն, մեր ընդհանուրը չեն: Կասեմ, որ քթիցդ թռած են՝ փորձելով նրանց դիմագծերում հոր հետ ընդհանուր ոչ մի բան չտեսնել, հա՞: Իսկ հիմա, երբ մտնեմ լողասենյակ, վերցնելու ես հեռախոսդ, որ զանգես ապագա ամուսնուդ. ջուրը բաց թողնե՞մ, որ

չլսեմ, թե ոնց ես ասում՝ բարև, սերս... Նա գիտի՞, որ դու Բեռլինում ես:

– Հերիք է...– գոռաց Ջուլիան:

– Ի՞նչ ես ասելու նրան, երբ հետ գնաս,– դեպի պատուհանը դառնալով՝ հարցրեց Թոմասը:

– Գաղափար չունեմ...

– Տեսար, ես ճիշտ էի, դու չես փոխվել:

– Չէ՛, Թոմաս, փոխվել եմ, բայց հերիք է ճակատագիրը մի նշան տար, որ գայի, հասնեի էստեղ ու հասկանայի, որ զգացմունքներս նույնն են մնացել...

Ներքևում՝ փողոցում, Էնթոնին հետ ու առաջ էր անում՝ աչքը ժամացույցից չկտրելով: Արդեն երեք անգամ բարձրացրել էր գլուխն ու նայել աղջկա պատուհաններին, ու նույնիսկ յոթերորդ հարկից երևում էր դեմքից կաթող անհամբերությունը:

– Կհիշեցնե՞ս, հայրդ ե՞րբ էր մեռել,– հարցրեց Թոմասը՝ քաշելով վարագույրը:

– Արդեն ասացի, անցած շաբաթ օրը թաղումն էր:

– Լավ, էլ բան մի ասա: Դու ճիշտ ես, արի չփչացնենք էս գիշերվա հիշողությունները: Չի լինում սիրել մեկին ու խաբել:

– Բայց ես չեմ խաբում...

– Պայուսակդ պատրաստ է, վերցրու ու վերադարձիր տուն,– շշնջաց Թոմասը:

Նա վրան քաշեց շալվարը, վերնաշապիկը, բաճկոնը, նույնիսկ կոշիկների կապերը չկապեց: Մոտեցավ Ջուլիային, բռնեց ձեռքը, քաշեց դեպի իրեն ու ամուր գրկեց:

– Երեկոյան թռնում եմ Մոգադիշո, արդեն գիտեմ, որ էնտեղ մենակ քո մասին եմ մտածելու: Չանհանգստանաս, չփոշմանես... Եթե իմանաս՝ քանի՛-քանի անգամ եմ երազել ապրել էս վայրկյանները, մազերդ չեն հերիքի հաշվելու համար. էս վայրկյանները հրաշք էին, իմ սեր:

Մի անգամ, գեթ մի անգամ էլ քեզ էդպես դիմելը երազանք էր, որ չէի համարձակվում երազել: Դու միշտ եղել ես ու կմնաս իմ կյանքի ամենագեղեցիկ կինը, նա, ով ինձ պարգևել է իմ կյանքի ամենաչքնաղ պահերը. էդ արդեն ամեն ինչ արժե: Մենակ մի բան եմ քեզ խնդրում. Զուլիա, երդվիր, որ երջանիկ կլինես...

Թոմասը քնքշորեն համբուրեց Զուլիային ու գնաց առանց հետ նայելու:

Հյուրանոցից դուրս գալով՝ նա մոտեցավ մեքենայի մոտ սպասող Էնթոնիին:

– Ձեր աղջիկը շուտով կմոտենա,– ասաց նա ողջունելով:

Եվ անհետացավ փողոցում:

## 21

Բեռլինից Նյու Յորք Զուլիան և Էնթոնին ոչ մի բառ չփոխանակեցին: Ընդամենը մի քանի անգամ կրկնեց՝ «Ոնց որ թե հերթական անխելքությունն արեցի», որի իմաստը Զուլիան այդպես էլ չհասկացավ: Տեղ հասան կեսօրին, Մանհեթենում անձրևում էր:

– Լսիր, Զուլիա, վերջապես մի բան ասա,– ընդվզեց Էնթոնին՝ մտնելով Հորացիո փողոցի բնակարանը:

– Ոչ,– պատասխանեց Զուլիան՝ ցած դնելով ուղեբեռը:

– Երեկոյան հանդիպեցի՞ր նրան:

– Ոչ:

– Ասա ինձ, ի՞նչ է եղել: Կարող է՝ մի խելոք բան ասեմ:

– Դո՞ւ: Հաստատ մի անխելք խորհուրդ կտաս:

– Էլ պնդաճակատություն մի արա, հինգ տարեկան չես, ու ինձ քսանչորս ժամ է մնացել:

– Թոմասին չեմ տեսել ու գնում եմ լողանամ: Վերջ:

Էնթոնին կանգնեց դռան մեջ՝ փակելով Ջուլիայի ճանապարհը:

– Հիմա ինչ, կյանքիդ հաջորդ քսան տարին պատրաստվում ես անցկացնել լոգասենյակո՞ւմ:

– Մի կողմ քաշվիր:

– Քանի չես պատասխանել, չեմ քաշվի,– պնդեց Էնթոնին:

– Ուզում ես իմանալ՝ ի՞նչ եմ պատրաստվում անել, հա՞: Փորձելու եմ հավաքել իմ կյանքի փշրված կտորները, որ դու մեկ շաբաթում կարողացար ցիրուցան անել: Չեմ կարծում՝ լրիվ կհավաքեմ, որովհետև մի ամենակարևոր կտոր միշտ կպակասի, ու խնդրում եմ, էնպիսի դեմք մի ընդունի, ասես ոչ մի բան չես հասկանում. ամբողջ ճանապարհին դու քեզ մեղադրել ես:

– Ես մեր ճանապարհորդության մասին չեմ խոսում:

– Բա ինչի՞:

Էնթոնին չպատասխանեց:

– Ուրեմն ճիշտ եմ գլխի ընկել,– ասաց Ջուլիան:– Լա՛վ, ուրեմն վազեմ, վրաս քաշեմ ունեցածս ամենասեքսի, ժանեկազարդ կրծկալն ու կախակապերս, զանգեմ Թոմասին ու թռչեմ, մտնեմ ծոցը: Ու եթե կարողանամ ոնց որ պետքն է խաբել, ոնց որ սովորել եմ էս վերջերս հետդ շփվելով, երևի թե համաձայնի, որ նստենք ու քննարկենք մեր հարսանիքի մանրամասները:

– Ինչ ասեցի՞ր, Թոմա՞ս:

– Ի՞նչ:

– Դու ոնց որ թե Ադամի հետ էիր պատրաստվում ամուսնանալ, հենց նոր բերանիցդ սխալ բան թռցրիր...

– Մի կողմ քաշվիր, թե չէ կսպանեմ,– ճչաց Ջուլիան:

– Իզուր ժամանակ մի կորցրու, ես արդեն մեռած եմ: Ու եթե կարծում ես, որ քո սեռական կյանքի

մանրամասներով ինձ շոկի մեջ ես գցելու, չարաչար սխալվում ես, սիրելիս:

– Հենց հասնեմ Ադամին,– հորը խեթ-խեթ նայելով՝ շարունակեց Ջուլիան,– դեմ կտամ պատին, շորերը վրայից կպոկեմ...

– Հերիք է,– գոռաց Էնթոնին,– մանրամասները պետք չեն,– ավելացրեց նա՝ իրեն հավաքելով:

– Հիմա կթողնե՞ս գնամ լողանամ:

Էնթոնին աչքերը ճակատը թռցրեց ու մի կողմ քաշվեց: Հետո ականջը դրեց դռանն ու լսեց, որ Ջուլիան զանգում է:

Օ՛, ոչ, պետք չէ անհանգստացնել Ադամին, եթե նա հանդիպման է, ընդամենը պետք է զգուշացնել, որ նշանածն արդեն վերադարձել է Նյու Յորք: Եթե երեկոյան ազատ է, կարող է գալ իր հետևից ժամը ութին, ներքևում կսպասի: Եթե ոչ, ոչինչ, կարևորը՝ իմանա, որ եկել է:

Էնթոնին մատների ծայրերի վրա վերադարձավ հյուրասենյակ ու տեղավորվեց բազմոցին: Վերցրեց հեռավահանակը, որ հեռուստացույցը միացնի, բայց իսկույն նկատեց, որ սխալ բան է վերցրել: Նա ուսումնասիրեց սպիտակ կոճակով տուփիկն ու ժպտալով դրեց կողքին:

Մոտ տասնհինգ րոպե անց Ջուլիան հայտնվեց՝ անջրանցիկ թիկնոցն ուսերին գցած:

– Տե՞ղ ես գնում, աղջիկս:

– Աշխատանքի:

– Շաբաթ օրո՞վ: Էս եղանակի՞ն:

– Գրասենյակում միշտ լիքը մարդ կա, ես էլ նամակներին պետք է պատասխանեմ:

Ջուլիան պատրաստվում էր դուրս գալ, երբ Էնթոնին նրան ձայն տվեց:

– Ջուլիա՞:

– Հիմա ի՞նչ:

– Քանի դեռ կյանքիդ ամենամեծ հիմարությունը չես արել, ուզում եմ իմանաս, որ Թոմասը քեզ շատ է սիրում:

– Ի՞նչ գիտես:

– Մենք առավոտյան հանդիպել ենք, նա շատ քաղաքավարի բարևեց հյուրանոցից դուրս գալուց: Կարծում եմ՝ նա պատուհանից տեսել էր ինձ:

Զուլիան հայացքով շանթահարեց հորը:

– Չքվիր, տուն գամ՝ հետքդ չերևա:

– Ո՞ւր գնամ, ձեղնահա՞րկ:

– Ոչ, գնա քո տուն,– բացականչեց Զուլիան՝ դուռը հետևից շրխկացնելով:

***

Էնթոնին վերցրեց մուտքի դռան մոտ կախված անձրևանոցն ու դուրս եկավ փողոց նայող պատշգամբ: Բազրիքին հենվելով՝ նայեց դեպի խաչմերուկ հեռացող Զուլիայի հետևից: Հենց վերջինս անհետացավ տեսադաշտից, նա մտավ դստեր սենյակ:

Հեռախոսը դրված էր զարդասեղանին: Էնթոնին վերցրեց լսափողն ու սեղմեց ավտոմատ զանգի կոճակը:

Նա հեռախոսավարուհուն ներկայացավ որպես օրիորդ Զուլիա Ուելշի օգնական: Իհարկե, նա գիտի, որ օրիորդ Ուելշը հենց նոր զանգել էր, և որ Ադամը զբաղված էր: Ամեն դեպքում նա մի շատ կարևոր բան ունի փոխանցելու Ադամին. Զուլիան նրան ավելի շուտ կսպասի, ժամը վեցին, և ոչ թե ներքևում, այլ տանը, քանի որ անձրևում է: Օ, այո, քառասունհինգ րոպեից, և դա հաշվի առնելով՝ ճիշտ կլինի հենց հիմա զգուշացնել Ադամին: Զուլիային զանգահարել պետք չէ, նրա հեռախոսը նստել էր, ինքն էլ դուրս է եկել մի քանի գնումներ կատարելու: Էնթոնին հեռախոսավարուհուց երկու

անգամ ազնիվ խոսք կորզեց, որ հաղորդագրությունը անհապաղ կփոխանցի և յուրահատուկ գոհ դեմքով ու ժպիտով անջատեց հեռախոսը:

Խոսակցությունը վերջացնելով՝ դուրս եկավ սենյակից, հարմար տեղավորվեց բազկաթոռում ու սկսեց ակնդետ նայել բազմոցին դրված հեռավահանակին:

***

Զուլիան պտտեց աշխատանքային աթոռն ու միացրեց համակարգիչը. նամակները սկսեցին ծնգծնգալով հայտնվել էկրանին: Նա մի արագ հայացք նետեց աշխատասեղանին դարսված ծրարների կույտին. հեռախոսի սկավառակին թարթում էր չպատասխանած զանգերի կարմիր լույսը:

Նա գրպանից հանեց բջջայինն ու զանգեց իր ամենամոտ ընկերոջը:

– Շա՞տ մարդ կա խանութում, Սթեն,– հարցրեց նա:

– Հաշվի առնելով եղանակը՝ մուկ եմ տշում, ամբողջ օրս փչացավ:

– Հա, գիտեմ, ես էլ լրիվ թրջվել եմ:

– Յա՛, վերադարձե՞լ ես, սիրելիս,– բացականչեց Սթենլին:

– Մի ժամ կլինի արդեն:

– Բա ինչո՞ւ ավելի շուտ չէիր զանգել:

– Կփակե՞ս խանութդ, որ սիրելիիդ հանդիպես «Պաստիսում»:

– Մի բաժակ թեյ պատվիրիր... չէ, չէ, կապուչինո... կամ ավելի լավ է՝ դու որոշիր: Վազում եմ:

Տասը րոպե անց Սթենլին հասավ Զուլիային, որը հին սրճարանի սրահի խորքում նստած՝ նրան էր սպասում:

– Ծեծված շան տեսք ունես,– նրան գրկելով՝ ասաց Զուլիան:

– Քո տեսքն ավելի լավը չէ: Ի՞նչ ես պատվիրել,– նստելով՝ հարցրեց Սթենլին:

– Կրոկետներ:

– Մի երկու թարմ բամբասանք ունեմ՝ ով ում հետ է քնել էս շաբաթ, բայց ավելի շատ ուզում եմ իմանամ, թե դու ոնց ես, ջանիկս: Արի գուշակեմ. դու հաստատ տեսել ես Թոմասին, քանի որ էս երկու օրը քեզանից ձենծպտուն չկար, ու դեմքիցդ դատելով՝ ամեն ինչ վատ է վերջացել:

– Ես ուրիշ բան չէի էլ ակնկալում...

– Սուտասան:

– Եթե երբևէ ուզել ես ժամանակ անցկացնել իսկական տխմարի հետ, ուրեմն օգտվիր առիթից, նա դիմացդ նստած է...

Ջուլիան պատմեց համարյա ամեն ինչ. արհմիությունն այցելության, Քնապի առաջին ստի, Թոմասի երկանվանության պատճառների, ցուցահանդեսի, դռնապանի կողմից վերջին վայրկյանին պատվիրած մեքենայի մասին: Երբ սկսեց պատմել, թե ինչ կոշիկներ է հագել երկար, երեկոյան զգեստի հետ, Սթենլին, ցնցված, թեյի բաժակը մի կողմ հրեց ու սպիտակ, չոր գինի պատվիրեց: Դրսում անձրևը սաստկացել էր: Հետո հերթը հասավ այցելությանը Արևելյան Բեռլին, փողոցին, որտեղ հին տներն այլևս չկային, փրկված բարի հնաոճ կահավորմանը, Թոմասի մանկության ընկերոջ հետ ունեցած խոսակցությանը, խելահեղ վազքին դեպի օդանավակայան, Մարինային, ու վերջապես, քանի դեռ Սթենլին գիտակցությունը չէր կորցրել, պատմեց Թիրգարթենում Թոմասի հետ հանդիպման մասին: Վերջում խոսեց ռեստորանից, որի պատշգամբում նրանց մատուցեցին աշխարհի ամենահամեղ ձուկը, թեև ափսոս, որ մի քանի կտոր կարողացան ուտել, լճակի շուրջը

գիշերային զբոսանքից, հյուրանոցի սենյակից, որտեղ վերջին գիշերը սիրով են զբաղվել, ու վերջապես հաջորդ առավոտվա նախաճաշից, որն այդպես էլ չկայացավ: Երբ մատուցողը երրորդ անգամ մոտեցավ նրանց՝ հարցնելու, թե ինչի կարիք ունեն, Սթենլին պատառաքաղով նրան սպառնաց, որ էլ չմոտենա:

– Պետք է եկած լինեի հետդ, Ջուլիա,– ասաց նա:– Եթե մտքովս անցներ, որ նման արկածներ ես ունենալու, սիրելիս, քեզ երբեք մենակ չէի թողնի:

Ջուլիան անխոնջ, գդալով խառնում էր թեյը: Սթենլին ուշադիր նայեց նրան ու բռնեց ձեռքը:

– Ջուլիա, դու շաքարով չես խմում... ոնց որ մի քիչ ցրված լինես..

– «Մի քիչ»-ն ավելորդ էր...

– Ամեն դեպքում, վստահեցնեմ քեզ, սիրելիս, չեմ կարծում, որ նա վերադառնա էդ Մարինայի մոտ, հավատա իմ փորձին:

– Ի՞նչ փորձ,– հարցրեց Ջուլիան ժպտալով:– Ինչ էլ լինի, հիմա Թոմասը Մոգադիշո թռչող ինքնաթիռի մեջ է...

– Մենք էլ Նյու Յորքում ենք, անձրևի տակ,– ասաց Սթենլին՝ նայելով ապակիները թմբկահարող անձրևին:

Մի քանի անցորդ պատսպարվել էին պատշգամբի ծածկի տակ: Մի տարեց պարոն ամուր գրկել էր կնոջը՝ ասես հեղեղից ավելի լավ պաշտպանելու համար:

– Ես պետք է կյանքս դասավորեմ, ինչքան որ դա հնարավոր է,– շարունակեց Ջուլիան:– Կարծում եմ, դա միակ խելամիտ բանն է հիմա:

– Դու ճիշտ էիր, ես հիմա իսկական տխմարի հետ եմ խմում: Բախտդ բերել է, որ մի անգամ կյանքիդ մեջ աննկարագրելի խառնաշփոթ է մտել, իսկ դու ուզում ես ամեն ինչ կարգի՞ բերել: Դու լրիվ անխելք ես, սիրելիս:

Աղաչում եմ, հենց հիմա աչքերդ սրբիր, էսօրվա անձրևը մեզ հերիք է, հիմա լացելու ժամանակը չէ, ես դեռ շատ հարցեր ունեմ տալու...

Ջուլիան ձեռքով սրբեց աչքերը և նորից ժպտաց Սթենլիին:

– Ի՞նչ ես ասելու Ադամին,– շարունակեց Սթենլին,– ես արդեն մտածում էի նրան իմ հովանու տակ վերցնել, եթե դու չվերադառնայիր: Նա վաղն ինձ հրավիրել է քաղաքից դուրս՝ ծնողների տուն: Հա, ու տես, զգուշացնում եմ, բերանիցդ չթռցնես, ասել եմ, որ վաղը գնալու եմ գաստրոէնտերոլոգի մոտ:

– Կասեմ միայն էն ճշմարտությունը, որը նրան քիչ ցավ կպատճառի:

– Սիրո մեջ ամենաշատ ցավը պատճառում է անազնվությունը: Ուզո՞ւմ ես գոնե մի անգամ էլ փորձել:

– Երևի. ասածս քեզ զզվելի կթվա, բայց ես էլ մենակ մնալու ուժ չունեմ...

– Ուրեմն նա կփափկի, վաղ թե ուշ կփափկի:

– Ես ամեն ինչ կանեմ, որ նա թեթև տանի...

– Կարո՞ղ եմ քեզ մի շատ անձնական հարց տալ:

– Իհարկե, ես քեզնից թաքուն բան չունեմ:

– Գիշերը Թոմասի հետ... ինչպիսի՞ն էր:

– Քնքուշ, քաղցր, կախարդական, իսկ առավոտյան՝ տխուր:

– Սեքսից եմ հարցնում, սիրելիս:

– Քնքուշ, քաղցր, կախարդական...

– Ու դու ուզում ես ինձ հավատացնել, որ չես հասկանում, թե ու՞ր ես...

– Նյու Յորքում եմ, Ադամն էլ է էստեղ, իսկ Թոմասը, ավաղ, շատ հեռու է...

– Կարևորը, սիրելիս, ոչ թե էն է, թե որ քաղաքում կամ աշխարհի որ ծայրում է գտնվում մյուսը, այլ թե ինչ տեղ

ունի նա քո կյանքում ու քո սրտում: Սխալները կարևոր չեն, ջանիկս, կարևոր է միայն էն, ինչ մենք ապրում ենք:

***

Ադամը հորդ անձրևի տակ դուրս եկավ տաքսուց: Ջրանցքները լցված էին: Նա ցատկեց մայթին ու անհամբեր սեղմեց դոմոֆոնի զանգը: Էնթոնի Ուելշը վեր թռավ բազկաթոռից:

– Լավ, լավ, մի րոպե, եկա,– մռթմռթաց նա՝ սեղմելով ներքևի դուռը բացող կոճակը:

Աստիճանների վրա լսվեց քայլերի ձայնը. Էնթոնին լայն ժպիտով դիմավորեց իր այցելուին:

– Պարոն Ուո՞լշ,– ապշահար բացականչեց վերջինս՝ մի քայլ ընկրկելով:

– Ադա՛մ, որ քամին է ձեզ բերել:

Ադամը պապանձված կանգնած էր մնացել սանդղահարթակին:

– Խոսելու ընդունակությունը կորցրի՞ք, բարեկամս:

– Բայց դուք մահացել եք,– կմկմաց նա:

– Օ՛, մի եղեք այդքան դաժան: Ես գիտեմ, որ մենք իրար առանձնապես չենք սիրել, բայց դա, մեկ է, պատճառ չէ ինձ գերեզման ուղարկելու համար:

– Բայց չէ՞ որ ես եղել եմ գերեզմանոցում ձեր թաղման օրը,– քրթմնջաց Ադամը:

– Դե բավ է, արդեն չափն անցնում եք: Լավ, ամբողջ երեկո չենք մնալու այստեղ գամված, ներս եկեք, ձեր երեսին գույն չկա:

Ադամը մտավ հյուրասենյակ: Էնթոնին նրան նշան արեց հանել մակինտոշը, որի վրայից ջուրը հոսում էր:

– Ներողություն եմ խնդրում համառության համար,– ասաց նա՝ անձրևանոցը կախիչին գցելով,– զարմանքս

ձեզ համար պարզ պետք է լինի. չէ՞ որ իմ հարսանիքը չեղարկվեց ձեր թաղման պատճառով:

– Մի քիչ էլ աղջկաս հարսանիքն էր, այդպես չէ՞:

– Միայն չասեք, որ նա այս ամբողջ պատմությունը հնարել է որպեսզի...

– Ձեզ թողնի՞: Այդքան մի կարևորեք ձեզ, Ադամ: Իհարկե, մեր ընտանիքի անդամների երևակայությունը լավ է զարգացած, բայց դուք էլ վատ եք ճանաչում Ջուլիային, եթե մտածում եք, որ նա կարող էր այդպիսի անհեթեթ քայլի դիմել: Վստահ եղեք, որ ուրիշ պատճառաբանություն կա, ու եթե դուք մի քանի րոպե սուս մնաք, ես կարող եմ մեկը կամ նույնիսկ մի քանիսն ասել:

– Որտե՞ղ է Ջուլիան,– հարցրեց Ադամը:

– Արդեն քսան տարի է, ինչ աղջիկս դադարել է իր տեղաշարժերի մասին ինձ տեղյակ պահել: Ճիշտն ասած՝ ես կարծում էի, որ ձեզ հետ է: Մենք Նյու Յորք ենք վերադարձել մոտ երեք ժամ առաջ:

– Դուք միասի՞ն էիք ճամփորդում:

– Իհարկե, նա, ի՞նչ է, ձեզ չի ասե՞լ:

– Երևի չի ցանկացել՝ հաշվի առնելով, որ մենք միասին դիմավորեցինք ձեր աճյունը Եվրոպայից բերող ինքնաթիռն ու դագաղն ուղեկցեցինք գերեզմանոց,– ենթադրեց Ադամը:

– Գնալով ճոխացնում եք... Էլ ինչ հետաքրքիր բան կասեք: Գուցե հենց դո՞ւք եք սեղմել դիակիզման մեքենայի կոճակը:

– Ոչ, բայց մի բուռ հող նետել եմ ձեր դագաղի վրա:

– Շնորհակալություն, դուք անչափ հոգատար եք:

– Ինձ թվում է՝ ես հիմա կընկնեմ,– խոստովանեց Ադամը, որի դեմքն իրոք կանաչել էր:

– Ուրեմն նստեք, ի՞նչ եք հիմարի պես ոտքի վրա մնացել:

Էնթոնին մատնացույց արեց բազմոցը:

– Այ, այնտեղ նստեք, դուք դեռ մտածո՞ւմ եք, ուր նստեք, թե ինձ տեսնելուն պես ձեր բոլոր նյարդերը քայ-քայվեցին:

Ադամը հնազանդվեց: Նա թմփաց բարձի վրա, անհարմար նստեց հեռավահանակի սպիտակ կոճակի վրա, ու... Էնթոնին միանգամից անշարժացավ. աչքերը փակվեցին ու ամբողջ հասակով մեկ տապալվեց գորգի վրա՝ շանթահար Ադամի ոտքերի մոտ:

***

– Մտքովդ չանցավ, չէ՞, արևս, գոնե մի լուսանկար բերեիր,– հարցրեց Սթենլին:– Ո՞նց կուզեի տեսնել, թե ինչ տեսք ունի... Ինչ էշություն ասես դուրս եմ տալիս, որովհետև զզվում եմ, երբ էսպես անձայն նստում ես:

– Ինչո՞ւ:

– Արդեն էլ չեմ հասցնում գլխումդ պտտվող մտքերի հետևից հասնել:

Ջուլիայի պայուսակի միջից Գլորիա Գեյնորի «I will survive»-ը ընդհատեց նրանց խոսակցությունը:

Ջուլիան հանեց հեռախոսը և Սթենլիին ցույց տվեց Ադամի անունը էկրանին: Սթենլին թոթվեց ուսերը, ու Ջուլիան միացրեց հեռախոսը: Մյուս կողմից լսվեց փեսացուի սարսափած ձայնը:

– Մենք իրար բավական շատ բան ունենք ասելու, հատկապես դու: Բայց էդ հետո: Հայրդ հենց նոր կորցրեց գիտակցությունը:

– Այլ պարագայում ծիծաղելի կթվար, Ադամ, իսկ հիմա ասածդ ուղղակի լկտիություն է:

– Ես քո տանն եմ, Ջուլիա...

– Ի՞նչ գործ ունես իմ տանը,– կաթվածահար՝ հարցրեց Ջուլիան,– մենք մի ժամից էինք պայմանավորվել:

– Քո օգնականը զանգել ասել էր, որ դու ուզում ես հանդիպել ավելի շուտ:

– Օգնակա՞նս: Ի՞նչ օգնական:

– Ի՞նչ իմանամ: Քեզ ասում եմ՝ հայրդ պառկած է գետնին՝ սենյակի մեջտեղում, անշարժ: Հենց հիմա արի հասիր, ես զանգում եմ շտապօգնություն:

Զուլիան այնպես գոռաց, որ Սթենլին վեր թռավ:

– Ո՛չ, ոչ մի տեղ չզանգես: Գալիս եմ...

– Խելքդ թռցրի՞ր: Զուլիա, մեռա թափ տալով, կենդանության նշույլ չկա: Զանգում եմ 911:

– Ոչ մեկին չզանգես, լսո՞ւմ ես, հինգ րոպեից հասնում եմ,– պատասխանեց Զուլիան՝ տեղից վեր կենալով:

– Ո՞ւր ես:

– Տան մոտ՝ «Պաստիսում», փողոցն անցնում եմ ու բարձրանամ: Դու սպասիր, ոչ մի բան մի արա, ոչ մի բանի ձեռք մի տուր, ու նրան էլ հանկարծ ձեռք չտաս:

Սթենլին, կատարվածից բան չհասկանալով, շշնջաց, որ հաշիվն ինքը կփակի: Ու ընդամենը հասցրեց սրահով վազող Զուլիայի հետևից գոռալ, որ հետ զանգի, հենց որ ամեն ինչ հարթվի:

***

Զուլիան չորս-չորս վեր վազեց աստիճաններով ու ներս մտնելով՝ տեսավ հյուրասենյակի կենտրոնում անշարժ պառկած հորը:

– Ո՞ւր է հեռավահանակը,– աղմուկով ներս ընկավ Զուլիան:

– Ի՞նչ,– լրիվ անջատված հարցրեց Ադամը:

– Փոքրիկ տուփիկի պես մի բան, երկարավուն, վրան մի հատ կոճակ. հեռավահանակ, դեռ գլխի չընկա՞ր,– հարցրեց նա՝ հայացքով զննելով սենյակը:

– Հայրդ ուշաթափված ընկած է, դու հեռուստացո՞ւյց ես ուզում նայել: Զանգեմ շտապօգնություն, թող երկու մեքենա ուղարկեն...

– Ինչ-որ բանի՞ ես ձեռք տվել, Ադամ: Ի՞նչ է եղել,– հարցնում էր Ջուլիան՝ իրար հետևից բացել-փակելով բոլոր դարակները:

– Ոչ մի բան չեմ արել՝ հորդ հետ խոսելուց բացի, որին թաղել էինք անցած շաբաթ: Էս քո համար տարօրինակ չի՞:

– Ավելի ուշ, Ադամ, հումորներդ ավելի ուշ կանես, իսկ հիմա շտապել է պետք:

– Գժվե՞լ ես, ես հումոր չեմ անում: Թե չես ուզում բացատրել՝ ինչ է կատարվում, գոնե ասա, որ երազ եմ տեսնում, կարթնանամ, էս ամեն ինչը կվերջանա, ու ես ի սրտե կուրախանամ տեսածս մղձավանջի վրա...

– Սկզբում ես էլ էի էդպես մտածում: Գրողը տանի, ո՞ւր է...

– Ի՞նչը...

– Պապայի հեռավահանակը:

– Չէ, հաստատ զանգում եմ,– երդվեց Ադամը՝ ուղղվելով դեպի խոհանոցի հեռախոսը:

Ջուլիան, ձեռքերը պարզած, փակեց նրա ճանապարհը:

– Հիմա էլ ոչ մի քայլ չես անում, նստում ես ու մանրամասն պատմում, թե ինչ է եղել:

– Արդեն ասել եմ, Ջուլիա,– բարկացավ Ադամը,– հայրդ բացեց դուռը, կներես, բայց շշմեցի նրան տեսնելով, հետո ներս հրավիրեց՝ խոստանալով, որ կբացատրի, թե ինչ է կատարվում: Հետո կարգադրեց նստել, ու հենց նստեցի բազմոցին, նա, խոսքը բերանին, շրխկաց գետնին:

– Բազմո՛ցը... մի կողմ քաշվիր,– գոռաց Ջուլիան՝ հրելով Ադամին:

Նա սկսեց մոլեգնաբար մեկը մյուսի հետևից բարձրացնել բարձերը ու թեթևացած շունչ քաշեց, երբ վերջապես գտավ փնտրածը:

– Դու իսկականից գժվել ես,– վեր կենալով՝ փնթփնթաց Ադամը:

– Աղաչում եմ, աշխատիր, աղաչում եմ, աշխատիր,– Ջուլիան ձեռքն առավ վահանակը:

– Ջուլիա՛,– գոռաց Ադամը,– Աստված սիրես, կբացատրե՞ս վերջապես, թե ինչ խաղ ես խաղում:

– Սուս մնա,– արցունքները հազիվ զսպելով՝ բացականչեց Ջուլիան,– անիմաստ բաներ չասեմ, երկու րոպե համբերիր, կհասկանաս... Ու մինչև հասկանաս, մինչև էս աշխատի...

Ջուլիան մի աղերսող հայացք նետեց պատուհանից դուրս՝ երկնքին, փակեց աչքերն ու սեղմեց կոճակը:

– Տեսնում եք, սիրելի Ադամ, ամեն ինչ այնպես չէ, ինչպես մենք պատկերացնում ենք...– ասաց Էնթոնին՝ աչքերը բացելով ու միանգամից լեզուն կծեց՝ սենյակի մեջտեղում տեսնելով Ջուլիային: Նա հազաց ու վեր կացավ. Ադամը թուլացած տապալվեց ճիշտ տեղում հայտնված բազկաթոռի գիրկը:

– Գրողը տանի,– շարունակեց Էնթոնին,– ժամը քանի՞սն է: Արդեն ո՞ւթն է: Չհասկացա էլ, թե ոնց թռավ ժամանակը,– ձեռքերը տրորելով՝ ավելացրեց նա:

Ջուլիան հրացայտ հայացքով շանթեց նրան:

– Ես ձեզ մենակ կթողնեմ,– մի քիչ նեղսրտած ասաց Էնթոնին,– դուք հաստատ լիքը բան ունենք իրար ասելու: Լավ լսեք, թե ինչ է ասում Ջուլիան, թանկագին Ադամ, ուշադիր լսեք ու մի ընդհատեք: Սկզբում դժվար կլինի հասկանալ, բայց եթե լավ խորհեք, կհասկանաք,

որ ամեն ինչ պարզից էլ պարզ է: Հենց հիմա վերցնում եմ վերարկուս ու գնում:

Էնթոնին իջեցրեց կախիչից կախված Ադամի անջրանցիկ վերարկուն, մատների ծայրերին մոտեցավ պատուհանին, վերցրեց այնտեղ մոռացած անձրևանոցն ու դուրս եկավ:

***

Սկզբում Ջուլիան Ադամին ցույց տվեց սենյակի մեջտեղում դրված արկղը, հետո փորձեց բացատրել անբացատրելին: Հիմա արդեն Ջուլիան էր սպառված տապալվել բազկաթոռին, իսկ Ադամը հետ ու առաջ էր անում սենյակում:

– Դու իմ տեղն ի՞նչ կանեիր:

– Չգիտեմ, չը-գի-տեմ, ես չգիտեմ էլ, թե որն է իմ տեղը.... Դու մի շաբաթ խաբել ես ինձ, հիմա ուզում ես, որ հավատամ քո հեքիաթների՞ն:

– Ադամ, եթե հայրդ թաղման հաջորդ օրը թակեր դուռդ, եթե կյանքը քեզ մի քիչ ժամանակ էլ տար նրա հետ անցկացնելու համար, շատ քիչ՝ վեց օր, որ իրար ասեիք էն ամենը, ինչ երբեք չեք ասել, բացահայտեիք մանկության բոլոր գաղտնիքները, դու նման հնարավորություն բաց կթողնեի՞ր, թե՞ կընդունեիր ճանապարհորդության առաջարկը, նույնիսկ եթե դա աբսուրդների աբսուրդը թվար:

– Ես գիտեի՝ ատում ես հորդ, Ջուլիա:

– Ինձ էլ էր թվում, բայց ոնց տեսնում ես, Ադամ, հիմա երազում եմ մի քանի րոպե ավելի անցկացնել հետը: Ես նրա հետ մենակ իմ մասին եմ խոսում, մինչդեռ էնքան բան կար, որ կուզեի իմանալ նրա մասին, նրա կյանքից... Առաջին անգամ կարողացա նրան նայել չափահաս մարդու աչքերով՝ գրեթե ազատված իմ եսասիրությունից:

Ես հասկացա, որ հայրս լիքը թերություններ ունի. է, հա, ես էլ անթերի չեմ, բայց էդ չի նշանակում, որ ես նրան չեմ սիրում: Վերադառնալով տուն՝ ինքս ինձ ասեցի, որ եթե իմ երեխաներն էլ իմ հանդեպ նույն համբերատարությունը ցուցաբերեն, ուրեմն ես չեմ վախենա երեխաներ ունենալուց, ես արժանի կլինեմ դրան:

– Դու լրիվ միամիտ ես: Հայրդ ծնվածդ օրվանից ղեկավարել է կյանքդ, Ջուլիա, քո պատմածներն եմ ասում: Արի ենթադրենք, որ էս աբսուրդ պատմությունն իրականություն է, ուրեմն նա արել է անհավանականն ու նույնիսկ մահվանից հետո շարունակել ղեկավարել քեզ: Դու նրա հետ ոչ մի բան չես խոսել ու բացահայտել, նա մեքենա է, սիրելիս, մեքենա... Նրա բոլոր ասածները նախօրոք արված ձայնագրություններ են: Ո՞նց ես ախր ընկել էդ թակարդը, Ջուլիա: Դա ոչ թե երկխոսություն էր երկուսի միջև, այլ քո մենախոսությունը քեզ հետ... Դու ինքդ մտացածին կերպարներ ես հորինում, չէ՞, երեխաները խոսո՞ւմ են նրանց հետ: Իհարկե ոչ: Դու ընդամենը կանխագուշակում ես նրանց ցանկությունները, հորինում արտահայտություններ, որոնք նրանց կուրախացնեն, կհանգստացնեն: Հայրդ իր ձևով օգտագործել է նույն հնարքը: Նա մի անգամ ևս քեզ մանիպուլյացիայի է ենթարկել: Էդ մի շաբաթը, որ անցկացրել եք իրար հետ, ոչ այլ ինչ էր, քան վերամիավորման պարոդիա, նրա ներկայությունը՝ մի քանի օր տևած ցնորք... Ու դու, որ միշտ կարոտ ես մնացել նրա սիրուն, ընկել ես էդ թակարդը: Դա նրա առաջին հաջողությունը չէր, հիշիր մեր չկայացած հարսանիքը....

– Դե լավ, հա, Ադամ, ուզում ես ասել՝ հայրս մահացել է մենակ նրա համար, որ մեզ բաժանի՞...

– Ո՞ւր էիք էս շաբաթ, Ջուլիա:

– Հիմա ի՞նչ կարևոր է:

– Եթե չես ուզում խոստովանել, մի անհանգստացիր, Սթենլին արդեն ծակվել է: Մի նեղացիր նրանից, նա հարբած փլված էր: Միշտ ասել ես, որ նա լավ գինու գայթակղությանը չի դիմանում, ու ես ընտրեցի լավագույններից լավագույնը: Ես այն նույնիսկ Ֆրանսիայից բերել կտայի, որ քեզ վերագտնեի, որ հասկանայի, թե ինչու ես ինձնից հեռանում, որ հասկանայի, թե պե՞տք է արդյոք շարունակեմ սիրել քեզ: Ես կսպասեի հարյուր տարի, հարյուր տարի, Ջուլիա, որ մի օր կարողանայի ամուսնանալ քեզ հետ: Էսօր ես, անծայր դատարկությունից բացի, ուրիշ ոչինչ չեմ զգում....

– Թող բացատրեմ, Ադամ...

– Հա, փաստորեն հիմա կարո՞ղ ես բացատրել: Իսկ էն օ՞րը, երբ եկար գրասենյակ հայտարարելու, որ ճամփորդության ես գնում: Կամ էն օրը, երբ քիչ էր մնում հանդիպեինք Մոնրեալում, իսկ էն մյուս օրերը, երբ ես զանգում-զանգում էի, իսկ դու հեռախոսդ չէիր վերցնում, գրածներիս էլ չէիր պատասխանում... Դու որոշեցիր գնալ Բեռլին, որ գտնես քո անցյալի էն մարդուն, որ քեզ հանգիստ չի տալիս, ու ինձ ոչինչ չասեցիր: Ես ո՞վ էի քո համար, Ջուլիա, կյանքի երկու փուլերի միջև մոլորված մի ճամփորդ: Ապահով մեկը, ումից կառչել էիր հույսով, որ ինչ-որ մի օր կգա նա, ում դու երբեք չես դադարել սիրել:

– Էդպես մի ասա, Ադամ,– աղերսեց Ջուլիան:

– Իսկ եթե հենց հիմա նա թակի դուռը, ի՞նչ կանես:

Ջուլիան լուռ էր:

– Բա ե՞ս ինչ իմանամ, եթե դու ինքդ չգիտես:

Ադամն առաջացավ դեպի դուռը:

– Հորդ կամ նրա ռոբոտին կասես, որ վերարկուս նվիրում եմ իրեն:

Ադամը գնաց: Ջուլիան հաշվեց նրա քայլերն ու լսեց, թե ինչպես է ներքևում նրա հետևից փակվում դուռը...

***

Էնթոնին, ներս մտնելուց առաջ, զգույշ թակեց դուռը: Ջուլիան կպել էր պատուհանին, հայացքը փողոցին հառած:

– Ինչի՞ համար սարքեցիր էս շիլաշփոթը,– մրմնջաց նա:

– Ե՞ս, ես ոչինչ չեմ արել, պատահական ստացվեց,– պատասխանեց Էնթոնին:

– Հա՞... Ադամը պատահական եկավ էստեղ մի ժամ շուտ, պատահական բացեցիր դուռը, պատահական նստեց քո վահանակի վրա, ու դու լրիվ պատահական պառկեցիր գետնին՝ սենյակի մեջտեղում...

– Ընդունում եմ, որ պատահականությունների այս շղթան բավականին տարօրինակ է... Երևի պետք է հասկանանք, թե նշաններն ինչ են ասում...

– Հերիք կատակի տաս, հա, պապա, ծիծաղելու հավես ընդհանրապես չունեմ: Վերջին անգամ եմ հարցս տալիս, ինչի համար էր էս ամենը...

– Քեզ պետք էր օգնել խոստովանել իրականությունը՝ համ Ադամին, համ ինքդ քեզ: Չփորձես ասել, որ ավելի թեթևացած չես զգում քեզ հիմա... Թվում է, թե ավելի միայնակ, քան երբևէ, բայց գոնե հոգիդ հիմա խաղաղ է...

– Խոսքս մենակ էսօրվա մասին չէ:

Էնթոնին խոր շունչ քաշեց:

– Հիվանդության պատճառով մայրդ մինչև մահն էդպես էլ ինձ չճանաչեց, բայց գիտե՞ս, Ջուլիա, վստահ եմ, որ սրտի մի անկյունում նա միշտ հիշում էր, թե ինչքան շատ էինք մենք իրար սիրում: Ես երբեք չեմ մոռանա:

Մենք ոչ իդեալական զույգ ենք եղել, ոչ էլ լավ ծնողի էտալոն: Դե հիմա.... Հա, ունեցել ենք անվստահության րոպեներ, վիճել ենք, բայց երբեք, լսում ես, երբեք, երբեք կասկածի տակ չենք դրել մեր կյանքի ընտրությունը, մեր սերը քո հանդեպ: Նրա սերը նվաճելը, նրանից երեխա ունենալն իմ կյանքի ամենակարևոր, ամենահրաշալի ընտրությունն է եղել, նույնիսկ եթե ինձնից դարեր պահանջվեցին ճիշտ բառեր գտնելու և քեզ ասելու համար:

– Ու հանուն էդ մեծ սիրո՞ դու իմ կյանքը քարուքանդ արեցիր:

– Ջուլիա, հիշո՞ւմ ես՝ ճամփորդության ժամանակ քեզ պատմեցի մի թղթի կտորի մասին: Կան թղթի կտորներ, որ մարդիկ միշտ մոտներն են պահում՝ դրամապանակի մեջ, գրպանում՝ սրտի մոտ, գլխի մեջ: Ես սրտիս մոտ պահում եմ Շանզ Էլիզեի սրճարաններից մեկում մորդ խզբզած թղթի կտորը, որը գնալուց առաջ թողել էր մեր առաջին հանդիպման ժամանակ, երբ չկարողացա փակել հաշիվը... Հիմա կհասկանա՞ս, թե ինչու էի երազում կյանքիս վերջին օրերն անցկացնել Փարիզում: Իսկ քո համար ամենակարևոր թղթի պատառիկը էն հին գերմանական մա՞րկն է, որ երբեք պայուսակիցդ չես հանում, թե՞ սենյակումդ պահած Թոմասի նամակները:

– Մենակ չասես, որ կարդացել ես...

– Չէ՛, քավ լիցի, ես ինձ երբեք նման բան թույլ չէի տա: Բայց տեսա, երբ վերջին նամակը դրեցի դարակիդ մեջ: Հարսանիքիդ հրավերը ստանալով՝ գնացի սենյակդ: Քո տիեզերքի կենտրոնում վերհիշեցի էն ամենը, ինչ երբեք չէի մոռացել ու չեմ էլ մոռանա: Ոչ մի վայրկյան չեմ դադարել մտածել, թե ինչ կլինի էն օրը, երբ իմանաս Թոմասի նամակի գոյության մասին, պետք էր նամակը տալ քե՞զ, ոչնչացնե՞լ, թե՞ հարսանիքիդ օրը բերել, տալ ձեռքդ: Մտածելու շատ ժամանակ չունեի: Բայց դու ճիշտ

ես. երբ շատ ենք ուզում, կյանքը նշան է տալիս: Մոնրեալում գտա ինձ տանջող հարցի պատասխանը, բայց ոչ լիարժեք: Մնացածը քեզնից էր կախված: Դե, կարող էի բավարարվել Թոմասի նամակը փոստով ուղարկելով, բայց, Ջուլիա, դու էնպես էիր վառել բոլոր կամուրջները, որ մինչև հրավերդ ստանալը հասցեդ էլ չգիտեի, համ էլ կասկածում եմ, որ իմ նամակը կբացեիր... Հա, ու համ էլ չգիտեի, որ մեռնելու եմ...

– Միշտ ամեն ինչի պատասխանն ունես, գիտե՞ս:

– Չէ, Ջուլիա, դու ինքդ ես արել քո ընտրությունը, ու շատ ավելի շուտ, քան պատկերացնում ես: Դու կարող էիր, չէ՞, ինձ անջատել, հիշո՞ւմ ես: Պետք էր ընդամենը սեղմել կոճակը: Դու կարող էիր, չէ՞, չգալ Բեռլին: Ես հո հետդ չէի, երբ դու որոշեցիր գնալ օդանավակայան՝ Թոմասին դիմավորելու: Նաև հետդ չէի, երբ վերադարձար ձեր առաջին հանդիպման վայրը, ու հատկապես, երբ նրան բերեցիր հյուրանոց: Ջուլիա, մենք կարող ենք անվերջ անիծել մեր անցյալը, ծնողներին անվերջ մեղադրել մեզ պատահած բոլոր չարիքների համար, մեղադրել մեր կյանքի բոլոր անհաջող փորձությունների, թուլությունների, վախերի համար, բայց, ի վերջո, մենք ենք տերը մեր կյանքի, ու մենք դառնում ենք էն, ինչ ուզում ենք: Ու վերջապես, ե՞րբ պետք է սովորես պրոբլեմներիդ ավելի թեթև նայել. քո ընտանիքից վատ ընտանիքներ կան...

– Օրինակ...

– Օրինակ՝ Թոմասի տատը, որ նրան մատնել էր...

– Դո՞ւ ինչ գիտես:

– Քեզ ասել եմ, որ ոչ մի ծնող երեխայի փոխարեն նրա կյանքը չի ապրում, բայց դա մեզ չի խանգարում անհանգստանալ ու տանջվել ամեն անգամ, երբ դուք անօգնական ու դժբախտ եք: Երբեմն դա մեզ ուժ է

տալիս գործելու, փորձելու հարթել ու լուսավորել ձեր ճանապարհը, ու երևի ավելի ճիշտ է սխալվել անխոհեմությունից կամ սիրո առատությունից, քան նստել տեղում ու ոչինչ չանել...

– Եթե մտքիդ կար լուսավորել իմ ճանապարհը, չի հաջողվել, ես խարխափում եմ խավարի մեջ...

– Խավարի մեջ ես, բայց կույր չես:

– Ադամը ոնց որ ճիշտ էր. էս շաբաթ մեր մեջ ոչ մի երկխոսություն չի ընթացել...

– Երևի թե ճիշտ է, որովհետև ես արդեն ոչ թե հայրդ եմ, սիրելիս, այլ հորդ տնազը: Բայց էս մեքենան գտավ, չէ՞, բոլոր խնդիրներիդ լուծումը: Ասա, էս քանի օրվա ընթացքում եղե՞լ է մի դեպք, որ չկարողանամ հարցերիդ պատասխանել: Չէ, որովհետև ես քեզ ավելի լավ եմ ճանաչում, քան կարծում ես, ու հուսով եմ, որ մի օր դու կհասկանաս, որ ես քեզ շատ, շատ ավելի շատ եմ սիրել, քան պատկերացնում ես:

Ջուլիան երկար նայեց հորը ու վերջապես, պատուհանից հեռանալով, եկավ, նստեց նրա կողքին: Երկուսով երկար լռեցին:

– Դու իրո՞ք իմ մասին մտածում ես էն, ինչ ասեցիր,– հարցրեց Էնթոնին:

– Ադամի՞ն: Երբվանի՞ց ես սկսել դռան հետևից ականջ դնել:

– Ճիշտ կլինի ասել՝ տախտակների հետևից: Ես բարձրացել էի ձեղնահարկ, հո չէի կարող էդ անձրևին դրսում մնալ, կարճ միացում կստանայի,– ժպտալով ասաց Էնթոնին:

– Ինչու ես քեզ շուտ չեմ ճանաչել...– հառաչեց Ջուլիան:

– Երբեմն ծնողներին ու երեխաներին տարիներ են պետք իրար հանդիպելու համար:

– Ո՞նց կուզեի մի քանի օր ավելի ունենայինք...

– Ունեցել ենք արդեն, Ջուլիաս:

– Ի՞նչ է լինելու վաղը:

– Մի անհանգստացիր, քո բախտը բերել է, ծնողի մահը միշտ ցավոտ պահ է երեխաների համար, բայց իմ դեպքում, դա արդեն անցել է:

– Հեչ ծիծաղելու չի...

– Վաղն ուրիշ օր է. օրը գա՝ բարին հետը...

Մութը կամաց-կամաց փռում էր թևերը: Էնթոնին բռնեց Ջուլիայի ձեռքն ու սեղմեց: Նրանց մատները հանդիպեցին ու մնացին այդպես միաձուլված: Ավելի ուշ Ջուլիան ննջեց՝ գլուխը հոր ուսին հենած:

***

Արևածագին դեռ շատ կար: Էնթոնին զգույշ, մատների ծայրերի վրա վեր կացավ, որ հանկարծ Ջուլիան չարթնանա: Նա դստերը պառկեցրեց բազմոցին, զգույշ ծածկեց ուսերը: Ջուլիան երազում ինչ-որ բան փնթփնթաց ու մյուս կողմի վրա շրջվեց:

Համոզվելով, որ նա խոր քնած է, Էնթոնին գնաց, նստեց խոհանոցի սեղանի մոտ, թուղթ ու գրիչ վերցրեց ու սկսեց գրել:

Նամակը վերջացնելով՝ դրեց սեղանի վրա՝ լավ երևացող տեղում: Հետո բացեց իր ճամպրուկը, հանեց կարմիր ժապավենով կապված հարյուրավոր նամակների կապոցն ու գնաց Ջուլիայի սենյակ: Փորձելով չվնասել կապոցի մեջ գտնվող Թոմասի խունացած լուսանկարը, նա ժպտաց ու կապոցը դրեց գզրոցի դարակի մեջ:

Վերադառնալով հյուրասենյակ՝ Էնթոնին մոտեցավ բազմոցին, վերցրեց սպիտակ վահանակը, դրեց պիջակի վերևի գրպանը, խոնարհվեց ու մի համբույր դրոշմեց Ջուլիայի ճակատին:

– Քնիր, իմ ամեն ինչ, ես սիրում եմ քեզ...

# 22

Աչքերը բացելով՝ Ջուլիան մի լավ հորանջեց ու ձգվեց: Սենյակը դատարկ էր, արկղի դուռը՝ փակ:

– Պապա՞:

Սենյակում քար լռություն էր: Նախաճաշի սեղանը գցված էր խոհանոցում: Մեղրամանին՝ փաթիլների տուփի ու կաթի ամանի միջև, մի ծրար էր հենած: Ջուլիան նստեց ու իսկույն ճանաչեց ձեռագիրը:

*«Իմ աղջիկ, իմ հրաշք*

*Երբ նամակս կարդաս, ուժերս արդեն ինձ լքած կլինեն: Հուսով եմ՝ չես նեղանա, բայց ուզեցի խուսափել անիմաստ բաժանումից: Դժվար բան է հորը երկրորդ անգամ թաղելը: Նամակս կարդալուց մի քանի ժամ հետո դուրս արի տնից. պետք է գան ինձ տանեն, չէի ուզենա, որ էնտեղ լինեիր: Արկղս էլ չբացես, ես մեջը հանգիստ քնած եմ, քո շնորհիվ: Իմ Ջուլիա, իմ աղջիկ, շնորհակալ եմ ինձ հետ անցկացրած էս մի քանի օրվա համար: Չես պատկերացնի՝ ինչ երկար եմ սպասել, ինչ երկար եմ երազել ճանաչել էն չքնաղ կնոջը, որին դու վերածվել ես: Գիտե՞ս՝ ինչ հասկացա էս ընթացքում. ծնողի կյանքի ամենամեծ հրաշքներից մեկը ժամանակի հախից գալն ու տեսնելն է, թե ինչպես է մեծացել քո երեխան, ու քո տեղը նրան զիջելն է: Նաև կներես մանկությանդ բոլոր բացթողումներիս համար, որոնց միակ պատասխանատուն ես եմ: Ես արել եմ կարողացածիս չափ: Հա, հաճախ եմ բացակայել, երբ պետք էր՝ կողքիդ չեմ եղել: Ուզել եմ քեզ ընկեր լինել, լինել քո մտերիմը, քո բարեկամը, հանցակիցը, բայց եղել եմ ընդամենը քո հայրը, ու միշտ էլ կլինեմ: Ու ինչ էլ որ*

*լինի, էս կյանքում թե մյուս, ես հեպս կպանեմ քո հանդեպ կածածս անսահման սիրո վառ հիշողությունները: Հիշում ես, չէ՞, էն չինական լեգենդը, էն շատ սիրուն պատմությունը ջրի մեջ լուսնի արտացոլման մասին: Իզուր չէի հավատում դրան, ընդամենը համբերություն էր պետք. իմ երազանքն ինչ-որ մի օր անպայման կիրականանար, քանի որ էն կինը, որին էդքան երազում էի տեսնել ու սպասում էի, հայտնվելու էր իմ կյանքում: Էդ կինը դու էիր:*

*Աչքերս փակում եմ ու տեսնում եմ փոքրիկ Ջուլիային, որ վազում էր, ընկնում գիրկս: Երևի ասածս հիմարություն թվա, բայց դա ամենալավ բանն էր, որ պատահել է իմ կյանքում: Չկա ավելի հրաշալի բան, քան երեխայիդ ծիծաղն ու գուրգուրանքը, երբ երեկոյան հոգնած տուն ես վերադառնում: Գիտեմ, որ մի օր, երբ տխրությունդ թողնի քեզ, կսկսես ամեն ինչ վերհիշել: Ու նաև գիտեմ, որ երբեք չես մոռանա երազներդ, որ պատմում էիր, երբ գիշերները գալիս, նստում էի մահճակալիդ՝ ոտքերիդ մոտ: Նույնիսկ իմ բացակայության ժամանակ ես քեզ շատ ավելի մոտ էի, քան դու պատկերացնում էիր, Ջուլիա: Կներես, եթե եղել եմ աննրբանկատ ու անշնորհք, բայց ես սիրել եմ քեզ: Ու միակ բանը, որ հիմա խնդրում եմ՝ խոստացիր լինել երջանիկ: Եղիր երջանիկ, իմ աղջիկ...*

*Քո պապա»:*

Ջուլիան ծալեց նամակը, մոտեցավ սենյակի կենտրոնում դրված արկղին: Մեղմ շոյեց փայտե արկղն ու շշնջաց. «Պա, պապա, ես էլ քեզ եմ շատ սիրում»: Ծանր սրտով՝ Ջուլիան հնազանդվեց հոր վերջին ցանկությանը. աստիճաններով իջնելով՝ չմոռացավ բանալին թողնել հարևանին: Նա զգուշացրեց պարոն Ջիմուրին,

որ մի բեռնատար կգա իր տնից արկղը տանելու, ու խնդրեց, որ դուռը բացի: Ու պարոն Ջիմուրին խոսելու հնարավորություն չտալով՝ դուրս եկավ ու փողոցն ի վեր շարժվեց դեպի հնաոճ իրերի խանութ:

## 23

Անցել էր մոտ տասնհինգ րոպե, Ջուլիայի բնակարանում կրկին լռություն էր: Թեթև շխկոցին հետևեց սռնակների ճռռոցը, ու արկղի դուռը բացվեց: Էնթոնին դուրս եկավ, թափ տվեց ուսերի փոշին և առաջացավ դեպի հայելին՝ փողկապի հանգույցը շտկելու համար: Իր լուսանկարով շրջանակը տեղափոխեց, դրեց ավելի լավ երևացող տեղ ու հայացքով շրջեց սենյակում:

Նա դուրս եկավ բնակարանից ու իջավ փողոց: Շենքի մոտ նրան մեքենա էր սպասում:

– Ողջույն, Ուոլես,– ասաց նա՝ տեղավորվելով մեքենայի հետնամասում:

– Ուրախ եմ ձեզ կրկին տեսնել, պարոն,– պատասխանեց օգնականը:

– Փոխադրողները տեղեկացվա՞ծ են:

– Բեռնատարը հետևում է մեզ:

– Ընտիր է,– պատասխանեց Էնթոնին:

– Ձեզ ուղեկցե՞մ հիվանդանոց, պարոն:

– Կարիք չկա, ես արդեն իսկ շատ ժամանակ եմ կորցրել: Գնում ենք օդանավակայան, բայց նախ պետք է մտնենք տուն, պետք է փոխեմ ճամպրուկս: Ձեր ճամպրուկն էլ պատրաստեք, գալիս եք հետս. մենակ ճանապարհորդելու մեջ էլ հաճույք չեմ տեսնում:

– Իսկ կարո՞ղ եմ հարցնել, թե ուր ենք գնում:

– Ճանապարհին կբացատրեմ: Չմոռանաք անձնագիր վերցնել:

Մեքենան թեքվեց Գրինիչ փողոց: Հաջորդ խաչմերուկին պատուհանն իջավ, ու սպիտակ հեռավահանակը նետվեց ջրանցքը:

## 24

Նյույորքցիների հիշողություններում հոկտեմբերը երբեք այդքան մեղմ չէր եղել: Քաղաքն ապրում էր իր կյանքի ամենագեղեցիկ թավշե աշուններից մեկը: Ինչպես վերջին եռամսյակի ամեն շաբաթ-կիրակին, Սթենլին ու Ջուլիան հանդիպել էին՝ միասին նախաճաշելու: Այսօր էլ «Պաստիսում» նախօրոք պատվիրած սեղանն իրենց էր սպասում: Սա հատուկ կիրակի էր, պարոն Ջիմուրը զեղչ էր հայտարարել, Ջուլիան առաջին անգամ ծեծեց նրա դուռը, և նա սիրով համաձայնեց խանութը բացել սովորականից երկու ժամ շուտ:

– Հը՞, ինչ կասես, լա՞վ է:

– Ապա պտտվիր նայեմ:

– Սթենլի, կես ժամ է՝ ոտքերս ես ուսումնասիրում, էլ ոչ մի րոպե չեմ կարող մնալ էս անտեր պոդիումի վրա:

– Ուզո՞ւմ ես կարծիքս իմանալ, ջանիկս, հա՞, թե՞ չէ: Պտտվիր, դիմացից նայեմ: Ըհը, էսպես էլ գիտեի, կրունկի բարձրությունը քոնը չի...

– Սթեն, լավ էլի...

– Զեղչերի ժամանակ բան առնելու սովորությունդ ինձ մի օր կսպանի...

– Տեսե՞լ ես գները, Սթենլի: Կներես, որ դիզայների իմ աշխատավարձով ուրիշ ելք չունեմ,– շշնջաց Ջուլիան:

– Չսկսես, հա՞, խնդրում եմ:

– Դե ինչ, վերցնո՞ւմ եք,– սպառված հարցրեց պարոն Ջիմուրը:– Ինձ թվում է՝ ինչ ունեմ-չունեմ, արդեն ցույց եմ տվել, երկուսով խանութս տակնուվրա արեցիք:

– Դեռ ոչ,– պատասխանեց Սթենլին,– մենք դեռ չենք փորձել պահարանին դրված ա՛յ էն սիրունիկ դասական կոշիկները... Այո, այո, ամենավերևի վերջին զույգը...

– Բայց ես օրիորդի չափով չունեմ:

– Պահեստում էլ չունե՞ք,– աղաչեց Սթենլին:

– Իջնեմ, տեսնեմ,– հոգոց հանեց պարոն Ջիմուրն ու անհետացավ:

– Բախտը բերել է, էլեգանտության մարմնավորում է, թե չէ էս բնավորությամբ...

– Դու նրան էլեգա՞նտ ես համարում,– ծիծաղեց Ջուլիան:

– Էսքան ժամանակ կարող էինք նրան գոնե մի անգամ հրավիրել քո տուն ընթրիքի:

– Ձե՞ռ ես առնում:

– Ջանիկս, դու չէի՞ր անընդհատ կրկնում, որ նա վաճառում է Նյու Յորքում ամենասիրուն կոշիկները....

– Ու դրա համար դու ուզում ես, որ...

– Ես չեմ պատրաստվում ամբողջ կյանքս այրի մնալ, արևս: Իսկ դու, ինչ է, դե՞մ ես:

– Ընդհանրապես: Բայց պարոն Ջիմուրը...

– Վա՛յ դե, մոռացիր Ջիմուրին,– ասաց Սթենլին՝ մի հայացք նետելով ցուցափեղկին:

– Արդե՞ն:

– Հանկարծ չպտտվես, բայց պատուհանից մեզ նայող մարդը անթերի չքնաղ է:

– Ի՞նչ մարդ,– հարցրեց Ջուլիան՝ չհանդգնելով շարժվել:

– Ա՛յ, էն մարդը, որ արդեն տասը րոպե է՝ դեմքը ապակուն հպած քեզ է նայում, ասես Կույս Մարիամին տեսած լինի... Բայց նա հաստատ չէր հագնի զեղչի ժամանակ առած երեք հարյուր դոլարանոց էսպադրիլներ: Քեզ ասեցի չշրջվես, ես եմ առաջինը նրան տեսել:

Ջուլիան բարձրացրեց հայացքը. նրա շուրթերը սկսեցին դողդողալ:

– Օ, դու չարաչար սխալվում ես,– նվաղ ձայնով ասաց նա,– էս մեկին ես քեզնից շուտ եմ տեսել...

Նա կոշիկները հագից շպրտեց, բացեց խանութի դռան փականն ու դուրս վազեց փողոց:

***

Վերադառնալով՝ պարոն Ջիմուրը տեսավ հարթակին, կոշիկները ձեռքին նստած Սթենլիին:

– Օրիորդ Ուելշը գնացե՞լ է,– ապշահար հարցրեց նա:

– Այո, բայց մի անհանգստացեք, նա անպայման կվերադառնա, կարծում եմ՝ այսօր չէ, գուցե վաղը, բայց կվերադառնա:

Կոշիկների տուփը ցած ընկավ պարոն Ջիմուրի ձեռքից: Սթենլին բարձրացրեց այն ու մեկնեց նրան:

– Հուսահատ տեսք ունեք, բարեկամս, գնանք, ես ձեզ կօգնեմ դասավորել ամեն ինչ, հետո կգնանք մի բաժակ սուրճ կամ թեյ խմելու, ինչ որ նախընտրեք:

***

Թոմասը մատների ծայրերով շոյեց Ջուլիայի շուրթերն ու համբուրեց կոպերը:

– Ես փորձեցի ինձ համոզել, որ կարող եմ ապրել առանց քեզ, բայց, տեսար, չկարողացա...

– Բա Աֆրիկա՞ն, քո ռեպորտաժները, ի՞նչ կասի Քնապը:

– Ինչի՞ս է պետք աշխարհը ոտքի տակ տալը մարդկանց ճշմարտությունը պատմելու համար, եթե ես ինքս ինձ եմ խաբում, ինչի՞ս է պետք երկրից երկիր գնալ, եթե իմ սիրած մարդն էնտեղ չէ...

– Ուրեմն էլ հարցեր մի տուր, բարև տալու համար ավելի գեղեցիկ բառեր երբեք չեմ լսել,– ասաց Ջուլիան՝ մատների ծայրերի վրա ձգվելով:

Նրանց շուրթերը հանդիպեցին. համբույրը երկար էր, ինչպես համբույրն այն երկու դեռահասի, որոնց սերը մոռացնել էր տալիս աշխարհում ամեն ինչ:

– Ո՞նց գտար ինձ, Թոմաս,– նրա գրկում կուչ եկավ Ջուլիան:

– Ես քեզ փնտրել եմ քսան տարի, ու քո շենքի առաջին հարկում քեզ գտնելը շատ դժվար չէր,– պատասխանեց նա:

– Տասնութ տարի, ու հավատա, որ ահավո՛ր երկար էր...

Ջուլիան նորից համբուրեց նրան:

– Քե՞զ ինչը ստիպեց գալ Բեռլին, Ջուլիա...

– Արդեն ասել եմ, ճակատագիրը նշան տվեց... նկարդ տեսա փողոցային մի նկարչուհու սեղանին մոռացած...

– Ինձ երբեք փողոցում չեն նկարել...

– Ո՞նց չեն նկարել, էդ դու էիր, քո դեմքը, քո աչքերը, քո բերանը, նույնիսկ կզակիդ փոսիկը կար...

– Որտե՞ղ ես տեսել ինձ էդքան նման նկարը:

– Մոնրեալի հին կամրջի վրա:

– Մոնրեալի՞: Ես երբեք Մոնրեալում չեմ եղել, սերս:

Ջուլիան նայեց վեր. մի սպիտակ ամպ էր լողում Նյու Յորքի երկնքում: Նա ժպտաց՝ տեսնելով, թե ինչ կերպարանք է ստանում այն:

– Ես նրան շատ կկարոտեմ:

– Ո՞ւմ:

– Հորս: Արի, սիրելիս, արի գնանք մի քիչ ման գանք: Ես պետք է քեզ ցույց տամ իմ քաղաքը:

– Բայց դու ախր բոբիկ ես...

– Էդ կարևոր չի,– պատասխանեց Ջուլիան...

# ՄԱՐԿ ԼԵՎԻ
# ԻՆՉՔԱՆ ԲԱՆ ՈՒՆԵԻՆՔ ԻՐԱՐ ԱՍԵԼՈՒ

# MARC LEVY
# TOUTES CES CHOSES QU'ON NE S'EST PAS DITES


Թարգմանիչ՝ Հռիփսիմե Մադոյան
Խմբագիր՝ Շողեր Խաչատրյան

Հրատ. խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Էջադրող՝ Նարինե Հովհաննիսյան
Սրբագրիչ՝ Նարինե Մարտիրոսյան
Շապիկը՝ Սարգիս Անտոնյանի
Կազմի ձևավորումը՝ Լիլիթ Բաղդասարյանի

Անտարես

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պ. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59
antares@antares.am
www.antares.am

## Մատենաշարով լույս են տեսել

Միգել դե Ունամունո «ՄԱՌԱԽՈՒՂԸ»
Ահմեդ Համդի Տանպինար «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ»
Ալբերտո Մուսսա «ՁԱԽ ԿՈՂՄԻ ՎԱՐՊԵՏԸ»
Ժան Ժիոնո «ՀՈՒՍԱՐԸ ՏԱՆԻՔԻ ՎՐԱ»
Պատրիկ Զյուսքինդ «ՕԾԱՆԵԼԻՔ»
Պաուլու Կոելյու «ԱԼՔԻՄԻԿՈՍԸ»
Պաուլու Կոելյու «ԱՔՐԱՅՈՒՄ ԳՏՆՎԱԾ ՁԵՌԱԳԻՐԸ»
Ջերոմ Սելինջեր «ՓՐԿԻՉԸ ՏԱՐԵԿԱՆԻ ԱՐՏՈՒՄ»
Յուլյա Ֆրանկ «ՄԻՋՕՐԵԻ ՏԻԿԻՆԸ»
Ումբերտո Էկո «ՎԱՐԴԻ ԱՆՈՒՆԸ»
Մարկ Լևի «ՊԱՐՈՆ ԴԱՎԴՐԻԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ»
Էռնեստո Սաբատո «ԹՈՒՆԵԼԸ»
Իրակլի Սամսոնաձե «ԱԿԱՆՋԱԲԱՐՁ»
Դաթո Տուրաշվիլի «ՋԻՆՍԻ ՍԵՐՈՒՆԴԸ»
Խուլիո Կորտասար «ԱՅՍՏԵՂ ԵՎ ՀԻՄԱ»
Ահմեդ Ումիթ «ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀՈՒՇԸ»
Լյուբկո Դերեշ «ԽԱՂԱՂԱՐԱՐԸ»
Պաուլու Կոելյու «ԱՆՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ»
Միլան Կունդերա «ԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՆԵԼԻ ԹԵԹԵՎՈՒԹՅՈՒՆԸ»
Լուի-Ֆերդինանդ Սելին «ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԳԻՇԵՐԻՑ ԱՆԴԻՆ»
Օթար Ճիլաձե «ՔԹՈՑԸ»
Օթար Ճիլաձե «ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԳՆՈՒՄ ԷՐ ՄԻ ՄԱՐԴ»
Պետեր Հանդկե «ԴԱՆԴԱՂ ՎԵՐԱԴԱՐՁ ՏՈՒՆ»

## օտար◆◆◆գիր

Ժան-Քրիստոֆ Ռյուֆեն «ԿԱՐՄԻՐ ԺԱՊԱՎԵՆԸ»
Բլաժե Մինևսկի «ՆՇԱՆ»
Ռեյ Բրեդբըրի «ՄԱՐՍՅԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ»
Ռեյ Բրեդբըրի «ԽԱՏՈՒՏԻԿԻ ԳԻՆԻ»
Վլադիմիր Վոյնովիչ «ՏԻՐՈՒՀԻՆ»
Խորխե Լուիս Բորխես «ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ»
Կառլոս Ֆուենտես «ԱՈՒՐԱ»
Ադոլֆո Բիոյ Կասարես «ՄՈՐԵԼԻ ԳՅՈՒՏԸ»
Դավիդ Ֆոենկինոս «ՇԱՐԼՈԹ»
Ռեյմոն Քընո «ԶԱԶԻՆ ՄԵՏՐՈՅՈՒՄ»
Զախար Պրիլեպին «ՍԵՎ ԿԱՊԻԿԸ»
Խավիեր Մարիաս «ԱՅՆՔԱՆ ՍՊԻՏԱԿ ՍԻՐՏԸ»
Պաուլու Կոելյու «ՎԵՐՈՆԻԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է ՄԵՌՆԵԼ»
Պաուլու Կոելյու «ԼՐՏԵՍԸ»
Գուրամ Օդիշարիա «ՊՐԵԶԻԴԵՆՏԻ ԿԱՏՈՒՆ»
Միշել Ուելբեք «ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ»
Դեյան Տրայկոսկի «ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ»
Դենիել Քիզ «ԾԱՂԻԿՆԵՐ ԷԼՋԵՐՆՈՆԻ ՀԱՄԱՐ»
Նիկոս Կազանձակիս «ՀՈՒՅՆ ԶՈՌԲԱՆ»
Լեոնիդ Ցիպկին «ԱՄԱՌԸ ԲԱԴԵՆՈՒՄ»
Իտալո Կալվինո «ԾԱՌԱԲՆԱԿ ԲԱՐՈՆԸ»
Աննի Էռնո «ՏԵՂԸ»
Ֆերդինանդ Բորդևայք «ԽԱՌՆՎԱԾՔ»
Լութց Զայլեր «ԿՐՈՒԶՈ»
Ժորժի Ամադու «ԴՈՆԱ ՖԼՈՐԸ ԵՎ ԻՐ ԵՐԿՈՒ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԸ»
Վլադիմիր Նաբոկով «ԼՈԼԻՏԱ»
Ֆրեդերիկ Բեգբեդեր «99 ՖՐԱՆԿ»
Բիրգյուլ Օղուզ «ՀԱ՛Հ»

## օտար◆◆◆գիր

Օրհան Փամուք «ԿԱՐՄՐԱՀԵՐ ԿԻՆԸ»
Պաուլու Կոելյու «ԴԵՎԸ ԵՎ ՕՐԻՈՐԴ ՊՐԻՄԸ»
Հերման Հեսսե «ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼՔ»
Ռիչարդ Բախ «ՋՈՆԱԹԱՆ ԼԻՎԻՆԳՍԹՈՆ ՃԱՅԸ»
Մաքս Ֆրիշ «HOMO ՖԱԲԵՐ»
Մաքս Ֆրիշ «ՄՈՆԹՈԿ: ԿԱՊՏԱՄՈՐՈՒՍԸ»
Ռոբերտ Վալզեր «ԶԲՈՍԱՆՔ»
Կուրթ Վոնեգութ «ԿԱՏՎԻ ՃՈՃՔ»
Խուլիո Կորտասար «ՑԱՏԿԱԽԱՂ»
Ջախար Պրիլեպին «ՄԵՆԱՍՏԱՆ»
Ալաա ալ-Ասուանի «ՅԱԿՈՒԲՅԱՆ ՇԵՆՔԸ»
Պաուլու Կոելյու «ՀԻՊԻ»
Պաուլու Կոելյու «ՊԻԵԴՐԱ ԳԵՏԻ ԱՓԻՆ ՆՍՏԵՑԻ
ՈՒ ԼԱՑ ԵՂԱ»
Ուիլյամ Սարոյան «ՀԱՅՐԻԿ, ԴՈՒ ԽԵՆԹ ԵՍ»
Ուիլյամ Սարոյան «ՄԱՅՐԻԿ, ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ»
Ուիլյամ Սարոյան «ԱՆՈՒՆՍ ԱՐԱՄ Է»
Ռեյ Բրեդբըրի «ԼԻՃԸ ԵՎ ՈՒՐԻՇ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ»
Միլոռադ Պավիչ «ՎԵՐՋԻՆ ՍԵՐԸ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ»
Կուրթ Վոնեգութ «ՍՊԱՆԴԱՆՈՑ ՀԱՄԱՐ ՀԻՆԳ»
Էջե Թեմելքուրան «ԴԱՐՁ»
Քրիստոֆ Ռանսմայր «ՎԵՐՋԻՆ ԱՇԽԱՐՀԸ»
Լեոնիդ Անդրեև «ՀՈՒԴԱ ԻՍԿԱՐԻՈՎՏԱՑԻ»
Իման Հումայդան Յունես «ՎԱՅՐԻ ԹՈՒԹԸ»
Իման Հումայդան Յունես «Բ՝ ՈՐՊԵՍ ԲՆՕՐՐԱՆ...
ՈՐՊԵՍ ԲԵՅՐՈՒԹ»
Գաբրիել Գարսիա Մարկես «ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԻՄ ՏԽՈՒՐ ՊՈՌՆԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

## օտար ◆◆◆ գիր

Դավիդ Ունգեր «ՄՏԱՀՂԱՑՈՂԸ»
Սալար Աբդոհ «ԹԵՀՐԱՆԸ ՎԵՐՋԱԼՈՒՅՍԻՆ»
Ամոս Օզ «ՀՈՒԴԱ»
Դաթո Տուրաշվիլի «ԱՅԼ ԱՄՍՏԵՐԴԱՄ»
Հերման Հեսսե «ՆԱՐՑԻՍԸ ԵՎ ՈՍԿԵԲԵՐԱՆԸ»
Միլան Կունդերա «ԴԱՆԴԱՂՈՒԹՅՈՒՆ»
Խավիեր Մարիաս «ՍԻՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
Հարուկի Մուրակամի «ՆՈՐՎԵԳԱԿԱՆ ԱՆՏԱՌ»
Ալեսսանդրո Բարիկկո «ՄԵՏԱՔՍ»
Եվգենի Զամյատին «ՋՀԱՆԴԱՄՈՒՄ: ՀԵՂԵՂ»
Մաքս Ֆրիշ «ԵՆԹԱԴՐԵՆՔ ԱՆՈՒՆՍ ԳԱՆԹԵՆԲԱՅՆ Է»
Էլիֆ Շաֆաք «ԵՎԱՅԻ ԵՐԵՔ ԴՈՒՍՏՐԵՐԸ»
Սալման Ռուշդի «ԱՄՈԹ»
Գոլի Թարաղի «ՎԵՐԱԴԱՐՁ»
Էլիֆ Շաֆաք «ՊԱՏԻՎ»
Սայակա Մուրատա «ԿՈՆԲԻՆԻԻ ՄԱՐԴԸ»
Յոշիմոտո Բանանա «ԽՈՀԱՆՈՑ»
Բենիտո Պերես Գալդոս «ԱԼՄԱ»
Սթիվեն Քինգ «ՄԻԶԵՐԻ»
Զարա Բաբայան «ԿՐԿԻՆ ԾՆՎԱԾՆԵՐԸ»
Ժերար դը Ներվալ «ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԳԻՇԵՐՆԵՐ: ԶԲՈՍԱՆՔՆԵՐ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
Թորնթըն Վայլդեր «ՍՈՒՐԲ ԼՈՒԻՍ ԱՐՔԱՅԻ ԿԱՄՈՒՐՋԸ»
Գաբրիել Գարսիա Մարկես «ՍԵՐԸ ԽՈԼԵՐԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ»
Անտոնիո Տաբուկկի «ՊՆԴՈՒՄ Է ՊԵՐԵՅՐԱՆ»
Ջոն Ափդայք «Ս.»



Միշել Ուելբեք «ՍԵՐՈՏՈՆԻՆ»
Բուրհան Սյոնմեզ «Ա՛Խ, ՍՏԱՄԲՈՒԼ, ՍՏԱՄԲՈՒԼ»
Մարիզ Կոնդե «ՄԱՆԳՐՈՎՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՆ ԱՆՑՆԵԼՈՎ»
Իտալո Կալվինո «ԵՐԿԱՏՎԱԾ ՎԻԿՈՆՏԸ»
Խուան Ռուլֆո «ՊԵԴՐՈ ՊԱՐԱՄՈ»
Կառլոս Ռուիս Սաֆոն «ՔԱՄՈՒ ՍՏՎԵՐԸ»
Ուիլյամ Սարոյան «ՌՈՔ ՎԱԳՐԱՄ»
Իտալո Կալվինո «ԱՆՏԵՍ ՔԱՂԱՔՆԵՐ»
Զարա Բաբայան «ԵՐԲ ԵՍ»
Միգել Դելիբես «ՀԻՆԳ ԺԱՄ ՄԱՐԻՈՅԻ ՀԵՏ»
Ադել Քամել «ԿԱՀԻՐԵԻ ՀԱՆՃԱՐԵՂ ԽԱՐԴԱԽԸ»
Աբդելիլա Համդուշի «ԿԱՍԱԲԼԱՆԿԱՅԻ ՄՍԱԳՈՐԾԸ»
Էլիֆ Շաֆաք «ՍԻՐՈ ՔԱՌԱՍՈՒՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ»
Էմիլիա Պարդո Բասան «ՈՒԼՅՈԱ ՏՈՀՄԱԿԱՆ ԱՄՐՈՑԸ»
Միգել դե Ունամունո «ԱԲԵԼ ՍԱՆՉԵՍ ԿԱՄ ՄԻ ՏԱՌԱՊԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»